

16302

16303



16304

16305

391.99
1-89

7784.

xvi, m.



891.85

№ 173

Դ-37

ԵՂԻԶԱ ՕԺԵՇԿՈ

Գ Բ Ե Յ Ւ Կ Ը

1001
1002
1003

Թարգմ. ռուսերէնից

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ



Թ Ի Փ Լ Ի Ս

Արագատիպ ՄՆ. Մարտիրոսեանցի,
Միքայէլեան փողոց, № 81.

1900

3599

Дозв. цензурою. Тифлисъ, 23 Октября 1899 г.

Քառասուննի անցած մի տղամարդ էր նա. արդէն երկու կնճիռ ակօսել էին նրա լայն ճակատը, քոնքիրի մազելն սկսել էին տեղ-տեղ սպիտակել, թէև զլիխնը սկ էին տակաւին: Սակայն չնայելով այդ կնճիռներին և նոր բուսած սպիտակ մազերին՝ նա առողջ, ուժեղ և միենոյն ժամանակ մի լուրջ մարդու կերպարանք ունէր: Զինորս էր նա. ամբողջ օրեր, երրեմն նաև գիշերուայ մի մասն, անց էր կացնում ջրի վրայ.—ահա այս պատճառով արել, քամին և գետի խոնաւ շունչն այրել, սևացրել էին նրա դէմքը, որ թէև փոքր ինչ նիհար էր և չոր, սակայն զարդարուած էր մի զոյգ պայծառ, կապուտակ աշքերի ծանրաշարժ, լուրջ նայուածքով: Նոյնպիսի լրջութիւն և մտահոգութիւն էին արտայայտում նաև նրա բարձր, վայելչակաղմ մարմնի բոլոր շարժուածքները:

Տասնեռութ տաքելիան ժամանակ հայրն ամուս-
նացրել էր Նրան հարևան գիւղացի մի աղջկայ հետ,

տանտիկին բերելու նպատակով։ Կնոջ հետ, որ մի համեստ, աշխատասէր, թէն փոքր ինչ յիմար և շափազանց տգեղ արարած էր, նա ապրեց խաղաղ և համերաշխ, բայց ոչ երկար.—քանի մի տարուց յետոյ կինը մեռաւ առանց զաւակներ թողնելու։ Շատ չանցած մեռաւ և ծերունի հայրը. իսկ երբ նա մարդու տուեց նաև իւր կրտսեր քրոջը՝ այն ժամանակ մնաց բոլորովին միայնակ իւր խրճիթում, որ կանգնած էր մի փոքրիկ գիւղի ծայրին, նեման գեաի բարձրադիր ափի վրայ, եղննեայ անտառի մօտ։ Այդ խրճիթը մի ժամանակ նրա հայրն ստացել էր գիւղի նախկին տիրոջից մի մեծ բանջարանոցի հետ միասին, բայց նուիրել էր իրան առաւելապէս ոստայնագործութեան, որ այն ժամանակ ծաղկած էր գիւղում և քիչ թէ շատ արդիւնք էր բերում։ Բայց Պաւլը չկարողացաւ ընտելանալ ոստայնին, ցածր առաստաղին և խրճիթի մութ պատերին։ Մի ոյժ ակամայ ձգում էր նրան դէպի լայնարձակ գետը, դէպի նրա խաղաղութիւնը ուղայծառ օրեւին, դէպի նրա կատաղի գոչիւնը փոթորկի ժամբն, դէպի արեածաղի և արեամտի պայծառ գոյները, որոնք արասփայլում էին գետի ջինջ ալիքներում։ Նա սիրում էր մաքուր օդ—ցուրտ լիներ դուրսը թէ տաք՝ այդ միենոյն էր,—սիրում էր բաց երկինք, թէպէտ և սեամած ամպեր լողային այնաեղ։ Արդէն մանկական հասակում նա տաշշում էր մակոյկներ, հիւսում էր ցանցեր, ու երբ հասակն առաւ՝ դարձաւ ձկնորս։ Առաջ, գետից տուն վերադառնալիո՞ն նա խրճիթում տեսնում էր հօրը, կնոջը, քրոջը, երեմն հարեաններին ու բարեկամներին. ժամանակ առ ժամանակ ճանապարհը ծռում էր մինչև անդամ դէ-

պի գինետուն, թէն օղիի համն առանձնապէս չէր գնահատում, իսկ պարերին և դատարկաբանութիւննեցին համարեա թէ չէր մասնակցում։ Այժմ, քանի մի տարի է արգէն, նրա նրճիթը դատարկ էր։ Վերագառնալով տուն՝ ինքն էր կթում կովը, ինքն էր եկում իրան համար սպաս, և պարկում էր քնիլու, որպէսզի վաղն էլ օրն սկսէ ու վերջացնէ բոլորովին այնպէս՝ որպէս սկսել ու վերջացըել էր երեկ. Դէպի գինետուն այլևս չէր թիգում նա. նոյն-իսկ գիւղացիների հետ ակնուում էր ոչ յաճախ, բայց քրոջից և փեսայից, որոնց տանն երբեմն անխօս նստում էր ձմեռուայ երկար երկոններին, երբ գետը ծածկուած էր լինում սառոյցի հաստ շերտով։ Զէ կարելի ասել, թէ նա չէր սիրում մարդկանց, ընդհակառակը՝ ուրախութեամբ զանազան ծառայութիւններ էր մատուցանում սորան ու նորան, բաժին էր հանում հարևաններին մանը ձկնեղինց և քաղցրութեամբ պատախանուում էր ամեն մի հարցի. Միայն թէ նա ինքը չէր որոնում մարդկանց, մինչև անգամ որոշ չափով խուսափում էր նրանցից, կարծես նրա շրթունքներն երկար ժամանակ գետի վրայ թափառելուց լութեան էին սովորել։ Խօսում էր նա սակաւ, դանդաղ, ցածրածայն, ժպտում էր աւելի սակաւ։ Այսու ամենայնիւ չէր կարելի նրան տիտուր անուանել. ընդհակառակը՝ երեսում էր, որ նա հանգիստ է հոգով և գոհ այն ամենից՝ ինչ որ շրջապատում էր նրան։ Միայն նրա շրթունքները, նայուածքն ու շարժումները մտահոգութեան կնիքով էին գրոշմաւած։ Թէ ինչ բանի մասին էր մտածում Պաւլն՝ այդ նա չէր ասում ոչ որի, բայց մտածում էր շարունակ, լողալիս լինէր գետի

մաքուր հայելու վրայ, թէ օրօրուելիս լինէր մակոյկում՝ յատակի մէջ ցցած երկու ձողի մէջտեղն ու նայելիս բարձրում լողացող ամպերին: Գիւղում համարում էին նրան մի այնպիսի մարդ, որ նման չէ ուրիշներին, այսու ամենայնիւ լաւ ու հանդարտ հացեան: Նրան կամենում էին ամուսնացնել երկրորդ անգամ. առանձնապէս այդ բանի համար շատ էր շարչարում սանամայր Աւդոտեան, նրա հինօրեայ բարեկամուճին, բայց ի զուր: Նա թափահարում էր ուսերը, մերժողաբար տանում ու բերքում գլուխն և շտապով նստում մակոյկը: Ոչ ոքի աղդեցութեանը նա չէր ենթարկում—նա իւր սեփական կամքն ունէր:

Երկու ամիս էր անցել այն օրից, երբ ս. Պօղոս-Պետրոսի տօնին լրացաւ նրա քառասուն և երկու տարին: Վաղ առաւտեան նա մօտենում էր գետի այն տեղին, ուր մի օր առաջ թակարդ էր դրել ձուկ բռնելու համար. յանկարծ գետի ափից մի սուր աղաղակ հասաւ նրա ականջին.

—Օգնեցէք, օգնեցէք:

Կանուխ առաւօտ էր. մութ անտառի կատարին ձգւում էր արշալոյսի վարդակարմիր շերտն և անդրադառնում գետի պարզ հայելու մէջ: Աղաղակը լուսի ձկնորսն շտապով երեսը դարձեց գետի կողմն և ամենից առաջ տեսաւ մի կապոյշ շորի կտոր, որ լողում անցնում էր նրա մակոյկի մօտից, և ապա մի կին, որ մինչև սրունքները կանդնած ջրի մէջ՝ յուսահատութեամբ առաջ էր պարզում ձեռքերը:

Կանաչագեղ սարի ֆօնի վրայ, որի գլուխը պակուած էր մի գեղեցիկ, սպիտակ ամարանոցով, արշալոյսի վառ արտափայլման մէջ, յայտնապէս աչքի

էր ընկնում մի բարակ, վայելահասակ, կիսամերկ կնոջ մարմին: Բարձր վեր քաշած շրջազգեստը չէր ծածկում նոյն-իսկ նրա ծնկները, իսկ արձակած մթագոյն բաճկոնակը հաւաքած թևերով՝ բաց էր արել քազուկները, պարանոցը և կրծքի մի մասը: Սև սաթանման մազերը խառն ի խուռն ծածկում էին նրա գեղեցիկ գլուխն և խիտ գանգուրներով թափում ուսերին: Հեռուից նկատելի էր, որ նրա սև աչքերից վազում են արտասուզի կաթիներ և վայր հոսում թուխ այսերի վրայով: Նկատելով, որ ձկնորսը գլուխը դարձրեց նրա կողմը՝ կինը նորից աղաղակեց. — Ծնո՞րհ արէք, բռնեցէք այն շորն և տուէք ինձ... ի սէր Աստուծոյ:

Ժպիտը, որ այնքան հազուագիտ էր ձկնորսի շրթունքների վրայ՝ երկար խաղում էր նրա դէմքին: Գուցէ այդ կինը հետաքրքրեց նրան, գուցէ այդշափ յուսահատութինը մի չնչին բանի կորստեան համար, շարժեց նրա ծիծաղը: Ալիքների վրայ լողացող առարկան դուրս եկաւ երեխայի շրջազգեստ: Ձկնորսը պէտք է քանի մի թեթև շարժումներ միայն անէր թիակով, որ մօտենար նորան: Հեռուից իւր մոխրագոյն կարճ կապայով, բարձր կօշիկներով և լայնեզր գլխարկով, ուժգին ու ճարպիկ շարժուածքով՝ նա երիտասարդի էր նմանում:

Կէս բարեկամական և կէս ծալրական անփոփոխ ժպիտը՝ ձկնորսը մակոյկը շարժեց դէպի կինը և մեկնեց թրջուած կապոյշ շրջազգեստը: Կինը բարձրաձայն ծիծաղելով և ցոյց տալով իւր սպիտակ առամները՝ չէր հեռացնում Պաւի դէմքից սև, փոսն ընկած աչքերը: Նրա առաջ թափուած էր թրջուած

շորերի մի կոյա: Զկնորսը զարմացել էր նրա վրայ: Ի՞նչպէս կարողացաւ այդ կինն այնպիսի արագութեամբ արտասուրքը փոխել ուրախ, անհոգ ծիծաղի: Միենոյն ժամանակ նա կարծես թէ չէր ուզում վերցնել մեկնած շվաղգեստն, և ցոյց էր տալիս, իր թէ իւր թուխ, բարակ մատները չէ կարողանում հասցնել շորին: Համեղիպելով կինջ հայեացքին՝ ձըկնորսն ամօթխածութեամբ աշքերը դարձրեց դէպի այլ կողմ: Տարօրինակ տեսարան էր: Կինը՝ գրգռող համարձակութեամբ և հետաքրքրութեամբ նայում էր տղամարդուն, իսկ տղամարդն՝ ամօթով երես էր դարձնում կինջից: Այսու ամենայնիւ ժայիտը ցած չէր գալիս ձկնորսի շրթունքից. նայելով գետի պարզուող ալիքներին՝ վերջապէս նա ասաց.

—Դէ, վերցրէք ձեր շորն, ես պէտք է առաջ անցնիմ. ինչ լաց լինելու բան կար. տեսնողն էլ կկարծէք, թէ ո՞վ գիտէ ինչ մեծ անբախտութիւն է պատահել:

—Ի՞նչ լաց լինելու բան կար,—կէս բարկացած, կէս հրապութիշ ձեերով աղաղակեց կինը: —Լաւ կուտէի ես, եթէ Աստուած մի արասցէ, կորչէք այդ շորը: Երեք օր է ահա, որ տիկինն դադար չէ տալիս ինձ երեխայի շորերը լուսանալու համար: Երեկ երեկոյեան լուսցի, այսօր, հէնց որ լոյսը բացուեց՝ վեր կացայ, որ պարզաջրեմ գետումը և այսակեղ ահա—գու բանը տես—քիչ էր մնում, որ շոբերից մէկը ջրին տալի:

Խօսքերը կաթկոի պէս թափում էին նրա բերանից, կարծես ուզում էին մէկը միւսից առաջ անցնել: Զկնորսը լսում էր նրան ուշադրութեամբ: Զնայի-

լով, որ նա ասաց թէ առաջ պիտի անցնիմ՝ բայց և այնպէս տեղից չէր շարժւում: —Բայց ո՞վ էք դուք, հարցրեց ձկնորսը: —Ե՞ս: Կինը ցոյց տուեց սարի վրայ սպիտակին տուող ամարանցը:

—Այստեղ ամարանոց եկած պարսնի տանը ծառայում եմ. աղախին եմ... Զմեւն եմ մտել ծառայութեան, կմնամ մինչև ամառուայ վերջը... իսկ աշնանը, երբ քաղաք վերադառնան՝ կինուանամ... մինչև աշունք, աւելի շեմ մնայ, չեմ ուզում...

—Ինչո՞ւ համար, հայնոյանք շնայ էք լսում, ինչ է, —հեզնութեամբ նրա խօսքն ընդհատեց ձկնորսը: Կինը հպարտութեամբ բարձրացրեց զլուխը. նրա գէմքն յանկարծ կարմրեց, իսկ աշքերն սկսեցին փայլել:

—Օհօ, թող մի փոքճեն... Ես հայնոյանքի տակ մնացողը չեմ, ես նրանցից չեմ, որ թոյլ գումար կրտիս նստեն: Իմ հայրս կառավարչական դիւնատան ծառայող էր, ես պատուաւոր ընտանիքի աղջիկ եմ... թող մէկն համարձակուի վիրաւորել ինձ. այնպիսի պատասխան կստանալ, որ տասն տարի չի մոռանայ: Նոյն իսկ դատարանի կղիմեմ... ես այնտեղ եղել եմ, վախեցողը չեմ:

Զկնորսը զարմանքով, համարեա երկիւղով նայեց նորան, բայց իսկոյն աշքերը խոնարհեցրեց. նորան այնպէս թուեց, թէ այդ կինջ հայեացքն այրեց իւր սիրտը:

—Լաւ, որ այդպէս է, էլ ինչո՞ւ էք հեռանում այդ տեղից:

— Ինչո՞ւ. Էհ, այնպէս: Ես ոչ մի տեղ երկար մը-նալ չեմ կարող: Ինչքան էլ որ լաւ տեղ լինի՝ էլի ձանձրանում եմ ու... աղիւ (մնաս բարով), որոնիր, որ գտնես: Սյնպէս է իմ բնութիւնս: Խսկ դուք ով էք: — Ես ով եմ... ձիճռէ:

Զկնորսը ժպտաց մտածման մէջ, խսկ կինը բարձրաձայն ծիծաղեց:

— Ծիծաղելու բան չկայ, — հանդարտութեամբ սկսեց ձկնորսը. — մարդու և ճիճուի մէջ զանազանութիւնը մեծ չէ... ճիճուին կուլ է տալիս ձուկը, խսկ մարդուն՝ հողը: Պան լինի թէ ռամիկ, թագաւոր լինի թէ զինուոր՝ միենոյն է, հողը բոլորին էլ կուլ կտայ՝ ինչպէս ձուկը ճիճուին: Բանը սրանումն է: Կինն ուշագրութեամբ ականջ էք դնում. ապա, փոքր ինչ յիտոյ, նկատեց.

— Խելացի խօսքեր են. ուղիղ է, բայց ախուր: Ինչո՞ւ մտածել մահուան մասին, քանի որ կարելի է ուրախ էլ ապրել... ոչ միշտ, այլ երեխն... Դուք ինչ գործով էք պարապում:

— Զուկ եմ որսում:

— Խսկ որտեղ էք ապրում:

Զկնորսն ասաց իրանց գիւղի անունը:

— Գիւղացին էք, փոքր ինչ տատանուելով հարցրեց նա:

Պաւը դրական նշան արաւ գլխով:

— Այ քեզ բան: Կեանքիս մէջ առաջին անգամն է, որ խօսում եմ գիւղացու հետ: Գիւղացի... ու այսպէս խելօք, քաղաքավարի... Գիտէք, որ մօտիկից դուք աւելի հասակաւոր էք երեսում, քան հեռուից: Երբ դուք գետի մէջ տեղումն էիք՝ ես կարծում էի,

թէ մակոյկի մէջ նստողն երիտասարդ է. հիմա տեսնում եմ, որ քառասնից էլ դէնն էք անցել:

Կինը ծիծաղում էր, շարժում ձեռներն և ամեն մի բոպէ փոխում դիրքը:

— Բայց այդ ոչինչ, — շտապեց աւելացնել նա. — Ինչ լնաս, որ քառասուն տարեկան էք, դուք դեռ կարգին տղամարդ էք:

Այս խօսքերն ասելիս նա ոչ ցածացրեց ձայնն և ոչ խոնարհեցրեց աշքերը. ընդհակառակն իւր թուխ, ճկուն ձեռքով բռնեց մակոյկի ցոռւկը, կարծես ուղելով աւելի երկար կանգնեցնել նրան: Զկնորսն էլ իւր կողմից այլևս ամօթխածութեամբ երեսը չէր դարձնում կոտղից, այլ բնրանաբաց նայում էր իւր խօսակցին. Կինը նմանապէս մօտիկից այնպէս երիտասարդ չէր երեսում, որպէս հեռուից. Նրա մանր ու գեղանկար դիմագծերով երեսն աշքի էր ընկնում անառողջ գոյնով և կաշուի դեղնութեամբ. մեծ, սև աշքերը մի տեսակ տարօրինակ կրակով վառւում էին խոր գոսերի մէջ. ճակատը ծածկուած էր մանր կրնճիռների ցանցով: Նա երեսուն-երեսուներկու տարեկան կիխնէր. Երեսում էր, որ նրա կեանքի ճանապարհը զարդարուած չէ եղել վարդերով: Բայց դրա հետ միասին նրա մէջ տեսնուում էր կենսունակութիւն, ճկունութիւն, երեսում էր հուր նրա աշքերում, շարժուածքում, ժպիտում: Նրա մէջ մի ինչ-որ առանձին բան կար, մի ինչ-որ տարօրինակ միաւորութիւն բոլորովին հակադարձ գծերի — ներփին, թագնուած ոյժ՝ և թուլութեան կիխը, անսահման սանձարձակութիւն՝ և լուռ տանջանք: Երբ նա յամառութեամբ կրծոտում էր շրթունքները, խսկ աշքերի մէջ երեսում էր մռայլ

արտայայտութիւն՝ կարելի էր կարծել, թէ նորան ամբողջապէս աիրել է կամ ցաւի կակիծը կամ կատաղի բարկութիւնը:

—Եւ չէք ձանձրանում դուք շարունակ գետի երեսին շրջելուց և ձուկ բռնելուց, —յենուելով մակոյի ցոռուկին հարցրեց նա:

—Թէ մէկ ձանձրանար... ամենելին, ես ուրախ եմ, պատասխանեց ձինորսը:

—Տարէք ինձ մի օր մակոյկով ման ածելու գետի վրայ... մի ժամ, երկու ժամ. ինձ երբէք չէ պատահել այդքան երկար լողալ ջրի վրայ. իսկ ինչ օր ես դեռ շեմ փորձել՝ միշտ խիստ ցանկութիւն եմ զգում փորձելու, եթէ դուք իմանայիք, թէ ո՞րքան տխուր եմ ես այսաեղ, ախ, ո՞րքան տխուր...

—Ինչո՞ւ էք տիրում, անշուշտ դուք բաւականաշափ գործ կանենաք:

—Ի՞նչ ասել կուղէ, գործից աւելի ինչ կայ: Իմ պարոնիս ատանը մէկ ես եմ, մէկ էլ խսհարաբուճին. տղամարդ սպասաւոր չեն պահանձ: Պարոնս ծեր է, հնաց միայն զբքեր կարգալով է զբաղուած: Տիկինս բարկութիւնից, որ մարզը ծեր է՝ ամեն բանի պրչ է դնում ու խօսում, խօսում կաշաղակի պէս: Ոչ մի բան լաւ չէ, ոչ մի բան նրա սրտովը չէ. երբեմն սաստիկ դանդաղ ես շարժում, ասում է, երբեմն սաստիկ արագ, այս ինչը շատ սառն է, այն ինչը շատ տաք... երեք երեխայ ունին և այնպիսի անտանելի երեխաներ, որ Սատուած աղատէ: Հիւրեր համարեա երբէք չեն գալիս: Ման արի առաւօտից մինչև երեկոյ միենոյն տեղում, և միշտ միւնքոյն բանը, միշտ միւնքոյն գործը. մարդու երես շես տեսնում:

է՛հ, անիծեմ այսպիսի կեանքը: Զէ, քաղաքում լաւ է...

Զինորսն ուշադրութեամբ լսելուց յետոյ պատասխանեց իրան յատուկ լուրջ հանդարտութեամբ.

—Ե՛, ինչո՞ւ անիծել մեր զիւղը: Բարի մարդու համար ամեն տեղ լաւ է, իսկ շարի համար վատ: Կնոջ երեսը բոցավառուեց, որպէս չիկացած կրակ:

—Ուրեմն ես չար եմ. և ինքն իրան աւելացրեց.

—այ քեզ գուհիկ:

Զինորսը կամ շլսեց, կամ այդ խօսքելը չդիպան նրա սրտին:

—Ո՛չ, ինչից իմանամ, դուք շար էք թէ բարի. ես այդ ասացի այնպէս, խօսքի համար... Ե՞րբ էք ուզում մակոյկով դրօսնել:

Նա տեսաւ, թէ ինչպիս սեղմուեցան կնոջ շըրթունքները, ինչպիսի փայլով փայլեցին նրա աշքերը: Զինորսը խղճաց նորան:

—Ծխաբհում մէկը միւսին լափել է աշխատում. զարմանալի չէ, որ ձեզ էլ որեէ վիշտ տանջէ. ես ինչ գիտեմ ինչ վիշտ: Եթէ ուզում էք՝ ձեզ զուարճութիւն պատճառելու համար, ման կածեմ գետի վրայ: Ինչո՞ւ չէ. մակոյկով ինչը կպակսի: Սացէք միայն որ օրը:

—Կիրակի, ինչպիս եմ, կիրակի... Պարոնս ընտանիքի հետ միասին քաղաք պիտի գնայ, տանը կը մնանք ես ու խոհարաբուճին: Օ՛, ինչպիսի բարի մարդ էք դուք. թող Աստուած վարձատրէ ձեզ: Ի՞նչ ուրախութիւն կլինի: Ես ամենելին չէի կարող կարծել, թէ այսպիսի յետ ընկած զիւղում կարելի է հաճելի ծանօթութեան հանդիպել:

Կնոջ գովասանքը դուր եկաւ ձկնորսին:
— Ուրեմն կիրակի . . . այսօր ի՞նչ է—շորեցաբ-
թի... վայ, գեռ շորս օք էլ կայ: Ե՞, ի՞նչ անենք,
լաւ բանի համար արէէ համբերել: Դէ, հիմա ինձ
հարկաւոր է վաղ տալ և ինքնայեռը զնել: Յտեսու-
թիւն, շնորհակալ եմ:

Երկու ոստինով նա հասաւ ափին և սկսեց
լուացն հաւաքել: Զկնորսը բաւական հեռացել էր ա-
փից՝ երբ աղաղակ լսեց յետեկից.

— Սպասեցէք, էյ, սպասեցէք:

Նա երեսն յետ գալձրեց:

— Ձեր անունը, ի՞նչպէս է ձեր անունը:

— Պաւ Կօրիցիկի, պատասխանեց ձկնորսը:

— Իսկ իմ անունս է Փրանցիշկա Խօմցօվա,—աղա-
ղակեց նա և սկսեց վազիլ ցողապատ կանչչի վրայով
գէպի տոնն: Ճանապարհի կէսին նա կանդ առաւ,
նայեց հեռացող մակոյկին, և նրա դժգոյն, թառա-
մած շրթունքների վրայ ժապիտ երեցաւ:

— Քաղաքավարի գիւղացի է... թէև արդէն երի-
տասարդ չէ, բայց քաղաքավարի և շատ դուրական,
շատ:

Փրանցիշկան կռացաւ և սկսեց կարգի բերել
թաց շորերը:

Կիրակի օրը Փրանցիշկան ոչ մի ըռպէ չէր հե-
ռանում խոհանոցի պատուհանից, որտեղից երեսում էր
նեմանը: Այս չորս օրուայ մէջ նա աւելի ևս նիհա-
րեց, աշքերն աւելի ևս փոսն ընկան: Մետաքսեայ
գեղին թաշկինակով սանրած մաղերը կապած, բաց
գոյնի շթեայ պինդ օսլայած շրջաղղեստը հագին,
բարակ կիսակօշկիներով պճնուած՝ նա անշարժ նըս-

տած էր պատուհանի առաջ և աշքը գետից չէր հե-
ռացնում: Ամարանոցը գտարկ էր և լուս: Պառաւ
խոհաբարուհին վազուց ճաշը կերել ու պառկել էր
քնելու, երեսը ճանճերից թաշկինակով ծածկած:
Փրանկան քանի մի գդալ արգանակ կիրաւ, ապա
վայր գրեց գդալն ու կրկին նստեց պատուհանի ա-
ռաջ: Երեսում էր, որ կերածը կուլ չէր գնում: Որքան
շատ ժամանակ էր անց կենում՝ այնքան աւելի ան-
հանգստանում էր նա: Մի-երկու անգամ նրա շըր-
թունքների վրայ խաղաց արհամարհական ժախտ:

— 2ի գայ, ի հարկէ, չի գայ: Անքաղաքավարի,
գուհիկ:

Յանկարծ նա ոտքից մինչև գլուխ ցնցուե-
ցաւ, վեր ցատքեց աթոփի վրայից և խելագալի նման
դուրս վազեց: Կանգ առաւ նա միայն գետի աւազոտ
ափին՝ վառ կարմիր երեսով: Նա մօտենում էր:

— Բարի երեկոյ, ինչո՞ւ այդքան ուշ: Ես արդէն
մտածում էի, թէ դուք չէք կատարի ձեր խոստումն
և չէք գայ: Լաւ չէ այդքան երկար սպասեցնել տալ:

Յայտնի երեսում էր, որ նա պատրաստ էր թըռ-
չելու նոյն-իսկ աշխարհի ծայրը, զոհելու ամեն ինչ
այն բաւականութեան համար, որ նա պիտի ստանար
իրան գուր եկած մարդու ընկերակցութեամբ զրօս-
նելիս:

Մակոյկը հեռացաւ ափից: Անսովոր լինելով ջըին
Փրանկան սկզբում վախենում էր, մակոյկի ամեն մի
շարժման ժամանակ ճիշ էր արձակում և բռնում ձը-
կնորսի շորերից: Այդ վարմունքը շարժում էր Պաւլ
ծիծաղը: Նա չէր կարողանում ըմբռնել, թէ ինչո՞ւ
մարդ պիտի անհանգիստ լինի ջրի վրայ: Միևնուն

Ժամանակ Ֆրանկայի շարժուածքն ու դէմքն այնքան նման էին ահօգնական, վախեցած երեխայի շարժուածքն ու դէմքին, որ Պատլի, աշխատելով հանգստացնել նրան՝ տկուց այնպէս սրտանց և բարձրածայն ծիծաղելով, որպէս գժուար թէ նա յաճախ ծիծաղելիս լիներ: Վերջապէս Ֆրանկան տեսնելով, որ մակոյիը, չնայելով իւր տատանումներին, միտք չունի ամեններն շուռ գալով՝ շուտով հանգստացաւ և ընկաւ հոգեկան ամենալաւ տրամադրութեան մէջ: Զուրը խաղադ էր և պարզ, ծածկուած մանր կնճիռների անհամար ցանցերով, որոնք մայր մանող արեի ճառագայթների տակ շողշողում էին ծիածանի բոլոր գոյներով: Մակոյի ափի վրայ կրացած՝ Ֆրանկան բռնում էր ձեռքերով ջրի մէջ բռնկող կարկեհաններն ու ադամանդներն և հետաքրքրութեամբ դիտում էր մատների արանքից սողացոյ մաքուր, բիւրեղանման կաթիլները:

— Օ՛հ, օ՛հ, — բացագանչում էր նա, — եթէ կարելի լինէր շարել այս կաթիլներն և շինել գինդեր ու մանեակներ՝ ի՞նչ լաւ կլինէր: Իմ տիկիններիցս մէկն տպարանջաններ ու դինդեր ունէր... ասում էին, թէ շատ թանգ արժեն... ինձ այնքան դուր էին գալիս նրանք, որ երբ տեկինս տամը չէր լինում և ինձ որևէ տեղ հիւր էին կանչում՝ ես միշտ զարդարում էի նրանցով...

— Դա շատ վատ բան է, — նկատեց Պաւլը:

— Խօս ես նրանց չէի ուտում և ոչ էլ պոկոս հատիկներից... Քալիս էի տուն թէ չէ՝ կրկին դնում էի իրանց տեղը, իսկի նշան էլ չէր մնում, թէ մէկը նորանց ձեռք է տուել:

— Դրանից ի՞նչ. այնու ամենայնիւ դուք վերցնում

Հիք ուրիշի սեփականութիւնը, այն-ինչ Աստուած խստիւ արգելի է այդ: Ես գօնէ կամաչէի և ուրիշի ունիցածին ձեռք չէի տայ:

Ֆրանկան ճառապւրիշ աշխերով նայեց ձկնորսին, բառվ լիքը ջուր վերցրեց, սրսկեց նրա երեսին և բարձրածայն ծիծաղեց:

— Օ՛, ի՞նչ խիստ մարդ էք եղիլ:

Պաւլը չէր կարողանում լարջ մնալ այս կնոջ ներկայութեամբ. նա սրբեց երեսը թեսով ու նոյնպէս ծիծաղեց:

— Կատարեալ երեխայ: Ա՛ւհ, ձեր ինչն ասեմ... Զարմանալու բան է, թէ ի՞նչպէս ձեղպէսները կարողանաւ են ապրել աշխարհից վրայ... Այս ի՞նչ է, — յանկարծ ընդհատեց նրա խօսքը Ֆրանկան:

Մի ահագին ձուկ, գալլածուկ կամ լօքօ, դուրս թռաւ ջրի միջից և կրկին մայացացաւ ջրի մէջ:

— Ընթը, զու այստեղ ես, — հակնաբար ժպաաց Պաւլը. — երկար չես զրօնի, վաղն ես քեզ կը ունեմ:

Նա մանացոյց արաւ իւր ձեռքով դրած ձրկնորսական սակառիկների շարքի վրայ, պատմեց թէ իսր խրճթի մօտ ունի ձկնարան, ուր պահում է ծախելու համար նշանակուած ձուկը: Ֆրանկան ուշագրութեամբ ականջ էր զնում, հարց ու փորձ էր անում, թէ մարեղ է ծախում ապրանքը, նրան փող է աշխատում, ապա տիսոր-տրտում թեքեց գլուխը:

— Եթ բանը լաւ է, — հապաչեց նա. — սեփական խրճթի, սեփական հացի կտոր ունիք, կարող էք աղայի պէս ապրել: ինձ նման ստիպուած չէք մի տեղից միւս տեղ քաշ գալ, ուրիշների շեմքերը մա-

չել, կախումն՝ ունենալ շարասիրտ մարդկանցից և
նրանց քմահաճոյքներից... ձիշտ է, երբեմնապէս
ինձ էլ ուրախ լովէներ բաժին են ընկնում, այնու
ամենայնին գետինն անցնի այս տեսակ սոտր կեանքը:
— Ասել չի ուզում, ի՞նչ կեանք է որ—.. կարելցա-
րար զուլսը շարժելով համաձայնութեց Պաւլը: Փրան-
կան կրկին շարժեց նրա զութը:— Կարելի է դուք կը
կամենայիք դուրս գալ մակոյկից և փոքր ի՞նչ դրս-
նել այս կղզու վրայ:

Փրանկան ուրախութիւնից սկսեց ծափ տալ:
— Ա՛խ, հրաշալի՛, հրաշալի՛ քան կիինի: Մօտե-
ցէք ափին: Ի՞նչ զեղեցիկ կդդի է: Ի՞նչու այսահեղից
տյսպիսի անուշ հոտ է բռում և այնպէս սաստիկ
որ զուլս պատյտ է գալիս... .

Գետի մէջահղում գտնում էր մի փոքրիկ,
ձռւաձն, աւագուտ կղզի, ամբողջովին ծածկուած կա-
նաչով: Հոկայական արքայամուսները, լայն տերևներով
ծածկուած անշարժ ցօղունների վրայ, բարձր բար-
ձրացը էին իրանց դեղին ծաղիկների վնջերը: Յա-
ծրում, խիտ գորզի նման, փռուած էր դաշտային
մեխակը:

Փրանկան արբածի նման վազվղում էր կղզու
վրայ, մեխակ էր քաղում ու հիւսում մազերի հետ,
որոնց վրայից մետաքսեայ գեղին թաշկինակը վաղուց
սողացել, ընկել էր ուսերին, և ցանում էր Պաւլի վր-
րայ բռներով ծաղիկներ: Պաւլն հանդարտ կրանում
և խնամքով փռնջ էր կապում նրանցից: Յետոյ Փրան-
կան բոլորովին անյայտացաւ արքայամումերի անտառի
մէջ: Երբեմնապէս միայն թաւուտ կանաչի միջից
լսում էր նրա հնչուն ձայնը.

— Այ քեզ թփեր, մարդու հասակից էլ բարձր են:
իսկ սա ինչ բոյս է:
— Խոնդատ,— բացատրեց Պաւլը:
Փոքր առ վիզք նրան արեառ այտերի վրայ
երեան եկաւ կարմրութիւն. կարծես արտափայլու-
թիւն լինէր դա արնագոյն ամպի, որ հալում է ա-
րեամաթի վերջին ճառագոյթների ազգեցութեան տակ:
Փրանկան, կարմրած այտերով, հերարձակ, դըզ-
գզուած մազերով, դուրս վաղեց դէպի ավն և մօտե-
նալով Պաւլին՝ երկու ձեռքով վաթ աթուեց նրա պա-
րանոցին:

— Ի՞նչպէս այսահեղ լաւ է և ուրախ... Ի՞նչպիսի
բարի մարդ էք դուք, որ այսչափ բաւականութիւն
պատճառեցիք մի խեղճ աղջկայ: Իսկ ես միշտ շատ
և շատ չնորհակալ եմ լինում նրանցից, ով ինձ բա-
ւականութիւն է պատճառում:

Սակայն այժմ այս լուրջ, ծանրաշարժ մարդոն
մի ինչ-որ տարօրինակ քան պատահեց: Կարմրութիւ-
նը տարածուեցաւ նրա ամբողջ երեսի վրայ, մշտա-
պէս հանդարտ, կապուտակ աշքերը մթնցին և վա-
ռուեցին մի տեսակ չարագուշակ փայլով: Կր ուժեղ
ձեռքերով գրկելով Փրանկայի ճկուն մէջքը՝ նա սեղ-
մեց նրան իւր կրծքին և աշխատում էր իւր շրթունք-
ները մօտեցնել նրա լրիտներին. բայց Փրանկան
ճարպիկութեամբ ազատուեց նրա գրկից ու բարկա-
ցած, միենոյն ժամանակ ծիծաղելով՝ բացազանչեց.
— Տես ի՞նչպէսն է եղել: Աբտաքուստ բարի, հա-
մեսու է երեսում, այն-ինչ խօսապէս նոյնն է ինչ որ
ուրիշները: Նրա համար, որ զրօննելու բերեց, իսկոյն
վարձ է պահանջում: Այս խօսքերն ըստ երկոյթին

ծակեցին Պատվի սիրաց: Նա խսկոյն զգասապցաւ և
շփեց ճակատը:

—Ի՞նչ բաներ էք հնարում, —մըմնջաց նա և փա-
ղաքանիքով բանելով նրա ձեռքից շփաթուած ասաց
բարձրածայն:

—Յիմաբ խօսքեր են. միթէ ևս քիշ առաջ որեէ
այդպիսի բան մտած ում էի: Աստուած ոչ անէ, որ
ես ձեզ այստեղ ըերեմ այդ տեսակ մաքով: Այնպէս,
խելքս մի քիշ շաղուեց: Մի բարկանար և հանգիստ ե-
դէք: Նամեցէք և հանգստացէք, իսկ ես այդ ժամանակ
կդնամ, կպարաստեմ մակոյկն և ձեզ կտանիմ տռն:

Փրանկան նստեց գետնին և լոր երկաւ ձեռքի

ամբողջ աւժով բռնեց Պաւլի փէշից:

—Ես տուն գնալ չեմ ուղում, —ակագակեց նա: —
Նա ի՞նչ տուն է, —առն չէ, դժոխը է: Եւ գուք էլ մի
հեռանաք ինձանից: Եկէք այսակեղ, աւելի մօտիկ: Եթէ
կարելի լինէք՝ ես ձեզմնից երբէք չէի բաժանուի. Ես
պարաստ եմ ձեզ հետ նոյն փակ ջուրն ընկնելու:

Նստեցէք ինձ մօտ, նստեցէք:

—Իսպան շփոթուած Պաւլը նստեց նրա կողքին:

—Ասացէք գուք վմձ... —ուզում էք խօսել ձիմուր-
սը, բայց նրա ձայնը յանկարծ կորուից:

—Ի՞նչպէս:

—Ասացէք, ով էք դաւք և ի՞նչպէս էիք ապրում
մինչև այժմ: Ի՞նչ էիք ուղում ասել... հա... ամն
վարձի մասին...

Նա սուկեց արմատից մեխակի մի ամբողջ փունջ
և իրան համար արտասովոր եռանդակ մեկաւի շնչաց.

—Ո՞ւհ, քո ինչն ասեմ. լիզուս բերանումս պասյա-
չէ գալիս: Ամօթ, ամօթ:

Փրանկան ուղղեց իրան և սկսեց արագ-արագ
խօսել:

—Եթէ ուղում էք՝ ես ձեզ ամեն ինչ կպատմեմ,
թէ ովկ ու ինչ եմ են: Եթէ հարցնողը բարի մարդ է,
ինչու չպատմեմ: Մի բանից միայն ես չեմ ամաշում—
իմ աղկալանիքից: Պավս ելկու սեփական տռն
ունէք. հայրս ծաւայում էք կառավարչական դիւնա-
տան մէջ. քեզուս որդին հարուստ է, չափազնց հա-
րուստ: Ետ վաստաբան է նումնի ական քաղաքում,
աղկանցունը կլուչեփիչ, լաւ ընտանիքից էլ իին առա-
ռու ապրում է հիմտ աղայի պէս: Սյ ինչպիսի աղկա-
կաններ ունիմ: Եո պատի ծակից շեմ բռնել, և եթէ
ստիպուած եմ հիմտ ուրիշներին ծառայ լինի՝ այդ
էլ, երկի, իմ չար բախտիցն է... Ռստած ինձ այն-
պիսի ստոր ծնողներ էք առել...

—Ծնողների մասին մեղք է այդպէս խօսել, —հա-
մարեա երկիւղով ընդհան տեց Պաւլը:

Փրանկան բարիկացաւ:

—Զեղ համար ամեն ինչ մեղք է, իսկ ինձ համար
ինչ որ ճշմարիտ է՝ ճշմարիտ է: Ես երբէք սուա չեմ
խօսում: Լսեցէք ասելիքս և յետոյ ինքներդ դատե-
ցէք, ուղիղ եմ ասում թէ ոչ:

Ետ ուղղեց նստածքն ու ձգեց ուները:

Նրա պապը, որ Ծնողների բնտիկիչ էր՝ երկու
սեփական տռն ունէք, ուղիղն տսած՝ երկու տնակի:
Որդուն, գեռ իր կենդանութեան ժամանակ, տուեց
կառավարչական դիւնատանը ծառայելու: Փրան-
կայի հօր պաշտօնն հաւանաբար ամենաշիններից
էք, որովհետեւ քիչ, շատ քիչ ողնիկ էք ստանում և
ման էք գալիս պատառուած կօշիկներով: Եւ այդ-

պէս էլ պիտի ման գար—նա արբեցող էր: Խմբել սովորեց նա զեռ երիտասարդ ժամանակ վատ ընկերներից, իսկ յետոյ արդէն բալորպին անձնատուր եղաւ այդ մոլութեան: Փրանկայի մայրը Կիլիչկելիշների պատուաւոր ընտանիքից էր, մինչև անգամ դաշնամուրի վրայ ածել գիտէր, և ածում էր երբեմն այնպէս բարձրաձայն, որ լսելի էր լինում հարկան փողոցում: Նա գեղեցիկ էր, սիրում էր շափաղանց դարդարանք և... երկրպագուներ: Երբեմնապէս ժամանակը շատ ուրախ էր անցնում նրանց տանը: Երբ հայրը տանը չէր լինում՝ հաւաքւում էին հիւրեր, խաղում, երգում, պարում էին, յետոյ գալիս էր հայրը—արբած թէ զգասա՞ այդ միննոյն էր,—դուրս էր անում հիւրերին, իսկ մօրն սկսում էր հայհոյել կամ ծհծել: Դեռ առաջ հայհոյում էր, իսկ յետոյ սկսեց նաև ծհծել: Փրանկան վեց տարեկան էր, երբ տեսաւ մօրն օտար աղամարդու հեա համբուրուելիս, իսկ երբ մայրը թողեց մարդուն ու գնաց ծնողների մօա՝ ութ տարեկան էր: Այն ժամանակ Փրանկան և երկու իրանից մեծ եղբայրներն սկսեցին ապրել՝ ինչպէս ճնդուկներ—ուստում էին այն, ինչ որ գտնում էին, տաքանում էին միայն այն ժամանակ, երբ կարելի էր լինում սլատսպարուել օտարի յարկի տակ: Հարեանները խղճում էին նրանց. երեմն մէկը, երբեմն միւսը կերակուր էին տալիս, տանում էին իրանց տունն ու պահում պահպանում մի-երկու օր: Ցղայոց բանը հեշտ էր. մէկը զինուոր զնաց, միւսը քարտաշ դարձաւ, թէ մէկտես այդ արեհեստը չէր համապատասխանում նրա դիրքին, բայց ինչ արած—կարիքն սափում էր: Ասենք, երկար էլ շտարաւ նա այդ ստո-

քացումը: Նա մի գունատ, թոյլ, նիհար տղայ էր, մի անգամ նրա վլուխը պտոյտ եկաւ նոր շինուող տան գերանների վրայ, ինեղը վայր ընկաւ փողոցի սալայատակին և շատ շանցած՝ մեռաւ: Մեծ եղբայրը, վինուորը, գնաց հեռու, աշխալի ծայրն, ու այն օրից նրա մասին ոչ մի ձայն, ոչ մի լուր չկայ: Տղամարդը միշտ տղամարդ է, նորան հեշտ է ասլու աշխարհի վրայ. բայց ինչ օրեր է քաշել ինքը Փրանկան, հօր, քաղցի ու ցրաի և այն գարշելի մարդոց հետ կուելիս, որոնք, երբ նա զեռ տամներկու տարեկան էր, կաղին ու կարկանդակներ էին տալիս՝ նրանից մի համբոյր ստանալու համար: Նրանք ասում էին, թէ ինքը գեղեցիկ է, և այս խօսքերը դուր էին գալիս իրան, բայց նրանք, այդ տղամարդիկը, դուր չէին գալիս: Փրանկան սաստիկ վախենում էր նրանցից, հրաժարում էր կաղին-կարկանդակներից և թագչում որևէ տեղում: Բայց թագչել այնպէս, որ նրանք չտեսնեն՝ չէր կարելի. պէտք էր փողոց դուրս գալ հարեանների մօտ զնալու համար, ուպէսզի մի կտոր հաց խնդրէ, կամ, ձմեռը՝ մի երկու կտոր փայտ: Տները հայրը վաղուց ծախել էր և ստացած փողերը կերել զեռ ասած, ինոչ հետ միհասին: Մալը քանի մի տարի ապրեց ծնողների տանն և կրին վերադարձաւ ամուսնու մօտ: Կիլչկիչի պապը մեռաւ, իսկ որդիքը ցրուեցան զանազան կողմեր (մէկը փաստաբան է նահանգական քաղաքում և հարուստ է, Ասալծու կրակի տէր): Ապրելու տեղ չկար, այդ պատճառով էլ մայրը վերադարձաւ: Բայց հայրն այդ ժամանակ արդէն զիկուել էր պաշտօնից: Նա ամբողջովին անձնատուր եղաւ արբեցողութեան, կէս տարու

չափ հիւանդութիւն քաշեց ու մնաւ հիւանդանոցում։ Մայրն էլի երեք տարի ապրեց սարսափելի աղբատութեան և չքաւորութեան մէջ։ Նա հաշիա էր գործում, տանում տները ծախելու, սպիտակնդէն էր վեցնում կարերը։ Այդ ժամանակ երկրպագուների մասին մտածելն անգամ մոռացաւ նա, ամբողջ օրեւով հազում էր և լաց լինում։ Ֆրանկային նա պահեւ էր իր մօս, կարդալ ու զիել էր սովորեցնում, և միայն մահուածնից քիչ ժամանակ առաջ տեղ գտնու տուեց մի տիկնոց մօտ ծառայելու։

— Խեղ, Խեղ զմ, — զայրայտօծ աղաղակեց Ֆրանկան։

Տների կինը հօրս հետ միասին անուշ արաւ ու արդի կարդի վրայ փշացրեց, մեզ երերիս, չան լակոտների նման, վայր ձկեց ու զնաց ծնօղների պատրաստի հայն ուտելու։ Ի՞նչ օգուտ, որ մահուածնից առաջ խելք գլուխն հաւաքեց ու սկսեց դողդողալ ինձ վըրայ՝ ինչպէս թուխով ձագի վրայ։ Երբէք ես չեմ ների նրա արածները, որոնք իմ կորստեան պատճառ դարձան։ Մէծ բան է, որ խելքի եկաւ այն ժամանակ միայն, երբ ոսկորն ու կաշին էր մնացել, երբ ոչ ոք նրա երեսին նայել անգամ չեւ ուզում։ Եւ նոյնիսկ այդ ժամանակ էլ, եթէ մէկը հէնց մտավ միայն անէր՝ իսկոյն կժուչը ու ինձ կմոռանար. ծ, և ի՞նչ պէս կթուչը. ես, ախր, նրան լաւ էլ ճանաչում։ Երբ Սստծու և մարդկանց երեսիցն ընկաւ այն ժամանակ միայն կպաւ ինձ։ Իսկ առաջ ինչ էր մտածում։

Այն արինոր, որի մօս ժառայում էր Ֆրանկան՝ բարի իին էր, քաղցրութեամբ էր վարւում նրա հետ, սովորեցնում էր հաշիա գործել ու լուանալ։ Բայց

ոլարունը, հետևում էր նորանի ամեն մի քայլում, ամեն մի բռնէ, և թէպէտ Ֆրանկան երկար ժամանակ հակառակում, պաշտպանում էր, երկիրդ կրելով լույտառակօթիւնից՝ այսու ամենայնիւ վերջ ի վերջոյ ազատուել չկարողացաւ։ Նա շատ դոր էր զալիս Ֆրանկային, զա առաջին տղամարդն էր, որի զբան իրեազարի նման սիրահարուեցաւ։ Տիկինն իմացաւ այս ամենն և գուրս արաւ Ֆրանկային։ Պարոնը նորան իմուսն ուուրի ընծայեց։ Այդ փողը բաւականացաւ նորան ուզիկ մի ամիս։ Այս մնաց անգութեան լաց էր լինում և աշխատում սկսվանք վըտնել ընկերական որախ շրջանում։ Ցեղոյ նա մտաւ ծառապութեան ուրիշի մօտ։ Այդպէն էլ գնաց ու զնաց... Համուրել անդամ չէ կարելի այն աները, որտեղ նա ծառայել է։ Մի տարուց աւելի նա ոչ մի տեղ չէր գաղտարում, այդ էլ հաղիւ երկու անգամ պամահած լինի։ Հէնց մի կեպիտ խօսք էր լսում թէ չէ թողնում էր ծառայութիւնը. աշխատանքը շատ էր լինում կամ զուարձանալու ժամանակ քիչ էր մընում—էլի թողնում էր։ Նրա համար անսամելի էր շալունակ միննոյն երեսները տեսնել։ Սսենք շատ անգամ նրան զուրս էլ էլին մնում և միշտ միննոյն բանի—կողմութեան և երկրողագուների պատճառով։ Նա դիւրագրգիռ է, չէ թոյլ տալիս իրան վիրաւորել, մի խօսքի վումարէն տասն է տառւմ։ Երբեմն էլ պարուների երեսն ի վայր այնպէս կիութիայ, որ զարմանցից նրանց բերանները բաց կմնան։ Երկու անգամ այդ բանի համար նրան հաշտարար դատարան են քաջ տուիլ։ Առաջին անգամ նու վախենում էր, բայց երկրորդ անգամ զատարանում զգում էր իրան այն-

պէս՝ ինչպէս տանը, և այնպիսի գոյներով նկարազրեց մեղադրազներին, որ նրանք այնուհետեւ հազիւթէ համարձակուին դատ բանալ իրանց աղախնի դէմ։ Մի անգամ նորան վատ բան պատահեց—երեք օր կալանաւորուած մնաց ոստիկանական տան մէջ, այն էլ բոլորովին անմեղ տեղը։ Փրանկայի տիկիններից մէկի մատանին կորել էր, նա սկսեց մեղադրել աղախնին, դու եւ գողացել, ասում է։ Ինչքան էլ լաց եղաւ Փրանկան, ինչքան էլ երդում կերաւ՝ անօդուա։ Իմաց առուին ոստիկանաւթեանը։ Եւ ինչ, մատանին գտնուեցաւ, ինքը տիկինը զցել էր զգբոցի յիտեր։ Յետոյ Փրանկային անարդար մեղադրանքի համար փող առաջարկեցին, բայց նա պատառուեց թւրթագրամը, ձգեց ոտնիրի տակ, հայշոյեց տիկնոջն ու հեռացաւ։ Ոչ ոք նրան այնպէս շէր վիրաւորել, ինչպէս այդ տիկինը։ Ինչ որ ուղիղ է՝ ուղիղ է, իսկ ինչ որ սուտ է՝ սուտ է։ Ճիշտ է, պատահում էր— այն էլ ոչ յաճախ—որ նա հագնում էր տիկնոջ շորերից կամ զարդերից մէկը, բայց յետոյ միշտ դնում էր տեղը։ Նա իրան հոգաւն շատ մեղք է արել, բայց երեք բանում ոչ ոք նրան չէ կարող մեղադրել։ Նա երբէք չէ խմում, գողութիւն չէ անում և սուտ չէ խօսում։ Յյուպէս է նրա բնութիւնը—այդ բաներն անել նա չէ կարող։ Եթէ նա ցանկութիւն զգար՝ կանէր, բայց նրա մաքովն անգամ չեն անցնում զրանք։ Ընդհակառակը՝ օղի նա տեսնել անգամ չէ ուզում։ Շորեր, արդ ու զարդ թէն սիրում է, բայց ոչ այն աստիճան, որ հօգուն մեղք անէ։ իսկ սուտ խօսել ուղղակի չէ կարողանում, որովհետեւ Աթէ մի անգամ սկսեց խօսել՝ կասէ ամեն ինչ, որ միտքն է գալիս,

յանկութիւն ունի նոյն-իսկ լսելու, բայց լեզուն պահել չդիտէ։ Եւ ինչո՞ւ համար լուէ նա ոչ ոքի և ոչնչի մասին հոգու չէ բաշում։ Խօսքերը քրանկայի քերանից հիմա էլ թափւում էին կարկտի նման։ Նա պատառում էր, որ սիրահարներ շատ է ունեցել, մէկը նրանցից կամ նույն էր ամուսնանալ Փրանկայի հետ։ Բայց ինքը Փրանկան մերժեց նրա առաջարկութիւնը, որովհետեւ սիրահարը տիսմարի մէկն էր և շուտով ատելի դարձաւ իրան։ Ուրիշ երկուսի հետ նա ուզում էլ էր ամուսնանալ, որովհետեւ խելացարի նման սիրում էր նրանց, և լաւ էլ մարդիկ էին, օրինաւոր ընտանիքից։ Բայց բանն այն է, որ նրանք միտք շտնէին ամուսնանալու։ Առաջին ըովոնիւրում, այդ երկուսի հետ ամենայն յարարերութիւն կարելսց յետոյ, նա յուսահատութիւնից չգիտէր ինչ անէր, մազերն էր փետում, աղի արտասուրով լաց էր լինում։ Բայց յետոյ եկաւ այն համոզման, որ մարդիկ ոչ խիզ ունին, ոչ հաստատակամութիւն, և ոչ մի բանի համար հոգս անել չարժէ։ Մէկը շիլինի՝ միւսը կլինի—վճռեց նա մի անգամ ընդ միշտ և հիմա արդէն սիրաներ շէ գործում։ Նա գեռ չէ տեսիլ, որ տղամարդիկ մի ուրիշ կնոջ յետից աւելի ընկնէին, քան իւր յետեկից։ Պարում է նա լաւ և երբէք ձեռքից բաց շի թողնի պարելու և զուարձանալու ասիթը, թէպէտ և դրա համար հէնց վաղը դուրս անեն նրան պաշտօնից, որի մասին նա նոյնչափ հոգս է քաշում։ որշափ անցեալ տարուայ ձեան մասին։ Տեղ միշտ կտնուի, իսկ թէ մրտեղ կամ ում մօտ— այդ բոլորովին միենոյն է նրա համար։ Ամենքն էլ օտար են, ամեն տեղ էլ ուրիշի տուն է, ուր էլ որ լինի՝

նա մի որը է, որին ոչ ոք չի սիրի ու չի վաղաքչի:
Ֆրանկան լաց եղաւ, Այն, նա մհնակ է աշխար-
հիս վրայ, ոչ ոք նրա մասին մտածել անկատ չէ ու-
զում: Մի անգամ նա հիւանդացաւ տեսդից և ստի-
պուած էր պառկելու հիւանդանոցում. ինչ ասել կու-
զէ, որ նա հիւանդանոցում էլ կմեռնի իւր հօր նման
կամ աւելի վատ սիեղ—մի որեւէ որատի տակ. իսկ
երբ որ մեռնի անջուշտ ոչ մի չուն անգամ լաց չի
լինի նրա վրայ: Ում է նա հարկաւոր և ով է նրան
մտղի շափ անգամ սիրում: Մարդկանցից նա միտին
տեսել է նախատինք, կրել է նրանց քմահաճոյքն ու
վիրաւորանքները:

— Ամեն մարդ ունի մի հարազատ—քոյր, եղբայր,
մայր, — որին դիմում է նա խորհուրդ կամ օդնութիւն
խնդրելու դժուար բռովիներում . . իսկ ես ոչ չու-
նիմ . . . ինչպէս ովր ծնուեցայ՝ այսպէս էլ որբ մնացի
ընդ միշտ:

Փրանկան սրբում էր արտասուցը պլխակապի
ծայրսկ, որ ընկել էր պլխից պարանոցի վրայ: Ժա-
մանակ առ ժամանակ արտասուցը խեղում էր նրան,
այսու ամենայնիւ խօսելուց չէր դադարում և կարծեն
երբէք էլ չէր դադարելու: Նրա խօսքերի մէջ երեսում
էր ոչ թէ պունկախօսութիւն, այլ համարեա կատա-
րեալ բացակայութիւն այն բանի, որ խզահարու-
թիւն է ասուում, և միենոյն ժամանակ ընալորութեան
կոպիտ օրտաքանչութիւն, որին անծանօթ է կոմպո-
միսը: Յանկարծ նա ելկու ձեռքով բռնեց գլուխն
և աղաղակեց: թէ քունքերի մէջ անտանելի ցաւ է
զգում: Գուցէ այդ ցաւը մեխակի շշմեցնող հոտիցն
էր, գուցէ մօտենում էր նրա հիւանդութեան սաստ-

կութեան ժամը: Ակրծին ժամանակներս նա առանջւում
է սաստիկ գլխացաւսվ, մահաւանդ սրեւէ վրգովմուն-
քից յեառյ:

ի՞նչ էր զգում արդեօք Փրանկայի կողքին նըս-
տած ծանրաբարզ, լուրջ մարդը, որ իւք փաքրիկ քա-
ղաքից գէնը չէր անցել, որ հոգով ու մարմնով սերտ
կապուած էր գետի արձակ աւարածութեան, մաքուր
օգի, միայնակ անց կացրած օքերի ու գիշերների խա-
գազութեան հետ, մի մարդ, որի աշքերը, չնայելով
հասակին, սպահամել էլն մանկական պարզութիւն
ու անմեզալթիւն: Արգեօք կհրէ նա կոպտաբար Փրան-
կային գէպի մակոյկն և լուռ արհամարհանքով տեղ
կհասցնէ նրան, թէ իմացած լինելով նրա պատմու-
թիւնը՝ ինքն էլ կցանկանայ լինել մէկը նրանցից,
որոնց մասին քիչ առաջ պատմել էր նա և նրան
ծածկող կեզառա թծերի վրայ աւելացնել էլի մի ու-
րիշը: Կարելի է ձկնորսն համարում է նրան անփ-
ծուած, անսուրբ, և խաչակնքելով երեսն երկիւղա-
ծութեամբ կնոջ կերպարանք առած այդ չար ոգուց՝
կսկսէ փախչել առանց յիտ նայելու: Երբ որ Փրան-
կան խօսում էր՝ Պաւլի աշքերում երեսում էր երբե-
մնապէս զարհարանքի ու զգուանքի արտայայտութիւն,
երբեմն էլ ամաչելով թեքում էր երեսը նրանից և
խոնարհեցնում գէպի գետը. երկի այդ ժամանակ նա
տեսնում էր ոչ թէ ջաւք, այլ անյատակ անդունդ, և
եռացող ձիւթ ու կրակով:

Քիչ յետոյ նա սկսեց խօսել.

— Խզակլի ես դու, ջն, ի՞նչպէս խղճալի. զգուար
թէ քեզանից աւելի խղճալի մարդ լինի աշխարհիս
երեսին: Լսել էի իս, թէ քաղաքներում ապրում են

այդպիսի մարդիկ, բայց չէի հաւատում: Հիմա տեսնում եմ, որ ուղիղ է եղել: Թափառական կեանքը ես վարել գու, ու այնպիսի վատ, այնպիսի մեղսալից կեանք, որ Աստուած աղատէ: Թնդ այդ կեանքը, խելքի արի, ուղղութր... թէ չէ այս կեանքումն էլ լաւ օր չես տեսնի, հոգիդ էլ կիրցնես:

Պաւի ձայնը ցտակցութիւնից զատ ոչինչ չէր արտայայտում: Ֆրանկան զարմանքով գլուխը դարձրեց նրա կողմը: Սովորաբար այսպիսի խոստովանութիւններից յետոյ՝ նրա ունկնդիրները ծիծաղում էին արհամարհանքով և վերջնականապէս: դադարում էին քաշուել, պատկռուել նրանից:

Ֆրանկայի զարմանքն աւելի ևս սաստկացաւ այն ժամանակ, երբ ձկնորսն սկսեց խօսել ուղղուելու մասին:

— Յիմար խօսքեր են,— բայց անչեց նա: — շնտ կուզէի իմանալ, թէ այդ ինչից պէտք է ուղղուել: Ֆրանկան անկեղծ էր խօսում: խղճի խայթ ամենեին նա չէր զգում, ոչ մի յանցանք իւր վրայ չէր գտնում: Պաւլը խորասուղուած իւր մաքերի մէջ՝ ուշք չդարձրեց նրա խօսքերին:

— Այս աշխարհում լաւ օր չես տեսնի, հոգիդ էլ կիրցնես,— կրկնեց նա: — Ինչո՞ւ համար ազնիւ չլինել: Ազնիւ լինելը լաւ բան է: Երբ որ մարդու խղճի վրայ ոչ մի վատ բան չէ ծանրացած՝ նա թեթև է զգում իրան, ինչպէս մի թռչուն, որ մինչև ամպերն է հասնում: Այն ժամանակ մահից էլ մարդ չի վախենայ, թէկուզ հէնց այս բռպէին էլ մեռնելու լինի, եթէ միայն հոգին մաքուր է:

— Հոգիս որն է, ինչ հոգի, — դժոհութեամբ բա-

ցագանչեց Փրանկան: — դատարկ բաներ են: Մարդը կմեռնի, որդերը կուտեն նրան ու . . . ամեն ինչ վերջացաւ: Սաւուել է կայ և երկինք, և դժոխք, և յաւիտենական վիրկութիւն, և յաւիտեն ական կորուսա: Եւ մինչև անգամ եթէ ոչինչ էլ չլինէր՝ մարդու մէջ կայ մի այնպիսի բան, որ մեղքի մէջ թաւալուել չէ ուղղում, բոլորովին այնպէս ինչպէս մարմինը ցեխտ ջրի մէջ: Եթէ քեզ հրամայէին մանել աղասու ջուրն և մինչև կոկորդդ թաղուած նատել նրա մէջ՝ ուր կգամը քեզ, համ Այն-ինչ հիմա քո հոգիդ աղտոտ ջրի մէջ է նստած: Օ՞հ, ցաւում եմ ես քեզ վրայ, մե՛ զք ես դու էլ, քո հոգիդ էլ թէ այն և թէ այս աշխարհում: Գիտես ինչ, թնդ քո թափառական կեանքոդ, ինչ բաւականութիւն ես զգում զանազան անկիւններում քաշ զալով: Ես այդ բանը հասկանալ չեմ կարողանում, ես կարծում եմ, որ լաւ է մարդ մի տեղ գտնէ ու աշխատի տաքացնել այդ աեղնի իւր համար: Դու էլ կաց մի տեղում աւելի լաւ է՝ տար ամեն ինչ, տանջուիր, բայց նստիր միենոյն տեղում: Կոտորես, յետոյ կարես, այնպէս էլ քեզ կոսկորեն ու կսիրին: Եսկ այն մարդոց վրայ, որոնք քեզ մեղքի մէջ են ձգում, թքիլ: Բարի մարդիկ նրանց մէջ, երկի, չկան, որպինետև բարի մարդն անպատճառ կամունանայ այն աղջկայ հետ, որ նրա համար մոռանում է ամօթը: Դութ չունին ամենելին նրանք իրանց սրտում: Թքիր նրանց վրայ, քէֆ-զուարձութիւններիդ վրայ էլ թքքիր: Խելքդ զլուխդ հաւաքիր, ուղղութր, և զու լուկոյն կզգան, թէ ինչպէս կեանքը կթեթևնայ քեզ համար:

— Իմ ամբողջ կեանքրում այսպիսի մարդ առաջին ամսամն եմ տեսնում, — մըմնջաց ֆրանկան, — սա ինչէ, ծպտեալ քահանանց, թէ ճգնաւոր: Հրաշք է կատարեալ: Նա սկսեց քրքուալ և իրան յատովկ կատուի հրապութիշ ճարպիկովժեամբ մի անգամից վեր թըռաւ ռտրի:

— Ե՞ս, բաւական է շատափառութիւն ամսնք: Չեզ հետ նասելը շատ լաւ է, այսու ամենայնիւ ժամանակ է տօն գնալու: Երեկոյ է արդէն: Պարոններու չաւտղի կվերադառնան քաղաքից: Եթէ տեղանը մարդած չլինի և ինքնայենը դրած՝ այնպիսի բերան կրանան, որ Աստուած տպառէ: Գնանք:

Պաւը լուր նստեցրեց նրան մակոյին ու սկսեց թիւվարել: Երկար ժամանակ նրանք առաջ էին գլուխում խար լուսիթեան մէջ: Կարելի էր ենթադրել, թէ ֆրանկան քնած է՝ նստած յատակի վրայ, համարեալ կպած Պաւի ուսներին, եթէ մարդ շանսնէր նրա վալան աշքերը, որոնք անթարթ նայում էին ուղեկցի դէմքին:

Երբ գեաւեզրեայ բարձր սարի վրայ երեւցան ամառանոցի ծառերի գեղատեսիլ սւուագծիր՝ ֆրանկան յանկարծ գլուխը զերեց Պաւի ծնկներին:

— Օ՛, ինչպէս բարի ես դու, ու ինչպէս, ինչպէս սիրելի, — արագ-արագ խօսեց նա. — արդպիսի բարի և սիրելի մարդ ես իմ ամբողջ կեանքրում շեմ տեսել, կարծեմ: Եթէ դու ինձ բարեկամ գառնայիր՝ աշխարհում էլ ոչինչ չէի ուզիր, աչ մի բովէ ես չէի հեռանայ քո մօտից: Եթէ երկուսիս մէջտեղը ծով էլ լինէր՝ ես լողալով կհամեմէի քեզ: Եւ այս բոլորը նրա համար, որ դու այդպէս բարի ես ու խղճացիր ինձ

վրայ: Ոչ ոք առաջ ինձ կարեկցութիւն չէր ցոյց տալիս. բոլորն էլ ծաղրում, անարգում էին ինձ, թէ սիրում էլ էին, և հէնց նրանք էին աւելի անարգում որոնք երգուում էին, թէ սիրում են: Իսկ դու ինձ շծաղրեցիր, շանարգեցիր, ոչինչ շպահանջեցիր ինձանից. խօսում էիր ինձ հետ՝ ինչպէս հալր, ինչպէս ամենալաւ բարեկամ: Թող Սատուած քեզ դրա փոխարէն քո սրառվդ տայ, իմ սիրելի, իմ ուկի, իմ գոհար:

Փրանկան բռնեց նրա ձեռքը և սեղմեց իւր շրթունքներին: Պաւին թուեց, թէ մէկն այրեց նրա ձեռքը շիկացրած ածուխով: Նա կռացաւ, բարձրացրեց նրա գլուխն իւր ծնկներից, և համբուրեց նրա մազերը: Այդ համբոյրի տակ ֆրանկան սկսեց զողդողալ՝ ինչպէս մի վախեցած թոշուն: Բայց Պաւին յետ քաշեց շրթունքները նրա գլխից և շնչաց.

— Հանդարատուիր, որդեկաս, հանդարատուիր, ուշքի արի: Նայիր, ինչպէս պայծառ են փայլում աստղերն երկնքի վրայ, ականջ դիր, թէ ինչպէս ջուրը խոխոջում է մակոյիկ շուրջը: Ամբողջ կեանքրում ես նայում եմ այդ աստղերին և ականջ դնում ջրի խոխոջինին: Դու էլ նայիր և ականջ դիր: Կարելի է սիրտ բացուի. կարելի է, քո հոգիդ էլ սիրէ այս բարձր երկինքն և այս մաքուր ջուրը: Հանդարատուիր:

Նա կրկին վերցրեց թիւակը և ուղղեց մակոյիը դէպի ափը: Ֆրանկան թուաւ, ոտքի կանգնեց:

— Իսկ մենք երբ կտեսնուինք, սիրելիս, երբ կը տեսնուինք կրկին, — հարցյաց նա:

Նա սըբեց արտասուքը թաշկինակով. նրա շըրթունքների վրայ նորից երկեցաւ թեթևամիտ անհո-

գութեան ժպիտը: Պաւլը մի բովէաչափ մտածելուց
յետոյ՝ ասաց.

—Կուզե՞ս հէնց վաղն ես կգամ ալստեղ, այս միեւ-
նոյն ժամին. արի դու էլ, կխօսինք. շատ բան ու-
նիմ քեզ հետ խօսելու: Ցաւում եմ քեզ վրայ, աիս,
շատ եմ ցաւում:

Պաւլն երկու-երեք անգամ եկաւ պայմանաւո-
րուած տեղը, բայց կարճ ժամանակով: Մի անգամ
Փրանկան ժամանակ չունէր. ամարանոցն հիւրերով
լցուել էր: Կովլիս հայհոյանքով յայտնեց նա այս
բանը Պաւլին, իսկ Պաւլը խստութեամբ նկատեց
նորան, թէ ում հացով որ մարդ ապրում է նրան լաւ
չէ հայհոյել. շտապեցնում էր նրան տուն գնալու և
չնայելով Փրանկայի խնդիրներին ու բարկացած լուռ-
թեանը՝ թողեց, հեռացաւ ափից: Երկրորդ անգամ
Փրանկան աւելի աղատ ժամանակ ունէր. խօսեցին
նրանք աւելի երկար. բայց այս խօսակցութեան ժա-
մանակ Պաւլն այնպէս անհանգիստ էր երեսում, որ-
պէս չէր եղել ոչ մի ժամանակ: Մակոյկի մէջ պտղու
պտղոյտ էր անում, յոգոց էր քաշում, երկու-երեք ան-
գամ հառաչեց, կարծես մի տեղը ցաւելիս լինէր, ու
առանց մնաս բարով ասելու՝ շտապով մակոյկն յես
քշեց ափից թիւկով:

Երբարդ տեսակցութեան ժամանակ, երեկոյեան,
երբ ցնորքներով ողերորուած ու գրգռուած Փրանկան
երկու ձեռքով վաթաթուեցաւ Պաւլի պարանոցին և
առաջին անգամուայ նման այրեց նրան իւր համրոյ-
րով: Պաւլն այնպիսի ուժով զէն հրեց նրան, որ նա
անշուշտ վայր կընկնէր՝ եթէ չբռնէր մակոյկի ցուուկը:
—Լոյիր, —ոկսեց խօսել Պաւլը յօնքերը կիտած և

աւելի խիստ, քան սովորաբար իսօսում էր. — զու այդ-
պէս մի կպչիք ինձանից, թէ չէ էլ ոչ մի անգամ ես
չեմ գայ... աչքովդ էլ չես տեսնի: Ես ուզում եմ քեզ
բարի ճանապարհի բերել, ոչ թէ շար... Ուզում եմ
հոգիդ աղատել, ոչ թէ իսպառ կորցնել: Այն երե-
կոյից յետոյ, երբ դու կզու վրայ ինձ ամեն բան
պատմեցիր՝ ես գիշեր-ցերեկ հէնց միայն մի բանի
մասին եմ մտածում, թէ ինչպէս օգնեմ քեզ, որ դու
թողնես քո այդ անիծեալ կեանքդ... իսկ դու աշխա-
տում ես ինձ էլ մեղքի մէջ ձգել... Թիւ, գարշելի է...
Կատարեալ արրեցող հս դու... թէկ օղի չես խմում:
Նա թքեց ջրի մէջ և շարունակեց խօսքն, առանց
ուշադրութիւն դարձնելու ապշած, զարմացած Փրան-
կայի վրայ.

—Վաղն ես կգամ. եթէ դու քեզ լաւ կպահեն՝
կխօսինք, ինչպէս վայել է. իսկ եթէ այսօրսւայ պէս
կլինիս՝ այն ժամանակ—մնաս բարով. կործանուիր
բոլորովին. երկի քեզ, ինչպէս վերջին դուռն ընկած
արբեցողի՝ ոչ օգնել կարելի է, ոչ աղատել:

Բայց երկրորդ օրը Պաւլը չկարողացաւ գալ
նշանակած տեղը: Զուկ բռնելուց յետոյ տուն վերա-
դառնալիս, նա նկատեց գիւղի ճանապարհի վրայ մի
կնոջ կերպարանք: Մութն ընկնում էր արդէն, բայց
և այնպէս Պաւլը ճանաչեց Փրանկային բաց գոյնի
շորերից և աշխայժ շարժուածքից: Զկնորսը զարմա-
ցած գիմաւորեց նրան:

—Դու ինչո՞ւ եկար այստեղ,—հարցրեց նա խըս-
տութեամբ, նոյն-իսկ կոպատաբար, թէկ նրա ձայնի
մէջ թագնուած էր լաւ շքողարկուած ուրախու-
թիւն:

Փրանկան բռնեց նրա ձեռքը:

— Օ՛հ, սիրելիս, փորձանք եկաւ գլխիս, այնպիսի
փորձանք, որ չգիտեմ, պիտի կարողանամ դիմանալ,
թէ ոչ... չէնց որ իմացայ իմ անբախտութիւնը՝ իս-
կոյն քեզ մօտ վաղեցի...»

Նա սկսեց լաց լինել:

— Առաջ հեռանանք այստեղից, — ասաց Պաւլն և
տարաւ նրան մի կողմ, գիւղի յետեռում սկին տուող
եղենիների մօտ: — Այնտեղ ոչ ոք չկայ, իսկ այստեղ
ճանապարհը մօտիկ է. մարդիկ ջուրն են գնում...
կտեսնեն, կսկսն դուրս տալ:

Յանկարծ Փրանկան ճշաց և սկսեց յետ վաղել:
— Վայ, գերեզմանատուն է, — աղաղակից նա:

Եղենեայ անտառի մէջ, յիրափ, տեղտեղ գե-
րեզմանական խաչեր էին երկում:

— Է՛, ինչ անենք որ գերեզմանատուն է, — հեգնօ-
րէն ժպտաց Պաւլը. — ինչ վախենալու բան կայ. մեղ-
քից վախեցիր, ոչ թէ գերեզմանատնից. կենդանի-
ներից, ոչ թէ մեռածներից... Դէ, հիմա ասա տես-
նենք, ինչ փորձանք է պատահել քեզ:

Փրանկան սեղմուելով նորան, լալով ու շտապե-
լով՝ կցկառվ կերպով սկսեց պատմել, թէ տիկնոջ
հայրը հիւանդացել է քաղաքում և այդ պատճառով
պարոնը տեղափոխում է ամարանոցից ոչ մի ամիս
յնտոյ, որպէս որոշուած էր առաջ, այլ երեք օրից
յետոյ: Երբ որ Փրանկան իմացաւ այդ՝ սիրտն այն-
պէս ցաւել սկսեց, որ քիչ էր մնում գետին գլորուէր:
Նա հիմա ամենեին, ամենեին չէ ուզում հեռանալ
այստեղից: Կմեռնի ու չի գնայ. շան նման գետի
ափին կպառկի ու կսատկի քաղցածութիւնից, բայց

չի գնայ: Թող նրանք գրողի ծոցը գնան. ինքը նոյն-իսկ
կօգնէ նորանց շորերն հաւաքելիս, բայց իրան՝ Փրան-
կայի համար, այստեղ նոր երկինք, նոր բախտ է բաց-
ուել. և նա չի թողնի Պաւլին, ոչ, չի թողնի:

— Քեզանից չեմ բաժանուի ես, իմ աղաւնի, իմ
ոսկի, չեմ բաժանուի. ուզում ես դէն շպտափը ինձ,
ծեծիր, սպանիր, ես քեզանից չեմ բաժանուի, չեմ
գնայ:

Նա ծածկում էր Պաւլի ձեռները համբոյներով
և ողողում արտասուրով: Պաւլն առաջ լսում էր նորան
անձան, ընկճուած լսած տեղեկութեամբ. յիւոյ հան-
գարտ ասաց.

— Ուղիղ որ փորձանք է: ես ինքս էլ այդ մասին
երբէք չեմ մտածել:

Յանկարծ ձկնորսը բորբոքուեցաւ և ուժգին ե-
ռանդով աղաղակեց.

— Զեմ ուզում, չեմ թողնի. Աստուած վկայ, չեմ
թողնի: Կրկին դէպի տանջանք ու խայտաակու-
թիւն... Զեմ թողնի: Թէ հոգիդ և թէ մարմինդ չեմ
թողնի կովչելու:

Աւրախութեան վայրենի աղաղակով Փրանկան
կախ ընկաւ Պաւլի պարանոցից և փաթաթուեց նորան
իւր դիւրաթեր մարմնով: Հենորսը բարձրացրեց նրան,
ինչպէս մի երեխայի, մի տեսակ ովերուած, խելա-
ցնոր ծիծաղով սկսեց համբոյրներ զըռշմել նրա երե-
սին մէկը միւսի յետակից, բայց շուտով զգաստա-
ցաւ, փոքր ինչ հեռացրեց նրան իրանից և ցածրա-
ձայն ասաց.

— Աւրեմն իրար հետ կասակուինք, հա: Մինչեւ
մահս բարեկամ կլինիմ քեզ և երբէք չեմ նեղացնի:

Սեփական տուն-տեղ կունենաս, մի կտոր սեփական հաց, ազնիւ կեանք: Հը՛, ինչ կասես, Փրանկա:

Պաւի ձայնը վրդովուած էր. վախենում էր արդեօք Ֆրանկայի մերժումից, թէ նրան սարսափեցնում էին իւր սեփական խօսքերը:

Փրանկան առաջ ապշեց, յետոյ թափահարեց թեներն և ջղային ծիծառվ ընկաւ նրա գիրկը:

Սեփական տան, սեփական հայի կտորի մասին նա մտածեց միայն հարևանցօրէն, այն-ինչ անրաժան կեանքն այդ մարդու հետ երևեցաւ նորան՝ որպէս անպատճելի երջանկութիւն: Խսկ Պաւին հանդարտութեամբ գրկեց նրան ուժեղ ձեռներով և սկսեց խօսել.

—Գիտե՞ս ինչ. ուրիշ ճար չկայ ոչ քեզ համար և ոչ ինձ համար: Երեխ Աստծու կամքն է, որ մենք միանանք, որ ես ազատեմ քեզ կորսափից ու ինքն էլ օր տեսնեմ: Երբէք ոչ մի կին այնպէս չէ զբաւել իմ սիրտս՝ ինչպէս դու ես զբաւել: Իմ առաջին կինս բարի կին էր, բայց մեր մէջ սէր ամենեին չկար: Ասենք, երկար էլ չապրեց նա: Խսկ յետոյ ում հետ էլ որ ուզում էին ինձ նշանել՝ ոչ մէկն իմ սրտովս շէր... Ամեն մէկի մէջ մի բան կարծես պակաս էր, բայց ինչ բան՝ ինքս էլ չզիտէի: Առաջինը դնւ եղար... ինչպէս առաւօտեան արշալոյսը... Յետոյ, բայց դրանից, ցաւում եմ ես քեզ վրայ. այնպէս եմ ցաւում, որ երբ մտածում եմ՝ սիրտս կտրատում է: Հինց առաջին անգամից այնտեղ, կզզու վրայ, ես վճռեցի, որ պէտք է աղատել քեզ: Բայց ինչպէս աղատեմ եթէ դու կրկին գնաս՝ կրկին կսկսես քո անազնիւ ու մեղաւոր կեանքդ... Ինչ ուզում է լինի,

կպսակուինք ու կսկսենք ապրել՝ ինչպէս հրամայել է Աստուած:

Փրանկան նորից ուզում էր փաթաթուիլ նորան, բայց նա նորից թոյլ չառւեց:

—Լսիր, Փրանկա, խսկ դու խելքի կգաս, կուղգուես, կդառնաս ազնիւ կին, կապրես Աստուածու պատուիրանքների համաձայն:

—Այն, այն, —շտապով շնչաց Փրանկան:

—Երդուիր, բանիր մասներդ, ինչպէս բռնում են խաչակնքուելիս, և երդուիր այս խաչի առաջ, որ կը թողնես մեղքով լցուած կեանքդ, ազնիւ կլինիս և չես թողնի սատանային քեզ մօտենալու:

Պաւի ձայնն հնչում էր մի առանձին հանդիպաւութեամբ գերեզմանատան խոր լուսթեան մէջ:

Փրանկան բարձրացրեց ձեռքը, երեսը դարձրեց գէպի բարձր խաչն և եռանդով արագ արտասանեց.

—Թող ես չարժանանամ Աստծու արքայութեանը, թող սատանայի բաժին լինի իմ հոգիս, եթէ մինչև մահս չօիրեմ և չյարգեմ քեզ, իմ թանկագին, իմ ոսկի, իմ գոհար:

Պաւը բոլորովին հանգստացաւ: Ամեն մի երդման նա հաւատում էր անպայման և մաքովն անզամ շէր անց կացնում, թէ մէկը կարող է սուտ երդուելու համարձակութիւն ունենալ: Բայց Փրանկան այդ բոպէին բոլորովին անկեղծ էր. անկեղծութիւնը զբոշմուած էր նրա գէմքին, լսում էր նրա ձայնի մէջ: Պաւին զգաց, որ այնուհետև նրանք կապուած են անքակտելի կապով:

—Բայց ինչպէս պիտի անենք... որտեղ պիտի ապրես դու մինչև պսակուելը, —հարցրեց նա:

— Ի՞նչպէս թէ որտեղ, — արագ վրայ բերեց Փրանկան: — իսկոյն կվազեմ, չնորհակալութիւն կյալտնիմ պարոնիս ու տիկնոջս, կվերցնեմ շրերս ու թոշունի թևով յետ կդառնամ:

— Հըմ... յետ կդառնամ... բայց ո՞րտեղ պիտի ապրես:

— Ի՞նարէս քեզ մօտ, քո խրճիթում:

Պաւլը ժպտաց:

— Օ՞հ, երեխայ, երեխայ, ոչինչ բանի մասին հասկացողութիւն չունիս դու. կարծես անտառում ես ծնուել, կարծես մարդկանց մէջ չիս ապրել: Ի՞նչպէս կարող ենք մենք միասին մի խրճիթում կենալ՝ քանի զեռ պսակուած չենք: Գիւղում աշք ու երեսդ կճանկուած ենք, և արդարացի, որովհետև այդ տեսուկ բանեք չէ կարելի անել... Լաւ է այսպէս անենք: Երբ որ պարոնիք գնայ ես կտեղաւորեմ քեզ իմ քրոջ մօտայնտեղ դու կապրես երկու կամ երեք շաբաթ, մինչև որ մեր մասին կոչումն անեն եկեղեցում... իսկ հիմա զնա տուն: Ես գիտեմ, պարոնիդ տանը, ճանապարհ ընկներոց առաջ, գործ շատ կիխի: Տեղաւորացրու նրանց շորերն, ինչպէս որ կարգն է, իսկ հինգարթի առաւտեան ես կդամ քո և շորերիդ յետելից:

Փրանկան կամայ-ակամայ պիտի հնագանդուէր, միայն ցանկութիւն յայտնեց հետեւել օրն անպատճառ տեսնուելու Պաւլի հետ:

— Ի՞նչպէս պիտի ապրեմ ես չորս օր առանց քեզ, — աւելացրեց նա խօսքը վերջացնելիս:

Հետեւեալ օրն, երեկոյեան, Պաւլի մակոյկը մօտեցաւ ափին ոչ հեռու ամարանոցից: Զատ շանցած՝

Փրանկան եկաւ վաղէվազ, կարմրած երեսով, վըրգովուած և չափազանց կատաղած:

— Օ՛, շան պէս սատկիս դու, գերեզմանի արժանի չլինիս, դլոյդը տանիք քեզ, — հայհոյում էր նա տիկնոջը նրա համար, որ այդ օրը հանգիստ չէր թողել նրան ոչ մի բովէ... չէնց հիմա էլ հրամայել էր արկդի մէջ դարսել պարոնի զըքերը, բայց Փրանկան վայր էր ձգել ամեն ինչ ու վազել զետափը:

Պաւլն, ինչպէս միշտ՝ այնպէս էլ այս անգամ զժգոհութեամբ լսեց Փրանկայի հայհոյանքները, բայց ոչ մի խօսք չասաց, միայն թափահարեց ձեռքը:

— Լաւ, լաւ, այսուհետեւ ստիպուած շես լինի ուրիշներին ծառայելու, և քո զայրացած սիրտդ կհանդարտուի: Հասկանալի բան է, երբար քամին փշում է՝ զետի ալիքները յուղուում են, իսկ երբ զադարում է՝ զետն էլ է հանդարտուում: Աստուծով դու էլ կը հանդարտուիս, երբ նստած կինիս քո տանդ, միենոյն աեղում... իսկ դու ասել ես նորանց, թէ մարդու ես գնում:

— Այս, — պատասխանեց Փրանկան, — և յետոյ լսեցի պարոնի ու տիկնոջ խօսակցութիւնն այդ մասին: Տիկինն ուղղակի ասաց. «Փրանկան յիմար է, որ գիւղացու է առնում, քնքոյշ աղջիկ է, սովոր է յարմարութիւնների և քաղաքային կեանքի...»: Իսկ պարոնը գիրքը վայր դրեց ու պատասխանեց. «Ռւղիդ ես ասում, և գժբախտարար տղեղ էլ չէ»:

Փրանկան ակնյայտնի բաւականութեամբ հազորդում էր այս խօսակցութիւնը Պաւլին: Բայց յանկարծ բաւականութեան ժպիտը շբացաւ նրա շըրթունքներից:

— Ես էլ, առենք, մտածում էի այդ մասին... Գիւղացիներն անծանօթ են եղել ինձ միջտ. ես նրանց հետ չեմ ապրել: Ազգականներս, ի հարկէ, այսուհետեւ իմ երեսս տեսնել անդամ չեն ուզենալ. իսկ մօրս ոսկորներն անշուշտ չուռ կդային գերեզմանում՝ եթէ միայն իմանար նա, թէ ում հետ եմ ամուսնանում:

Պաւլն առաջ չհատկացաւ նրա խօսքերը, բայց յետոյ կրկին թափ տուեց ձեռքն ու ծիծաղեց:

— Դատարկ խօսքեր են. քո պարոնդ ու տիկինդ յիմար-յիմար դուրս են տալիս, զու էլ կրկնում ես նրանց ասածը: Դու ասում ես, թէ դիւզացիների հետ չես ապրել մինչեւ հիմա... լաւ, ում հետ ես ապրել: Անպիտան, անառակ մարդկանց հետ: Եւ միթէ այդ տեսակ մասդկանց հետ աւելի լաւ է ապրել, քան գիւղացիների հետ... Կատարեալ երեխայ ես զու: Երբ որ սկսես ուրիշ կեանքով ապրել՝ ուրիշ էլ խելք կդայ գլուխդ: Այ կտեսնես:

Քրոջն ու փեսային նա առաջուց իմաց էր տուել: Նոքա յայտնել էին, թէ ուրախութեամբ կընդունեն Քրանկային: Ինքը Պաւլն այսօր չէր գնացել զետը ձուկ բոնելու, ամբողջ օրը լուանում և սպիտակացնում էր խրճիթը: Լսելով նրա խօսքերը՝ Քրանկայի հոգեկան արամադրութիւնը փոքր առ փոքր լաւացաւ. նա վերջապէս նորից փաթաթուեցաւ Պաւլի պարանոցն ու սկսեց փայփայանքներ շոայլել նորան. Պաւլը ջահէլացած, ուրախ-զուարթ՝ մակոյին հանդարտութեամբ քշեց դէպի տուն:

Պաւլի մէջ այս փոփոխութիւնը զեռ երեկ նկատեցին նրա քոյրն ու փեսան, երբ նա ոտքը ներս դրեց նրանց խրճիթի շեմքից: Այդ խրճիթը ոչ շատ

հարուստներից էր և ոչ շատ աղքատիկ, յամենայն գէպս մաքուր էր և չնորհքով կարգաւորած: Գա զիւղի ծայրի ամենավերջին խրճիթն էր, կից Պաւլի խրճիթին: Զատ կարելի է, հէնց այդ հարեանութիւնն էր պատճառը, որ Ֆիլիպպ Կողլիւկը, մի բարձրահասակ, գեղեցկադէմ, սեահեր երիտասարդ, ամուսնացաւ Պաւլի քրոջ հետ, երբ նա տասնսկից տարեկան դարձաւ:

Ֆիլիպպը հող քիչ ունէր, ուստի և մտածեց նաւակ սարքել նեմանի վրայ, մարդ ու անասուն տեղափոխելու մի ափից միւսը: Գործը յաջող գնաց և քիչ թէ շատ արդիւնք էր տալիս:

Երբ Պաւլը, Քրանկայի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ, մտաւ փեսայի խրճիթը՝ Ֆիլիպպը նոր միայն վերադարձել էր պարօմից և պառկած էր նստարանի վրայ: Նրա եղբայրը, տասնեեօթ տարեկան Դանիլկան, ձկնորսաթեան սիրահար մի պատանի, ցանց էր հիւսում փոքրիկ լապտերի լոյսի առաջ: Տանտեկինը, Ալեքանան, ելեսուն տարեկան զեղեցկադէմ մի կին, երեխան դրկում, քան էր շինում փառարանի մօտ:

— Յանուն չօր և Որդոյ...

— Եւ յաւիտեանս յաւիտենից, — պատասխանեցին նորան երեք տեղից:

Պաւլը նստեց իւր սովորական տեղը, պատի մօտ, յենուեց ձեռներով ծնկների վրայ և աշքերը ձգեց զետին:

Ես եկել եմ ձեզ մօտ, սրդեակներս, մի գործի համար... Այ ինչ: Երբոր հայրս ու մայրս մեռաւ և քեզ, Ալեքանա, թողին փոքր երեխայ հասակումդ իմ խնամքին՝ ես վատ էի վարւում քեզ հետ:

— Օ՞հ, Տէր Աստուած, ովք է ասում, — աղաղակեց
երիասարդ կինը:

— Ոչ ոք չէ ասում. միայն ես ուզում նմ իմ էլ,
ձեր էլ միտքը բերել, որ ամեն բան, ինչ ոք ես կա-
րող էի անել ձեզ համար՝ արած է: Ես քեզ երբէք
չեմ նեղացրել, չեմ թողել անտէր, միշտ սիրել եմ,
խելք ու շնորհք սովորեցրել: Երբ զու մարդու էիր
զնում՝ ես ձեզ տուի իմ բանջարանոցի չորս բաժնից
երեքը, երկու կով առայ, տասն ոշխար, փող տուի...
Ուզի՞ղ եմ ասում թէ չէ:

Եւ առանց շտապիլու, երբեմնապէս կանգ առ-
նելով, բայց առանց տատանման, Պաւլը պատմեց,
թէ ինչն համար էր եկել: Երբ նա վերջացրեց՝ խրճի-
թի մէջ տիրեց երկարատկ լուսթիւն: Ուկեանան ապ-
շեց զարմանքից: Ֆիլիպպի սև աշքերն անթարթ մի
կէտի էին նայում. միայն Գանիլկան ակամայ ճիշ ար-
ձակեց և խոկյն սեղմեց բերանը ձեռքով, որ չծիծա-
ղի: Հնայելով որ Պաւլը քառասուն երկու տարեկան
էր միայն, բայց և այնպէս ամենքը սօվոր էին նայել
նրա վրայ համարեա որպէս ծերունու վրայ, և ոչ ոքի
մտքից չէր անցնում, թէ նա կարող է էլի մի անգամ
ամուսնանալ: Վերջապէս Ուկեանան առաջինն ուշքի
եկաւ և բացագանչեց.

— Կընդունենք, ինչո՞ւ պիտի չընդունենք: Մեր
խրճիթում քիչ տեղ կայ, ինչ է: Աւելի ուրախ կլինի:

Ֆիլիպպը հաստատեց կնոջ խօսքերը:

— Մենք քեզ համար պատրաստ ենք ոչ միայն
այդ անելու. քեզանից քիչ բարիք չենք տեսել...
Միայն . . .

Նա տատանում էր:

— Միայն լու ես անում արգեօք, որ այլպիսի
աղջկայ հետ ես ամուսնանում: Քաղաքացի է, ոչ ոք
նրան չէ ճանաչում... Զլինի թէ, Աստուած մի արաս-
ցէ, զլիսիդ ցաւ զառնայ:

Պաւլը ոտքի ելաւ, նայեց վեռային քաղցր հայ-
եցքով և վճռողաբար ասաց.

— Մի վախենար, ոչ մի փորձանք չի պատահի:
Նա երգում կերաւ, որ մինչև մահն ինձ միայն պիտի
սիրէ ու յարգէ. երգնում կերաւ: Խոկ թէ ինչ է եղել
նա մինչև հիմա—այդ ոչինչ: Ես նրան սիրում եմ և
ուզում եմ փրկել... այ ինչ կայ: Այդպէս էլ պէտք է
լինի, իսկ ձեր բարեսրտութեան համար շնորհակալ
եմ. զուցէ ես էլ կարողանամ ձեր լաւութեան փո-
խարէնն հատուցանել: Գիշեր բարի:

Պաւլի զնալուց յետոյ երկար զրոյց էին անում
նրա ազգականները: Նբանք չգիտէին, որ այդ մար-
դու արեան մէջ՝ հանգարա, որպէս նեմանը գեղեցիկ
եղանակին, վառուել է առաջին սիրոյ կրակը, որ
նրա սիրութ՝ խոր, ինչպէս նեմանի յատակը, լի է
ամենայաղթ զութով, որ նրա հայեցքի առաջ, ըն-
տելացած նեմանի լայն տարածութեանը՝ կանգնած
է հիմա մի գործ, մի բարի, մարդկային սուրբ զործ
և պայծառ լուսով լուսաւորում է նրա անհամրոյը
երեսը:

Ֆրանկան պարզ ու որոշակի տարբերութ էր
իւր արտաքինով գիւղի միւս կանանցից: Երբ նա
առաջին անգամ եկաւ Կողմիւկի խրճիթը՝ Աւլեանան
երեխան գրկած սպասում էր նորան կանաչապատ
գաւթի մէջտեղը, որ լուսաւորուած էր արեկի պայծառ
ճառագայթներով: Երիտասարդ մօր հետ համեմատե-
լով, որի մարմինը ոյժի և ինքնուրոյն, թէկ խոշո-
րանկար գեղեցիկութեան տիպար էր ներկայացնում՝
ֆրանկան երեւում էր աւելի նիհար, աւելի անդօր,
ինչպէս մեխակի կիսաթառամ ծաղիկը շրեղ քաջվար-
դի առաջ: Վաթուունամեայ Աւգոստեան իւր խորչոմած,
բայց աշնան խնձորի նման կարմիր երեսով ու սև
փայլուն աշքերով, անհամեմատ գերազանց էր նրա-
նից ուժով և առողջութեամբ: Մինչև անգամ պառաւ
մուրացիկ Մարցելան աւելի ամբակազմ էր ֆրանկայից:
Իւր բարակ ու ճկուն մէջքով, քնիքոյ շարժուածքով,
տրորուած գէմքի անառողջ գոյնով, որի վրայ պայ-
ծառ փայլում էին կըքոտ երազներով բորբոքուած

աշքելը, հագած՝ մի հնամաշ քաղաքային շրջապատճեան՝
Պալի հարսնացուն բոլորովին խորթ էր երևում այն
ամենին, ինչ որ շրջապատճ էր նրան:

Ասենք, քաղաքային շրջազգի հստակ փոխարժենեց զիւղականը: Ֆրանկայի հետ միասին Պաւլը բերեց և նրա փոքրիկ արկղը, որի միջից անհամբեռութեամբ տոգորուած Ռւլեանան իսկոյն հանեց մի բարձ, երկու շրջազգեստ և երեք շապիկ: Այդ արկղում աեղաւորուած էր Ֆրանկայի ամբողջ գոյզը, եթէ չհաշուենք մի փոքրիկ գորոց, որ գտանուամ էր շորերի տակ, արկղի յատակում: Հէնց որ Ուլեանան ձեռք տուեց շվակած զգոցին՝ իսկոյն այնտեղից դուրս թափուեցան զանազան հերասեղներ, սանրեր, գոյնըզգոյն ժապաւէններ, աղտօն ձեռնոցներ, և այս ամենը կոտրտուած, պատառուած ու տրորուած: Ընդհանուր ուրախութեան մէջ Ֆրանկան բաժանեց ներկայ եղողներին իւր գանձերի մի մասը. Ուլեանայի զլիխին ձգեց մի վարդագոյն թաշկինակ, մինչև անզամ Ծրոտեայի պարանոցից կապեց մի ժապաւէն: Երեխաներին բաժանեց մի բուռն հուլունք և վերջ ի վերջոյ սկսեց թախանձել Փիլիպպին, որ թոյլ տայ շապիկը կոճկելու մի փայլուն կոճակով: Այս ամենը կատարւում էր քոքոցով, կատակներով և ծամածութիւններով: Բոլոր հաւաքուածները նայում էին նորան հետաքըրութեամբ և զարմանքով—ոչ ոք իւր կեանքում զեռ չէր տեսել այսպիսի դիւրաշարժ, շատախօս և առատաձեռն կին: Փրանկան կարծես բալորովին երջանիկ էր և ուրախութիւնից պատրաստ էր ամեն ինչ զոհնելու իւր նոր բարեկամների սրտերը շահեկու համար: Ուլեանան, որ շատ գոհ էր ստացած ընծանե-

բով, այնու ամենայնիւ չէր դադարում արկղը քըքըելուց, ժամանակ առ ժամանակ քթի տակ մի ինչ-որ բան փնթփնթալով: Նրան ապշեցնում էին ֆրանկայի բարակ, բայց մաշուած շապիկները: Զարմանք է այսքան շատ թանկադին ժապաւէններ ու կոճակներ կան և ոչ մի նոր շապիկ: Նոյն-իսկ շրջազգեստները, թէս զարդարուած են փոթերով ու ծովերով, բայց բոլորն էլ ծածկուած են բծերով, բոլորի վէշերն էլ կեղտոտ են:

— Լաւ, ինչ պիտի հագնիք հիմա, ուրիշ շոր չունիք, — զարմանում էր Ուլեանան:

Փրանկան հանեց զբանից թաշկինակը, բաց արաւ անկինի կապը և հանեց այնտեղից տասն ուռութիանոց թղթագրամ: Այդ էր միայն մնացել վերջին պաշտօնում ստացած ոռոճից, այն բոլորն՝ ինչ որ նա դեռ ժամանակ չէր ունեցել դիւդում ծախսելու: Այժմ նրան հարկաւոր էին շրջազգեստներ, գոգնոցներ, շապիկներ, թէս կոպիտ, բայց ամուր, ինչպին հագնում են տեղացի կանայք:

— Սիրելիս, անգինս, — զարձաւ նա Ուլեանային, — առէք ինձ համար այդ ամենը:

Ուլեանան հարցական հայեացք ձգեց ամուսնու վրայ և պատրաստականութեամբ պատասխանեց.

— Ի՞նչ հարկաւոր է գնել: Ես, փառք Աստծու, դրանցից շատ ունիմ: Առանց փողի էլ կտամ քեզ երկու շրջազգեստու և քաթան՝ շապիկներ կարելու: Նա ծիծաղեց և աւելացրեց: — Յետոյ, եթէ ուզում էք՝ ես ձեկ գործել էլ կառփորեցնեմ: Դուք ինքներդ ձեզ համար կպատրաստէք, ինչ որ հարկաւորն է:

Պաւլը կրացաւ, վերցրեց գետնից փոքրիկ քեռ-

սորդոն և նսակցը ծնկների վրայ, ի զարմանս բռնոր ներկայ եղողների, և մինչև անգամ սկսեց ուրախ շփշփացնել — մի բան, որ անում էր նա շատ հազուագիւտ գէպքերում:

— Լաւ, Ուլեանա, — ասաց նա, քաղցը հայեացք ձգելով իւր քրոջ վրայ, — տաւր հիմա նորան, ինչ որ պէտք է, յեայ հաշիւ կտեսնենք: Գործել էլ սովորեցու նորան և ամեն բան՝ ինչ որ մեր առօրեայ կեանքում կարող է պէտք գալ: Խեղճ որբ է մնացել, ոչ ոք նորան մի բարի բան չէ սովորեցը ել: Հիմա ես պիտի սովորեցնեմ: Դու էլ սովորեցը ու: Աստուած քեզ կվարձատրէ:

Ուլեանան, Փիլիպպալը, Աւգոստեան, մինչև անգամ թեթեամիտ Դանիլկան համակրական նշաններ էին անում զլիսով:

Սակայն Փրանկան հագաւ իւր նոր շորերը պսակից երկու շարաթ յետոյ միայն: Երկար ժամանակ շրջում էր նա գիւղի փոշոտ և ցեխոտ վողոցներում պրինելի կիսակօշիկներով և քաղաքային շորերով: Բայց կիսակօշիկները շուտով մաշուեցան, իսկ շորերը բոլորովին քայլայուեցան: Զանազան շորեղները առնելու համար նա փող չունէր, իսկ Պաւլից խնդրել նրա մաքովն անգամ չէր անցնում, այնքան սովոր չէր նա օգնութեան համար դիմել ուրիշներին: Ընդհակառակը, նա ինքն իւր ունեցածը բաժանում էր միշտ այն մարդոց, որոնց հաւանում էր: Եւ հիմա, թէս վաղուց պառաւ Մարցելան հազորդել էր նորան, թէ Պաւլը վառարանի տակ պահած ունի մի աման լի արծաթեայ ուռելիանոցներով՝ Փրանկան շմատածեց անգամ թագցրած հարստութեան մասին, և տեղա-

ւորելով արկդի մէջ քաղաքային շորերի մնացորդները՝ հագաւ գիւղականը:

—Այ հիմա ես գիւղացի կին եմ, —բացագանչեց նա, ձեռքերն իրար խփելով, փորբիկ հայելու մէջ իւր պատկերը տեսնելուց յետոյ: Ամեն ինչ վերջացաւ, թաղեցին ինձ և հողակ ծածկեցին յաւիտիանս յաւիտենից. ու ինձ համար այլ ես, բացի գիւղացու կեանքից, ուրիշ կեանք չի լինի:

Նա սկսեց բարձր ձայնով լաց լինել: Պաւեն առաջ անշափ զարմացաւ, բայց յետոյ ժպտաց ու թափ տուեց ձեռքը:

Կատարեալ երեխայ, —ասաց նա. —ինքն էլ չը գիտէ, թէ ինչն է ծիծաղում և ինչն վրայ լաց լինում: Յիմար բաներ շատ են խցկել քո զլուխու, դու էլ հաւատում ես նորանց ու կրկնում: Համբերիք, ման կգաս մի ժամանակ այդ շորերով, կսովորես ու կը տեսնես, որ թէ աղաների և թէ մեզ նմանների համար աւելի լաւ է կոռիտ, բայց դիմացկոն շապեկ հագնել՝ քան բարակ ու պատառոտած:

Պաւը նստեց նրա կողքին և սեղմեց կնոջն իւր կրծքին:

—Կամնց, Փրանկա, դէ, բաւական է... հանգստացիք... լաց լինելու բան չկայ:

Կինը դադարեց լաց լինելուց, փաթաթուեցաւ նորան իւր ամբողջ, դեռ ևս դողդողացող մարմնով և համբոցներով ծածկեց նրա երեսը: Պաւը բարձրացրեց նրան ձեռների վրայ և համարհա հանեց մինչեւ առաստաղը: Նրա կապոյտ աշքերը վառուեցան, իսկ Փրանկան ծիծաղեց ամենաանհոգ ծիծաղով: Մի ժամանակ յետոյ նրանք դուրս եկան խրճիթից, իջան գետի

ափը, նստան նաւակը ու գնացին ներքե—զետի հոսանքով:

Դիւղում նկատում էին, որ Պաւին առաջուայ պէս յաճախ չէ գնում քաղաք ձուկ ծախելու, բայց ոչ ոք այդ բանի վրայ չէր զարմանում: Անշուշա նա քիչ փող չէ հաւաքել առաջ՝ միայնակիւաց, համարեա ճզդնաւորական կեանք վարելիս, և ինչու հիմա չհանգըստանայ երիտասարդ կնոջ հետ միասին:

Այն, նա նկատելի կերպով փոխուել էր. հիմա աւելի յաճախ և աւելի հաճութեամբ զրոյց էր անում հարեանների հետ, իսկ աշքերը փայլում էին թագցրած բուռն ուրախութեամբ: Կարծես նա երիտասարդացել էր և նմանում էր հիմա երեսուն տարեկան մարդու: Մի անգամ պատաւ Աւգոտիան հանդիպեց նորան գետի ավին և հարցրեց.

—Հը, ինչ կայ, կնքահայր, լաւ ես հիմա, Գոհ ես, որ ամուսնացար:

Ամբողջ գիւղը սիրում ու յարգում էր առողջ, կարմրաթշիկ պատաւ Աւգոտեային նրա բարի սրախ և պատրաստականութեան համար օգնելու ամեն մի կարօտ մարդու: Պաւին նա միշտ վերաբերում էր համակրանքով և մի քանի անգամ երեխայ էր կնքել նրա հետ:

Պաւը ցած գրեց ջրով լի ամանները, ուղեց մարմինն և ժպտալով պատասխանեց.

—Լաւ... ինչու չէ: Ինչ որ ուզում էի՝ այն էլ ձեռք բերի:

—Ուրեմն դու առաջ չէիր ուզում կին առնել նրա համար, որ այդպիսին էիր որոնում: Ինչու առաջ չէիր ասում ինձ: Ես կգտնէի սրտիդ սւզածը:

—Միթէ ես գիտէի... ես ինքս էլ չէի իմանում,
թէ ինչ եմ ուզում և ինչպիսին եմ ուզում... Այ հիմա
որ գտայ՝ նոր իմացայ... Գիտես ինչ, կմքամայր, այն
էլ մեծ բան է, որ տան մէջ կայ մէկը, որի հետ կա-
րող ես երկու խօսք խօսել, որ կողքիդ կենդանի
մարդ ես տեսնում... բայց ես առանձնապէս շնորհա-
կալ եմ Ասածուց նրա համար, որ նա օգնեց ինձ մի
մեղաւոր հոգի փրկելու...

Բարի Ալգօտեան հաւանութեան նշան արա գըլ-
խով, թէ քոլորվին չէր հասկանում, թէ ինչն է
Պալին այդշափ ուրախանում: Այսու ամենայնիւ նորան
հաճելի էր տեսնել Պալին ուրախ, զուարթ, կարծես
մօրից նոր ծնուած:

Վերջ ի վերջոյ գիւղի բոլոր բնակիչներն էլ
եկան այն համոզման, որ Պալի խրճիթում ամեն
ինչ կարգին է գնում, որ մի աւանձին բան այնտեղ
չէ կատարում: Միայն Կօղիւկի գաւթում կամ բան-
ջարանոցում, որ բաժանում էր երկու խրճիթներն
իրարից՝ լսելի էր Փրանկայի բարձր, բարակ ձայնն
ուլեանայի կամ Դանիլկայի հետ խօսելիս: Փողոց շատ
քիչ էր դպւրս զալիս ֆրանկան, հարեանների մօտ
գրեթէ չէր գնում և ամրող ժամանակն անց էր
կացնում ամուսնու հետ գետի վրայ: Նրա նախկին
երկիւզն, համարեա, բոլորվին անցել էր, այժմ նա
իրան յատուկ եռանդով անձնատուր էր եղել ձկնոր-
սութեան և հեռու ճանապարհորդութիւնների, սովո-
րել էր թիավարել և անկեղծ համոզուել էր, որ այդ
պարապմունքն աւելի հեշտ և աւելի հաճելի է՝ քան
ուրիշի ինքնաեռ փշելը, ուրիշի սենեակներ աւելին և
ուրիշի սպիտակեղէն հարթուկելը նեղ, խեղդանոց

խոհանոցներում: Եւ ամեն ինչ, որ նա զգում էր՝ ան-
զուսպ կերպով արտայաջուռ էր ուզում և նոյն րո-
պէին յայտնի էր գառնում Պալին:

—Ես հիմա հանգտանում,—շատախօսում էր
Փրանկան, —ապրում եմ ինձ համար՝ ինչպէս տիկին,
և ոչ մի հոգս չունիմ: կարծես ես երկրորդ անգամն
եմ ծնուել, կարծես Ասառած: ինձ մի ուրիշ աշխարհ
է աեղափոխել:

Նրա համար սա իսկապէս ուրիշ, բոլորվին
նոր աշխարհ էր: Իւր ամբողջ կեանքում նա միայն
երկու անգամ էր քաղաքից գուրս եկել ամարանոց
գնալու, ուրի բացի վիշտու փողոցներից և ամարանո-
ցային պարտիզակների նիհար ծաւերից՝ ուրիշ ոչինչ
չէր տեսել: Այժմ նրա աշքերի առաջ բացւում էին
նոր տեսաբաններ՝ լի մինչև այդ ժամանակ նորան
անձ անօթ մանրամասնութիւններով: Ինչ բանի վրայ
էլ որ նա նայէր՝ բոլորն էլ գրգուում էին նրա հե-
տաքրքութիւնն ու զարմանքը:

Բայց հետաքրքութիւնն ու զարմանքն, և ոչ
հըճուանքը:

Տպաւորութիւնների անյագ ծարաւը, որին ըն-
տելացի էր նա իւր անցեալ կեանքի դասնութիւն-
ների և զուարճութիւնների ժամանակ՝ ձգում էր նրա
սիրտը դէպի ամեն տեսակ նորութիւն, լինէր զա մի
նոր, հետաքրքրական մարդ, լինէր զա մինչեւ այդ
ժամանակ շտեսած ալիք, ամպ, կայծակ: Փրանկան
այնքան քիչ տեղեկութիւններ ունէր, այնքան անծա-
նօթ էր ամենահասարակ առարկաների և երեսթնե-
րի, որ ամեն մի նոր բան անխուսափելի կերպով
գրաւում էր նրա ուշադրութիւնը, գրգուում էր նրա

հետաքրքրութիւնը, մի վառ և բորբոք հետաքրքրութիւն, առանց շափի ու սահմանի, յատուկ միայն երեխաներին կամ վայրենի մարդուն։ Այն, ամեն մի մարդու, գիւղի անվրդով խաղաղութեան մէջ, կարող էր վայրենի երեալ այդ աղմկալար, արագաշարժ կինը, քաղաքային բարձր պատերի այդ մանուկը, որ ապշած հայեացքով նայում էր աչքերի առաջ տարածուող՝ Սսուծու լայնարձակ աշխարհին։ Սակայն, անկարծիք, նա մի թոյլ, անօդնական երեխայ էր թւում իւր այժմեան ուղեկցին, մի մարդու՝ այնշափ ընտելացած շրջապատող բնութեանը, որ երկու օր առաջ կարող էր նախագուշակիլ եղանակի որպիսութիւնը։ Յաճախ կանուխ առաւօտեան Պաւլը գուրս էր վալիս խրճիթից, զննողաբար նայում էր երկնքին և յետոյ խորհուրդներ էր տալիս հարեաններին՝ ցորեն կամ խոտ հաւաքեն շատավեցներու, որովհետեւ լաւ եղանակը կշարունակուի երկու-երեք օրից ոչ աւելի։ Անձեային եղանակի ժամանակ, երբ երկնքի վրայ սողում էին մռայլ ամսեր, իսկ կատաղած նեմանն ուոցնում, վրիբեցնում էր իւր ալիքները, Պաւլը գաւթից առն մանելով՝ չառապում էր ուրախացնել գողգողացող ֆրանկային, հաղողուելով թէ երկու-երեք օրից յետոյ եղանակը կրացուի ու կտաքանայ։ Եւ երբ, յիրաւի, եղանակը փոխառւմ էր Պաւլի գուշակութիւնների համաձայն՝ ֆրանկան, համարեա, վախեցած հարցնում էր նրան։

—Դու մարգարէ ես, ինչ է. միշտ իմանում ես, թէ յիտոյ ինչ կիինի։ Պաւլը ժպտում էր ինքնապո՞ն ժպիտով։ —Ես մարգարէ չեմ, այլ ձկնորս։ Եւ ինչ ձկնորս

կլինէի ես, եթէ շխմանայիթ է երբ պիտի գնալ ձկան և երբ չպիտի գնալ։ Ամուսնու հետ կատարած զրօսանքները մեծ քաւականութիւն էին պատճառում ֆրանկային։ Ասենք, նա մենակ էլ չէր տիրում։ Այդ ժամանակ նրա մօտ գալիս էր պառաւ մուրացիկ Մարցելան, որ ժամանակաւրապէս ապրում էր Կողիւների տանը և բաղմաթիւ հետաքրքրական լուրեր էր հաղորդում։ Երբ առաջին անգամ պառաւը ոտարքիկ, ցնցսախների կոյտով ծանրաբեռնուած, երկու տակ կուացած մտաւ Պաւլի խրճիթը՝ ֆրանկան դեռ ևս ձգուած էր անկողնում, թէն համարեա կէսօր էր արդէն։ Մարցելային նա առաջ էլ էր տեսել, ուստի և այժմ քաղցրութեամբ բարեկց նրան։ Պառաւի արտաքին տեսքին նայելով՝ մօտ եօթանասուն տարեկան կարելի էր համարել նրան, սակայն կարիքն ու վիշտը չէին հանգցը ել նրա խորամանկ, արագաշարժ աշշերի վայլը, չէին պակասացրել նրա շատախօսութիւնը։ Չեմքի մօտ կանգնած, յինուած գաւաղանի վրայ՝ նա սկսեց խօսել խոպոտ, խզխզացող ձայնով.

—Իսկ զուք անկողնից դեռ չէր վեր կացել, իմ սիրանիկ։ Գիւղում վաղաւց ամենքը նախաճաշել են արդէն և նորից գործի կանգնել։ Վառարաններն էլ վառուած են ամենքի մօտ, ճաշն էլ եփում է։ Հապա ձեր ջուրն մվ է բերել ու ամաններն ածել, թէ որ դուք պառկած էր մինչեւ հիմա։

—Մարգս, —կամաց-կամաց վեր կենալով անկողնից՝ ասաց ֆրանկան։ —Նա այսօր ձուկ տարաքաղաք, իսկ գնայուց առաջ ջուր բերեց և վառարանը վասեց։

— չը՛...ը՛... բարի մարդ է նա, սիրում է քեզ,
— շնչաց մուրացիկն ու մօտեցաւ տանահիկնչը, որ
կիսակօչիկները անցրել էր ոտները և հիմա շրջա-
զգեստն էր հավնում: — Եւ կարելի՞ է միթէ չսիրել
այսպիսի աննման գեղեցկուն: Ի՞նչ արժեն միայն
աշքերը. իսկ քո մէջքի աւելի բարակ է՝ քան որեւէ
տիկնոջ մէջը, ինչքան էլ նա կօրսէառվ ձկուած լինի:

— Բայց դու տեսել ես արդեօք երբեից է կօր-
սէտ, — հարցրեց Փրանկան, որին յայտնապէս դուք
եկաւ մուրացիկ կնոջ գովասանքը:

— Տեսել եմ երբեկցէ կօրսէտ, — հառաչեց Մար-
ցելան: — Օ՛, Աստուած իմ, Աստուած իմ, ինչ՞ր չեմ
տեսել ես աշխարհի վրայ: Եւ հարսանոթիւն, և փար-
թամութիւն — ամեն ինչ տեսել եմ, ամեն ինչ գիտեմ:
Ամբողջ երիտասարդութիւնս զանազան պարոնների
մօտ եմ անց կացրել, իսկ հիմա Աստուծու կամքով
կերակրում եմ ողորմանոթեամբ... ես ամեն ինչ կա-
րող եմ հասկանալ... Այ երբ Պաւլը քեզ Կողմիւկների
տունը բերեց առաջին անգամ՝ ես իսկոյն մտածեցի:
« հասարակ ուամիկ է, բայց ինչպիսի թագուհի է
ձեռք բերել »: Երկար ժամանակ ես զարմանում էի,
թէ ինչ խեցով այլպիսի գեղեցկուհին հասարակ գի-
ղացի մարդ է առնուած:

Փրանկայի դէմքն իսկոյն մոալլուեց:

— Ես ինչ իմանամ, թէ ինչպէս պատահեց: Երեխ
այդ էր իմ ճակատին զրած: Ես ինքս երբեք չէի մտա-
ծում զիւղացի առնել և զիւղացիների մէջ ապրել: Ես
լաւ ընտանիքի աղջիկ եմ... պապս երկու առն ունէր,
հայրս կառավարչական դիւտանանն էր ծառայում,
իսկ քեռուս որդին փաստարան է... և շատ հարուստ:

Նա նստեց մուրացիկ կնոջ կողքին և սկսեց
պատմել իւր լաւ կըթութեան, իւր քեռուս որդու
հարստութեան, իւր քաղաքային ուրախ կհանքի, իւր
երկրագուների մասին: Մարցելան աանում ու բե-
րում էր գլուխը, համակրանքով հառաջում էր մինչ
այն ժամանակ, երբ Փրանկան, վեր թոշերով նստա-
րանից՝ առաջարկեց թէյ խմել:

Պաւլի տանը, ինչպէս և գիւղի բալոր ունեոր
բնակիչների մօտ՝ կար մի փոքրիկ պղնձեայ ինքնաեռ,
յամենայն դէպս պահում էր նաև մի պաղուց թէյ և
մի բուռ շաքար: Փրանկան կերակրի վրայ շատ ու-
շագրութիւն չէր դարձնում, բայց աւանց թէի և
շաքարնդէնի չէր կարող մնալ: Քաղաքում ապրելիս
նա շարունակ կամ ինքն էր առնում շաքարեղէններ
կամ ստանում էր երկրագուներից: Ուփիշ լնծաներ
ոչ ոք նսրան չէր տալիս. նա ինքն էլ, ատենք, չէր
ընդունի, բայց շաքարեղէն ընդունում էր. չէ որ
նոյն-իսկ նշանաւոր տիկիններն անզամ շաքարեղէնն
ընդունում են իրանց ծանօթներից: չէնց նոյն-իսկ
այսօր, երբ Պաւլը պատրաստում էր քաղաք զնալու՝
նա գրից նրան և ինզրեց թէյ, շաքար և անուշե-
ղէն ընդունում:

— Հա, այ բանը որտեղ հասաւ, — տիսուր-տրատում
զասողութիւններ էր անում Փրանկան, նստած ինք-
նաեռի առաջ. — մի գուհիկ գեղջկուհի դարձայ ես,
կենդանի գերեզման մտայ: Այսպէս էլ իմ ամբողջ
թշուառ կիանքս պիտի անցնի:

Նա սրբեց արտասուզը ձևոքով:

— Լաւ, լաւ, լաց մի լինիք, ինչ կայ որ... — միտի-
թարում էր նրան պառաւը: — Եթէ մարդդ սրտովդ

Հ՝ ամեն ինչ կարգին կդնայ: Բայց սիրում ես դու
մարդուդ:

Եւ թեքուելով զէպի Փրանկայի ականջը՝ Մար-
ցեան մի հարց տուեց ցածրածայն: Փրանկան ծի-
ծաղեց, աչքերը ցած թողեց և նոյնպէս ցածրածայն
սկսեց պատմել, թէ ինչպէս Պաւլը սիրում է իրան:

Պաւլը տուն վերադառն երեկոյեան և իսկոյն
գրպանից հանեց մի կապոց շաքարեղին: Զաքարեղէ-
նը լաւը չէր, երկար ժամանակ դէս ու դէն ընկած-
հրէայի կրպակում, բայց Փրանկան ագահարար յար-
ձակուեց նրա վրայ, համարեա կուշտ կշապաւ, իսկ
մասցորդը տարաւ Կողլիւկենց տունը: Կողլիւկները
հեռու էին ման գալիս նրանից: Փրանկան ժամանակ
առ ժամանակ ապշեցնում էր նրանց իւր արարմունքով,
բայց աչքի ընկնող շարակամութիւն կամ թշնամու-
թիւն նրանք չէին ցոյց տալիս Փրանկայի վերաբեր-
մամբ: Ուկեանան փորձեց գործել սովորեցնել նրան,
բայց անօգուտ: Փրանկան քառորդ ժամից յետոյ յո-
գնեց, դուրս թռաւ ոստանի հորից և աղաղակեց: —

— Զեմ ուզում, չեմ: Զեռներս ցաւեցին, ոտներս
թմրեցան: Ի՞նչ գլխիս եմ տալիս ես այդ գործելը.
բաւական է որքան ես իմ կեանքում ուրիշի ստիպ-
մամբ բան արի: Հիմա ամենին կարիք չունիմ ես:
— Ըսացի, չեմ անի ու չեմ անի:

— Ինչպէս կամենաք, անտարբերութեամբ ասաց
Ուլեանան և գլուխը թափ ապօվ գուրս գնաց խրճիթից:

Նոյն օրն երեկոյեան, գետից ջրի լի աման-
ներով տուն վերադառնալիս՝ Ուլեանան հանդիպեց
եղբօրն և հաղորդեց նրան, թէ Փրանկան գործել չէ
ուզում սովորել:

— Լաւ, չէ ուզում՝ հարկաւոր էլ չէ, — անվրդով
պատասխանեց Պաւլը:

Բայց Աւգոտեան, որ լսում էր եղբօր ու քրոջ
խօսակցութիւնը՝ բոլորովին այլ կարծիքի էր:

— Պաւլ, — խորհրդաւոր ձայնով ասաց նա մի
կողմ կանչելով նրան. — Էհ, Պաւլ, ինչպէս տեսնում
եմ դու կնոջդ կապը շատ ես բաց թողնում. մտիկ
արա, դրանից վաս բան դորս չպայ:

Աւգոտեան վազուց լսել էր Մարցելայից Փրան-
կայի նիստ ու կացի, երկար քնելու և շարունակ թէ
խմելու պատմութիւնն և բոլորովին անկեղծաբար
ցաւում էր Պաւլին:

— Ոչինչ, կիրամայր, — մի քիչ մտածելոց յե-
տոյ ասաց Պաւլ. — Ես գիտեմ թէ ինչ եմ անում:
Ես նրան չարչարանքից եմ աղատել. և աղատել եմ
ոչ թէ նրա համար, որ մի ուրիշ աշխատանքի գերի
գարձնեմ, այլ նրա համար, որ աշխարհում օր ու
արև տեսնէ: Եթէ մարդուս կեանքը լաւ է լաւ է լի-
նում և ինքը մարզը, իսկ երբ վաս է ապրում ինքն
էլ վաս է լինում... ինչո՞ւ համար լաւ չլինիս, երբ
քեզ ոչ չէ նեղացնում և մեղքի պատճառ չէ դառ-
նում: Այ բանն ինչումն է:

— Հը, մտիկ արա, մտիկ արա, — աւելի խոր-
հրդաւոր ձայնով շնչաց Աւգոտեան: — Ո՞րտեղից ես
բեզել դու նրան, հօր ու մօր տանից, հա: Ի՞նչպէս
է եղել նա առաջ: Մի վախենար — ես բոլորը գիտեմ:
Հէնց որ առաջին անգամ տեսայ նրան՝ իսկոյն հաս-
կացայ ամեն ինչ: Ուրիշը կարելի է չհասկանար, բայց
ես իսկոյն հասկացայ: Հլինի՞ թէ նա կըկին... մեղ-
քի մէջ ընկնի:

Սակայն այս նախազգուշացումն էլ ոչ մի տպաւորութիւն չթողեց Պաւլի վրայ: Նա ժպտաց, թափահարեց թեև և բոլորովին անվրդով պատասխանեց.

— Հենց այդ էլ երբէք չի պատահի: Նա երդում է կերել:

Ակներե էր, որ նրա հաւատը գէպի մէկի երդման նշանակութիւնը ոչ ոք և ոչ մի բան չէր կարող խախտել: Ի զուր տեղը երդում չէ ուտում մարդ. իսկ եթէ մի անգամ երդուց՝ նա պարտաւոր է անել իսկ և իսկ այնպէս՝ որպէս երդուել է, և ոչ ուրիշ կերպ: Աւգօսեան թափ տաւեց ուսերը, կըկին բարձրացրեց ջրի ամաններն և սկսեց վայր իջնել սարից, քթի տակ փնթփնթալով.—«այ գիծ»...

Կողիւկների տանն էլ սկսեցին խօսել Փրանկայի մասին, թէն առանց թշնամական վերաբերմունքի, այլ այնպէս, որպէս խօսում է զիւղական ժողովութղն իրան հետաքրքրող երևոյթների մասին: Անհոգ Դանիկան, որ համարեա անզործ այս ու այն կողմն էր շրջում ամբողջ աշունքն ու ձմեռը, որ ծածկաբար տեսնում ու լսում էր զիւղում կատարուած ամեն մի եղելութիւն՝ քոքաւալով պատմում էր, թէ ինչպէս Պաւլն ինքն է վառում վաւարանը, պատրաստում է ճաշը, կթում է կովերը, այն-ինչ կինը կամ ձգուած է անկողնում ամբողջ օրը կամ Պաւլին փաթաթուած նստում է նստարանի վրայ: Փիլիպպը նմանապէս փորը բանած ծիծաղում էր, բայց Ուկեանայի սիրտը ճմլում էր այդ պատմութիւնը լսելիս:

— Վաս կլինի նրա բանը, — ասաց Ուկեանան մի անգամ մարդուն:

— Ում բանը, — հարցրեց Փիլիպպը:

— Ում բանը, Պաւլի, ի հարկէ:

Եւ նա գուրս եկաւ գաւկիթ՝ հաւերին կանչելու, իսկ Փրանկան կանգնած էր այդ ժամանակ բանջարանոցն երկու մաս բաժանող ցանկապատի մօա և տանձ էր ուսում: Առաջ Պաւլը բանջարանոցում բուսած մի հատիկ տանձենու բալոր պտուղները տալիս էր քրոջը. իսկ հիմա թողել էր Փրանկայի համար: Ուկեանան գուցէ հիմա միայն յիշեց այդ մասին և քանի մի քայլ առաջ գալով դէպի հարսը՝ ասաց.

— Դու չես ամաշում, որ քո մարդդ ինքն է կովերը կթում: Չէ՞ որ դա աղամարդու զործ չէ, այլ մեր, կնիկմարդու:

Զնայելով Ուկեանայի կիսկատակ ձայնին՝ Փրանկան բանկեց ու բարկացաւ.

— Քեզ ինչ, քո գործդ չէ, — աղաղակեց նա. — մի խցկուիր այն բանի մէջ, որի մասին քեզ հարցնող չկայ: Ես ձեր էշ զիւղացու աշխատանքներն երբէք չեմ կատարել և կատարել էլ չեմ ուզում: Աղիւ:

Նա յետ վախտ ցանկապատից, այսու ամենայնիւ Ուկեանան հասցրեց յետեից.

— Դու էշ զիւղացիներին զուր տեղը մի հայհոյեր. աւելի լաւ է միտք բեր, թէ դու ինչ էիր առաջ:

Այս առաջին կուին երկու կանանց մէջ շուտով գաղարեց: Ուկեանան ամեննեին ցանկութիւն չունէր

վաս յարաբերութիւն ստեղծել իւր և եղբօր մէջ, իմանալով որ գժուար կլինի իրանց կառավարուել առանց եղբօր օգնութեան: Փիլիպպն էլ, երեխ երբեմնապէս անուշ երադներ էր տեսնում, յիշելով Պաւլինց վառարանի տակ թագած փողերով իր ամանը. ուստի երբ լսեց Ուկեանայի կոփին հարսի հետ սկսեց

բարկանալ ու աղաղակել այնպէս, որպէս երբէք չէլ բարկացել, և հրամայեց անյապաղ հաշտուել Փրանկայի հետ: Հաշտութիւնը կայացաւ առանց արգելքի: Փրանկան առհասարակ անյիշաշար էր, և երբ նրան կոռից յետոյ առաջին անգամ հրաւիրեցին Կօղլիւկների տունը՝ նա գնաց և սկսեց այնպէս ուրախուրախ շատախօսել հաւաքուած հարևանների հետ, որ մնաց մինչև կէս գիշեր: Այսպիսի ժողովներ Կօղլիւկների խրճիթում շարունակուեցան ամբողջ ձմեռը: Տարօրինակ տեսարան էին ներկայացնում այդ ժողովները: Ահազին վաւարանի կրակով և նաւթի լապտերի աղօտ փայլվոցով լուսաւորուած խրճիթը մանում էին գիւղացիք կապաներով կամ կիսամուշտակներով, իսկ կանայք նուան գոյնի մահուղից վերնազգեստներով, և նստառում էին նստարանների վրայ, պատերի առաջ: Փրանկան միշտ աշխատում էր յարմարաւոր տեղ զրամել և ոտները ձգել դէպ ի մօափկ դրուած աթոռը: Հազնուած էր լինում նա գիւղի միւս կանանց նման, բայց նրա հագուստն աւելի նման էր դիմակահանդէսի հանդերձի: Նրա սև գանգրահեր մազերը յամառութեամբ գուրս էին թափուում շթհայ զաճած թաշկինակի տակից, փուլում էին ուսերի և կուրծքի վրայ, որ զարդարուած էր ուլունքների անհամար քանակութեամբ, և ականջների վրայ, որոնցից կախուած էին ահազին գինդեր: Նրա թառամած դէմքն աշքի էր ընկնում կամ գունատութեամբ կամ համարեա տենդային կարմրութեամբ: Տենդային ցնորդներ էին թւում հաւաքուած ամրոխին և նրա պատմութիւնները, որոնք այնքան զարմանալի ու հետաքրքրական էին, որ ամբողջ ձմեռուայ ընթացքում Կօղլիւկների

տանը կազմուող երեկոյեան ժողովներում ոչ մի երգ չերգուեց, ոչ մի հէքեաթ չպատմուեց: Եւ ինչ նշանակութիւն կարող էին ունենալ վաղուց ամենքին ծանօթ հէքեաթները՝ համեմատելով Փրանկայի պատմութիւնների հետ թատրոնական ներկայացումների, դիմակահանդէսների, արտաքոյ քաղաքի հիւրանոցներում կապարուող կերուխումի, զանազան յանցանքների, սպանութիւնների, ինքնասպանութիւնների և գողութիւնների մասին, որոնք պատահել էին երբեկցէ և մնացել նրա յիշողութեան մէջ՝ ուրիշ հետաքրքրական դէսքերի ահազին պաշարի հետ միասին: Կօղլիւկի հիւրերի, մանաւանդ կանանց մէջ, կային շատերը, որոնք քաղաք անգամ չէին գնացել. կային և այնպիսիները, որոնք թէկ գնացել էին՝ բայց տեսել էին այնտեղ միայն եկեղեցին ու վաճառանոցը: Տէր իմ Աստուած, ինչքան հարստութիւն կայ աշխարհի վրայ. ասես՝ խրճիթի ազա ու կեղուի չափ, եթէ մի ամբողջ տարի շատելեն նրան: Ու ապրաւմ են մարդիկ առանց որևէ աշխատանքի, միայն մեղանչում են: Եւ ինչպէս կարելի է այդպէս ապրել. մոռանալ և Աստուած և խիղճ...: Յաճախ այս կամ այն անկիւնից լուսող հառաչանքներն ընդհատում էին Փրանկայի բարակ ու սուր ձայնը, միայն պառաւ մուրացիկ Մարցիւան էր, որ զարմանք չէր ցոյց տալիս: Պառաւի դէմքի կնճիւններն հարթուում էին, սև աշքերի մէջ ժամանակ առ ժամանակ կայծեր էին բորբոքուում, շրթունքները ժպիտ էին արտայայտում: Օ՛, այդ ամենը նոտ ինքն էլ է տեսել, ինքն էլ գիտէ: Եւ նա և Փրանկան բոլորովին ուրիշ արարածներ են, ուրիշ աշխարհի էակներ, բախտի բերմունքով ընկած

այն արջի բոյնը, այն պարզամիտ մարդկանց մէջ, որոնք ոչ բան են տեսել, ոչ բան գիտեն: Եւ մինչ Մարցելան մասամբ ծալութիւնից, մասամբ անփստահութիւնից չէր պատմում ոչինչ իւր կեանքի մասին՝ անհանգիստ, կեանքի և թարմ տպաւորութիւնների բուռն ծարաւով տանջուող Փրանկան մի առանձին բաւականութեամբ լիշում էր հին տպաւորութիւններն իւր սակաւապահանջ ունկնդիրների առաջ: Թւում էր նորան, թէ ինքն ամրող գլխով բարձր է կանգնած նրանցից և վերադառնալով տուն՝ թնդացնում էր խրճիթը բարձրաձայն ծիծաղով:

— Այ յիմար ուամիկներ, այ անխելք ոշխարներ. ես ամենահասարակ բաներ եմ պատմում, իսկ նրանք բաց են անում բերաններն ու ապշում. կարծես, ով գիտէ, ինչ հրաշալիքներ եմ ցոյց տալիս նորանց: Նրանց մէջ ես այնպէս եմ՝ ինչպէս թագուհին հովիւների մէջ: Բայց այդ ոչինչ. բաւական ուրախանում եմ: Իսկ երեմն թւում է, որպէս թէ ես թատրոնումն եմ և կատակերգութիւն եմ ներկայացնում: Բայց քեզ ժողովուրդ եմ ասում, հա... չամեմատել անգամ չէ կարելի նոյն-իսկ ամենայիմար քաղաքացու: Կատարածներ:

Ուրիշների հետ միասին Պաւլն էլ ուշադրութեամբ լսում էր կնոջ պատմութիւնները: Նա առաջ էլ գիտէր, որ աշխարհում կան մարդիկ, որոնք հաստութեան ու փարթամութեան մէջ են ապրում, բայց շատ քիչ էր հետաքրքրում այդ հանգամանքով: Ինքը կարիք երբէք չէր զգացել, իսկ զանազան տեսակ զեղութեամբ իւններն ամենկեն չէին զրաւում նրան: Ըատ բան կարող է լինել: Մէկին մի բախտ է

վիճակուած, միւսին ուրիշ: Աստծու հետ վիճել խօմ չէ կարելի:

Բոլորովին ուրիշ բան էր պատահում, երբ խօսք էր ընկնում սիրային արկածների, արիմնալից պատմութիւնների, մի խօսքով այն ամենի մասին, որ նրա հասկացողութեան մէջ բնորոշում էր մի ընդհանուր գաղափարով—մեղքով: Այդ ժամանակ Փրանկայի խօսքերն այնպիսի խոր տպաւորութիւն էին անում Պաւլի վրայ, որ նա անհանգստութիւնից այս ու այն կողմն էր ընկնում նստարանի վրայ կամ խուլ ձայնով շշնջում էր ամուը սեղմած ատամների միջից.

— Քարչելի՛ կեանք, գետինն անցնի այդ տեսակ կեանիքը:

Երբեմնապէս նրա աշքերին նոյն-իսկ տեսիլներ էին երեսում: Լսելով պատմութիւններն այն մասին, թէ ինչպէս մարդիկ ուրախութիւններ են անում արտաքոյ քաղաքի զրօսավայրերում, երեկոյթներում, պարահանդէմներում և ինչպիսի վատ եղելութիւններ են սարբում ու կատարում այնտեղ՝ Պաւլը փակուած արտեանունքների միջից յանկարծ տեսնում էր լայնարձակ նեմանը ներկուած նոր ծագող արևի ճառագայթներով, որոնք թափանցում էին վարդագոյն ամպերի շղթայի միջից: Նրա ականջին համեստ էր մինչեւ անզամ հայրենի գետի մնջիկ ալիքների քաղցր խօսովջիւնը: Այն ժամանակ նա բարձրացնում էր գլուխը, պղտոր աշքերով նայում էր շորս կողմն. և երբ վերագառնում էր առն՝ ուրախ, բորբոքուած Փրանկայի հետ միասին՝ ոչ մի յանդիմանութիւն չէր անում նորան՝ անվայել պատմութիւնների համար, այլ խնդրում էր միայն շուտով հանդարտուել:

—Կամաց, կամաց,—հանդարտեցնում էր նա կողը:—Աւելի լաւ կլինէր, որ դու բոլորովին մոռանալիք քո անցեալ կեանքդ այս տունը մանկուց առաջ: Օ՞խ, ոչ քեզ խելք չէ սովորեցրել. այնինչ այնքան յիմար բաներ են լցրել զլուխդ, որ դու մինչեւ հիմա չես կարողանում մոռանալ: Ե՛, ինչ անենք, Աստուած տայ մի օր էլ կմոռանաս:

Նա երբէք չէր բարկանում Փրանկայի վրայ, չէր անարգում նրան՝ անցեալը յիշեցնելով, մինչեւ անգամ համբերութեամբ տանում էր իրան համար անտանելի երեկոյթները, չնայելով իւր կասկածներին Սլէքսէլի վերաբերմամբ: Մա ամենից գեղեցիկ և ճալպիկ աղամարդն էր ամբողջ գիւղում. ճիշտ է, նա ամուսնացած էր, բայց և այնպէս սաստիկ սիրահար էր երեսասարդ կանանց: Փրանկան, ըստ իւր սովորութեան, դուրս էր տալիս խելքին վշածը. մի անգամ նա բարձրաձայն յայտնեց, թէ Սլէքսէլը շատ նման է իւր նախկին բարեկամներին և ծանօթներին, թէ իրան դուր են գալիս Սլէքսէլի մութ-կապոյտ աշքերն ու վայելչակազմ մարմինը: Մի անգամ էլ Փրանկան, իրեւ պատասխան նրա կատակին՝ ձգեց նրա երեսին մի բուռն չորացրած կեռաս և յետոյ մօտեցաւ, նըստեց նրա կողքին և հրապուիիշ ժպիտով նայեց ուղիղ նրա դէմքին: Այդ երեկոյին, Կովկասների խրճիթից տուն վերադառնալիս, Պաւլն այնպէս ամուր սեղմեց կնոջ ձեռքն, որ Փրանկան ճիշ արձակեց ցափց: Բայց Պաւլն աւելի և աւելի ամուր հուպ տուեց ձեռքը, ներս քաշեց Փրանկային տուն, վառեց լապտերն և խստութեամբ հարցրեց.

—Դու երդում կերել ես թէ չէ:

Փրանկան ենթադրել անգամ չէր կարող, թէ Պաւլի աշքերը կարող են վառուել այդպիսի բոցով, իսկ ձայնը հնչել այդպէս խրսիտ: Զնայելով ձեռքի ցափն՝ նա աշքերը չէր հեռացնում ամուսնու դէմքից:

—Դու երդում կերել ես թէ չէ,—կրկնեց Պաւլը:—Լաւ, ինչ կայ որ...—փորձեց կատակի տալ Փրանկան:

—Պատասխան տուր ինձ... այս րոպէիս:

Երկու կապոյտ երակներ ձգուեցան Պաւլի ճակատի վրայ, իսկ աշքերն աւելի վայլեցին. բայց Փրանկան երկիւղի փոխանակ զգաց սիրոյ ուժգին բռնկումն դէպի ամուսինը, որից վերջին ժամանակներն սկսել էր սառչել: Պաւլը գուր եկաւ նորան, սաստիկ դուր եկաւ իւր նոր կերպարանքով: Փրանկան ընդհարուեցաւ մի նոր, իրան անծանօթ և շատ հետաքրքրական բանի—ոյժի հետ, որ նուաճնեց իրան, և կրքի հետ, որ բորբոքում էր կիզին և իւր երակներում: Սիրոյ աղաղակով, փաղաքշանքի արտասունքով երերուն շրթունքների վրայ՝ ընկաւ նա ամուսնու դիրկը: Պաւլն ամուր սեղմեց կնոջն իւր գրկում և փոքր ինչ յետոյ հանդարա հարցրեց.

—Իսկ մեղաւոր մտքեր չկան գլխիդ մէջ. Սլէքսէլին չես սիրում, չէ:

—Ե՛յ, գրսող տանի նրան, այդ ուամկին: Ճատ հարկաւոր է նա ինձ: Քեզ եմ սիրում, քեզ, իմ սիրելի, իմ անգին, իմ ոսկի, իմ գոհար:

Պաւլը բարբառին հանգստացաւ. նա գիտէր, որ Փրանկան երբէք սուս չէ խօսում և չէր էլ կարող թագցնել նրանից որեէ բան: Եւ յիրաւի, Փրանկան

այն անգամ սուտ շասաց: Գեղեցիկ տղամարդկանց շալակն էր թռչում նա աւելի ըստ իւր հին սովորութեան, կամենալով կուրասուել, խելքահան անել նրանց: Նա բոլորովին զադարեց երեկոյթներ գնալուց և նոյն-իսկ մի քանի անգամ աւելեց խրճիթն ու ճաշ պատրաստեց, միայն չէր ուղում ջուրը գնալ և կովը կթել: Պաւը չէր ստիպում նրան չուղած բանն անելու և կրկնում էր՝ զիջողաբար ժպատրով.

— Հաւ, լաւ, դրանք դատարկ բաներ են. թող քո ասած դիմի, միայն թէ քեզ համար լաւ լինի:

Կիրակի օրերը Փրանկան գնում էր մերձակայ քաղաքի եկեղեցին, երբեմն ամուսնու, երբեմն Ռւեանյի, Ֆիլիպալի, երբեմն էլ հարսաններից մէկն ու մէկի հետ: Քաղաքը թէ շատ փարբի էր, այսու ամենայնիւ քաղաք էր, իսկ քաղաքային կեանքը միշտ գրաւիչ էր Փրանկայի համար: Ժամասացութեան ժամանակ նա կարող էր տեսնել շատ անծանօթ մարդկանց, յիտոյ մանել այս կամ այն կրպակը, կարող էր լսել մի որեւէ նոր բան:

Պատրաստուելով քաղաք գնալու՝ նա հազնում էր քաղաքային շրջազգեստը և ձեռքն էր առնում աղօթագիրը, որի թերթերի մէջ կային բազմաթիւ մանր պատկերներ և շնորհաւորական տոմսակներ, ուսաի և աղօթագիրքն ուսուցիկ տեսք ունէր: Այդ պիսի պատկերներ և շնորհաւորական տոմսակներ Փրանկան մի ժամանակ տասնեակներով էր ստանում իւր տօնախմբութեան օրերին: Նրա քաղաքային հանդերձը մի առանձին յարգանքի զգացմունք չէր զարթեցնում ոչ ոքի մէջ, բայց նրա զրբի վրայ շատերը նայում էին զարմանքով և ոչ առանց յարգանքի: Ա-

ռանձնապէս այդ գիրքը հետաքրքրում էր Պալին: Ո՞րքան անգամ նա զիրքը վերցնում էր ձեռքը, զգուշութեամբ փշում էր վրայից փոշեն, դարձնում էր թերթերը, երբեմն ժպատում էր քաղցրութեամբ և երբեմն տխուր շարժում էր գլուխը: Երկար զննելուց յիտոյ՝ նա մի քանի անգամ հառաջում էր և ամենամեծ յարգանքով զնում գիրքն իւր նախկին տեղը—ամենասպատաւուր տեղն ամբողջ խրճիթում, լաստինու փայտից չինած պահարանի վրայ, լապտերի և փայլուն ինքնաեսի մէջտեղը: Մի անգամ, երբ Փրանկան վերադառնալով եկեղեցուց, ըստ սովորութեան անփոյթ կերպով աղօթագիրքը ձգեց սեղանի վրայ և ուրախ-ուրախ շատախօսելով՝ սկսեց անկիւնից անկիւն շրջել՝ Պաւն, աչքերը չնեռացնելով զրբից՝ ասաց:

— Փրանկա, գիտես ինչ, Փրանկա: Ես ուղում եմ մի բան ինդրել քեզանից:

Այդ օրը Փրանկան հոգեկան շատ ուրախ տրամադրութեան մէջ էր, որովհետեւ քաղաքի վաճառանոցում այս ու այն կողմը թափառելու, մի պճնուած երիտասարդ, զեղեցիկ մուշտակն հավին, երեխ մի գործակտար մերձակայ ամրոցից, մատնացոյց անելով Փրանկային՝ ասաց ընկերոջը. «Ճես, անս, ինչ զեղեցիկ է անպիտանը»: Խսկ ընկելլը, որ աւելի հասակաւոր էր և երեխ ամրոցի կառավարիչը՝ հաւանութիւն տաեց այդ խօսքերին զիսի շարժուածքով. «Ոչինչ, վաս չէ», թացի դրանից կորկոտ և աղ գնելու համար ստացած փողից նրա մօտ աւելացաւ քան կոտէկ, որոնցով և նա մի զբուանքայ հիանալի շաքարեղին գնեց: Այս բոլորն ի միասին առած ստիպեց նրան չերմ դգացմունքով պատասխանել ամուսնուն.

—Քեզ համար, սիրելիս, ևս աշխարհումս տմեն
ինչ պատրաստ եմ անելու:

—Դէ, եթէ դու այդշափ բարի ես, արի, վարձք
արա, ինձ կարգալ սովորեցրու:

Փրանկան տուաջ զարմանքից քարացաւ, բայց
յետոյ հպարտութեան զգացմոնք եկաւ վրան: Այ
ինչ է նշանակում լաւ ընտանիքի աղջիկ լինել: Եթէ
նա լաւ ընտանիքից չլինէլ՝ չէր իմանայ կարդալ:
Լաւ, ինչո՞ւ չէ: Նա կոսվորեցնէ Պաւլին կարդալ: Ի՞նչ
մեծ բան է: Զանազան պարոնների տներում նա տե-
սել է այնպիսի գաստիարակութիւններ, որոնց գլուում
աւելի քիչ խելք կար, քան իրան՝ Փրանկայի, ճկոյ-
թում, և որոնք կարողանում էին երեխաներ կար-
դացնել: Բայց զրա համար այբբենարան է հարկաւոր:
Այբբենարան գնել Պաւլը կիսնդրէ հարեաններից մէ-
կին, իսկ հիմա չէ կարող արգեօք սովորել նա տա-
ռերի անունները:

—Ցոյց տուր, Փրանկա... խնդրում եմ, ցոյց
տուր թէկուով այս գրքով: Չատ վաղուց եօ որոնում
էի այդպիսի երջանկութիւն:

Փրանկան կրկին ապշեց: Ի՞նչ մի առանձին եր-
ջանկութիւն է կարգալ իմանալը: Բայց Պաւլը մկնեց
բացարել, թէ ոչ մի մարդու նա չէ նախանձում,
բացի նրանցից, որոնք եկեղեցում կարող են կրկնել
աղօթքները գրքով, իսկ տանը նստել ու կարգալ
զանազան հետաքրքրական պատմութիւններ: Աշխար-
հից աշխարհ թափառել նա չէ սիրում, ուստի և շը
գիտէ, թէ ինչ է կատարում հետու, սարերի ու ան-
տառների միւս կողմը, այն-ինչ գիտենալ ցանկանում
է: Գրքերի մէջ ամեն ինչ դրած է: Պաւլն այդ շատ

ցաւ զիտէ: Երբ նա հանգուցեալ հօր հետ միասին
պաների զոներն էր քաշիս՝ այն ժամանակ զըբ-
քեր շատ է տեսել և լսել է, թէ ինչպէս մարդկէ
կարդում են այդ զըբերը: Յաճախ մտածում էր Պաւ-
լը մի հնարք գոնել կարդալ սովորելու, բայց սովոր-
քիցնադ շկաբ: Նրանց զիւղում երկու գրագէտ մարդ
կայ միայն, նրանք էլ ոչ ժամանակ, ոչ ցանկութիւն
ունին սովորեցնելու: Իսկ հիմա կնոջ հետ միասին նա
այդ երջանկութիւնն էլ բերեց իւր խրճիթը: Կինը
նրան և՛ Աստուծուն փառարանել կոովորցնէ, խաւա-
րից լոյս կհանէ, և՛ գոյցէ մինչև անգամ աւելի լաւ
մարդ կդաբճնէ, որովհետեւ, ասում են, գրքերի մէջ
գրած կայ, թէ ինչպէս մարդ կարող է իւր հոգին
մարդել և պահպանել տմեն մի մեղքից:

—Ի՞նչ հսկի, զբանք ըոլորը դատարկ ըաներ
են, —ասաց Փրանկան: —Իսկ թէ զըբերի մէջ հետա-
քրքրական բաներ կան գրած՝ այդ ուղիղ է:

Փրանկան ինքը սիրում էր կարգալ: Նրա տի-
կիններից մէկը շատ գրքեր ունէր և նա ծածուկ
վեցնում էր այդ գրքերից, կարդում էր կամ մենակ,
գիշերն անկողիում պառկած, կամ իւր հիւրերից
մէկն ու մէկի հետ խոհանոցում: Այդպիսի պատմու-
թիւններից մէկը նա միտն է պահել և հէնց հիմա էլ
կպատմէ Պաւլին: Կարզում էր նա այդ պատմութիւ-
նը, երեկուայ պէս յիշում է, մի լակէլի հետ միասին,
որի վրայ այն ժամանակ սիրահարուած էր:

Պատմութիւնը մի վէպ էր՝ լի ապշեցնող ար-
կածներով և խորհրդաւոր պատահարներով: Նրա մէջ
կային և՛ աւազակներ, և՛ թունաւորողներ, և՛ անբա-
րոյական կոնայք, և՛ բնկեցիկներ, և՛ առաքինի իշխա-

Նաղուստրներ և չափազանց մեծահոգի կոմսեր: Փրան-կան պատմութիւնն անում էր մանրամասն, եռանդուն շարժումներով, առանձին ուշադրութեամբ կանգ առ-նելով սիրային արկածների վրայ... Աստուած, ինչ կնշանակէ կարղալ իմանալ: Բայց Պաւլը, թէս պատ-մութիւնից շատ էլ գոհ չմնաց, այսու ամենայնիւ իւլք դիտարութիւններից չճրաժարուեց: Յրտաշունչ ձմեռ էր, գետերը ծածկուած էին սառոյցի հասա ծածկոյ-թով, միմնոյն է, ուրիշ գործ չկար անելու:

Փրանկան սկզբում եռանդով էր կատարում յանձն առած նոր գերը: Կէս օրուայ ժամանակ նա նստում էր Պաւլի կողքին մաքուր լուացած և քերած սեղանի առաջ պատուհանի մօտ: Այդ բովէններում բարձրա-հասակ քառասնամեայ տղամարդը դառնում էր հա-մարեա մի հնագանդ և չափազանց վախկոտ երեսայ: Կուցնելով վլսւիր գլքի վրայ նա այսպիսի ուշա-գրութեամբ զննում էր ցոյց տուած տառը, որ քիչ էր մնում աշքերը դուրս թռչերն բնից: Դժուար էր նրա համար լնտելանալ այդ մանրիկ գծերին և շրբ-ջաններին, աւելի մեծ զժուարութեամբ տպաւորում էին նրանք Պաւլի յիշողութեան մէջ:— բ... գ... գ... հառաջում և յոգոց էր բաշում Պաւլը, չզգալով թէ ինչպէս ամուր հիւսում են ձեռները միմեանց հետ սեղանի տակ, ինչպէս կոտատում են մասների խաղերը:

— ժ... ի... չետեեալ տառի վրայ նա երկար կանգ առաւ խոր լուսութեան մէջ, միայն հետզհետէ աւելի ու աւելի խոնարհնեցնում էր վլսւիր դէպի գիր-քը և թափում ճակատից խոշոր կաթիւներ: Ի՞նչ դժուար է եղել այդ տառը միտքը պահել: Վերջա-

պէս ցած ձայնով ու երկիւզով նա շշնջաց. «Ո»: Փրան-կան, որ ամեն մի երկար ընդմիջման ժամանակ ան-համբերութեամբ վեր-վեր էր թռչում նստած տեղում՝ բարձրածյն աղաղակով ոտքի կանգնեց.

— Այ յիմար, գ... դ... գ... ի՞նչ տեսակ «Ո» է դա, որ զլուխ չունի: Այ ումկի զլուխ: Դիտու-թիւնը քեզ նոյնքան սազ է դալիս՝ որքան ուղտին թամքը:

Ուշադրութիւն չդարձնելով Փրանկայի վիրաւո-րական խօսքերի վրայ, ամբողջապէս անձնատուր ե-ղած ջերմ ցանկութեան՝ գոնէ մի օր, գոնէ մի կերպ զրագիտութիւն սովորելու՝ Պաւլը նայում էր կնոջ երեսին աղերսալից աշքերով:

— Լաւ, Փրանկա, մի բարկանար, լաւ, ցածր, կամաց, ես յիշեցի, սա «ո» է... հա, գլուխ չունի... նստիր և ցոյց տուր նորից... լաւ, կամաց, հանգըս-տացիր:

Նա բանում էր Փրանկայի ձեռքն և կրկին նըս-տեցնում տեղը:

— Դիտես ի՞նչ, Փրանկա. ես այս բանին անսո-վոր մարդ եմ... Դու մի քիչ համբերիր, սիրելիս... թող որ ես հասկանամ բանի էութիւնը:

Նա, յիբաւի, բաւական արագ ընտելացաւ զրա-գիտութեանն և մի անգամ երեկոյիհան, երբ լապտերի լուսով կարողացաւ յաջողութեամբ կըկնել ամբողջ այբուբենը, — բ, գ... այն ժամանակ Փրանկան խայթուածի նման վեր թռաւ տեղից և բղաւեց.

— 2եմ ուզում, չեմ, հերիք է, ինչքան սովո-րեցը, զրոյը տանի գիրքն էլ, կարդան էլ: Դու ի՞նձ գաստիալակուհի ես վարձել, ի՞նչ է: Առանց զրան-

էլ արտեղ այնպէս տխուր է, որ մարդու հոգին դուրս
է գալիս:

նաև երեսն ի վայր փուռեցաւ անկողնի վրայ և
բերանը լայն բաց անելով յօրանջեց: Պաւլը բար-
ձրացրեց գլուխը, նայեց Փրանկային և զիջողաբար
ժամի տուեց ձեռքը.

—երբեմն այծերդ գալիս են: Կարելի է, քննել
ես ուզում. դէ, հանուիր ու պառկիր:

Պաւլը հանգցրեց լավաերը, հանուեց և հինգ
բոպէից յետոյ արդէն քաղցր մշմչում էր: Իսկ Փրան-
կայի բունը չէր աանում: Հմեռուայ երկար զիշերնե-
րին նրան պաշառում էր երկիւղը, նա մօտ էր յու-
սահատուելու: Գոնէ մի ձայն հասնէր ականչին, զի-
շերավին պահապանի մի սուլոց, մի ճառապայթ թա-
փանցէր փողոցի հեռաւոր լավաերից. նուազածու-
թեան արձականի լսուէր, գոնէ որեւէ բան, որ յի-
շեցնէր քաղաքային կեանքը: Այստեղ ձմերային ցուլցտ
հանդարտ զիշերները թագաւառում էր այնպիսի զար-
հուրելի մեռելային լուլթին, այնպիսի անթափանց
խաւար, որ Փրանկային թուում էր կրթեմնապէս, թէ
նա պառկած է խորունկ, շատ խորունկ հոգի տակ:
երբեմնապէս այդ իբողութիւնը խանգարում էր մի
բարձրաձայն թրիւկոց, կարծես մէկն ամենայն ուժով
քար խիելիս լինէր լիրճիթի պատին: Փրանկան լիր
էր թռչում, լարուած ուշագրութեամբ նստում. էր
անկողնում և երբ թխոցը կրկնում էր նորից՝ սկսում
էր քաշշել քնած ամուսնուն: Անշուշտ աւազակներ
են... Պաւլը նմանապէս սկսում էր ականչ զնել և
երբ թխոցը հնշում էր էլի մի անգամ՝ ծիծաղերիլ
բացատրում էր կնոջը, թէ այդ ոչ այլ ինչ է, ևթէ ոչ

պատերի տըաքարաքոցը ցըաից: Ժամանակով ֆըան-
կան ինքն էլ համոզուեցաւ, որ այդ ուղիղ է. այնու
ամենայնիւ ոչ մի կերպ չկարողացաւ ընտելանալ զի-
շերային ձայներին: Սառնամանիքն, ինչպէս մի ա-
ռասպելական տիտան, բարկացած՝ ինքնիշխանաբար
շըջում էր զիւղում, հարուածներ էր հասցնում եր-
բեմն այս, երբեմն այն խրճիթին, երբեմն էլ խփում
էր պատուհաններին իւր սաւցային ձեռքով: Ասենք
սրանից լաւ չէր և հալիչոցը: Ցուրալ ճռճռում ու
հարուածում էր, իսկ հալիչոցը մրմնջում և լաց էր
լինում զանազանակերպ ձայներով: Քամին յոզոց էր
քաշում, ջուրը սասցի լուլաներից խոշոր արտասուքի
նման թափուում էր գեաին. հինօրեայ տանձենին
լիրճիթի պատերի մօտ հառաչում էր այնպէս, որ կար-
ծես մի տեղը ցաւելիս լինէր: Փրանկային թուում
էր, թէ լիրճի շուրջը մեղաւոր մարդկանց հոգի-
ներ են թափաւում. նրա միտքն էր գալիս մեր-
ձակայ զերեզմանատունը, և նա վրդովուած սկսում
էր շնչալ.

—Յանուն չօր և Որդւու և չոպոյն Սրբոյ, ամե-
նայն սուրբք, բարեկիսու լերուք...

Բայց ամենից վաս զրութեան մէջ էր լինում
Փրանկան, երբ քնած գիւղի վրայից փոթորիկ էր
անցնում: Թռչում գալիս էր նա լայնարձակ դաշտե-
րից, նեմանի ափերի մօտ տարածուող հովիսներից,
և անդուսպ կատաղութեամբ յարձակւում էր մի տաս-
նեակ խղճուկ, ձհան հիւսերի մէջ կիսով չափ թա-
զուած տնակների վրայ: Այն ժամանակ օդը լցուում
էր աշխարհիս վրայ գոյութիւն ունեցող ամենատեսակ
ձայներով: Երբեմն լսում էր տասնաւոր թնդանօթ-

ների միանուագ թնդիւնն, երբեմն զայլելի վոհմակի վայրենի ոռնոց, երբեմն հսկայական թռչունների թեների թարթափին; Այս ամենը միախառնւում և կազմում էր մի աններդաշնակ, գծոխային նուագահանդէս, որ սակայն անդօր էր խորունկ քնից արթնացնելու գիւղի խաղաղ բնակիչներին: Մի կին միայն անշարժ նստած էր անկողնում, հայեացըն ուղղած դէպի խաւարը, ընդհատուող շնչառութեամբ, սառն քրտնքի խոշոր կաթիլները ճակատին: Նա այժմ համողուած էր, որ ահա, ահա շուտով կրնկահան կիւնին ճաճռացող և երեքացող դաներն ու պատուհաններն, ապա ներս կիուժէ կատաղած սատանաների խոժանը, կամ քամին մի հարուածով փուլ կածէ ամբողջ խրճիթը:

— Խրճիթը փուլ է գալիս, Պալ, այ Պալ, Փախչինք, փուլ է գալիս խրճիթը;

— Ի՞նչ է, — քնի միջից հարցնում է Պաւլը:

— Մէկ ականջ դիր, է:

Պաւլը մի լուպէ ականջ էր գնում և յիտոյ շուռ էր գալիս միւս կողքին:

— Դատարկ բան է, փուլ շիպայ. առաջին անգամն է, ինչ է:

— Պաւլ, լսիր... վառիր լապտերը... իմ անգին, իմ ոսկի, իմ գոհար, վառիր:

Պաւլը չէր ստիպում երկար խնդրելու, իսկոյն վեր էր կենում ու վառում լապտերը:

— Ինչու դու ինքդ չես վառում:

— Օ՛հ, ես շունչ քաշել անգամ վախենում եմ...

— Դատարկ բան է, — կրկնում էր Պաւլը, երեսդ խաչակիր ու քնիր:

Նա իսկոյն ընում էր նորից, իսկ վոքը ինչ հանգստացած Փրանկան շարունակում էր նստել անկողնում և դիտել քնած ամուսնուն: Պաւլը քնած ժամանակ աւելի հասակաւոր էր երեսում՝ քան իսկապէս էր: Ցերեկը դիւրաթեք, ճկուն շարժուածքները համարեա երիտասարդ մարդու կերպարանք էին տալիս նորան, այն-ինչ հիմա կնճիւներն աւելի խտանում էին ճակատի վրայ, հուպ տուած չըթունքներն աւելի խիստ արտարայտութիւն էին տալիս դէմքին: Փրանկան աշքերը չհեռացներով նրանից՝ շնչում էր ինքն իրան սեղմած ատամների միջից.

— Անասուն, նորից քնեց:

Բացի դրանից ինչպէս գուրք չէ գալիս այժմ նա Փրանկային: Բոլրովին այլպէս չէր երեսում նա առաջին անգամ մակոյկում, նեմանի վրայ: Այն ժամանակ Փրանկան համարում էր նրան երիտասարդ: Իսկ հիմա... և նա կրկնեց.

— Ծերունի:

Խրճիթի շուրջը քամին կատաղում էր, սուրում, գոռում, կաղկանձում. բարկութեան կայծեր էին թափում կնոջ աշքերից, որ նստած անկողնում խառն ի խուռն մաղերով՝ չէր դարձնում աշքերը կողքին քնած մարդու երեսից:

Բայց երբ լուսարացին Պաւլը զարթնում և քաշում էր կնոջն իւր մօտ, Փրանկան կպչում էր նորան, ինչպէս մի քծնող կատու, համրսյրներ էր շոայլում նորան, շնչում էր վաղաքշական խօսքեր, իսկ մի քանի ժամից յետոյ ոսքի թռչելով՝ ուրախ-ուրախ բան էր անում վառարանի առաջ և պատրաստում էր սեղնը:

Սակայն շատ անգամ Պաւլը չէր դարձեցնում. կնոջը, որ յաճախ քնում էր լուսաղէմին միայն, և կամաց գուրս էր գնում խրճիթից նայելու սառցի ճեղքուածքը, ուր մի օր առաջ նա ցանց էր դրել, կամ դիտելու սառցի ընթացքը, երբ գետը բացուած էր լինում արդէն: Զմեռն անցնում էր, արեն սկսում էր աւելի ու աւելի տաքացնել. տեղ-տեղ երեսում էին ձիւնից ազատուած տարածութիւներ, ազուաններն ուրախ կունշինով դանդաղութեամբ մի տեղից միւս տեղ էին թռչում: Գեափ վրայից, երեակայական նաւերի տուրմի նման, լողում էին սառցի ահագին կտորներ: Թափանցիկ, թէ տակաւին ցուրտ օդի մէջ գարնան հոտ էր վշտու:

Զատ անգամ իւր կեանքում Պաւլը տեսել էր սառուցի ընթանալու տեսարանն և իւրաքանչիւր անգամ ողջունում էր այն ուրախ ժպիտով: Նա կարօտցել էր հայրենի գետին: Զմեռն անց կացաւ կարծես թմրութեան մէջ, իսկ հիմա ամեն ինչ նորից սկսում է զարթել, կենդանանալ.., Ահա Փիլիպպն էլ սարքում է իւր պարօմը, բայց երեխ ոյժը չէ պատում, որովհետեւ աղաղակում է.

— Օգնիր, Պալ, արի, օգնիր:

Պաւլը վերցնում է կացինն և սկսում է խփել ահագին մեխերը հաստ տախտակների մէջ: Ահա գուրս եկան ջուրը գնալու և Ռւլեանան, և ուրիշ կանայք, իսկ տղամարդիկ սկսեցին քաշել գէպի գետի ափը մակոյկներն ու նաւակները: Գեաեզրը կեանք առաւ: Քանի մի պատանի, Դանիլկայի առաջնորդութեամբ, բարձրացան ափի մօտից անցնող ահագին սառցի կտորի վրայ և յաղթանակի ու երկիւղի աղաղակնե-

րով փորձում են սողալ նրա հարթ մակերեսովթի վրայ: Ֆիլիպպը վերեկից բարձրաձայն անարգում է եղրօը չարութեան համար, իսկ Պաւլը, մի ըոպէ թողնելով աշխատանքը՝ բացատրում է հաւաքուած հարեաններին, թէ զարունն այս տարի տաք ու միակերպ կը լինի, թէ այդ նա իմանում է սառցի գնալու ժամանակից և գեանի հոտից: Այդ ժամանակ դռան ճռճուցից և զաւազանի թիւթիւկոցից Փրանկան արթնացաւ:

— Յանուն Հօր և Ռդուոյ... — լսուեցաւ մի խըղիկացող պատաւական ձայն:

Փրանկան ծուլութեամբ կուշ ու ձիգ եկաւ անկողնում ու ասաց:

— Հա, դու ես, Մարցելա. վառիր, խնդրեմ, վառարանը. ես էլի կպառկեմ մի քիչ:

Մուրացիկ կինը, չնորհիւ այն չնչին տուրքերի, որ ստանում էր երբեմնապէս Փրանկայից՝ դարձել էր նրա հլու-հնազանդ ծաւան և միակ հաւատարմատարը: Փրանկան ոչ ոքի հետ այնպէս անկեղծ չէր, որպէս նրա հետ: Մարցելան ես իւր կողմից պատմել էր նորան իւր ամբողջ կեանքն ուրիշների մօտ ծառայած ժամանակ, թէ ինչպէս երբեմն աշխատում էր աւանց հանդստանալու, իսկ երբեմն ամբողջուին անձնատուը լինամ զուարճութիւնների՝ ինչպէս պատահէր: Կար ժամանակ, երբ նա էլ երջանիկ էր ու գեղեցիկ շորերով էր զարդարում, անում էր այն միայն, ինչ որ ինքն էլ ուզում: Նրա պարոնն երիտասարդ էր և սիրում էր նրան այնպէս՝ որ հոգին անգամ չէր ինայի: Զամուսնացաւ նա Մարցելայի հետ նրա համար, որ ինքը, Մարցելան, գեղջկուհի

Եր. բայց սիրելուց երբէք չէր զադապի՛ եթէ շվատ-նէր իւր ամբողջ կարողութիւնն ու չգնար հեռու, շատ հեռու աշխարհներ բախտ որոնելու, ի՞նչպէս նա կարող էր քաշ տալ իրան հետ և Մարցելալին, քանի որ ինքն էլ ուտելու հաց չունէր: Գնաց ու մոռացաւ: Մոռացաւ նրան և Մարցելան, այնուհետեւ տեսաւ և՝ երջան կութիւն, և՝ թշուառութիւն, բայց երբ բոլորովին ծերացաւ ու ընկատ դռնէ դուռն օգործութիւն խնդրելու՝ այն ժամանակ աւելի ու աւելի յաճախ սկսեց միտք բերել իւր առաջին սէրը:

Նա երկու երեխայ է ունեցել, մի տղայ և մի աղջիկ։ Տղան մեռել է դեռ մանուկ հասակում, իսկ աղջիկը կենդանի է և հիմա ծառայում է սրա նրա մօտ և ոչ մի բանով չէ օգնում մօրը։ Մարցելան խօսում էր այդ մասին առանց քաշուելու, ինչպէս մի ամենասովորական բանի մասին։ Հայ, երեխաներ... Բայց ո՞քքան հօգս են պատճառել նորան այդ երեխաները. ի՞նչպէս զժուար էր կերպակուր հայթայթել նրանց համար։ Նա շարշարում էր այնպէս՝ ինչպէս ձուկը ցամաքի վրայ... Եւ հիմա նորան ծերութեան հասակում ուրիշ ոչինչ չմնաց, բացի մուրացկանի տոպրակից... Մարցելայի սպիտակ յօնքերը կիտուեցան, աշքերը փայլեցին բարկութեամբ։

Մի անգամ, զատկական տօնելից քիչ առաջ,
Մարդելան յայտնեց, թէ նա մի նոր հետաքրքրական
լուր էր բերել: Փրանկան ականջները սրից:

—ի՞նչ նոր յուր:

—ինչոք պարոններ վարձել են պալատն ամառուայ համար:

Փրանկան գիտէր, որ այն ամարանոցը, ուր

անցեալ տարի ապրում էր ինքը՝ գիւղացոց բերանում՝ կոչւում էր պալատ:

— Արդէն վարձել են: Խնչու առաջ ինձ ոչինչ չէիր ասում այդ մասին,—աղաղակեց նա վեր թռչելով նստարանից և ծափ տալով:—Հետաքրքրելի է իմանալ, թէ ով են: Կարելի է ծանօթ մարդիկ են: Կարելի է իրանց հետ կրեցն մի կին... Լսիր, Մարցելա, դու չգիտե՞ս, ծի՞ր են նրանք թէ երիտասարդ: Ջատ ծանօթներ ունին:

առնացն ըստարքի դիմու ոչ նապատ վերա լուսում կայարակ ոչ նապատ ոչ
շնորհ նմի հասա անմա ոչ ի նապատ մէնպա—
մէնի ոյս ամ ըստարքի—մէնու բա նասա ոյս չ
չ նապատամ—իստա հա և այսապատա իս ի
ոճ թիրան ենան և մինա ան ին չ պատահ
ուս արքա և մի ոն մանգա ան ըստա չ մակա
բատատամ—և զանց մն ոյն անագր ար այդ
անդա ուսի ուսի հանուն ան

¶

Աշնանային օրն երեկոյանում էր: Երկնքի վրայ
իրար յետեից խումբ-խումբ ձգւում էին մութ-մուայը
ամպեր: Նեմանի ափին զետեղուած փոքրիկ գիտի
ընակիշները կարծես մեռել էին բոլորեքեան. փողու
ցում և տների գաւիթներում ոչ մի մարդ չէր երե
ւում, միայն տեղ-տեղ փոքրիկ ծուռ ու մուռ պատու
հաններում սկսում էր լոյս երեալ:

Այս խաղաղութեան և ամայութեան մէջ Պաւլը
կանգնած էր իւր լորձիթի դռան մօտ, որպէս մի սիւն՝
ցցուած գետնի մէջ: Անզիտակցարար ժամանակ առ
ժամանակ նա մօտեցնում էր շրթունքներին վաղուց
հանգած կարճիկ ծխամորճն և անզիտակցարաբ կըր-
կին ցած թողնում ձեռքը: Նրա աչքերը չէին երեւում
մինչ յօնքերն իջեցրած գլխարկի կօզիրեօկի տակից,
սակայն շրթունքների և կղակի վրայ նկատելի էր
անընդհատ ջղաձգութիւն, կարծես նա աշխատելիս
լինէր զսպել հեծեծանքն ու ցաւի կսկիծը: Երբեմնա-

պէս նա ինչ-որ անորոշ բան էր վինթվինթում, ապա
լուսում կրկին, չհեռացնելով հայեացքը գետից և հան-
գիպակաց ափում սփռուող լայնատարած դաշտերից:

Նեմանի միւս կողմից լուսեցաւ բարձր աղաղակ.
«պալօմ, պալօմ»: Կօզիւկների խրճիթի զուուը բա-
ցուեցաւ և այնտեղից դուրս եկան երկու մարդ: Քա-
նի մի բողէից յետոյ պարօմն արդէն մօտենում էր
հանդիպակաց աւազոտ ափին, ուր աղօս կերպով ե-
րեւում էր երկձի կառքի ուրուագիծը: Ցածր կա-
խուած մութ ամպերի տակ, դանդաղահոս գետի
խաւար մակերեսոյթի վրայ և պարօմն, և՛ նրա մէջ
նստած երկու մարդը տարօրինակ ուրուականների էին
նմանում: Համաշափ, հանդարտ, առանց ամենափոքր
աղմուկ կամ ծփանք առաջացնելու Փիլիպպն ու Դա-
նիլկան երբեմն թեքւում էին զէպի յետ, երբեմն
ուղղում, խորունկ սուզելով թիակները մթին ջրի մէջ:

Պաւլը խոր հառաշեց և ինքն իրան մրմնջաց.
— Օ՞հ, Տէր իմ Աստուած:
Յայանի չէ, նաւակի տեսքն արդեօք, թէ որևէ
միաք, արթնացած նրա գլխում, դարձեց նրան դէ-
պի իրականաւթիւնը, միայն նա ցնցուեց ամբողջ մար-
մնով և ուզգեց գլխարկը:

Լեռան վրայ դժուարութեամբ բարձրանում էր
երկձի կառքը: Փիլիպպի բարձր հասակն երեւցաւ
Կօզիւկների խրճիթի անկիմում: Որպէսզի ժամանակ
վաստակէ՝ նա թուաւ ցանկապատի վրայից և կանգնեց
Պաւլից քանի մի քայլ հեռու:

— Պաւլ, ասաց նա, մի բարկանար մեղ վրայ,
մինք այս բոպէիս ուրեաղնիկին անց կացրինք գե-
տից և ամեն ինչ պատմեցինք նորան:

— Բայց ինչ պատմեցիք դուք նորան, — դժուա-
րութեամբ հարցրեց Պաւլը:

Փիլիպպը փոքր ինչ քաշ արաւ գլուխն և քորեց
ծոծրակը:

— Այս որ Փրանկան չկայ, որ ահա մի ամբողջ
շարաթ է նա չէ երկում, — ցածր ձայնով ասաց Փի-
լիպպը:

Պաւլը բարկութեան հայեցք ձկեցիւր խօսակ-
ցի վրայ:

— Սաանան դրգեց ձեզ բերաններդ բանալ, —
գդգոհութեամբ ասաց նա:

— Ես կարելի է չասէի էլ... ինչ իմ գործն է
խառնուել այդ բանի մէջ, — սկսեց արդարանալ Փի-
լիպպը. — բոլորը Դանիլկայի արածն է... այսպիսի,
այսպիսի բան... պարոն ուրեատնիկ, ասում է, այս-
պիսի, այսպիսի բան... Փրանկան փախաւ:

Երկձի կառքը բարձրացաւ սարն և կանդ առաւ
Փիլիպպի խրճիթի դարպասի առաջ: Կառքում նստած
մարդը, որ փաթաթուած էր թիկնոցով՝ սկսեց խօ-
սել փոքր ինչ ծաղրական ձայնով:

— Հը, Կօրիցկի, ասում են կինդ կորել է, հա,
փախել է, ինչ: Կարելի է աւազակներն սպանել են,
կամ կարելի է ինքն իրան ջուրն է ձգել: Ինչու հա-
մար սստիկանութեանն իմաց շտուիր: Գուցէ գտնէին
նրան շուտով: Միթէ դու նրան չես ափսոսում: Այն-
պիսի գեղեցիկ կին է կորցրել ու ամենեին տէրը չէ
լինում: Ամաշը, եղբայր, հա, հա, հա...

Ուրեագնիկը ծիծաղում էր, իսկ խրճիթի առաջ
կանգնած երեք հոգին ակն յայտնի անհամբերութեամբ
սպասում էին Պաւլի պատասխանին: Գուցէ նա սկսէ

հայհոյել փախած կնոջը, գուցէ իմնդրէ ուրեագնիկին,
ինչպէս էլ որ լինի՝ գանել և պատժել նրան ամենա-
խիստ կերպով: Բայց Պաւլը լուց մինչև այն ժամա-
նակ, երբ ուրեագնիկը զադարեց ծիծաղելուց, և ապա
պատասխանեց հանդարս ու հաստատուն ձայնով.

— Նա ոչ փախել է, ոչ խեղգուել և ոչ սպանուել
աւաղակներից: Նա իւր ազգականների մօտ է զնացել...
— Էհէ, — մէջ մտաւ Դանիլկան, — ազգականների
մօտ է զնացել... յայտնի չէ միայն թէ երբ կվերա-
դառնայ:

Փիլիպպը բղաւեց եղբօր վրայ, իսկ Պաւլը շա-
րունակեց:

— Ոստիկանութեանն ես չեմ իմաց տուել և եր-
բք էլ իմաց չեմ տայ, որովհետեւ այս բանում ոչ մի
ոստիկանութիւն հարկաւոր չէ: Նրա համար ոստիկա-
նութիւնն ես եմ:

Պաւլը բարձրացրեց գլուխը. նրա ձայնի մէջ
լսելի էր բարկութիւն:

— Օ՛հ, ինչ հպարտն է եղել պմհ, — բարկա-
ցաւ նոյնպէս և ուրեագնիկն ու գժկութեամբ աւե-
լացրեց:

— Ուրեմն դու թոյլ ես տուել նորան զնալու:

— Այն, — առանց մի ըովէ տատանուելու պա-
տասխանեց Պաւլը:

Դանիլկան չկարողացաւ զսպել իրան և բար-
ձրաձայն ծիծաղեց:

— Դէ որ այդպէս է, ես այստեղ գործ չունիմ:
Քշիր:

Կառքը շարժուեց տեղից և շուտով ծածկուե-
ցաւ, ծռուելով միւս փողոցը: Պաւլը շուռ եկաւ և բար-

ձաւ իւր յետևում կանգնած մարդկանց: Նրա աշքերը փայլում էին, որպէս երկու չիկացած ածուխ: — իսկ դուք յեղուներդ պինդ պահեցէք ատամների յետև, — բարկութեան շալժումով աղաղակեցնա: — ես հանդարտ մարդ եմ, ուղիղ է, բայց ինձ էլ կարելի է բարկացնել... Զեր ինչ գործն է, թէ ուր է գնացել նա և նըր կվերադառնայ, ուշ թէ շուտ: Եթէ նա որևէ վատ բան է արել՝ ինձ է արել և ոչ ձեղութան այս է: Եւ եթէ ճշմարիտն ասենք՝ նա ինձ էլ ոչ մի վատ բան չէ արել... Ազգականների մօտ է գնացել, գնացել է իմ թոյլտուութեամբ: Սյուլէս էլ իմացէք: Բերաններդ վակ պահեցէք և այսուհետև չլսեմ չիմանամ ձեր դատարկախօսութիւնը... — Օ՛խ, Պաւլուշա, — ցաւալի ձայնով խօսեց Ռուլեանան: — Երեկի դու մեղ բոլորովին չես սիրում, որ այդպէս բղաւում ես մեղ վրայ... Եւ այս բոլորը Ռուլեանան սաստիկ ցածացրեց ձայնը — այդ անպիտանի, այդ խարերայի պատճառով:

Լսելով քրոջ ձայնը՝ Պաւլը փոքր ինչ կակեցաւ: — Ես ձեղ վրայ չեմ բղաւում, — հանդարտ պատասխանեց նա, — միայն խնդրում եմ և պատուիրում շանկը այն ինչ որ ինձ դուք չէ գալիս: Զէ որ ես ձեղ ոչ մի վատ բան չեմ անում... դուք էլ ինձ մի անէք... իսկ Փրանկան ազգականների մօտն է գնացել, իմ թոյլտուութեամբ է գնացել ու շուտ կդայ թէ ուշ՝ այդ միայն ինձ է յայտնի: Ահա ձեղ իմ վերջին խօսքս... միտներդ պահեցէք:

Նա առանց շտապելու անց կացաւ ցանկապատի վրայից և ուղղեց քայլերը դէպի իւր խրճիթը: Կօդլիւկները նմանապէս գնացին տուն: Պաւլը մնաց

միայնակ աշնանային գիշերուայ անդուր և մուայլ յարկի տակ: Ահա բարձրացաւ քամին և շարժեց ծառերի տերեաթափ ճիւղերը: Ամպերն աւելի ու աւելի ցած էին իջնում և իրանց վարագոյրով ծածկում մերձակայ առարկանները: Գիւղի բնակիչների համար սկսում էր օրուայ ամենատիսուր ժամանակը, որովհետև երեկոյեան ժողովները գեռ չէին սկսուել:

Անտառում, գերեզմանատանը, լսուցցաւ բուի տիմուր ձայնը. կարծես նորան պատասխանելու համար՝ ճոճուաց մի տեղ դարձասի դուռը. թանձր խաւարի միջից յայտնուցցաւ մի մութ կերպարանք և կանգ առաւ Պաւլի պուած: — Պաւլ, — շնչաց նա: — Ի՞նչ, ով կայ այստեղ, — հարցրեց Պաւլը վախեցած, կարծես արթնանալով խոր քնից:

— Ի՞նչ ես ցցուել խրճիթիդ մօտ պահապան զիշտուրի նման: Հիմա գիշեր է, ինչքան էլ որ նայես ոչինչ չես տեսնի: Տոն մաիր, լսում ես: Դէ, գնա, թէ չէ մարդիկ կկարծեն, թէ դու խելքդ կորցրել ես կամ թէ շարոց ես հանդիպել:

Խօսողը շնչում էր ցածրաձայն, թէն նրա խօսքերի մէջ ամենսկին խորհրդաւու բան չկար և բացի դրանից փողոցում ոչ ոք չկար, որ ականջ դնէր նորանց: Սովորաբար այդպիսի ձայնով խօսում են ծանր հիւանդի կամ հոգեվարը մարդու անկողնի մօտ:

— Լսում ես, Պաւլ, տնան մաիր: Ի՞նչ ես կանգնել այստեղ: Տես, ուզում է անձրև կար:

Սյուլ տեսակ ստիպունքը վրդովեց Պաւլին:

— Ինձանից ինչ ես ուզում, Աւգոտեա, ի՞նչ ես կպել ինձ, — բարկացած և նմանապէս շնչալով ասաց

նա:—Զեռք վեցըրու ինձանից, ասում եմ քեզ, եթէ ցանկանամ՝ ամբողջ գիշեր կկանգնեմ... քո գործդ չէ: —Այ, տեսնենք թէ կկանգնես: Ես չեմ թողնի, որ դու դուք տեղը փորձանք բերես գլխիդ: Երկի դու կարծում ես, թէ ես քիչ հիւանդներ եմ աեսել ու ոտքի կանգնացրել նրանց: Քեզ էլ ոտքի կհանեմ:

Ակներե էր, որ Պաւի այժմեան դրութիւնը նա հիւանդու դրութիւն էր համարում: Դեռ աւաւոտեան հանդիպելով Պաւին փողոցում՝ Աւգոտեան ձգեց նրա վրայ զննողական հայեցք և շարժեց գլուխը: —Տնան մտիր,—ես քեզ բան պիտի պատմեմ ֆրանկայի մասին: Մաքսիմն այսօր եկաւ քաղաքից ասում է՝ տեսայ նրան: Եթէ տուն կմտնեմ՝ ամեն ինչ կպատմեմ, իսկ եթէ ոչ, կայ այդպէս անզգայ անասունի նման, կամ ինչպէս անխելք երեխայ, որ չէ հասկանում իր օգոտաք:

Ի դուք չէր այդպէս ասում Աւգոտեան: Ո՞րքան անգամ իւր որդի Մաքսիմի և ապա փոքրիկ թոռների հիւանդութեան ժամանակ նա կանգնել է նրանց անկողնի մօտ՝ դառն դեղի գդալը ձեռքին և կրկնել է. «Եթէ դեղը կիմես» մեղը կտամ, իսկ եթէ ոչ՝ կաց այդպէս անզգայ անասունի նման»:

—Եթէ տուն մտնես՝ ֆրանկայի մասին բան կպատմեմ, եթէ ոչ՝ այդպէս էլ կաց... ինչ է, ամբողջ գիշեր պիտի կանգնես անձրկի տակ:

Պաւին ուղղեց գլխարկը:

—Նրա մասին ես իմանալու բան շունիմ... ասաց նա, ես ինքս ամեն ինչ գիտեմ... ազգակաների մօտ է գնացել...

Նա խօսում էր այժմ բոլորովին այնպէս՝ որպէս

փոքր ինչ առաջ ուրեաղնիկի հետ, կտրուկ ձայնով ու անհամբերութեամբ: Սակայն հիմա առանց այն էլ նա պիտի տուն մտնէր, ուրիշ ինչ ունէր անելու: Աւգոտեան ստուերի նման հետեւում էր նորան:

—Ու՞հ, ինչ ցուրտ է այստեղ: Երեք օր է, երեկ, որ վառարանը չէ վառուած: Այսօր դու մի բան կերել ես թէ չէ: Անշուշտ ոչինչ չես կերել, եթէ կրակ չէ եղել վառարանում: Դէ, լուցկի տուր ինձ: Այս լուպէիս ես կրակ կանեմ և քեզ համար ընթրիք կպատրաստեմ: Է՛, անխելք, անխելք: Տնը լուցկին, ուր է:

—Ես ինչ գիտեմ ուր է. որոնիր եթէ ուզում ես: Պաւի նստեց, համարեա վայր ընկաւ նստարանի վրայ պատուհանի մօտ: Աւգոտեան տրանջում էր միայն լուցկին որոնելիս. վերջապէս գտաւ, վառեց մի բուռն տաշեղ և ձգեց վառարանի սկ բերանից ներս:

Մոայլ սենեակում սկսեցին շարժուել կենդանի ստուերներ. պատակի լեզուն փոքր առ փոքր բացուեց:

—Ահա քեզ կրակ, ընթրիք էլ կպատրաստեմ քեզ համար, տունդ էլ կտաքանայ: Աղ զլած միս ունիս թէ չէ: Ես քեզ համար աղ դբած մսով կոլուսկներ պատրաստեմ, հա: Ուրիշ կերակուր եփելն երկար կքաշէ, իսկ սա մի բուպէում կլինի: Յետոյ մենք կնսաենք միասին, զրոյց կանենք. իսկ եթէ ուզում ես՝ գիշերն էլ կմուամ այստեղ: Ինչքան էլ որ չլինի՝ մենակ չես մնայ: Երկար ժամանակ դու մենակ ես ապրել, ուզիդ է, բայց վերջերս անշուշտ մռացած կլինիս նախկին սովորութիւնդ: Է՛հ, դու կարծում ես, ես այդ բաները չգիտեմ, շատ լաւ գիտեմ... իմացած եղիր: Երբ իմ մարզս մեռաւ, այնպիսի ցաւով տանջւում էր սիրտս, որ եթէ մի բոպէ մենակ մնայի՝

Նոյն ժամին, կարծես, հոգիս կաւանդէի: Ասենք, ես ժամանակ էլ չունէի մենակ մնալու... երեխաներս թոյլ չտուին մեռնելու... պէտք էր հոգս քաշել նրանց մասին... բացի դրանից ես սրտացաւի դեղ էի խորում: Քեզ համար էլ կրերեմ այդ դեղից... Դա մի այնպիսի խոս է, որ երբ խմում ես նրա ջուրը՝ իսկոյն թեթևանում է սիրտդ: Վայն առաւտեան լուսարցին քո վառարանդ կիվաւեմ ու կվագեմ տուն... Փառք Աստծու, իմ ուժո կպատէ երկու տուն կառավարելու: Լաւ մարդուն թշուառութեան ժամանակ օդնելը միթէ քիչ բան է: Դրա համար Աստուած մեղքերիս թողութիւն կտայ, դու էլ, երբ խելքդ գլուխդ կդայ՝ ձուկ կրերես մեղ համար:

Նա պատրաստում էր նորից մի գիրկ տաշեղ լցնել վառարանի մէջ, երբ յանկարծ զգաց, որ մէկը բռնեց իւր ձեռքից:

—Կրակ մի վառեր, ի սէր Աստծու, մի վառեր, —բացագանչեց մի ձայն ուղիղ նրա ականջի մօտ, մի ձայն այնպիսի տանջանքով ու յուսահատական կսկիծով լցուած, որ Աւղոտեան վախեցած յետ նայեց:

—Ինչո՞ւ, —հարցրեց նա և մօտեցրեց մի բուռն վառուող աշեղ Պաւլի խոնարհած դէմքին: —Վայ, վայ, վայ, ինչո՞ւ նման ես դու: Մէկ հայելուն նայիր... . Դու ինքդ քեզանից կվախենաս:

Պաւլի ճակատի վրայ կազմուել էին երկու խոր կնճիռներ. շրթունքները ծուուել էին ջղաձգութիւնից, իսկ լայն բաց արած աշքերն անթարթ նայում էին դէպի մի կէտ առանց որևէ բան տեսնելու:

—Կրակ մի աներ, —կրկնեց նա, խղճա՛ ինձ, մի աներ:

— Ինչո՞ւ, —բարկացած հարցրեց Աւղոտեան: —Մի հարցներ, մեծ վարձք կանես եթէ չվառես: Պաւլը լուեց մի ըոսէ և յետոյ մեծ դժուարութեամբ ասաց.

— Ինձ թուեց, թէ նա է կանգնած վառարանի առաջ և կրակ է անում:

Պաւլը խեց Աւղոտեայի ձեռքից վառուող տաշշեղնեցը, ձգեց ոտների տակ ու տրորեց: Սենեակում տիրեց խաւար, որի մէջ հազի երկում էր Աւղոտեայի աւելի ևս խաւար կերպարանքը: Երկար կանգնած էր նա վառարանի մօտ, զլուխը յինած ձեռքի վրայ: Երեի Պաւլի հիւանդութիւնն աւելի լուրջ է, քան ենթադրում էր ինքը: Մնչացած չար աշք է դիպել նորան կամ գուցէ կախարդել են: Կախարդութեան դէմ ամենից լաւ դեղը մրուանտակն է: Նա մօտեցաւ նրստարանի վրայ նստած Պաւլին և ասաց ցածր ձախով:

— Մաքսիմը նրա մասին լուր է բերել քաղաքից:

Պաւլին անկարելի էր տեսնել խաւարի մէջ, միայն լսում էր նրա անընկնելի յամառութեամբ տոգորուած ձայնը:

— Ոչ մի լուր նրանից ինձ հարկաւոր չէ: Ազգականների մօտ է զնացել, իմ թոյլաւութեամբ է զնացել:

Աւղոտեան նստեց միւս նստարանի վրայ, պատուհանի հանդէպ:

— Լսիր, Պաւլ, կամ դու ինքդ ես յիմարացել, կամ ուրիշներին ուզում ես յիմարացնել: Ինչո՞ւ ես դատարկ բաներ դուրս տալիս, քանի ամենքը գիտեն, որ նա ազգականների մօտ չէ զնացել, այլ ուղղակի վախել է: Փախել է այն պարոնների լակէի հետ, որոնք ամառս պալատումն էին ապրում: Ես ինքս

մէկ չէ, երկուս չէ տեսել եմ նրան պալատ վաղելիս.
իսկ երբ ինքը չէր կարողանում գնալ՝ ուղարկում էր
այն խաբերայ Մարցելային. Հակէյին էլ եմ տեսել,
երբ նա ման էր զալիս զետի ափին ու նրան սպա-
սում, սև սիրտուկով, մազերը գանգրացրած ոչխարի
նման, սրսկուած... Մարցելան ասում է, թէ օծանե-
լիքսվ են սրսկուած և անուշահոտ իւղ քսում... Ո՞վ
է իմանում: Իսկ նա սիրահարուել էր այդ լակէյի
վրայ: Մարցելայի մօտ պարոն էր անուանում նրան:
Տերիք է, ասում է, որքան ես գիւղացինեցի երեսնե-
րին նայեցի, պարոն եմ ուզում հիմա, ասում է: Այդ
օծանելիքն ու անուշահոտ իւղը շատ դուք էին եկել
նորան: Մի անգամ նրանք պալատի խոհանոցում երե-
կոյթ են սարքել, պար են եկել, իսկ դու այն ժա-
մանակ ամբողջ շարաթ գետի վրայ ես անց կացրել,
ձուկ բռնելիս ես եղել: Այդ երեկոյթից նա վերա-
դարձաւ գժուածի նման և երկար ժամանակ խըր-
ճիթում պարում էր միայնակ: «Օ՛հ, Մարցելա, ասում
է, ի՞նչպէս գեղեցիկ է նա, ի՞նչպէս լաւ է պարում
և ի՞նչպիսի վարուելու լաւ ձեռք ունի»: Իսկ յետոյ,
երբոր պարոնները պատրաստում էին քաղաք գնա-
լու՝ նա առաջ կարծես թէ ամբեց, բայց յետոյ ու-
րախացաւ: Ասել էր Մարցելային, թէ ծառան զրդում
է իրան քաղաք վերադառնալ և պաշտօնի մանել, թէ
խոստանում է ամեն օր գնալ նրա մօտ, տանել նրան
զբոսափայրեր և երեկոյթներ: «Կիմախիմ, ասում է,
Աստուած վկայ, կիմախիմ: Գերի եմ, ասում է, ի՞նչ
է, ես խօմ ինձ չեմ ծախել, աշխարհս ինձ համար
գեռ չէ խաւարել: Կիմախիմ»: Ու վախտ... Շան պէս
սատի թող նա, այն գարշելին... Դու վախտ... Շան պէս

գականներ ես հնարել: Ո՞ւմ ես ուզում յիմարացնել:
Եթեխան անգամ կարող է հասկանալ, թէ ինչ ազգա-
կաններ են դրանք...

Նա լոեց և անհամբերութեամբ սպասում էր, թէ
ինչ կասէ Պաւլը: Երեկի կսկսէ անիծել Փրանկային,
ցաւել իւր անդգուշութեան վրայ, որ ամուսնացաւ այդ-
պիսի մի կնոջ հետ... Երկար ստիպուած էր սպասել
Աւգոստեան, մինչև որ Պաւլն ասաց խռպոտ ձայնով.

— Բայց չէ որ երգուեց: Այս խօսքերն արտայայտում էին միայն անսահ-
ման զարմանք: Աւգոստեան չկարողացաւ զապել իրան
և բարձրածայն բացագանչեց.

— Միթէ գույ յիրաւի ոչինչ չգիտէիր: Պաւլը ոչինչ չպատասխանեց: Քիչ յետոյ Աւգո-
տեան նորից սկսեց խօսել: Նա պատմում էր, թէ երեկ
նրա որդին Մաքսիմը տարել էր քաղաք խսփուկ
ծախելու և պատահել էր Փրանկային: Նա թէ թէի
տուած գնալիս է եղել մի տղամարդի հետ, երեկ
հէնց այն լակէյի հետ: Տեսել է Մաքսիմին, բարեկ
է և ասել. «Ե՛յ, Մաքսիմ, բարեկիր գիւղում բոլորին
և տաս. «թող որոնեն, որ գտնեն»: Ատամները բաց
է արել ու գնացել իւր երկրպագուի յետերից: Մաք-
սիմը թքել է միայն: «Օ՛խ, մայրիկ, ասում է, այն-
պէս ուզում էի մի լաւ մտրակ քաշել նրա մէջքին,
որ էլ ինչ ասեմ. բայց վախեցայ թէ ոստիկանատուն
կտանեն»:

Այ հիմա Պաւլն անպատճառ կսկսէ բացուել,
անպատճառ կսկսէ հայոյել Փրանկային ամենաան-
տանելի խօսքերով: Մակայն Պաւլը նորից կըկնեց
միենոյնը.

— Յայց չէ որ երգուեց:

— Ելի իրան էն է քշում, — բարկացաւ վերջապէս Աւգոտեան. — ինչ էլ որ ասես նորան՝ միւնոյն է, միայն զարմանալ զիտէ... Ի՞նչ ես աչքերդ չուել անմտաբար:

Սենեակում տիրեց խորին լուութ իւն:

— Դու, Պաւլ, երկու ձեռքով երեսիդ խաչ պիտի հանես, որ աղատուեցար այդ խարերալից. կրկին քթ առաջուայ կեանքդ կարող ես վարել: Ի՞նչդ է պակաս: Տուն ունիս, փող ունիս, հարևաններիդ հետ հաշտ ու բարից ես: Ի՞նչ կայ տանջուելու, մորմոքալու: Օ՛խ, թող ամեն մարդ էլ աշխարհիս վրայ քո ապրուստիդ նման լաւ ապրուստ ունենար. բայց ի՞նչ անեմ, որ գու գժութիւններ ես անում: Ապրիր, ինչպէս հրամայել է Աստուած հաշտ ու խաղաղ բարի մարդկանց հետ, իսկ այդ ցաւիդ վրայ թքիր:

Աւգոտեան չգիտէր, թէ աշխարհի վրայ կան մարդիկ այնպիսի խոր հոգով, որ եթէ մի անգամ սէրն ընկնի նրա մէջ՝ ոչ մի հնարքով չէ կարելի այլ ևս գուրս կորդել այնտեղից: Սիրաը ցաւում ու մորմոքում է ստացած խոր վէրքից, բայց շրթունքները չեն կարող բացուել և դատապարտութեան խօսքեր արտասանել, որովհետեւ բոլոր միւս զգացմունքների վրայ թագաւորում է կարեկցութեան զգացմունքը գէպի նա՝ որի վրայ պիտի ծանրանայ այդ խօսքը: Ի՞նչպէս մարդ մեղադրէ նրան, որին պարտական է իւր կեանքի ամենալաւ, ամենաքաղցր երազները. ի՞նչպէս անիծէ այն հոգին, որի համար պատրաստ է և ուրախ իւր հոգին զոհ բերելու. ի՞նչպէս արհամարդական դառն ժպիտով յիշէ այն օրերը, երբ իրան

համար և մի միայն իրան համար այնպէս պայծառ փայլում էր արեր, թռչունները երգում էին ամենա ուրախ երգեր, ծաղիկները բուրում էին իրանց ամենալաւ բուրմունքը: Այս ամենը կարող էր լինել երազ, մոլորանք, խարուաիկ ցնորք, կայծակի վայրկենական փայլմունք, որից յետոյ տիրում է թանձր, անթափանց խաւար, սակայն ոչ ոք մեղաւոր չէ, և եթէ կայ էլ մեղաւոր՝ յամենայն դէպս ինքն է և ոչ նա, որին մեղադրելու համար մարդու բերանն անզամ չէ բացում, թէպէտ աշխարհս նորան ընծայէին, լինում են այս տեսակ ընաւորութիւններ. բայց Ավոտեան, շնայելով իւր կեանքի ամբողջ վորձառութեան՝ չեր ճանաչում նրանց: Զգիտէր նմանապէս և Պաւլը, թէ ի՞նչն է կազմում իւր ընաւորութեան էութիւնը. նա զգում էր միայն, որ եթէ ենթարկեն իրան ամենասարսափելի տանջանքների՝ եթէ նրա առաջ կանգնէր Աստծու հրեշտակն և ստիպէր խօսելու՝ նա Փրանկայի մասին ոչ մի վատ բան չէր ասի. ոչ մի բանի մէջ չէր մեղադրի, չէր ինդրի վրէժխնդիր լինել նրանից՝ իւր խորտակուած յոյսերի համար:

— Յայց գիտես, կնքամայր, — սկսեց խօսել Պաւլն երկար լուութիւնից յետոյ. — բոլոր բանի մէջ, ինչ որ պատահեցաւ՝ ես եմ մեղաւոր, ոչ ոք բացի ինձանից... Առաջինը՝ որ ես սուրբ աղօթքով ուշ-ուշ էի վանում նրանից սատանային. Երկրորդ՝ երբ որ տեսայ նսա փափոխամտութիւնը և իմացայ այն լակէյի մասին՝ շդաղարեցրի առնից հեռանալս, Պէտք էր աւելի լաւ պահպանել նրան, աւելի յաճախ սովորեցնել նրան Աստծու ահը քաշել... պէտք էր աշքը վրան պահել... եւ նա կմնար, իսկ հիմա կորաւիմ

պատճառով... իս ինձ էլ մատնեցի կորստեան, նրան
էլ... Աւելի նա ինձ մեղաղբելու տեղիք ունի, քան
ես նրան...

Աւգոտեան, որ Պաւլի առաջին խօսքերը լսելիս
ազահութեամբ ականչները սրեց՝ շուտով հիմսթափ
եղաւ և փնթփնթաց քթի տակ.

—Գծուել է, կատարեալ գծուել է:

Աւգոտեան վեր կացաւ նստարանից և կիսակա-
տակ, կիսալուրջ ձայնով ասաց.

—Ե՞ն, այսօր քեզ հետ վկաւ եփել չէ կարելի.
լաւ այն է, որ պառկես քնելու, գուցէ երբ որ զար-
թես, Աստուած յիտ դարձնէ խելքդ: Իսկ ես այս-
տեղ քեզ հետ միհասին կանցնեմ այս գիշերն: Թէս դուն
խելքդ տանուլ ես տուել, այսու ամենայնիւ սիրատ ցա-
ւում է քեզ համար: Ի՞նչպէս մենակ թողնեմ քեզ:

Նա խաչակներեց երեսը, գլխատակը դրեց բամբ-
կուն բաճկոնակն ու պառկեց նստարանի վրայ: Դրսից
լսելի էին բուի տիրածայն աղաղակն և անձրենի խըշ-
խոցը: Այդ ձայներին խառնւում էր էլի մի ուրիշ
ձայն—դա մարդու ձայն էր...

—«Յանուն չօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, ա-
մէն: Հայր մեր, որ յերկինս»... ջերմագին դուրս բղինց
Պաւլի տանջուած կրծքից: Նա ամուլ խփեց կրծքին:
«Աստուած, ողորմիր այն մեղաւորին, Աստուած ողոր-
միր այն մեղաւորին»:—Սովորաբար Պաւլը վերջացնում
էր աղօթքն այս խօսքերով:—«Աստուած, ողորմիր
ինձ մեղաւորիս», իսկ հիմա...

Երկրորդ վաղ առաւտեան զարթելով՝ Աւգո-
տեան տեսաւ բաց արած դռնից, որ բակում Պաւլը
դրադուած է աշխատանքով: Նա չոգել էր և ինչոք

մի բան էր հունցում կաւեայ յատակի վրայ: Աւգո-
տեան վեր կացաւ նստարանից և մօտեցաւ գուանը:
Հա, Պաւլը կաւի հետ շաղախում է թիթեռներ, որոնք
թռչում են նեմանի վրայ, (այսպէս անոււնուած
թրթրուկը) և շինում է նրանցից մեծ-մեծ գնդեր:
Աւգոտեան շատ լաւ գիտէ, թէ ինչու համար են
զբանք: Գնդերը դուրս են գալիս ջրի երեսը, կաւը
նստում է տակն, իսկ թիթեռները մնում են վերեն
և հրապուրում ձկներին:

—Ճուկ բռնելու պիտի երթաս,—մի քիչ զար-
մանքով հարցըց բարեխիրտ պառաւը:

—Եյն, պիտի երթամ. այսօր երեկի լաւ որս
կլինի:

Աւգոտեան մտաւ սենիեկ և վառեց վանաբանը:
Եյս անգամ Պաւլը նորան ոչ մի խօսք չասաց և քանի
մի բոպէից յետոյ անխօս սեղան նստաւ ու կարեց
մի պատառ հաց: Այժմ նրա տեսքն այնպէս էր՝ ինչ-
պէս և առաջ, միայն այտերը փոքր ինչ ներս էին
ընկել և աչքերի տակ կազմուել էին մութ-կապտա-
գոյն կիսաշրջաններ: Նոյնպէս անխօս կերաւ նա մի
աման սպաս, վեր կացաւ տեղից, ուսերի վրայ ձգեց
կաւէ դնդակներով լի պարկն և մօտեցաւ Աւգո-
տեային.

—Ծնորհակալ եմ, կնքամայր, բարեկամութեանդ
և բոլոր բանի համար... շնորհակալ եմ: Թող Աս-
տուած վարձահատոյց լինի քեզ:

Պաւլը խօսում էր ցածրաձայն, բայց քաղցրու-
թեամբ, նա մեկնեց Աւգոտեային իւր կոշտ ձեռքը:
Պառան զգածուեցաւ և հազիւ հաղ կարողացաւ պա-
հել արտասուրը:

— Զարժէ, չարժէ... — շտապով պատասխանեց նա.
— փառք Աստծու, որ խելքը գլուխդ եկաւ:
նա դուրս եկաւ խրճիթից նայելու, թէ ինչպէս
Պաւլը կիջնէ զետի ափը: Նրա բոպիկ ոտները մինչեւ
կոճերը թալում էին ցեխի մէջ, իսկ կնճիռներով
ծածկուած ձեռքը գողգողալով խաչակնքում էր գնա-
ցողին: Վաղուց Աւլոտեան ճանաշում էր Պաւլին, շատ
անգամ գրկել էր նրան հրեխայժամանակ, տեսել էր,
թէ ինչպէս իւր աշքի առաջ աճում ու մեծանում էր,
և սովորել էր համարել նրան բարի և լաւ մարդ: Որո-
շել իւր զգացմունքը դէպի Պաւլը նա չէր կարող.
ասենք, չէր էլ փողձում, բոլորովին այնպէս՝ ինչպէս
Պաւլը չէր կարող որոշել, թէ ինչպէս խոր խոցուած-
է իւր սիրտն անարգուած սիրոյ և խորապուած յոյ-
սերի պատճառով: Այսպիսի զգացմունքներ, որոնք
անորոշելի են և չունին անուններ, բաժին են ըն-
կնում մանր, աննկատելի մարդկանց բայց որքան էլ
քիչ խօսել իմանային այդ մարդկի՝ զգալ կարող են
նրանք նոյնպէս՝ որպէս և ուրիշները:

Բայց ինչ էլ որ կատարուելիս լինէր Պաւլի
սրտում՝ նա ապրում էր առաջուայ նման և իրան
պահում էր այնպէս՝ ինչպէս և առաջ. միայն նրա այ-
տերը ներս էին ընկել, զլիխ վրայ երեսում էին աւե-
լի սպիտակ մազեր և աշքերի մէջ երբեմնապէս բոր-
բոքուող փայլը հանգել էր ընդ միշտ: Այժմ նա այլիս
իւր տապիքից փոքր չէր երեսում, թէ եւ աշխատում էր
առաջուայ չափ, մինչեւ անգամ աւելի, երբ կարելի
էր գետի վրայ, երբ չէր կարելի՝ դաշտում և խրճի-
թի մօտ:

Սեփական դաշտ նա չունէր, իսկ երբ նեմանն-

ալէկոծուած էր փոթոսպիկից՝ ձուկ բռնելու մասին մտա-
ծելն անգամ աւելորդ էր: Պաւլը գնաց վեսալի մօտ
և հարցրեց, արդեօք նրա ամբողջ դաշտը վարած է:
Ֆիլիպպը խոստվանեց, որ երկու դեսեատին դեռ չէ
կարողացել վարել. պարօմը շատ հոգս է պահանջում,
իսկ Դանիլկան դեռ անընդունակ է դաշտային աշխա-
տանքի: Պաւլն անխօս լծեց ձին ու գնաց դաշտը վա-
րեկու: Այժմ նորան հարկաւոր էր որեէ աշխատանք.
անդործ ժամանակ նրա սիրաը տակն ու վրայ էր լի-
նում: Սակայն պատահում էին օրեր, երբ անկարենի
էր լինում որեէ գործ գտնել թէ գետի վրայ և թէ
դաշտում: Այդ օրերում Պաւլը գուրս էր գալիս ճա-
նապարհը, որից սկզբներում, Քրանկայի գնալուց պն-
միջապէս յետոյ, երկար ժամանակ աշքը չէր հեռա-
ցնում, և ակսում էր գնալ, առանց իմանալու, թէ ուր
և ինչնու է գնում էր մինչեւ այն ժամանակ, երբ
մթնչազը ծածկում էր գետինը:

Մի այդպիսի օր Պաւլը վերադարձաւ տուն, վա-
ռեց լապտերն և հանեց վառարանից կճուճով սպա-
սը, որ պատրաստել էր առաջարկութիւն, բայց նա չէր հա-
նում վրայից: Տեղաւորուելով նստարանի վրայ և մե-
քենայրար կերակուր վերցնելով ամանից՝ նա շա-
րունակ նայում էր պատուհանին, որից տրտութեամբ
ներս էր նայում նոյեմբերի գիշերային անթափանց
խաւարը: Թւում էր, թէ Պաւլն առաջին անգամ է ան-
սում այդպիսի խաւար և զննողաբար դիտում է այն,
ականջ է գնում քամու սուլոցին և աներենի հարուած-
ներին, որոնք դիպչում են պատուհանի շըրջանակին:
Երկար նստած էր Պաւլը. վերջապէս հաւաքեց

իւր աղքատիկ ընթրիքի մնացորդներն ու սկսեց կարկատել ուսկանը: Պողպատեայ ասեղն արագ շարժում էր նրա սովոր ձեռներում, ողակները շարում էին մէկը միւսի յետնից, որպէս կանոնաւոր, համաչափ բջիջներ: Ամեն ինչ խաղաղ էր չորս կողմը, եթէ միայն շլինէին այն ձայները, որոնք երբէք չեն դադրում հնչելուց մարդու հոգու մէջ, չըջապատուած լինի նա այդ բովէին արտաքսուած աղմուկով, թէ խաղաղութեամբ—միենոյն է այդ: Այդ ձայները չեն խանգարում կեանքին՝ հոսելու իւր սովորական շաւզով, բայց դրա հետ միասին ամենեին կախումն չունին կեանքից և երբէք չեն կառավարում նրա կամերածոնով: Եւ Պաւլը, չնայելով որ ամբողջովին խորասուզուած էր աշխատանքի մէջ՝ յանկարծ բարձրացրեց զլուին և ականջները սրեց... Ո՞չ, զա դեղին պոչաա Կուրտայի հաջոցն է Կողիւկի զաւթում: Ո՞ւմ վրայ կարող է հաջել նա այսպէս ուշ գիշերուայ պահին: Նրա հաջոցից յիտոյ չեն լսուի արդեօք ցանկապատի մօտից մարդու անհամարձակ թեթև ոտնաձայններ, մարդու՝ որ չէ վստահանում աւելի մօտենալու: Ո՞չ, Կուրտան հաջեց բարձրաձայն քանի մի անգամ և լոեց, իսկ ոտնաձայններ այլևս չեն լսում: Ասեղը կրկին սկսեց շարժուել Պաւլի ձեռներում: Ահա անկիւնում սկսեցին խաղալ մկները. Պաւլը յետ նայեց և տեսաւ, թէ ինչպէս պատի առաջից արագ-արագ անց կացաւ վոքրիկ գաղանը սև ուլունքի նման աշքերով:

— Այ յիմար արարած, — քմծիծաղ ժպտաց Պաւլը: — Ինչիցն է վախենում. գար ինձ մօտ—ես հաց կփշրէի նրա համար:

Բակից ճոճուց լսուեցաւ, երեխ դմուք ճոճուց: Պաւլը նորից սրեց ականջները: Դուցէ մէկը մտել է բակն և վախենում է ձեռք տալ վականին, դողդողալով ցըտից ու երկիւղից: Նա վեր կացաւ, ուոկանն ու ասեղը գրեց սեղանի վրայ և լապտերը ձեռքին դուրս եկաւ սենեակից: Լապտերի լոյսը լուսաւորեց ամբողջ բակը, պատահանի մօտ դրած սանդուխը, ջրամանը, կաղամբաթթուի տակառը: Զկայ ոչինչ երեխ Պաւլը տուն գառնալիս պինդ չէ սեղմել դուռն, և հիմա քամին կրնկին է ձգել: Բայց կարելի է՝ քամին չէ արել: Կարելի է մի մարդ ուղեցել է խրճիթ մտնել, բայց վախենալով անհիւրընկալ ընդունելութիւնից՝ կանգնած է այժմ որբի նման կուշ եկած՝ դռան ծածկոցի տակ: Պաւլը լապտերը դրեց աակառի վրայ և դանդաղ քայլերով պտտեց խրճիթի չորս կողմը, աչքերը սեեւած դէպի խաւարը: Մարդ չկայ և ոչ մի տեղ, միայն ծերուկ Կուրտան մօտ վազեց և վաղանքշանքով լիզեց նրա ձեռքը: Պաւլը վերադառնուեց և երբ ուզում էր շարունակել աշխատանքը՝ յանկարծ նկատեց, որ չունը նրա յետեկից սենեակն է մտել և նայում է նորան իւր խելացի, աղերսալից աչքերով:

— Խեղճ, — հառաշելով ասաց Պաւլը, մի կտոր հաց կտրեց, տուեց շանը և փաղաքշական ձայնով, թէն վճռողաբար, հրամայեց նորան դուրս գնալ խրճիթից: — Խեղճ կենդանի, մրսում էնա քամու և անձրեկ տակ, բայց ինչ արած: Մէկը պիտի հսկէ ու պահպանէ շտեմարանն ու գոմելը չար մարդկանցից: Ամեն մի արարած իւր ցաւն ու վիշտն ունի: Ինչու է այդպէս... ով է իմանում:

Պաւլն երկար մտածում էր այդ հարցի մասին,

մտածում էր ամբողջ աշխարհի թշուառութեան դարհուրիի, անվճակելի հանելուկի մասին, բայց չէր կարող մշ ձևակերպել այն, որպէս հարկն է, և ոչ անոն գտնել նորան:

Խըաքանչիւր զիշեր, երբ եղանակը վատ էր լինում՝ Պաւլի լապտերը վասում էր պատուհանի նեղ գոգի վրայ: Հեռուից, ամայի դաշտից, ցեփոտ ճանապարհներից, լապտերի լոյսը նմանում էր զիշերային ճրագի թոյլ, ազօտ փայլվուցին: Տեսնում էին այն միայն երիտասարդ տղաներն ու աղջիկները, որոնք հաւարում էին Կողլիւկնց տանն երեկոներն անց կացնելու, բայց ամենաին ուշագրութիւն չէին դարձնում: Պաւլի վիճակն այլևս ոչ ոքի չէր հետաքրքրում, առանձնապէս այն ըռպէց սկսած՝ երբ նա նորից սկսեց վարել իւր նախկին կեանքը: Մինչև անգամ ֆիլիպպն և Ուլեհանան ուշ-ուշ էին այցելում նրան: Միայն երբեմն Գանիլիան ծածկարար մօտենում էր նրա պատուհանին և յետոյ ծիծաղելով հաղորդում էր բոլոր իրանց տանը հաւաքուածներին, թէ ծերուկը նստած կարգում է: — Աստուած վկայ, կարգում է, — կրկնում էր նա բառնցքը խփելով կրծքին, որպէսզի աւելի հաստատէ ասածը, գիրք է կարդում:

Բայց այս հանգամանքն ես ոչ ոքի համար հետաքրքրական չէր. գիւղում վազուց ամենքը զիտէին, որ Պաւլի կինը նորան կարդալ է սովորեցրել:

Ի՞նչպէս եղաւ, որ Պաւլը կրկին ձեռքն առաւ գիրքը:

Բանն այսպէս էր: Մի անգամ տուն գառնալով անյաջող որսից յետոյ՝ նա յոզնած նստարանի վրայ և սկսեց մեքենայարար դիտել իւր խրճիթի

վաղուց իրան ծանօթ սարք ու կարգը: Ահա ուռենուց հիւսած այն կտրովների յետեւում ամենից շատ խաղում են մկներն երեկոներին: Ահա Փրանկայի դատարկ արկղիկը. ահա կարմիր պահարանը... Եւ Պաւլի հայեցքն երկար կանգ առաւ նրա վրայ: Պահարանի վրայ գրած էր մի գիրք, մաշուած, խոնացած կաղմով: Դրուած էր նա լապտերի և ինքնաեռի մէջտեղը, նոյն այն տեղում, ուր զբել էր նրան Փրանկան՝ վերջին անգամ եկեղեցուց տուն վերագառնալուց յետոյ: Երեք ամիս էր անցել այն օրից, երբ Պաւլը շգտաւ նրան տանը, սպասեց մինչև ուշ զիշեր և միայն նրա բաց գատարկ արկղը տեսնելով՝ հասկացաւ, որ գնացել է նա: Փրանկան ոչինչ չէր վերցըել ամուսնու սեփականութիւնից, մատն անգամ ոչ մի բանի չէր զիացըել, բայց իւր իրեղէնները վերցըել էր ամբողջովին մինչև վերջի ցնցուին, մինչև վերջին կոտրուած կոճակը: Մի բան միայն նա չէր տարել իւր հետ — զիրքը... ինչպէս էր եղել, որ Պաւլը մինչև հիմա չէր նկատել այն: Այբուբենը նա վազուց էր սովորել, բայց ընթերցանութեան գործողութիւնն առաջուայ նման թուում էր նրան մի ամենադժուար գործ:

Երկար նստած էր Պաւլը, չհեռացնելով հայեցքը գլքից. յետոյ ձեռքն առաւ այն, նստեց լուսամուտի առաջ և բացեց կազմի տախտակը: Մեծ-մեծ տառերն սկսեցին խառնուել նրա աշքի առաջ, կազմելով զանգանաձև, անըմբոնելի նկարներ: Պաւլն երեք ամսից աւելի էր, որ ձեռքը գիրք չէր առել, մոռացել էր... Մի ժամանակ նա սկսել էր մի քիչ զլիսի ընկնել, բայց հիմա կարծես նորից հանել է

մտքից... Արի փորձեմ... Երկու բողէից յետոյ միայն
Պաւլը կարողացաւ յիշել առաջին տառը:

—Կը...—երկարացրեց նա,—բայց յետոյ գործը
յաջող դնաց:—Կարգ...—Պաւլը ժպտաց ին-
քնարաւական կերպով և շարունակեց—աս...աս-
ուած... ասուածպաշ... ասուածպաշառթեան...
կամ... կամ...

Այսպիսով նա կարդաց զրքի առաջին երեսն
ամբողջովին՝ մինչև հրատարակման տարեթիւը: Թուա-
նշանները նորան բոլորովին անծանօթ էին: Ի՞նչ կա-
րող էր անել. ստիպուած էր շուռ տալ երեսն ու
սկսել կարդալ հետեւեալը:

—Տարին... ու... նի... տարին...

Սարսափելի ջանք ու աշխատանքով, աշքերը
սեռեկով ամեն մի տառի վրայ՝ Պաւլը վերջապէս
յաղթող հանդիսացաւ և կարդաց երկու առաջին տողը:

—Տարին ունի տասներկու ամիս, յիսուներկու
շաբաթ...

Նա վաղուց գիտէր, որ տարուայ մէջ ատաներ-
կու ամիս, յիսուներկու շաբաթ կայ, այսու ամենայնիւ
այդ տեղեկութիւնը, որ նա կարդաց զրքի մէջ՝ հըր-
ճուանքով լցրեց նրա սիրտը: Նրա վրայ ջերմութիւն
եկաւ. նա զգում էր իրան շատ աւելի յոգնած՝ քան
ամենածանը աշխատանքից յետոյ: Դրսից արդէն լըս-
ուում էր աքաղաղների կանչը: Նշանակում է՝ քա-
ղած տեղեկութեան համար, թէ տարին ունի տասն-
երկու ամիս, յիսուներկու շաբաթ՝ նա գործ էր զբել
ձմեռուայ ամբողջ երկար երեկոն:

Այդ երեկոյից յետոյ եկաւ մի ամբողջ շաբթ' նոյն-
պիսի երեկոների: Պաւլը կարդաց բոլոր տօների, պա-

սերի, քրիստոնէի պարտաւորութիւնների մասին դէպի
Աստուած, դէպի մերձաւորներն ու դէպի իւր անձը:
Մի անգամ, երբ նա պատրաստաւմ էր սկսելու այն
զլուխը, որի մէջ բացատրում են սուրբ խորհուրդ-
ները՝ նրա մօտ եկաւ Սւյուտեան: Դեկտեմբեր ամսի
վերջն էր. Վեց շաբաթուայ ընթացքում կարդալով
ութ երես՝ Պաւլն արդէն սովորել էր կարդալ առանց
վանկերի: Նա շատ լաւ յիշում էր, թէ ինչպէս երբեմն
ֆրանկան անշափի կատաղած աղաղակում էր նրա ա-
կանջի տակ. «աւանց վանկերի կարդա, յիմար, կար-
դա առանց կապելու»: Խոկ երբ Պաւլը, չնայելով իւր
ջերմ ցանկութեան, չէր կարողանում կատարել այդ
հրամանը՝ ֆրանկան խլում էր նրա ձեռքից զիրքն և
հպարտացած իւր գերազանցութեան զգացմոնքով,
որ նրա մէջ գերազշիռ էր, քան նոյն-իսկ բարկու-
թիւնը՝ ցոյց էր տալիս, թէ ինչպէս պէտք է կար-
դալ առանց կապելու:

Աւդուեան դարձու էր. նրա թուներն հիւանդ
էին. մէկը մեռել էր քիչ առաջ, փոքր որդուն էլ զին-
ուոր էին տարել:

Պաւլն աշխատում էր նրան միսիթարել. ասում
էր, թէ կեանքն ու մահն Աստծու ձեռին են, թէ
առանց նրա կամքի ոչ մի մազ չի ընկնի մարդու
զլսից: Փոքր առ փոքր Աւդուեան սկսում էր հան-
գարտուել, վերջապէս սրբեց աշքերը թաշկինակի
ծայրով ու խորհրդաւոր կերպով հարցրեց.

—Խոկ նրա մասին... ոչինչ չես լսել:

նրա դեռ ևս թաց աշքերում նկատելի էր հե-
տաքրքրութիւն: Նա վաղուց չէր տեսել Պաւլին. զու-

ցէ նրա կեանքում էլ տեղի է ունեցել որևէ արտակարգ դէպք:

Պաւլն երկար լոելուց յետոյ ծանրութեամբ պատասխանեց:

—Ոչինչ չեմ լսել նրա մասին, ոչինչ չգիտեմ:
Միայն Աստուած գիտէ, թէ ինչ է անում... և ուր էնա...

Նա կը կին լոեց:

—Օ՛խ, թշուառ, խեղճ, նորից գնաց թափառական կեանք վարելու, տանջուելու և անարգուելու մարդկանցից... իսկ ես կարծում էի, թէ ազատեցի նրան կորստից և այս աշխարհում և հանդերձեալում:
Ո՛չ, ինքը չկամեցաւ, չդիմացաւ: Կատարեալ հարբեցող էր, թէ օդի չեր առնում բերանը. խեղճ, թշուառ:

Նա թափահարեց ձեռքը:

—Ոչինչ չեմ զգում ես նրա դէմ, ոչ բարկութիւն ոչ չարակամութիւն: Ի՞նձ եմ մեղադրում ես և ոչ նրան: Երեի ուրիշ կերպ պէտք էր վարուել նրա հետ:

—Հա, ի հարկէ ուրիշ կերպ... ի հարկէ,—տաքացած նկատեց Աւլոտեան:—Ճատ ազատ էիր պահում նրան, չէիր ստիպում աշխատել... պատահում էր, որ մինչև կէս օր շուռ ու մուռ էր գալիս անկօղնում:

—Եթէ նա վերադառնար՝ մտածման մէջ ընկղմած շարունակեց Պաւլը, ուշը չդարձնելով Աւլոտեայի խօսքերի վրայ, —այն ժամանակ ես ուրիշ կերպ...

—Ինչու պիտի վերադառնայ. չի վերադառնայ...
Մարցեան քաղաքից եկաւ, ասում է, վաղուց նա այնտեղ չէ: Երեի իւր լակէյի յետեկից քաշ է գալիս:

Պաւլի աշքերը փայլատակեցին, բայց նա քաշ արաւ գլուխն ու լոեց:

Աւլոտեան նստեց էլի քանի մի բոլէ ու զնաց:

Դուրսը կատաղում էր փոթորիկն և հաղար ու մէկ ձայներ էր արձակում:

Պաւլը հանգցրեց լապտերն ու պառկեց քնիելու, բայց երկար ժամանակ կողքից կողք էր շուռ զալիս: Քունը փախչում էր նրա աշքերից. գլխի մէջ պտոյտ էին գալիս անկոչ ու անակնկալ մտքեր: Դեռ երկար լսելի էր նրա շնչոցը, որ աւելի նման էր հեծեծանքի:

—Աստուած, ողորմիր այն մեղաւորին, Աստուած, ողորմիր այն մեղաւորին:

f

Անցել էր համարեա երեք տարի Փըսանկայի անյայտանալու օրից, և Պաւլը բալոր հարեանների կարծիքով սկսել էր մուանալ նրան։ Վերջին ժամանակ նա մինչև անգամ ուրախ էր, ուրախ էր, ի հարկէ, չէ նշանակում, թէ նա մասնակցում էր զանազան գուարճութիւնների, այլ այն, որ նա քիչ էր խուսափում մարդկանցից, ուրախութեամբ խօսակցում էր նրանց հետ՝ ով իրան մի բան էր հարցնում։ Զմեռն երբեմնապէս զնում էր Փիլիպպի տունը և խաղում էր նրա երեխաների հետ։ Ուղիղ է, նա սաստիկ ծերացել էր, զվսի ճաղատն աւելի բացուել էր, մօրուքն սկսել էր աւելի ու աւելի սպիտակել, մէջքը ծոռւել էր, քայլուածքը գանդադացել։ Այս հանգամանքը չէր զարմացնում ոչ ոքի. ինչ էլ որ լինէր՝ Պաւլի տարիքն աւելանում էին շարունակ, իսկ աշխատում էր նա շատ,

առանց ձեռները ծալելու, մինչև անդամ աւելի շատ՝ քան ամուսնահայուց առաջ:

Մարտի օրերից մէկն էր. առաւտից մինչև գիշեր Պաւլն զբաղուած էր ուսկանների նորոգութեամբ գալնանային ձկնորսութեան համար. Զիմն այս տարի վաղ էր հարուել. Նեմանը դուրս էր եկել ափերից և իւր փրփրալից պղասք ալիքները կարծես ուզում էր հասցնել մինչև լեւան զլուխը, որի վրայ գտանւում էր փոքրիկ գիւղը:

Պաւլի խրմիթում բոլոր պատերի վրայ փռոտած
էին զանազան մեծ ուժեան ցանցեր. սեղանների և
նստարանների վրայ դրուած էին թոկի կապոցներ,
կեռեր և կայթեր: Գանիլիան, հիմա արդէն քսանա-
մեայ գեղեցիկ երիասարդ, ամբողջ օրն օգնում է
Պաւլին թոկիեր որորելու և կարթեր ծռելու մէջ: Այս
ամենն անում է նա մեծ ուրախութեամբ, որովհետեւ
հոգով սիրում է ձկնորսութիւնը: Կէս օրին եկաւ Ռւ-
լեանան, երեխան զրկում: Այդ երեխային կնքեցին այն
ձմեռ: Կնունքի ժամանակ շատ հիւրեր կային և այդ-
տեղ ամենքն համոզուեցան, որ Պաւլը վաղուց մոռա-
ցել է իւր անպիտան կնոջը և ամենկին չէ ցաւում
նրա համար: Եւ հասկանալի է. փառք Աստծու, որ
նա գեռ այդքան էժան պրծաւ իւր արած յիմարու-
թիւնից: Ֆիլիպպն իւր տղայի կնունքին բաւական
խմեց և սիրտ արաւ մինչեւ անզամ կատակ անել
Պաւլի հետ:

— չը՞, ի՞նչ է, եղբայր, կինը որ սայլից ցած պայտայլը կթե կանայ, այնպէս՝ չ:

Ուշանան պառկեցրեց երեխային եղբօր անկողնի վրայ և զրոյց անելով սկսեց ճաշ պատրաստել

նրա համար: Նա խօսում էր շատ բանի մասին—և նոր տախտակների մասին, որոնք հարկաւոր են ֆիլիպին պարօնը կարկատելու համար, և այն մասին, թէ նրանց հազը հազիւ թէ բաւականանայ մինչև նորի գուրս գալը, և ջիմօնեկի, իւր մեծ որդու մասին, թէ նա դադար չէ տալիս իրան և շարունակ խնդրում է նոր կօշիկներ գնել: Ուշանան մինոյն ժամանակ ժպառում է և մտածում.—ի՞նչ լաւ կլինի, որ եղբայրն այս բոլոր պահասութիւններն հոգայ—և տախտակ աւնէ, և ցորեն տայ և՛ ջիմօնեկին կօշիկներ գնէ:

Այդ ժամանակ գետի հանդիպակաց ափից լուսում է բարձր աղաղակ. «պարօն, պարօն»: Դանկիլան վայր է ձգում կիսատ ոլորած թուկն ու վազում է եղբօրն օգնելու: Այժմ ճեշտ չէ մրցել փոթորկալից գետի հետ: Ո՞վ գիտէ, կկալողանան նրանք երկուսով պարօնը կառավարել: Յիշաւի, մի բոպէ էլ չէ անցնում, և ահա Պալի խրճիթի պատուհանի առաջ լըստում է Փիլիպպի աղաղակը.

—Պաւէ, արի, օգնիր, վարձք արա:

—Իսկ երբորդ թիակ կայ, հարցնում է Պաւլը:

—Կայ, ի՞նչպէս շկայ:

Պաւլը վերցնում է պլաստիկն ու գնում է օգնելու փեսային:

Սրդին մութն էր, երբ նա վերադառնաւ տուն: Խրճիթում տաք է ու խաղաղ, իսկ գուրսը հեղեղ է թափում, քամին ոռնում է, ցուրտ է...

Պաւլը վառեց լապտերը, մաքրեց սեղանի մի անկիւնը թոկերից և պահարանի վրայից վերցրեց գրքոյկը: Այս գրքոյկը մի ժամանակ Փրանկայի սե-

փականութիւնն էր: Առաջին ձմեռուայ ընթացքում Պաւլը կարգացել էր վաթսուն երես, երկրորդ ձմեռը —հարիւր, երրորդում՝ էլ աւելի, բայց այնու ամենայնիւ ամբողջ գիլը կարդալ չէր կարողացել: Այն երեսներում, ուր իրան ամենից աւելի գուր եկած աղօթքներ կային՝ նա նշաններ էր դնում—փոքրիկ պատկերներ, որոնցից շատ կային գրքում: Նրանց մէջ կային և՛ ծաղկեալ վնչեր, տպագրած կամ կըցրած հաստ թղթի վրայ, և՛ կարմիր սրտեր, շամփուածուկեալ նետերով, և՛ թևատարած կուպիդոններ: Պատկերների տակը կամ կողքերին կային գրուածքներ—անուններն այն երկրպագունների, որոնք այդ պատկերներն ընծայել էին Փրանկային նրա տօնի օրը կամ նոր-տարուն: Պաւլը ձեռագիրը կարդալ չէր կարողանում և կուպիդոններին հրեշտակների տեղ էր ընդունում: Նոյն-իսկ այս գիշեր, բանալով գիլքը՝ նա ջերմեռանդութեամբ համբուրեց կուպիդոնի պատկերը, որի ձեռքում կարմիր սիրտ կար, և սկսեց կիսաձայն կարգալ վորքը ինչ կակաղելով:

—«Զարդարիք քո տունդ, Մի... Միօ... Միօն»...

Պաւլը լուց, աշքերը չհեռացնելով գրքից: Ո՞վ է այդ Միօնը: Երեի որեէ թագաւոր է կամ հարուստ պան:

—«Եւ ընդունիր թագաւոր Քրիստոսին»...

Դրսից թխկոցի ձայն եկաւ: Կուրան սկսեց հաջել հարեան գաւթում: Դարպասի գուռը ճոճուաց: Պաւլը բարձրացրեց գլուխն և սկսեց ականջ զնել: Աշխնչ շկայ, ամեն ինչ լուռ է չորս կողմը: Դարսը սարսափելի խաւար է տիրում. մատղ մարդու աշքը

կոխես՝ չի տեսնի. քամին աւելի սաստկանում է:
Պաւլը նորից ձեռքն առաւ զիբը:

— «Սիրիս Մարիամին»...— չա, ինչոր Սիօնի, —
թագաւորի կամ հարուստ պանի—սուրբ Գիրքը պա-
տուիլում է սիրել սուրբ Կոյսին...

Այս ինչ է: Բակից մի ձալն լսուեց, կարծես
մէկը բաց արաւ դուռը:

— Երիի Ալղոտեան է...— կիսաձայն մրմնջաց
Պաւլը, բայց իսկոյն ցնցուեց և ուղղից մէջքը: Բա-
կում լսուեցան ոտնաձայներ, բայց ոչ լսուտեայի
ծանր քայլերի ձայնը: Մէկը կամաց, գաղտագողի,
անհամարձակ փոխում էր ոտները: Պաւլը նստած էր
անշարժ, առանց աշքերը դռնից հեռացնելու: Բայց
քայլերի ձայները դադարեցան, այնինչ դուռը բաց
անող չկար: Պաւլին թուեց, թէ բակում մէկը ծանր
չունչ է քաշում և միմնոյն ժամանակ աշխատում է
զսպել շնչառութիւնը: Կարմբատակած դէմքով և կի-
տած յօնքերով նա մօտեցաւ զռանը և ուժգնութեամբ
հրեց այն:

— Ո՞վ կայ այդտեղ, — բղաւեց նա:

Բակի խաւարի միջից լսուեցաւ մի անհամար-
ձակ ձայն:

— Ե՛ս եմ:

— Ո՞վ, — հարցըրեց կրկին Պաւլը և մի քայլ ա-
ռաջ զնաց:

— Ե՛ս... Փրանկան:

Պաւլը թռաւ բարձր շեմքի վրայից և մի բո-
պէից յետոյ ներս բերեց սենեակը մի կարճահասակ,
նիհար կնոջ, կեղասա, ամբողջովին թրջուած վերար-
կուով և հաստ ծակոտուած թաշկինակով գլուխը փա-

թաթած: Երբ լապտերի աղօտ լոյսը լուսաւորեց
նրան և նա կանգնեց լուռ, ձեռները վայր թողած՝
Պաւլն անթարթ նայելով նրա վրայու կակաղելով ասաց.

— Դու... դու ես...

Եկողի սկ մեծ աշքերը փայլեցին, իսկ գունա-
թափ շրթունքները շշնջացին անվտահ, հաղիւ լսե-
լի ձայնով.

— Ե՛ս եմ... մի բարկանար...

Բայց Պաւլը չլսեց անգամ, թէ ինչ ասաց նա:

— Վերադարձար վերջապէս... իսկ ես սպասելուց
էլ դադարեցի... առաջ սպասում էի... յետոյ դադարեցի:

Նա կանգ առաւ, որպէսզի զսպէ հեծեծանքը,
որ խեղդում էր նրան:

Կինը, որ անշարժ կանգնած էր շեմքի մօտ՝
ասաց փոքր ինչ բարձրաձայն, բայց նոյնպէս ան-
վտահ...

— Եթէ ես կարող եմ մնալ այստեղ՝ լաւ, իսկ
եթէ ոչ՝ իսկոյն կզնամ...

— Այ յիմար, — բարձրաձայն ծիծաղեց Պաւլը: —
Հանիր, հանիր վերարկուգ, թէ չէ կհիւանդանաս.
մէկ տես, չոր տեղ չէ մնացել վրադ:

Ցրտից թէ մի որեէ ուրիշ պատճառից՝ կինը
գողղողում էր այնպէս, որ ատամ ատամի էր խփում:
Նա ասաց, թէ վերարկուն չի հանի (անձրել թրջել
է նրան վերեկից միայն, իսկ առանց վերարկուի ցուրտ
կլինի): և նստեց նստարանի վրայ, գլուխը քաշ արած
ու ձեռները վայր թողած: Նրա արձակուած, գզզուած
մազերը խառն ի խուռն թափթփուել էին ճակատի
և ուսերի վրայ ու իրանց սկ ալիքով շրջափակել էին
գեղնած, սարսափելի մաշուած ու նիհարած դէմքը:

—Վերադարձար վերջը...—Նորից խօսեց Պաւլը՝
—ազատուեցար կրկին սատանայի ճանկերից, միտք
բերիր, թէ արտեղ կարող ես գտնել ապաստան և
փրկութիւն... Օ՛խ, իմ խղճուկ, իմ թշուառ...

Նա շտապով մօտեցաւ վառարանին:

—Խսկոյն վառարան կվառեմ: Տաք սպաս կտամ
քեզ կամ թէյ... կտաքանաս... լաւ կլինի քեղ համար:

Փրանկան հետեւում էր նորան վախեցած աչքե-
րով. նա ցածրաձայն ճիշ արձակեց:

Պաւլը յետ նայեց:

—Ի՞նչ է, հիւանդ խօմ չե՞ս: Ցաւդ ներսից է: Ե-
րեի, քիչ չես չարչարուել... ի՞նչպիսի եղանակի եկար...
սպասիր, սպասիր մի բոպէ: Խսկոյն կրակ կանեմ:
Նա տատանման մէջ կանգ առաւ սենեակի մէջ-
տեղը:

—Տաշեր չկայ... օհ, ես նրա... բակումն է մնա-
ցել: Մի բոպէ սպասիր:

Նա ուզում էր գուռը բաց անել, երբ Փրանկան
սուր ձայնով աղաղակեց.

—Այստեղ մի գնար... մի գնար...

Պաւլը վախով նայեց նորան:

—Ինչո՞ւ չգնամ:

Փրանկան սկսեց դոզդողալ՝ ինչպէս տեսնդից բըռ-
նուած հիւանդ, և ձեռները կոտրատելով վնթ վնթ աց.

—Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ. ի՞նչ կլինի իմ ճարս.
Եթէ մժնով գնաս՝ ոտդ վրան կդնես ու կճխլես,

եթէ կրակով գնաս... կտեսնես ու ինձ իսկոյն դուրս
կանես... Ի՞նչ անեմ, ո՞ր քարին տամ թշուառ վլու-
իրս: Ո՞վ Տէր Սատուած, ո՞լ Մարիամ Աստուածածին,
փրկեցէր ինձ մեղաւորիս:

—Ում վրայ կդնեմ ոտս, —զարմացած հարցրեց
Պաւլը, բռնելով գուան վականը: —Ո՞վ կայ բակում:
Փրանկան ձեռներով ծածկեց երեսն և ջղային
հեծեծանքով մի խօսք ասաց միայն, եթէ ինչ այս
երեխայ...

Երկար կանգնած էր Պաւլը քարացածի նման,
ցածր, խոնարհած գլխով, խորունկ կնճիռները ճակ-
տին. վերջապէս դանդաղ քայլերով մօտեցաւ սեղա-
նին, վերցրեց լապտերն և նոյնալիսի դանդաղ քայլե-
րով գնաց բակը:

Մի բոպէից յիտոյ նա վերադարձաւ մի ինչ-որ
բան ձեռքին, փաթթաթած կոպիտ, բայց ցնցոտինե-
րով, և առանց մի խօսք ասելու՝ դրեց բարուրը նըս-
տարանի վրայ, Փրանկայի կողքին:

Փրանկան հետեւում էր Պաւլին իւր վառուող,
անհանգիստ, սև աչքերով: Պաւլը, առանց կնոջ վրայ
նայելու, հարցրեց, խիստ ցածրացնելով ձայնը.

—Ինչո՞ւ ուղղակի սենեակ չըերիթ նրան ու շան
լակոտի պէս թողիր գուրսը, ցրտի մէջ:

Փրանկան սեղմեց դողդոջուն ձեռները:

—Վախենում էի...

Պաւլը մօտեցաւ վառարանին և սկսեց կրակ անել:

Այն վայրենի, խելացնոր ուրախութիւնը, որ հա-
կառակ նրա կամքի նկատելի էր Պաւլի բոլոր շար-
ժուածքներում՝ անհետ չքացաւ: Այժմ նրա ճակատը
կնճուուած էր. ամուր սեղմած շրթունքները նրա
դէմքին տուել էին խստահայեաց, նոյն-իսկ բարկաց-
կոտ արտայայտութիւն: Նա մօտեցրեց կրակին սպա-
սով լի կճուճը, փոքրիկ թէյամանի մէջ թէյ պա-
տրաստեց և դրեց սեղանի վրայ մի մեծ բոքոն:

—Արի կեր:

Դա առաջին խօսքն էր, որ նա ասաց վերջին քառորդ ժամուայ ընթացրում, այն էլ առանց Փրանկայի վրայ նայելու։ Փրանկան նստած էր անշարժ, կարծես քարացած լինէր։ Նստարանի վրայ դրած բարօւրից սուր ձայն լսուեցաւ.

—Մայ-րիշկ, մայ-րիշկ։

Փրանկան տեղից չէր շարժւում. նա կարծես նշ տեսնում էր և ոչ լսում։ Պաւլը բարկացած շուռ եկաւ դէպի նա։ Նրա ճակատի կնճիռներն աւելի խտացան, իսկ ձայնի մէջ լսելի էր սպառնալիք։

—Ինչո՞ւ երեխային չես հանուեցնում. գուցէ ու զում ես, որ նա խեղգում, հա... Անառանկ...

Փրանկան խայթուածի նման վեր կացաւ տեղից և գողգոջուն ձեռներով սկսեց արձակել հնոտիները, որոնցով վաթաթուած էր երեխան։ Քիչ յետոյ երեան եկաւ մի փոքրիկ արարած, բողիկ ոտներով, բաց կարմիր շապկով, որ հազիւ ծածկում էր երեխայի նիհար, փոքրիկ, ոսկրոս մարմինը։ Ճիկագոյն, խիտ ու երկար մազերը, ինչպէս գզգզուած դերձան, խառն ի խուռն ցցուած էին ամեն կողմ։ Երեխայի ածուխի նման սկ աշքերն իսկոյն ուղղուեցան դէպի սեղանի վրայի բրդոնը։

—Տնր, տնր...—Ինչեց մի սրաձայն աղաղակ և դէպի սեղանն երկարացան փոքրիկ, աղիքի նման բարակ ձեռներ։

—Ի՞նչ ես ցցուել վայտի պէս, —նոյնպիսի խիստ ձայնով ասաց Պաւլը, —բեր նրան այստեղ ու կերակրիր։ Լսում ես, դէ։

Մեքենայարար հնաղանդուելով՝ Փրանկան մօ-

տեցրեց երեխային սեղանին ու տուեց նորան մի կտոր հաց։ Պաւլը դրեց նրանց առաջ մի աման տաք սպաս, որի վրայից գոլոցի էր բարձրանում։

—Կեր ինքդ և կերակրիր երեխային, —ասաց նա և նստեց պատի մօտ։

Փրանկան ստիպում էր իրան ուաել, բայց չէր կալուղանում —կերակուրը նրա կոկորդից ներս չէր գնում. աշքերն երբեմնապէս լցում էին ակամայ արտասունքով։ Սենեակում տիրում էր լուսթիւն, որ ընդհատում էր միայն Պաւլի ծանր չնշառութեամբ։

Փրանկայի վրայ երկար նայելուց յետոյ՝ նա հարցրեց.

—Ինչո՞ւ չես ուտում։

—Եմ ուզում, —հազիւ լսելի ձայնով պատասխանեց Փրանկան։

Պաւլը վեր կացաւ, մօտեցաւ վառարանին, որեց սեղանի վրայ մի բաժակ թէյ և նորից նստեց իւր առաջուայ տեղը։ Երեխան տաքացաւ և ձեռները ձգելով դէպի բաժակն աղաղակեց.

—Հայրիշկ, հայրիշկ։

Փրանկան մօտեցնում էր նրա շրթունքներին փոքրիկ ափսէն, սառած թէյով։ Այդ ժամանակ նրա ձեռքը գողցողաց, որովհետեւ անկիւնից լսուեց Պաւլի ցածր, թէկ առաջուանից աւելի մեղմ ձայնը։

—Կնքուած է։

—Ի՞նչպէս չէ, կնքուած է։

—Իսկ անունն ի՞նչ է։

—Ոկտափան։

—Խտաւեան, —կրկնեց Պաւլը և լսեց մի ըոպէ։

—Քանի՞ տարեկան է։

—Մի տարեկան և ութ ամսական:
Երեխան կուլ տուեց քանի մի կում թէյ, մնա-
ցածն ազահութեամբ վերջացրեց Փրանկան և կերաւ
երկու կտոր հայ:

—Ելի ուզմաւ ես,—հարցրեց Պաւլը:

Փրանկան ցածրաձայն պատասխանեց, թէ այլ-
ևս թէյ չէ ուզում և թէ երեխան քնել է արդէն: Պաւ-
լը ձեռքով ցոյց տուեց նստարանը, որի վրայ թաղիք
էր փած:

—Դէ գնա քնիր... Պառկիր և երեխային էլ պառ-
կեցրու կողքիդ...

Փրանկան վեր կացաւ և լուռ կանգնեց նրա առաջ:

—Ի՞նչ ես ուզում:

Փրանկան բռնեց նրա ձեռքն ու տարաւ շըր-
թունքներին:

Պաւլը քաշեց ձեռքն և շուռ տուեց երեսը գե-
պի պատը:

—Դէ գնա քնիր... Աստուած քեզ հետ...—ասաց
նա և կարծես ակամայ ձեռքը քոեց նրա մազերին:

Պաւլը հանգցւեց լապտերն ու վասարանի կրա-
կի վրայ ջուր ածեց: Սենեկում տիրեց խորին խա-
ւար ու խաղաղութիւն: Փրանկան իսկոյն քնեց, բայց
Պաւլի քունը չէր տանում: Զանազանատեսակ զգաց-
մունքներ փոթորկի նման խառնուում էին նրա հօգու
մէջ և մաս-մաս պատառում նրան: Այդ փոքրիկ արա-
րածը, որ այնպէս անակնկալ կերպով յայտնուեցաւ
նրա խրճիթի մէջ, աւելացրեց արդեօք դառնութեան
մի կաթիլ նրա վշտերի բաժակի մէջ: Ի հարկէ ոչ:
Բայց տեսնել ամեն օր, ամեն բոպէ իւր խայտառա-
կութիւնը, հնարաւորութիւն շունենալ նոյն-իսկ մի

վայրկեան մոռանալ ան... Օ՛, անտանելի՛ է: Պաւ-
լը ցաւելու շափ ամուր սեղմում էր ձեռներն ու մըր-
մնջում: «Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, ինչ անեմ,
ինչ անեմ»: Վաղը կանուխ առաւօտեան շտալ արդեօք
նորան վառարանի տակ թագցրած բոլոր փողերը,
քայնը, մինչև վերջին կոսէկը, որ նա իւր երեխայի
հետ միասին գնայ ուր որ ուզում է, նոյն-իսկ գէպի
կորուստ... Դէպի կորուստ: Բայց չէ որ ինքը, Պաւլն,
երգուել է Աստծու և իրան առաջ՝ վրկել նրան կո-
րսաից: Փրանկան նեկել է նրա մօտ այդ վրկութիւնը
գտնելու... Դուցէ հէնց հիմա է հասել այն բոպէն՝
երբ նա կհրաժարուի սատանայից և կսկսէ առաքինի
կեանք վարել: Ի՞նչպէս չէ: շատ յօւսալի չէ: Ե՞րբ է
պատահել, որ արբեցողը հրաժարուի օդուց, իսկ նա
բոլոր արբեցողներից էլ վատ է, թէն օդի չէ խմում:
Նրա վրա աւելացնենք և այն, որ հարկաւոր կինի
ուրիշի երեխային ընդմիշտ ընդունել տունդ և երևալ
բարի մարդկանց աշքին կնոջդ մեղքով ու քո անձիդ
խայտառակութեամբ զարդարուած: Ա՛յ թէ կծիծա-
դին գիւղացիք, երբ իմանան, թէ Պաւլը մեծացնում
է լակէյի որդուն: Ամօթ, խայտառակութիւն: Եւ մի-
ենոյն ժամանակ այնպիսի կարեկցութիւն զգա, որ
միրտդ շաղախուի արինով...

—Չեմ ուզում,—գորս է թոշում Պաւլի բերա-
նից,—ամենեմին, ամենեմին:

Բայց եթէ նա այժմ գորս անէ Փրանկային՝
նա այլ ևս երբէք չի վերադառնայ, երբէք չի տեսնի
ինքը նրա պայծառ աշքերը, չի շոյի նրա փափուկ
մազերը, չի լսի նրա հնչուն, ուրախ ծիծաղը, որ աշ-

խարհիս վրայ ամեն բանից աւելի զուր է գալիս իրան...
եւ խրճիթի մէջ լսուեց խուլ հեծեծ անք:
— 2եմ կարող, ո՞հ, ողորմած Աստուած իմ, չեմ
կարող, ի՞նչ անեմ:
Երբ մարտի առաօտուայ ադօտ լոյսը ներս թա-
փանցեց Պաւլի խրճիթը՝ նա զարթեց կարճատե-
քնից և յենուելով թեկի վրայ՝ երկար նայում էր հան-
դիպակաց պատի մօտ դրած մահճակալին: Կիսամերկ
Փրանկան քնած էր մեռածի նման: Նրա ուսերի զար-
հուրիլի նիհարութիւնն աշքի էր ընկնում անդուրե-
կան պարզութեամբ. մաշուած շրջազգեսաի փէշերի
տակից երեսում էին ոտները, ցեխի մէջ թաթախուած
գուլպաներով; Սոսկալի աղքատոթեան և զրկանքնե-
րի պատկեր էր ներկայացնուում այդ խղճուկ փոքրիկ
մարմինը, արձակուած սկ մաղերի խիտ հիւսերով,
որոնց մէջից երեսում էր նրա ղեղին դէմքը: Պաւլը
չէր հեռացնում նրանից իւր աշքերն, և նրա ճակատի
վրայ կնճիւներ էին հաւաքում մէկը միւսի յետեկից:
Յանկարծ նրա աշքերում, նոյն-իսկ իրան հա-
մար անսպասելի կերպով փայլեց մի պայծառ ճառա-
գայթ, և շրթունքների վրայ մի թեթե ժպիտ երեե-
ցաւ: Կարմիր զնդակը, որ մինչև այժմ անշարժ պառ-
կած էր Փրանկալի մօտ՝ յանկարծ շարժուեցաւ: Պա-
տառուած շապկի տակից առաջ հանուեցան
մերկ թեւերը, ապա երեսեցաւ գլուխը, բացգոյն մագերի
մի ամբողջ խրձով: Երեխան երկար ժամանակ չորս
կողմն էր նայում—երեկի նրան հետաքրքրում էր տան
անծանօթ սարք ու կարգը. վերջապէս նոսեց անկող-
նում և ինչ-որ անհասկանալի բան վնթինթաց:

Թէ ինչ էր ասում նա՝ դժուար էր սրոշել. բայց

Պաւլի շրթունքների վրայ ժպիան աւելի ու աւելի
փուռում, ապրածում էր. աչքերը կորցրին առաջ-
ուայ խստահայեցաց արտայայտութիւնն և մերջապէս
հանդիպեցան երեխայի աչքերին:

— Այի այստեղ...— շնչարով ասաց նա:

Երեխան վախեցաւ և կուչ գալով կըկին մի գլո-
գակ գալիձաւ, բայց Պաւլը նորից կանչեց նրան մա-
տով ու կրկնեց.

— Երի այստեղ, շաքար կտամ...

Երեխան ոտներն իջեցրեց յատակին և սպասո-
ղական գիրքսվ նստեց մահճակալի վրայ: Պաւլը գնաց
կարմիր պահարանի մօտ և երբ շուռ եկաւ՝ նրա յե-
տեսում կանգնած էր փոքրիկ արարածն և անհամբե-
րութեամբ մեկնում էր երկու ձեռքը:

— Ճնոր... տնըր... տնըր...— սենեակում հնչեց մի
բարակ ձայն:

Երեխայի կարմիր շապիկը, ծածկուած սկ պոյ-
տերով, յիշեցրեց Պաւլին այն փոքրիկ անվնաս մի-
ջատը, որ երեսում է անտառի խոտերի վրայ: Պաւլը
գրկեց երեխային:

— Օ՞հ, դու փոքրիկ Կարմիր շապիկ,— շնչաց նա,—
Աստծու անմեղ, անպարտ արարած:

Նա նստեց պատուհանի մօտ: Արեն արդէն դուրս
էր գալիս և իւր ոսկեղին ճառագայթներով շամփում
առաւօտի կապոյտ աղջամուղջը: Կօղիւկի զալթում,
ուրախ-ուրախ աւած ու յետ էր վազվզում գեղնագոյն
Կուրտան, պոչն այս ու այն կողմը թափ տալով: Երե-
խան մի ձեռքով բռնած հացի կտորն, իսկ միւսով
շաքարը՝ չէր հեռացնում Կուրտայից հիացած աշքե-
րը: Վերջապէս նա աղաղակեց.

—Քութիկ, քութիկ...

—Հա, քութիկ... շնիկ,—հաստատեց Պաւը: Երեխան դարձրեց զլուխը դէպի նա և հարցրեց.

—Իսկ դու ով ես:

Պաւը շպատասխանեց և շուռ տուեց երեսը:

Երբ Փրանկան արժնացաւ և բացեց աշքերը՝ նրա դէմքի վրայ երեխցաւ դարմանք, համարեա երկիրը: Պաւը նստած էր պատուանի մօտ և նրա ծընկների վրայ երեխան, որ իւր փոքրիկ ձեռները կախել էր նրա կարճ, սպիտակախառն մագերի մէջ: Փրանկան վայր թուաւ անկողնից, կամաց մօտեցաւ նստարանին և այնպիսի շարժումն արաւ, որ ցոյց էր տալիս, թէ կամնում է վերցնել երեխային: Պաւը դարձրեց զլուխը, նկատեց նրա վախեցած հայեացը և աւելի սեղմելով երեխային՝ ասաց կտրուկ ձայնով.

—Հարկաւոր չէ:

—Կձանձրացնէ,—ցածրաձայն նկատեց Փրանկան:

Նա ոչինչ չպատասխանեց, Փրանկան դողդողում էր ամբողջ մարմնով, վաթաթւում էր իւր ծակուած վերարկուի մէջ, թէպէտե սենեակում ցուրտ չէր:

—Գուցէ կրակ անել է հարկաւոր,—հարցրեց նա:

—Արա:

Փրանկան սկսեց աշխատել վառարանի մօտ և թէպէտ ժամանակ առ ժամանակ նրա կրծքից դուրս էին թռչում հաղաշանքներ՝ այսու ամենային շուտով կրակն արաւ:

—Գուցէ հարկաւոր է զետնախնձոր եփել,—կրկին հարցրեց նա, առանց զլուխն յետ դարձնելու:

—Եփիր,—պատասխանեց Պաւը, կտրեց մի կտրուկ հայ, դրեց դրախն և վերցնելով գլխարկը՝ կնաց դէ-

պի դուռը. բայց շեմքի վրայ կանգ առաւ և նայեց վառարանի մօտ կանգնած կնոջը:

—Ամեն ինչ այս խրճիթում իւր նախկին տեղումն է, —ասաց նա ցածրաձայն.—վերցը ինչ որ հարկաւոր է, ճաշ պատրաստիր, կեր ինքդ և տուր երեխային: Արա ինչ որ ուզում ես. դու այսաեղ կրկին նոյն պիսի տանտիկին ես՝ որպէս և առաջ:

Ֆրանկան լսում էր Պաւին անհանգիստ սրտով. բայց նրա վերջին խօսքերի վրայ այնպիսի շարժումն գործեց, որ կարծես թէ ուզում էր նրա պարանոցը փաթաթուիլ: Բայց Պաւըն արագութեամբ մի քայլ առաջ գնաց և առանց յետնայելու խօսքը վերջացրեց.

—Կվերադառնամ երեկոյեան դէմ..., թէ վախենում ես մենակ մնալուց՝ դսան վականը քաշիր:

Վճրուը վերջնականապէս կազմակերպուել էր Պաւի գլխում, բայց մի ինչ-որ պահանջ այսու ամենայնիւ քաշում էր նրան դէպի գուրս, դէպի բաց օդը, դէպի արագընթաց ալէկոծուող գետը. հոգու վերքը գետ ևս թարմ էր, նրանից արիւն էր կաթեկաթում: Քանի մի ըստէից յետոյ նրա մակոյին արագ սլանում էր գետի հոսանքով: Արագավազ պղանը ալիքներն անվերջանալի երդ էին երգում Պաւին խարուած սիրոյ տանջանկների, խանգոտութեան վշերի և յոյսի քաղցրութեան մասին, խառն անցեալ յիշողութիւնների թոյնի հետ: Գուցէ նրանք երդ էին յօրինում մարդու ամենասրբազն պարտաւորութեան մասին՝ աղատելու իւր մերձաւորին կորսաից, այն պարտաւորութեան, որի մասին քիչ էր մնացել մոռանար Պաւըն և որը կրկին բարձրացրեց իւր ձայնը նրա հոգու մէջ ու պայծառ լուսով լուսաւորեց նրա երեսը:

Պաւլը վերադարձաւ տուն մի ժամ մթնելոց
առաջ: Փրանկան պառկած էր մահճակալի վրայ, բայց
քնած չէր: Տեսնելով ամուսնուն՝ նա շտապով բար-
ձրացաւ և վայր ձգեց գլխից թրջած թաշկինակը:
—Քլուսդ ցաւում է,—հարցրեց Պաւլը պատի մօտ
դնելով թիակները:

—Ո՛չ, այլ ես չէ ցաւում, հիմա շատ աւելի թե-
թե եմ զգում, հանգստացաւ...:

—Եւ լաւ եղաւ որ հանգստացաւ...—Պաւլը լոեց
մի բոպէ և յետոյ հարցրեց.—Հասպա Խտաւեանն ուր է:

—Քնած է: Ամբողջ օրը վազվում էր խրճիթում
այնպէս որ Աստուած ազատէ: Ընդադար աղաղակում
էր, անդադար հարցնում էր—այս ի՞նչ է, այն ի՞նչ է:

Ես այնպէս վախենում էի, թէ չլինի մի բան կոտրէ,
մի բան փշացնէ: Բայց հիմա, վատոք Աստծու, քնեց...

Այս ամենը Փրանկան ասում էր աւելի համար-
ձակ, աւելի բարձր՝ բայց անկողնից վեր չէր կենում:

—Ես խաչի եմ եփել... վառարանումն է... երեկ
սառած չի լինի:

Պաւլը կտրեց մի կտոր հաց և վառարանից հա-
նեց կծուճով խաչիը: Ուտում էր նա դանդաղ, առանց
շտապելու, վառարանի առաջ կանգնած. ապա նստեց
և դարձաւ մահճակալի վրայ անշարժ նստած կնոջը.

—Արի այստեղ մի քիչ խօսենք:
Նրա ձայնը Փրանկալին թուեց նոյնչափ մեղմ

ու քաղցր՝ որչափ և առաջ, սակայն Փրանկան չփա-
թաթուեց նրա պարանոցին: Թէկ Պաւլն արդէն ասել
էր, թէ ամեն ինչ պէտք է առաջուայ նման լինի,

բայց նա դեռ կառկածում էր և չգիտէր, թէ ինչպէս
պիտի Պաւլը վարուի նրա հետ:

—Հը,—խօսեց Պաւլը,—շատ չարչարանք քաշե-
ցիր թէ չէ: Դժհ ես, որ ինձանից հեռացար ու կորբա-
տեան ճանապարհը բանեցիր: Երի լաւ պիտի լինի այդ
ճանապարհը, որ կրկին յետ դարձար մի տանջուած
ու քսոսած ձիու նման, հիւանդ ու պատառուած:
Հը... ինչո՞ւ գնացիր և ինչո՞ւ յետ եկար... Մէկ ասա
տեսնենք:

0՝, միայն այդ էր հարկաւոր, որ Փրանկալի
լիզուն բացուէր, որ նրա բերանից լայն գետի նման
դուրս թափուէր այս երեք տարուայ ընթացքում նրա
որտի մէջ ամբարուած ատելութեան, զայրոյթի և
վշտի պաշարը: Կայծակի արագութեամբ յիշեց նա
այն րոպէն, երբ կղզու վրայ, հոտաւէս ծաղիկների
մէջ, պատմեց նա Պաւլին իւր ամբողջ անցեալը, իսկ
նա վարուեց այնպէս՝ ինչպէս հայրն որդու հետ,
ինչպէս խօստովանահայրը զղացող մեղաւորի հետ և
մինչեւ անգամ սկսեց սիրել նրան այդ օրից: Այս յի-
շողութիւնն աւելի ևս համարձակութիւն տուեց նորան
և աւելի մոռայլ ստուեր ձգեց նրա կեանքի վերջին
երեք տարուայ վրայ: Առանց որևէ բան թագցնելու,
ծայրայեղ անկեղծութեամբ, առանց ոչ ոքի և ոչնչի
խնայելու, Փրանկան պատմեց, թէ խելագարի նման
սիրահարուեց լակէյի վրայ. նա ինքն էլ չգիտէ, թէ
այդ երբ և ինչպէս պատահեց. ուզզակի, պարզ ի
պարզոյ հասկացաւ, որ առանց նորան ապրել չէ կա-
րող: Լակէյն էլ երդուում էր, թէ միշտ կսիրէ նրան
և չի թողնի, քանի կենդանի է: Ու խօսում էր նա
այնպէս քաղցր, այնպէս քաղաքալարի էր, որ կար-
ծես թէ իսկական պարոն լինէր: Նա էլ լաւ ընտա-
նիքից էր. նրա հայրը շլեախտիշ է եղել, իսկ որդիքը

ծառայ են դարձել անհրաժեշտ հարկից ստիպուած։ Փրանկան իսկոյն հասկացաւ այս ամենը և աւելի սիրեց նրան։ Սկզբում Փրանկան լրտ և ուրախ էր ապրում նրա հետ։ Պաշտօն գտաւ նա շատ շուտ և այնպիսի տան մէջ, ուր շատ ծառաներ կային, իսկ աշխատանք չկար համարեա։ Կարօլը գալիս էր նրա մօտ գրեթէ ամեն օր։ Կիրակի և տօն օրերին տառնում էր նրան զրօսավայրեր, տանում էր թատրոն։ Այսպէս անց կացաւ քանի մի ամիս։ Յետոյ յանկարծակի, թրանիկ, վեր կացաւ ու գնաց. գնաց իւր պարոնի հետ մի ինչ-որ հեռաւոր քաղաք։

Փրանկային մնաս բարով ասելիս՝ նա լաց էր լինում, աչքերից հեղեղ էր թափում, բայց այսու ամենայնիւ ասում էր, թէ այդպիսի շահաւէտ տեղ ամբողջ աշխարհում չի գտնի, թէ խելագար պիտի լինի, որ հրաժարուի նրանից։ Ինչքան էլ Փրանկան խընդրում, ազաշում էր, որ տանինրան իւր հետ՝ Կարօլը չէր համաձայնում, թէ լաց լինելուց չէր դադարում։ «Ե՞նչ անեմ ես քեզ, որ տանեմ։ Ի՞նչպէս կարող եմ այդպիսի բեռ զիզս փաթաթել։» Նա գնաց, իսկ Փրանկան երկու շաբաթից յետոյ վազեց նրա յետնից։ Կարծում էր, թէ կկարողանայ հասնել այն քաղաքը, ուր գնացել էր Կարօլը, բայց անբախտութիւնը պատահեց նորան առաջ՝ քան ինքն էր ենթադրում։ Երեխան ծնուեց։ Փրանկան մկրտել տուեց նրան և անունը զբեց Օկտավիան, որովհետեւ դա շատ լաւ անուն է և հասարակ ժողովրդի մէջ չէ գործածում։ Նա մինչև անդամ նամակ գրել Կարօլին չէր կարսդ — ոչ փողոցը գիտէր և ոչ տան համարը՝ ուր ապրում էր նա իւր պարոնի հետ։ Իսկ Կարօլը կամ ոչինչ չը

գիտէր այդ մասին, երբ մնաս բարով էր ասում, կամ կեղծում էր թէ չգիտէ։ Այնուհետև ո՛քան ցաւեր քաշեց նա, այնպիսի ցաւեր, որպիսին մինչ այդ ժամանակ չեսել։ Ինչքան որ փող ունէր՝ բոլորը տուեց անկիւն վարձելու մի խեղճ ու ազբատ լուացուրար կնոջ մօտ։ որպէսզի քաղցածութիւնից չը մեռնի՝ ստիպուած եղաւ ծախել շորերը, սպիտակեղէնը, այն ամենը՝ ինչ որ մնացել էր վերջին պաշտօնից։ Անծանօթ քաղաքում այնքան էլ հեշտ չէ որևէ պարապմոնք գտնել։ Քանի մի ամիս նա օրավարձով լուացը էր անում, մինչեւ անդամ յատակ էր լուանում։ սրա հետ միասին նա ստիպուած էր ինքը կերակրել երեխային։ — ոյժերն սպառւում էին, այնինչ աշխատանքի վարձը քանի գնում աւելի ու աւելի պակասում էր։ Բարեբախտաբար նա շուտով տեղ գտաւ. երեխային թուղեց լուացարար կնոջ մօտ։ Նրա դրութիւնը լաւ կլինէր՝ եթէ շտանջէր նրան զայրոյթն այն անպիտանի դէմ, որ այնպէս անօգնական թողեց նրան։ Երբեմնապէս նա պատառ-պատառ էր անում իւր շորերը, իսկ զիզսի մէջ մի ինչ-որ բան այնպէս եռ էր գալիս, ինչպէս ջուրը կաթսայի մէջ։ Նրա բարկութիւնը գալիս էր մանաւանդ այն ժամանակ, երբ յիշում էր Պալին, նրա բարութիւնը, նրա խաղաղ խրճիթը, այնպիսի բարկութիւն, որ կարծես պատրաստ էր առաջին հանդիպողի կոկորդը խրել ճանկերը։ Մի այդպիսի բոպէ նա հանդիպեց խոհարարուհուն և ուղղակի գլխին ած եց ամանով եռ եկած ջուրը։ Տան մէջ սարսափելի իրարանցումն բարձացաւ. հաշտարար դատաւորը դատապարտեց նրան երեք ամսուայ բանտարկութեան։ Ի՞նչ պիտի անէր. Փրանկան գնաց

բանտ: Թէ ինչե՞ր տեսաւ նա այնտեղ ու ի՞նչ բաներ լսեց—Ասածուն է միայն յայտնի: Մէկն այն կանանցից, որոնց հետ բանտարկուած էր Փրանկան՝ թռւնատորել էր ամուսնուն, միւսը խեղդել էր երեխային, կային և հրդեհածիգ կանայք և գողեր: Ամաշում էր նա նստել այդպիսի շարագործների հետ, մանաւանդ որ նրանք հասարակ կանայք էին և խօսում էին ռամկօրէն: Փրանկայի գլուխն սկսում էր ցաւիլ և ցաւը քանի գնուում՝ աւելի ու աւելի սասականում էր, ականջները խշում էին, գլխի մէջ անտանելի ծանրութիւն էր զգում: Բանափառ գորս գալուց յետոյ նա ստիպուած էր ուղղակի մտնել հիւանդանոց, ուր և մնաց քանի մի ամիս: Եւ զարմանալի բան է, թէև ջերմախտ չունէր նա, բայց երեմնապէս այնպիսի մոռացմունք էր գալիս վրան, որ և ծիծաղել էր ուզում և լաց լինել. ուղղակի հոգին գուրս էր գալիս: Երբ այդպիսի բան էր պատահում՝ Փրանկան մաս-մաս պատառուում էր հիւանդանոցի սաւաններն ու կոտրասում դեղի սրուակները: Վերջապէս բժիշկներն առողջացրին նրան. գլխացաւն անցաւ, ականջների խշոցը գագարեց, ու Փրանկան աւելի լաւ զգաց իրան: Դուրս եկաւ նա հիւանդանոցից և այնպէս փափագում էր գանձնալ Պաւլի մօտ՝ ինչպէս երեք օր ջրի երես շտեսած մարդը խմել է փափագում: Գնալ, գնալ—այս էր պաոյտ գալիս միայն նրա գլխում: Փորձեց նա կրկին վարձուել օրական աշխատանքի, բայց քիչ ցանկացողներ կային նրան վարձելու—բոլորը գիտէին նորան պատահած վերջին գէպքի պատմութիւնը: Այս ամենի վրայ պէտք է աւելացնել և այն, որ լուացարար կինը չկամեցաւ իրան մօտ տեղ տալ ոչ Փրան-

կային, ոչ նրա երեխային: Ի՞նչ անէր, ուր գնար, ուրտեղ պատսպալսուէր, այն էլ ոչ մենակ, այլ երեխայի հետ միասին: Փրանկան զգաց, որ կրկին ուժասպառ է լինում, գլխի մէջ նորից խշոց է սկսում... Ծախեց նա ամենն ինչ որ ունէր, վիզցրեց երեխային ու ճանապարհ ընկաւ: Առաջ երկաթուղով եկաւ, յետոյ մերձակայ քաղաքից մի գիւղացի քերեց տասնեհինդ կոպէկով (ճանապարհն այն գիւղի միջավին էր), իջեցրեց սայլից Պաւլի դսան առաջ ու գնաց... Այս է բոլորը: Քոլմբը: Այդ էլ բաւական էր: Փրանկայի աշքերից արտասուըր հօսում և կամաց-կամաց թափում էր նրա նիհար ձեռների և ծակոտուած վերարկուի վրայ:

Պաւլը, գլուխը քաշ արած՝ շարսունակ լսում էր առանց ընդհատելու: միայն այն ժամանակ, երբ Փրանկան վերջացը պատմութիւնը՝ ցածրածայն ասաց.

—Դժնիք, դժնիք... կատարեալ դժոխք:

Կարծես թէ հանգստութիւնը կրկին հեռացաւ նրանից. նրա հասաւատակամ վճիռն սկսում էր սաստիկ տատանուել: Փրանկան երկար դիտում էր նրան զննողական հայեացքով, սպասելով իւր վիճակի որոշմանը, բայց Պաւլն այլևս ոչ մի խօսք չասաց: Խըճիթում տիրեց երկարատե, ծանր լուռթիւն: Յանկարծ հնչեց մի բարակ ու սուր ձայն:

—Մայրիկ, մայրիկ: բ միաբ միշտայ մաս

Փրանկան նստած էր անշարժ: Պաւլը բարձրացրեց խոնարհած գլուխը:

—Նտաւեանը զարթեց: Գնան նրա մօտ...

Փրանկան ուղղում էր առներ նրան ձեռներին. բայց երեխան կամակըրութեամբ հրեց նրան և վագեց պատուհանի առաջ կանգնած Պաւլի մօտ:

Պաւլը կոացաւ և բարձրացրեց յատակից կարմիր շապիկ հագած փոքրիկ արարածին:
 —Ռւտել ես ուզում, համ, հաց ես ուզում, —հարցրեց նա, նայելով երեխայի դէմքին: Կարելի էր կարծել, թէ նրա աչքերը, յոզնած անկման և անառակութեան մի շարք գարշելի պատկերների տեսարանից՝ հանգստանում են այժմ մանկական անմեղ դէմքին նայելով:
 —Հաց ես ուզում, —նորից հարցրեց Պաւլը:
 Բայց Խտաւեանը հաց չէր ուզում, նա կուշաէր: Նրա սկ աչքերն ուզուեցան դէպի պատոհանը, դէպի գարպասի դռան մօտ նստած Կուրտան: Տղան երկարացրեց ձեռքն ու բացազանչեց.
 —Քութիկ, քութիկ:
 —Ծնիկ, —բացատրեց Պաւլը:
 Երեխան դարձաւ նորան և ամենայն լրջութեամբ հարցրեց:
 —Հապա դու ովկ ես:
 Պաւլը, աշքերը չհեռացնելով նրանից՝ ժպտաց: Նրա կնճուտ ճակատը պարզուեց:
 —Հայրիկդ, —պատասխանեց նա:
 —Հայրիկ, —կարծես զարմանալով և գլուխը մի կողմ թեքելով բացազանչեց երեխան:
 —Հա, - հայրիկդ:

Նոյն ըստէին Պաւլն զգաց, որ նրա ծնկներին փաթաթուեցան բարակ, ճկուն ձեռներ: Փրանկան էր դա, որ ընկաւ նրա ոտներին և շնորհակալութիւն էր յայտնում նրա համար, որ Պաւլը դուրս չարաւ նրան: Իսկ խրճիթից կ կամենում է հայր լինել երեխային: Փրանկան չէ կարողանում խօսք անզամ գանել, որով յայտնէ իւր ուրախութիւնը: Նա երդում է այն ամե-

նով, ինչ որ սուրբ է, թէ այսուհետեւ մինչեւ մահն ամեն բանում ննազանդ կլինի, կսիրէ ու կյարգէ նրան, իսկ երբ դադարի այդպէս վարուելուց՝ ինքն իւր ձեռքով թոկը կձգէ վիզը կամ կթունաւորուի, որպէսզի աշխարհի երեսին շապրի մի այնպիսի հրէշ՝ որպիսին կլինի նա այն ժամանակ:

Պաւլը վայր դրեց երեխային, նստեցրեց առների մօտ սողացող կնոջը նստարանին և ցածրածայն ասաց:
 —Էերիք է... լաւ, բաւական է, իմ խեղճուկ, իմ անրախիտ: Դէ, հանդարտուիր:

Փրանկան համբայրներով ծածկեց նրա ձեռները, բայց մօտենալ, փաթաթուել չէր վատահանում... նրա շրթունքներից բղխում էին սրտառուչ խօսքեր.

—Մահից փրկեցիր գու ինձ, իմ սիրելի, իմ ոսկի, իմ գոհար, շարաշար մահից... ես արդէն վճռել էի, որ եթէ զու ինձ գուրս անես՝ երեխային թողնեմ մի տեղ շեմքի մօտ ու ինքս թոյն ընդունեմ... Նա գրպանից հանեց մի թղթի կտոր և ցոյց տուեց մի պալունց սպիտակ փոշի:

—Տեսնում ես, թոյն է...

—Յանուն չօր և Որդոյ... —Պաւլը խաչակնքեց երեսը: —Այդ բանի մէջ էլ քեզ դրդողը շար սատանան է: Ո՞րտեղից ես ճարել թոյնը:

—Որտեղից եմ ճարել:

Օ՛, նա միշտ ձեռք կրերէ այն, ինչ որ ուզում է: Այն կինը, որ բանտարկուած էր նրա հետ ամուսնուն թունաւորելու համար՝ պատմեց թէ ինչպէս և որտեղ կարելի է թոյն ձեռք բերել: Փրանկան պատրաստուելով ամուսնու մօտ գալու՝ մտածում էր ինքն իրան, եթէ Պաւլը գուրս անէ՝ էլ ոչինչ չի մնայ ա-

նելու՝ բայց եթէ կախուել կամ թոյն ընդունել: Սա-
կայն կախուելը լաւ չէ: Կախում են միայն հստարակ
մարդիկ: Հիմա թոյնն էլ հարկաւոր չէ, որովհետեւ
Պաւլը ներեց նորան ամենին: Հիմա նա նորից կի-
րէ ու կյարգէ Պաւլին, կնստի իրան համար հանգիստ
ու խաղաղ իւր իրածիթում, ինչպէս Աստծոյ հովանու
տակ... Վերջին փօսքերն ասելին նա փոշիով լի թըդ-
թի կտորը նորից զբեց գրապանը, վեր թռաւ նստա-
րանից և ուրախ-ուրախ ծիծաղելով սկսեց թռչկառել
խրճիթի մէջ: Բայց Պաւլի ծիծաղը չէր գալիս—նա
զգում էր, որ մի ինչ-որ անբացարելի երկիւղ տի-
րում է իրան:

— Ի՞նչպէս մժնեց, — նկատեց նա և շտապով վա-
ռեց լապտերը:

Փրանկան զբեց ինքնաեւն ու այդ արաւ այն-
պիսի ինքնավատահութեամբ, որ ցոյց էր տալիս, թէ
նա փոքր առ փոքր ընդունում է իւր վրայ տանտիկ-
նոջ նախկին գերը. թէյ խմելիս նա մանրամասն հարց
ու փորձ էր անում գիտի թողոր ծանօթների մասին:
Պաւլն անտրասունջ պատասխանում էր: Այսպէս ան-
ցաւ մի ժամ, և երբ Խտաւեանին դրին անկողին, իսկ
Փրանկան լռեց ու սկսեց յօրանջել՝ Պաւլը վեր կա-
ցաւ տեղից ու ասաց.

— Ե՛, Փրանկա, հիմա աղօթք անկնք միասին:

Փրանկան ապշած նայեց նրա վրայ: .
— Հաղած, հապա: Մինչև այժմ դու Աստուած չէ-
իր ճանաչում, հէնց այդ պատճառով էլ սատանային
գիտար չէր քեզ մօտենալ: Ես էլ լաւ չէի անում, որ
քեզ աղօթել չէի ոռվորեցնում: Հիմա դու կըկին իջար
այն ճանապարհից, որ ուղղակի դէպի դժոխք է տա-

նում և զուցէ երբէք այլիս չդառնաս դէպի այդ ճա-
նապարհը. զուցէ ուշքի գաս, խելքդ գլուխդ հաւա-
քես, այն ժամանակ ամեն ինչ կարգին կդնայ: Այ,
որ մուրբ Գրքին մէջ գրուած է, թէ Սիօնը սիրում
է ամենասուրբ կոյս Մարիամին... զուցէ դու էլ կի-
րես նրան, և նա կիրկէ քեզ ամենայն շարից... Զոգլը
և կրկնիր ինձ հետ...

Պաւլը քանի մի աղօթք ասաց, ջերմեանդու-
թեամբ համբուրեց կուպիտոնի պատկերը, որի ձեռ-
քին վարդի պսակ էր նկարած, և վեր կացաւ չողած
տեղից: Նրա դէմքը բոլորովին պարզ էր. ճակատից
կնճիւները չքացել էին: Նա քաղցրութեամբ հպեց
Փրանկային, և ինչպէս մի ժամ առաջ նրա հոգեկան
վրդովմունքն ամբողջավին ցրուեցաւ երեխայի պայ-
ծառ հայեացքը տեսնելով՝ այնպէս էլ հիմա միարան
աղօթքն այդ կնաջ հետ՝ կարծես մաքրեց նրան կա-
տարելապէս Պաւլի աշքում: Առաջին անգամ երկար
անջատումից յետոյ նա գրկեց կնոջն և կարօտով իւր
չըթունքները սեղմեց նրա շրթունքներին, ինչպէս
ծարաւից պապակած մարդն ընկնում է աղքիւլի սառն
և մաքուր ջրի վրայ:

— Օ՛հ, Փրանկա, — շշնջում էր նա — թէ իմանաս՝
որքան եմ սիրում քեզ, ահ, անշափ եմ սիրում: Աստ-
ուած կաայ, դու հիմա լաւ կին կդառնաս..., և տե-
սնում եմ, որ դու ինքդ էլ ուզում հս այդ, իմ աղաւ-
նեակ, իմ խղճուկ:

Առաւօտեան, լոյսը բացուելուց քիչ յետոյ, Պաւ-
լը փաթաթեց խտաւեանին Փրանկայի գլխի ծածկո-
ցով և դուրս տարաւ բակը: Երկար կանգնեց նա բա-
կի դռան մօտ: Երեսում էր, որ նրա մէջ կուռում էին

տարբեր զգացմունքներ, որ ծանր էր նրա համար երեալ մարդկանց աշքին՝ զրկած այդ երեխային, աշխարհի ծայրից նրա տուն բերուած լակէյի այդ սերնդին։ Ամօթ... բայց Պաւլն իւր դիտումներն ունէր, որոնց պատճառով նա ուզում էր յափնել հրապարակաբար, թէ հաշտուել է իւր կնոջ հետ և նրա երեխային ընդունել է որպէս իրանը։ Դրանով նա բոլորի բերանը կփակէ և կհառկացնէ, որ թոյլ չի տայ նեղացնել Փրանկային կամ նրա երեխային։ Բայց վերջին բոպէին Պաւլի անվեհերութիւնը նուազեց, և երկու բոպէի չափ նա անշարժ կանգնած էր դռան առաջ։

— Իբրև զո՞հ Տէր Սստծուն... նրա աղատութեան, մեզաւոր հոգու փրկութեան համար... վերջապէս շընջաց նա, բաց արաւ դուռը, արագ անց կացաւ գաւթի միջով և կանգնեց գայատոի դռան առաջ։ Արև, տաք օր էր. կտուրներից զետին էին թափում գոհար-կաթիներ. մերձակայ ծառերի վրայ բարձրածայն և ուրախ ծիգում էին ճնճուկներ։ Պաւլի մօտից անցնում էին մարդիկ եղանիներով, կացիններով և թիակներով բեռնաւորուած։ Նա ամենին քաղցրութեամբ գլուխ էր տալիս և ողջոյնի որեւէ խօսք ասում։ Գիւղայի տղամարդկանցից ոչ ոք ուշագրութիւն չդարձեց երեխայի վրայ. — Երևի Ուլեանայինն է. — ու ինչ նրանց գործն է, ումը կլինի լինի. իրանք իրանց անհամար հոգուերն ունին։ Բայց մօտից անցնում էին երկու կին. նրանցից մէկը լայն բաց արաւ աշքերն ու գնաց անց կացաւ, միւսը կանգ առաւ, զլուխը տարաւ բերեց, ծամծմեց շրթունքներն և վերջապէս հարցրեց։

— Ո՞ւմ երեխան է։
— Իմս, — պատասխանեց Պաւլը ժպտալով։
Կինը կէս-ամաշելով և կէս ծաղելով ծիծաղեց։
— Այդ երբ տուեց քեզ Սստուած։
— Երբ տուեց՝ տուեց-ողջ մէկ է. բանն այն է որ տուեց։

Պաւլը վաղաբշաբար համբուրեց Խտաւեանի ճակատը։ Կինը կրկին անգամ շարժեց գլուխն ու մտաւ Կողլիկենց խրճիթի գանից ներս։ Քանի մի բոպէ յետոյ շեմքի վրայ երևեցաւ Ուլեանան իւր բոլոր երեխաների հետ միասին, փոքրիկ գաւթի թաց խոտի վրայ, լուսաւորուած գարնանային արեի պայծառ ճառագայթներով, կարճ, հազիւ մինչկ կոճերն համնող շրջազգեստով։ Ուկեանան ներկայացնում էր ոյժի և առողջութեան կատարեալ մարմնացումն։ Նրա յետեւից զուրս եկաւ բարձրահասակ վայելակազմ Փիլիապը, իսկ վերջինիս մէջքի յետեից երևեցաւ Պանիլկայի կարմիր, հետաքրքրուող դէմքը։

Պաւլը դէմ գնաց քրոջը, մի քայլ մնացած կանգ առաւ ու ասաց իւր սովորական գանդաղ ձայնով։

— Փրանկան վերադարձաւ...

Ուլեանան գլխով արաւ, նա դեռ երէկ իմացել էր այդ լուսը Դանիկայից, որ արտօնութիւն ունէր առաջինն իմանալու, թէ մըտեղ ինչ է պատահել, բայց թէ Փրանկան բերել է իրան հետ և երեխայ այդ մասին մինչեւ անգամ Դանիկան ոչինչ իմանալ չէր կարողացել։ Այժմ Ուլեանան հասկացաւ ամեն ինչ և նայում էր Խտաւեանի վրայ անթագուցանելի արհամարհանքով։ Փիլիպպը լուեց, լուեց, բայց վերջը չկարողացաւ ծածկել իւր զայրոյթն և բարձր ձայնով

թքեց մեկուսի, իսկ Դանիլկան զլուխը սեղմեց եղրօր ուսին, որպէսզի յայտնի կերպով չծիծաղի։ Պաւի ճակատի վրայ կըկին կնճիռներ հաւաքսւեցան. բայց նա աշքերը դարձրեց երեխային և ցածրածայն արտասանեց...

— Ոչ մի բանում նա մեղաւոր չէ . . . Աստծու ստեղծածը։

— Բայց չէ որ . . . —ուղում էր խօսել Ռւլեանան, սակայն Խտաւեանը տեսաւ այդ բոպէին մօտիկ թռչող մի ճնդուկ և բարձրածան ծիծաղից։ Ռւլեանայի աշքերը մեղմացան, իսկ Պաւին աւելացրեց.

— Որբ է . . . անտէր . . .

— Բայց ինչ էլ որ լինի . . . — Ռւլեանան փոքր ինչ տատանուելուց յետոյ չօշափեց երեխայի կուրծքն ու ձեռները։

— Մի տես, խղճ՛մկ, միայն ոսկորն ու կաշին է . . . ինչքան կլինի։

— Մի տարի և ուժ ամսական։

— Հը-ը՝, — զարմացաւ Ռւլեանան և նայեց իւր երեխաներից մէկին. իմս մի տարի և տասներկու շաբաթական է, բայց տես ինչպիսին է։

Գոհութիւնն և հապարառութիւնը լայն ալիքի նման տարածուեցաւ նրա վարդագոյն երեսի վրայ։ Յետոյ նա մտիկ տառից Խտաւեանին ցաւակցութեամբ, թերես նոյն իսկ համակրանքով։ Սակայն Փիլիպպը չկարողացաւ զսպել իրան։

— Պաւի, էյ Պաւի, ինչի՞դ է պէտք այդ լակոտը. յետոյ չես ամաշի մարդկանց երեսին նայելիս։

Պաւի աշքերը վառուեցան յանկարծ։ Ամաշել . . . Ամաշել պէտք է մեղքից, իսկ անտէր

որբի վրայ ցաւեին ամենին ամօթ չէ։ Ես Աստծուն փառք եմ տալիս նրա համար։ Երեխայի հետ մայրն էլ ուրախ կլինի տանը, չար մաքեր շեն դայ զլուխը, մէկ էլ տեսար՝ ուղղուեցաւ . . . 07, — արհամարհանքով ու կոպտաբար ծիծաղից Փիլիպպը։ — Երբ որ նա ուղղուի՝ այս աշխարհի դրախտ կդառնայ։ Բայց երբէք այդ չի լինի։

Հինց այդ բոպէին Քրանկան թռաւ ցածր ցանկապատի վրայից, որ բաժանում էր հարևան գաւիթները, և բարձրածայն ծիծաղով մօտեցաւ խօսակցողների փոքրիկ խմբին։ Նայողը կզարմանար նրա երեսի նիհարութեան և զեղութեան վրայ, բայց դրա փոխարէն մազերն հարթ հաւասար սանրած էին և փայլում էին կապտագոյն փայլով։ Քրանկան փաթթուեցաւ Ռւլեանայի պարանոցին, համբուրեց նրա երկու այտերը, ձեռք առեց Փիլիպպին, իսկ Դանիլիկայի ուսին խփեց քանի մի անդամ։

— Ի՞նչպէս էր, — վրայ տուեց նա, — ինչ էր անում, իմ սիրելիներ, իմ սսկիներ, իմ գոհարներ։ Վաղուց է ես ձեզ չեմ տեսել, Քիդ, Ռւլեանա, այս միջոցում երկու որդի էլ տուեց Աստուած։ Հապա Դանիլկան ինչպէս մծեցաց է. Նիմա կարգին երիտասարդ է։ Այ, տեսնում էք, ես էլ վերադարձայ, իսկ Պաւին այնքան բարի է, որ ոչ մի վատ խօսք չասաց ինձ։ Այս, ինչքան բարի է։ Այդպիսի բարի մարդ ամբողջ աշխարհում չես գտնի. Տուննաւելեցի, կըակ արի և իսկոյն ձեզ տեսնելու հկայ, իմ սիրելիներ, իմ թանկագիններ։ Կարծես Փրանկան պատրաստ լինէր իւր հոգին տալու այդ մարդկանց, այնպէս սաստիկ սիրում էր

նրանց: Այս, այդ բովէին Փրանկան սիրում էր ըոլոսքին: Նա հանգիստ էր իւր ապագայի վերաբերմանը, կրկին սիրահարուած Պաւլի վրայ և երջանիկ: Սրա հետ միասին ամօթի ոչ մի նշող: Նա ամաշում էր Պաւլից՝ երբ վերագարձաւ նրա խրճիթը, այն էլ ուրիշ երեխան գրկում: Բայց ինչո՞ւ պիտի ամաշի նա կողմնակի մարդկանցից: Ուկեանան զարմանքից քարացաւ, Փիլիպպը ժպտաց արհամարհանքով: Պաւլը մօտեցաւ Փրանկային ու կտրուկ ձայնով ասաց:

— Վերցրն երեխային ու գնա տուն: Կովը կկթես և ճաշ կպատրաստես, շուտ արա. ես պէտք է քաղաք գնամ:

Անցաւ երկու ամիս: Պառաւ Աւգոստան մի անգամ նստած էր կանաչ խոտի վրայ, քիչ հեռու իւր խրճիթից և արեի տակ տաքացնում էր ոսկրներն ու մրափում՝ երբ յանկարծ տեսաւ Պաւլին:

— Կնքահայր, այ կնքահայր, — աղաղակեց նա: — Հես լուսմ, արի մէկ այստեղ:

Պաւլը շուր եկաւ նրա կողմը: Այժմ նա իւր մարմինն ուղիղ էր պահում, իսկ շարժուածքն ինքնավաստահութիւն էր արտայայտում: Կարծես նա կրկին քանի մի տարով երիտասարդացել էր:

— Քարնվ, Աւգոստեա, — ասաց նա մօտենալով:

— Հը՛, ինչ կայ, ինչպէս ես, — հարցրեց պառաւը: Պաւլը հասկացաւ, թէ ինչ է ուզում նա իմանալ, և ժպտալով պատասխանեց:

— Ոչինչ, լաւ եմ: Ամեն ինչ, փառք Աստծու, լաւ է: Կուզէի, ու մինչեւ մահս այսպէս ապրէի:

— Իսկ ես երեկ ձեր տուն էի գնացել, ուզում էի տեսնել ձեզ ու ձեր քէֆն ու հալն իմանալ: Քեզ

շտեսայ, գուղիւ գետից չէիր վերադարձել տուն, բայց տանտիկնող տեսայ: Այնպէս չէ, ինչպէս առաջ փոխուել է:

— Խառաւեանին էլ տեսամք.

— Հապա շտեսայ: Գրկեցի... այնպէս թեթև է, որ ասես փետուր լինի... իսկ քո կինդ աշխատում էր բանջարանոցում:

— Աշխատում է, — գոհ սըստվ պատասխանեց Պաւլը: — ամբողջ բանջարանոցը բանեց: Ամեն ինչ անում է հիմա — ճաշ է պատրաստում, կովերը կթում է, ճաց է թխում, այսպէս արգէն պատուիլուած է:

— Դու ես պատուիրել, ինչ է:

— Հապա ո՞վ: Առաւօտեան վաղ ես զարթեցնում եմ նրան, ստիպում եմ ինձ հետ միասին աղօթք անել, իսկ յետոյ քշում եմ աշխատելու: Միայն գետը չեմ ուզարկում ջրի, որովհետև նա ալնքան էլ ոյժ չունի... բայց ինչ բանի որ ոյժը պատում է՝ պարտաւոր է կատարել:

— Ու լո՞ւմ է նա քեզ:

Պաւլը հստատական նշան արաւ գլխով:

— Լուսմ է: Պատահում է, որ երգեմն էլ բարկանում է, բայց պարտաւոր է հնազանդիլ: Հիմա էլ նորան ոչինչ բան չի օգնի. ոչ բարկութիւնն և ոչ քաղցրութիւնը. նա իրանն է ասում ես իմս: Աշխատիր, ասում եմ, Աստծուած ամեն մարդու հրամայել է աշխատել... Սուրբ աղօթքով ամեն մի շար զօրութիւն կարելի է հալածել. իսկ աշխատանքի ժամանակ վատ մարեր չեն գայ մարդու գլուխը: Այ այսպէս եմ հիմա ես նրա հետ գործ տեսնում:

— Ըատ լաւ, շատ լաւ, Պաւլ, այ այդպէս լաւ է, —

եռանդով հասաւատեց Աւտոկեան; — Ես քեզ առաջ էլ ասում էի, թէ այդպէս պէտք է վարուել նրա հետ, չփիտի թոյլ առալ, որ տիկնութիւն անէ...

— Ինձ առաջ թուում էր, — մտածման մէջ ասաց Պալը, — որ եթէ տաժանելի կեանքից յետոյ ես նորան ազատութիւն տամ ու նա լաւ կեանք աեմնի՝ էլ վար տը չի ուղի, բայց յետոյ ինքս էլ համոզուեցալ, որ նրա հետ ուրիշ կերպ պէտք էր վարուել: Պէտք էր աղօթքով Աստուած կանչել, իսկ աշխատանքով շարը հալածել: Հիմա արդէն ես նորան զիջողութիւն չեմ անում: Մի վաս բան արաւ թէ չէ՝ իսկոյն բարկա՛ նում ու յանդիմանում եմ:

Հետաքրքրութիւնից Աւտուեայի նոյն-իսկ թերթերունքներն սկսեցին թարթափել:

— Բայց ինչ վատ բան է արել նա, — շատապով վրայ բերեց պառաւը:

Սակայն Պաւըն անփոյթ կերպով թափ առւեց թել:

— Զնշին բանե՞ր, — պատասխանեց նա. — կուռել է Ուկեանայի հետ բանջարանոյում. երեկ չէ առաջին օրը վաղ վեր կենալ չէր ուղում, երեխային ծեծեց առանց որիէ պատճառի: Արդէն նրա բնութիւնն այդպէս է — իրան զսպել չփիտէ: Այս ամենի համար ես լաւ յանդիմանեցի նրան... նա էլ լաց եղաւ այնպէս, որ Աստուած ազատէ: իսկ ինձ համար աւելի վաս բան չկայ, բան նրա լացը տիսնել: Բայց հիմա այդ չի օգնի. ինչքան էլ որ լաց լինի՝ ես իմ անելիքս պիտի անեմ... Ասենք, այսպէս երկար չի շարունակուի: Ճուտով առիթ էլ չի լինի նրա վրայ բզաւելու:

— Ինչու ես այդպէս կարծում, — հարցրեց Աւգուստիան: Այս գույքը անդամ է ինչու, — ծիծաղեց Պաւը. — հապա սուրբ աղօթքը, հապա աշխատանքը: Եթէ և աշխատանքն ե՛ աղօթքը չեն յաղթի շարին ուրեմն աշխարհի վերջն հեռու չէ: Բայց ինչպէս չեն յաղթի. կյալթեն, ճշմարիսէ Աստուած, կյաղթեն:

Նոյն օրն երեկոյեան Փրանկան նստած էր խըթճիթի դուան առաջ, Խոտաւանը գրկին: Հիմա նա նորից հազել էր գիւղական շորեր, բայց արդէն առանց զարդարանքի. ոչ հուլունքներ, ոչ մանեակ և ոչ զինդեր ունէր — ամեն ինչ ձեռքից գնացել էր նրա վերջին արկածների ժամանակ: Յանկապատի յետեկց երկում էր Փրանկայի ձեռքով մշակրւած բանջարանոցի թուլ ու նուազ կանաչը: Համեմատել անգամ չէր կարելի Ռւենանայի բանջարանոցի հետ: Այնտեղ ամեն մի բոյս կարծես պարծենում էր իւր ոյժով և առողջութեամբ, իսկ այստեղ թառումած բայսերն հաղի հազ երկում էին զետնի երեսին: Աշխատելով իրանց բանջարանոցներում՝ երկու կինը տեսնուում էին իրաք հետ ամեն օր և միանգամ Ռւենանան, վրդոված Փրանկայի անփոյթ աշխատանքից՝ անուանեց նրան «տիկին»: Փրանկան բարձրացրեց գլուխն և կծու կերպով պատասխանեց.

— Ի հարկէ, քեզ նման էշ գիւղացի շեմ: Այդ ժամանակ Ռւենանան վանդեց իւր բաժնից նստաւեանին, որ զանազան ձևի առարկաներ էր շինում երամեայ Մարիսկայի հետ: Պարզն ասած նա վերցրեց երեխային և շտապեց երկու բանջարանոց-

ները միմեանցից բաժանող ցանկապատի միւս կողմք:
նրա աշքերն աւելի վառւում էին արհամարհանքով,
քան բարկութեամբ. բայց նրա բերանից ոչ մի խօսք
դուրս չթռաւ, չնայելով որ Ֆրանկան կարկտի պէս
հայհոյանք ու ծանակ էր թափում նրա գլխին.

Փրանկան նստած էր մտածմունքների մէջ ընկըլ-
մած և ակամայ վեր թռաւ, երբ լսեց յետելից մի
խոպոտ ձայն.

— Յանոն չօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ...

Նա յետ նայեց և տեսաւ պառաւ մուրացիկ կնոջը,
որի աշքերն ուռած ու կարմրած էին:

— Մարցելա, — ալազակեց նա ուրախացած:

— Պաւը ասնը չէ, — խոպոտ շնչոցով հարցրեց
մուրացկանը՝ անկիսնի յետելից դուրս հանելով ցնցո-
տիներով փաթաթած գլուխը:

— 2է, չէ, երեք օրով գեան է գնացել, — շտապով
պատասխանեց Փրանկան և վազեց մուրացիկ կնոջն
հանդիպելու. — իսկ ես ի՞նչպէս սպասում էի քեզ, հար-
ցնում էի քո մասին բոլորից. . Բոլորն էլ ասում էին,
թէ չկայ Մարցելան, թէ ի՞նչպէս որ Զատկից առաջ
գնացել է՝ էլ չէ վերալարձել: Մենք արդէն կարծում
էինք, թէ դու մեռի ես:

Փրանկան ներս տարաւ հիւրին, նստեցրեց և դրեց
առաջը մի աման գետնախնձոր, աղ ու հաց:

— Կ'եր, սիրենիս, կ'եր, — ի՞նքում էր նա: — Ի՞նչ-
պէս լաւ եղաւ, որ դու եկար, թէ չէ այսաեղ ոչ ոք
չկայ, որի հետ կարելի լինէր երկու խօսք խօսել:

Բայց մուրացիկ կինն ոչինչ չէր ուզում ուտել և
միայն զննողաբար հետեւում էր Փրանկայի բոլոր շար-
ժումներին:

— Հըմ, — զարմացաւ նա. — դու այսաեղ առաջուայ
նման տանտիկնութիւն ես անում:

— Առաջուայ նման, — ինքնարաւալան կերպով պա-
տասխանեց Փրանկան: — Ինչ որ եղել է առաջ՝ նրա
հետքն անգամ չէ մնացել, կարծես թէ ոչինչ չէ էլ
պատահել:

— Իէ, պատմիր տեսնեմ ի՞նչ պատահեց քեզ, որ-
տեղ էիր ապրում, ի՞նչ էիր անում, ի՞նչպէս հաշտուե-
ցար Պաւի հետ, — ի՞նքում էր մուրացիկը:

Փրանկային երկու անգամ խնդրել պէտք չէր:
Նա ևս նստեց ու սկսեց պատմութիւնը: Երբ որ խօս-
քը հասաւ Պաւին՝ նրա աշքերը լցուեցան արտա-
սուքով, շրթունքները դողդողում էին: Մարցելան նմա-
նապէս լուրջ կերպարանք ստացաւ և խորասուզուեց
իւր ներքին մտքերի մէջ: Նրա մարմինն այդ րոպէ-
ին կարծես աւելի փոքրացաւ ու անճոռնացաւ:

— Բարի է նա, — ցածրաձայն շնչաց մուրացիկը:

— Բարի, — հաստատեց Փրանկան. — այդպիսի բարի
մարդ ամբողջ աշխարհում չես ճարի... նա մտածման
մէջ ընկաւ ու հառաչեց: Բայց գիտե՞ս ինչ, Մարցե-
լա, այսու ամինայնիւ հիմա այնպէս բարի չէ, ի՞նչ-
պէս առաջ:

— Անկարելի է:

— Էնց բանն էլ այդ է, որ կարելի է: Առաջ պա-
տահում էր, որ ես անում էի այն՝ ինչ որ ուզում էի:
Ուզում էր որեւէ բան անել տանը՝ անում էի, չէի ու-
զում՝ ոչ մի խօսք չէր ասում: Քաղցրաւենիք էր բե-
րում ինձ քաղաքից, բարձրացնում էր ձեռների վրայ՝
ի՞նչպէս երեխայի: Վերջը, երբ ես նրան ատեցի՝ շատ
բաներ քաշեց նա իմ երեսից, բայց էլի ոչ մի խօսք:

Լուսմ էր ինչպէս մեռած, կամ դրկում էր ու սկսում համոզել: «լոիր, լոիր, հանգստացիր»: Իսկ հիմա ո՞ր տեղից: Վեր է կենում ինքը զեռ լոյսը շրացուած և ինձ էլ վեր է կացնում: Խնդրես չխնդրես՝ մէկ է, քաշում, հանում է անկողնից: Յետոյ չոգեցնում է ազօթքի: Ազօթքներն էլ ինքն է կարդում... բայց դա ինչ կարգալ է, Աստուած ազատէ, իսկ և իսկ ու ամփավարի... Դեռ մի ազօթք չկարդացած՝ իմ զլուխս սկսում է պայոյտ գալ: Ազօթքից յետոյ անմիջապէս ստիպում է աշխատել, էս է կրակ արա, էս է կովր կթիր, էս է հաց թխիր... Մինչև անգամ տանից դուրս գնալիս պատուիրում է.—տես, Փրանկա, մինչև իմ գալս այս արա, այն արա: Իսկ եթէ չանես ու նա իմանայ՝ իսկոյն սկսում է յանդիմանել, մինչեւ անգամ անպատճել: Ի՞նչ անեմ, ամեն ինչ պատճուած եմ կտարել, թէպէտ և երբեմնապէս ես ինձանից ամաշում եմ, որ այդպիսի ստոր աշխատանքով եմ պարապում, Բայց դրանից՝ ոյժ էլ չունիմ, թոյլ եմ: Է՞հ, ասենք այդ ոչինչ: Ցաւս այն է, որ նա քարոզ է սկսում Աստծու, սատանայի, յաւիտենական տանձանքի և այլ այնպիսի բաների մասին... Հիմա ես նրա ստրակին եմ, ստրուկ հոգով ու մարմնով: Առողջութիւնս ձեռքից գնաց. Երեխայ ունիմ վղիս ու ինձ համար ուրիշ ելք, ուրիշ կեանք չկայ՝ բայց եթէ ապրել միշտ այս խրճիթում՝ և այս մարդու հետ: Երևի իմ բախտս այսպէս էր... Երկի չար ժամի եմ ես աշխարհ եկել:

Մարցելան տարաւ ու բերեց զլուխը: Տիւ հայութիւնը... տես թէ ինչպէտ խստացել է: Այնուամենայնիւ քախտաւոր ես դու, հոգիս, որ այդպիսի

մարդու ես հանդիպել: Ի՞նչ ևս հրամայում. ամեն ինչ ներել, ուրիշի երեխային մեծ ացնել հարազատ որդու նման—սա հանաք բան չէ, սիրելիս:

— Ես ինքս էլ գիտիմ, որ նա բարի է,— հառաշեց Փրանկան և երկու ձեռքով բռնեց գլուխը: — Հնց այդ բարութեան համար է, որ ես գերի եմ դարձել նորան:

— Օ՞հ, Տէր իմ Աստուած,— իսւպոտ ձայնով բացանչեց Մարցելան.— Ինչու երիտասարդ ժամանակս ես չհանդիպեցայ մի այդպիսի մարդու: Ինչու ես թառամեցայ, ինչպէս խորը գաշտում, կեանքս անցաւ առանց լոյսի, առանց ուրախութեան:

— Հա, քեզ համար ՚նեշա է այդպէս խօսել: — ընդհատեց նրան Փրանկան, — կեանքդդ անցրել, վերջացրել ես, համար ի՞նչ անէ նա, որ դեռ ապրել, ուրախանակ է ուզում:

Մարցելան պղտոր աշքերը սկեռեց ուզզակի իւր խօսակցի երեսին:

— Իսկ դու, սիրելիս, քանի տարեկան կլինիս:

— Տեսոն ընդպառաշին երեսոնկնեռթս կլրանայ, — մի տեսակ հպարտութեամբ պատասխանեց Փրանկան:

Մարցելան շարժեց զլուխը:

— Օ՞խ, դու էլ արդէն փոքր աղջիկ չես. շուտով դու էլ քառասունից կանցնես: Իսկ դու լսել ես, որ ասում են. «կնոջ գարը քառասոն տարին է»: Այդպէս ուրեմն սիրելիս:

— Թիւ, ինչպիսի վատ, ռամկական առած է: Եւ միթէ այդ ճշմարիտ է: Բայց ինչպէս դեռ իմ յետեից տղամարդիկ ման կգալին՝ եթէ ես առողջ լինէի և այսպիսի յետ ընկած անկիւնում չապրէի...

Կողիւկինց գաւթից ձայներ լսուհցան։ Փրան-
կան վաղեց պատուհանի մօտ և տեսաւ Ռւկեանային՝
կովը դէպի գոմը քշելիս; Ֆիլիպպին գերանդին՝ ու-
սին և Դանիլկային, որ մէկի հետ խօսում էր գար-
պասի բաց զոնից։

—Նայիր, Մարցելա, —շտապով շնչաց Փրանկան,
—մէկ նայիր, սիրելիս... ի՞նչպիսի տղամարդ է դար-
ձել Դանիլկան։

Մարցելայի ամբողջ գէմքը փայլեց նենդաւոր
ժպիտով։

—Երիխայ է գեռ, ի՞նչ ասել կուզէ... մի խօսքով
երեխայ։

—Այդ ոշինչ, որ ջանէլ է, —գրպուած շարունակեց
Փրանկան։ —բայց ի՞նչպէս գեղեցիկ է... ու վայելչա-
կազմ։ կարծես ազնուորդի լինի։ Տեսար դու րանը.
իսկ ես նրա վրայ ամենեկին ուշը չէի դարձնում մին-
չև հիմա։

Մարցելայի շրթունքների վրայ աւելի ու աւելի
բացայատ կիրառով թունալից ժպիտ էր խաղում, իսկ
ձայնն սկսում էր մեղմանալ այնպէս, որ կարծես թէ
մեղք էր հոսում։

—Կարելի է ուզում ես, որ ես ասեմ այդ երե-
խային, ինչ որ խօսեցիր նրա մասին, հա՞։ Այ թէ կու-
րախանայ։ Տէր իմ Աստուած, նրա մաքից անգամ չէ
անցնում, թէ մէկը կարող է հրապուրուել նրանով։

—Ասա, սիրելիս, ասա, իմ ոսկի, իմ գոհար։ Հե-
տաքըրական է իմանալ, թէ ի՞նչ կմտածէ նա և ի՞նչ
կասէ իմ մասին։

Այդ ժամանակ Ռւկեանան դուստ եկաւ գոմից
կովկիթը մի ձեռքին և մի փոքրիկ կճուճ միւս ձեռ-

քին։ Նրա վրայ թափուեցան չորս երեխայ։ Զորլոր-
դը նտաւեանն էր։ Ուլեանան կաթ տուեց բոլորին.
տուեց նաև նտաւեանն ին, թէ կուցէ քիչ, բայց և
այնպէս տուեց։ Յետոյ Ռւկեանան ու երեխաները ներս
մտան խրճիթը։

Փրանկան ուշք չգարձրեց այդ մանր տեսարա-
նի վրայ, զրազուած նոր մտքերով, որոնք այնպէս
անսպասելի կերպով ծագեցին նրա գլխում։ Արդէն
մթնում էր՝ երբ նա ձեռքը տարաւ ճակատին ու
ցածրածայն ասաց։

—Օ՞խ, Մարցելա, սիրելիս, ինչ-որ մի չար բան
է կատարում իմ մէջ... Լաւ չէ իմ կեանքս այս աշ-
խարհում։

—Ինչո՞ւ լաւ չէ։

—Ի՞նչ լաւ բան կարող է լինել։ —Փրանկան սկսեց
կոտրատել ձեռները։ —Գիտես ինչ, նա թէս բարի է,
բայց ինձ հետ, ինչպէս հարկն է, ոչ վարուել գիտէ,
ոչ խօսել՝ ինչպէս սիրում եմ ես։ Ման է գալիս կո-
պիտ շորերով և առ հասարակ մի տեսակ է... ինքս
էլ չգիտեմ թէ ի՞նչ տեսակ...։

Նա մի րոպէ կանգ առաւ։

—Ե՞, մի խօսքով գուեհիկ է. մի որևէ բարի մարդ
է, այսու ամենայնիւ գուեհիկ է, եշ գիւղացի։

Եւ արդէն ձայնը բոլորովին ցածրացնելով Փրան-
կան աւելացրեց։

—Ու բացի գրանից ի՞նչպէս ծեր է նա հիմա...
բոլորովին ծեր։

Քաղի և հնձի ժամանակն անցել էր: Զատ բան վոխուել էր երկու հարևան խրճիթի ընակիչների փոխադարձ յարաքերութիւնների մէջ: Մի անգամ առաւտեան Պաւլը գուրս եկաւ տանից, նայեց երկնքին ու կանչեց փեսային, որ այդ ժամանակ մի գիրկ ծղնօտ էր տանում յարդանոցը:

— Լսիր, Ֆիլիպպ, չուտափ խոտղ հաւաքիը մօտիկ դաշտից, թէ չէ կամ վաղը կամ միւս օր անձրև պիտի գայ Աստծու ողորմութեամբ, և ինչպէս նկատում եմ ես, քամուն նայելու՞ երկար ժամանակ:

Պալի գուշակութեանը Ֆիլիպպը հաւատում էր
անպայման, ուստի և անյապաղ սկսեց սայլը լծել,
իսկ Դանիլկային պատուիրեց շուտով պատրաստել
փոցիներն ու եղանները: Ուշեանան կմնայ տանը և
հարկաւոր եղած դէպքում մենակ էլ կկառավարէ
պարօմը: Հիմա գետը փոքրացել է և հազիւ հաղ գլո-
րում է իւը հանդաբտիկ ալիքները: Խսկ եթէ որեէ

առանձին դէպք պատճի, եթէ հարկաւոր լինի երկ-
ձի կառք անց կացնել կամ ծանր ֆուրգօն՝ այն ժա-
մանակ Պաւլն էլ կարող է օգնել քրոջը. Նա մօտիկ
անդում պիտի ձուկ բռնէ, ուղիղ ափի մօտ:

Երբ ամեն ինչ պայմանաւորուած, վերջացած
էր և Փիլիպպը բոլորովին պատրաստ էր ճանապարհ
ընկնելու՝ Պալի յետեկից գուըս եկաւ Փրանկան և
յայտնեց, թէ ինքն էլ ուզում է գնալ դաշտը խոր
հաւաքելու։ Տանը ամեն ինչ որ հարկաւոր է՝ նա պա-
տրաստել է, կերակուր ամբողջ օրուայ համար եփել է,
կրվը կթել, հիմտ էլ կամնում է օգնել Փիլիպպին։
Փրանկան հագել էլ ձիւնի նման սպիտակ շապիկ,
կապոյտ շթեայ շրջազգեստ և վարդագոյն գոգնոց։
Սև մագերը դոյնդոյն թաշկինակի տակից անհնա-
զանգութեամբ թափուել էին ճակատի և ուսերի վրայ,
աշքերն ուրախ ծիծաղում էին, սպիտակ ատամները
փայլում։ Փիլիպպն սկզբում արհամարհանքով ծի-
ծաղեց.

— Ե՞ն, այդպիսի օգնութեան վրայ չար սատա-
նան միայն կարող է ուրախանալ:

Բայց Դանիլկան պաշտպանեց Փլանկային։

—Թաղ գայ. ինչքան էլ որ շինե՞ն երեքով աւելի
շուտ կպօծնի զործը:

—Թող գայ, ծոյց տուէք նորան մի-երկու անգամ,
թէ լնչալէս պիտի բանեցնել փոցիսը, երբորդ անգա-
մին ինքն էլ կհասկանայ. մի ուրիշ անգամ էլ կարող
է օգնել, —աւելացրեց Պալը:

Գանիլկան առաջ ընկաւ աւելի կարճ ճանապարհով գնալու: Փրանկան սկզբում նստեց Փիլիպպի հետ միասին, բայց հէնց որ սայլը շարժուեց տեղից՝

վայր թւաւ վրայից ու վագեց Դանիլկայի յետեկց։
—Մենք ոտով աւելի շուտ տեղ կհասնինք, քան
դու սայլով, աղաղակեց նաև յետ նայելով։

Կերպառնալով տուն՝ Փիլիպպը զարմացած
պատմում էր կնոջը, թէ այդ փոփոխմիտ Փրանկան
բաւական յաջողութեամբ հաւաքում էր խոտը և յի-
րափ օգնեց իրանց մի քիչ։

—Եթէ նրա ծուլութիւնը չլինէր՝ ամեն ինչ կա-
րսղ էր անել, —վերջացրեց խօսքը Փիլիպպը։

—Եթէ ցանկանայ՝ ամեն ինչ կանէ, ճարպիկ է
շատ, —իւր կողմից աւելացրեց Դանիլկան, բերանը
կոխելով հացի ահագին պատառը և աչքի տակով նայ-
ելով Փրանկային, որ անդադար պատուաներ էր անում
իրանց զաւթում։ Դանիլկայի աշքերը փայլում էին
կատուի աչքի նման։

Այսպիսի դէպքիր սկսեցին կրկնուել յաճախ,
Փրանկան մանգաղն առած գնում էր Կողիւկենց ար-
տը ու թէպէտ չէր կարողանում Ուլեանայի նման
երկար ու անխոնջ հնձել—նա ոչ այնքան ոյժ ունէր,
ոչ հմտութիւն— այսու ամենայնիւ քիչ ու միշ օգնու-
թիւն հացնում էր։ Այն ժամանակ Փիլիպպը կամ
իւր գաշտի մի այլ մասն էր վարում, կամ մնում էր
պարօմի մօտ, իսկ Դանիլկան երկու կանանց հեա
միասին հնձում ու տուն էր կրում խուրձերը։ Փրան-
կան յաճախ նոտում էր սայլի վրայ, նրա կողքին, և
ապա կրկին վերադասնում դաշտը։ Թէկ երբեմնա-
պէս նա զանգաաւում էր շոգից և մէջքացալից, բայց
այդ հանգամանքն ամենենին արգելք չէր դառնում
նորան ուրախ, դիրաշարժ և գործունեայ լինելու։ Ու-
լեանային շարունակ անոյշ խօսքիր էր շոայլում նա,

անուանում էր ոտկի, գոհար, համբուրում ու գրկում
էր նրա երեխաներին, իսկ Դանիլկայի յետեկց ման
էր գալիս այնպէս՝ ինչպէս ճանճը մեղքի յետեկց։
Փրանկայի այսպիսի վարմունքի վրայ երկար ժամա-
նակ ոչ ոք ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում։ Ի՞նչ
զարմանալու բան կայ։ Դանիլկային ամենքն երեխայ
էին համարում։ Թէկ Փրանկան ինելքի է եկել, սկսել
է աշխատել ու այլիս չէ ժակում մարդկանց աշքե-
րը, այսու ամենայնիւ հին գժութիւնները մարդու գըլ-
խից հեշտ չեն դուրս գալիս։ Թէկ նա զրկեթէ պառաւ
է, բայց էլի երբեմնապէս յիմարութիւններ անելուց
չէ խուսափում։ Դանիլկան դեռ երեխայ է։ Սյ Փրան-
կան իսկ և իսկ նորան յարմար ընկեր է։ Դեռ լաւ է,
որ խելքի եկաւ, աշխատում է, օգնում է մարդկանց,
չէ շարանում ամենքի վրայ։ Ի՞նչ մի առանձին ու-
րախութիւն է ապրել վիուկի հետ, որպէս մօտիկ հա-
րեան։ Թող նա մի քիչ յիմարութիւն էլ անէ, միայն
թէ չյարձակուի մարդկանց վրայ։ Եւ Ուլեանան նո-
րից սկսեց քաղցր վարուել իւր հարսի հետ։ տեղն
եկած ժամանակ ինքն էլ օգնում էր նորան։ Երբեմն
հաց էր թիւում նրա համար, երբեմն լուսացն էր
տանում գետը ցայելու, երբեմն ջուր էր բերում, մի
աման իրան, մի աման Փրանկայի համար։ Այսպէս
յընթաց երեք երկար ամիսների այս մարդիկն ապ-
րեցին ծանր աշխատանքների մէջ՝ կատարեալ խաղա-
ղութեամբ, առանց որեէ կառկածով վրդովուելու։ Մեղ-
քի ու յանցանքի ամենափոքը ստուեր անգամ չերե-
ւեցաւ նրանց աշքին։ Ոչ մի մեղսալից միաք շխան-
գարեց նրանց խոր, անխուսվ քունն օրուայ աշխա-
տանքից յետոյ։ Պաւն այն ժամանակ ամենահեռա-

ևոր նաւարկութիւնները էր անում, իսկ երբ վերադառնում էր տուն՝ տեօնում էր Փրանկային աշխատելիս, ուրախ, հագած սպիտակ շապիկ և կապոյտ շրջազգեստ: Թէս նա յաճախ կոսիքա պատասխաններ էր տալիս Պաւլին, երբեմնապէս նոյն-իսկ ակնյայանի զգունքով դէն էր հրում իրանից, բայց Պաւլը վերագրում էր այդ սատանայական դայթակղութեան մնացորդին, որին դեռ չեն կարողացել յաղթահարել աղօթքներն ու բարի խորհուրդները: «Թողլինի այնպէս՝ ինչպէս ուզում է, միայն թէ կարգին պահէ իրան»—մտածում էր իւր մտքում Պաւլը, զրկում էր Խտաւեանին և մերձակայց քաղաքից բերած շաքարահացեր էր տալիս նորան: Ելեխայի հետ քանի գնում աւելի ու աւելի սերտ կապըում էր նա և ուշագրութիւն չէր գարձնում Փրանկայի տրաունչներին, մանաւանդ որ նա տրաունչից շուտով անցնում էր ուրախութեան ու սկսում ծիծաղել իւր արծաթահնչիւն, անհոգ ծիծաղով, որ այնքան դուր էր դալիս Պաւլին: Եւ Պաւլի աչքերի առջև տարածում էր անամպ երկինք, ու վրդովման ոչ մի հեաք անողամ չէր խանդգարում նրա խաղաղութիւնը:

Ցանկարծ մի երեկոյ, օգոստոս ամսին, Կողիւկինց խրճիթում զարհուրելի իրարանցում բարձրացաւ. յուեցան և երեխաների, և հասակաւոր մարդկանց ազաղակիներ: Փիլիպպը ծեծում էր եղբօրը: Մութն ընկնում էր արդէն: Ցայտնի չէ, թէ նրանդ և ինչպէս իմացաւ նա այն, որ առիթ դարձաւ ընտանեկան կուրի: Բայց այդ յայտնութիւնը տեղի ունեցաւ այնպիսի հանգամանքներում, այնպիսի մանրամասնութիւններով կցորդուած, որ ուժեղ, կոպիտ

գիւղացու հոգին հիմնովին տակն ու վրայ եղաւ: Երբէ Փիլիպպը մի առանձին նեղութիւն կամ վիրաւորանք չէր հասցըր կրտսեր եղբօրը, բայց հիմա կարելի էր կարծել, թէ նա խելագարուել է—այնպէս այլայլուել էր նրա դէմքը, այնպէս ծանրութեամբ իջնում էր նրա ուժեղ բառնցքը Պանիլկայի ուսերին: —Սոդմ ու Գոմմը,—աղաղակում էր նա. —չէ որ գրա համար երկնքից կայծակ կթափուի մեր գլխին: 2է որ նա համարեա հայրութիւն է արել քեզ, մանէ ածել ձեռքերի վրայ, խելք ու չնորհք է սովորեցրել: Իսկ դու այ թէ ինչպէս վճարեցիր նրա երախտիքը: Գու նրա կնոջ հետ... Աշխատել է հարկաւոր քեզ և ոչ թէ անառակիների յետեկց վաղել: Թէ դու ուզում ես Աստծու պատիթը կանչել մեր և մեր որդոց վրայ: Գներս այս տնից .. Լսում ես: Այլ ես քո ոտք այստեղ չինի: Դնա ուր որ ուզում ես, ողորմութիւն ինքրիք, զրպի հօր ծոցը գնա, միայն թէ գներս իմ խրճիթից, գներս, գներս...

Նա իւր ամբողջ սիժն հաւաքում էր, որպէսզի դուրս ձգէ Պանիլկային խրճիթի գոնից: Աւեանսն բարձրաձայն լացով կոտրատում էր ձեռները, երեխաներն աղաղակում էին: Պանիլկան ուղիղ գռանմօտ կարտղացաւ ճարպիկութեամբ դուրս պլծնել եղբօր ձեռներից և կարմրած ինչպէս կակաչ՝ վառուղ աչքերով, շապիկի ուսը պատառուած՝ բարկութեամբ աղաղակեց.

—Ի՞նչ իրաւոնք ունիս դուրս անել ինձ խրճիթից: Խրճիթը որքան որ քոնն է՝ նոյնքան էլ իմսէ: Մենք մի հօր որդիք ենք, կարծեմ:

—Բայց ովք է քեզ հայր եղել, —որոտաց Փիլիպպը,

Նորից յարձակուելով Դանիլկայի վրայ. — Ես եմ եղել
քո հայրդ, երբ դու որբ իմ զգիս մնացիր. Դրա հա-
մար ես քեզ կերակրեցի, մեծացրի, որ զու իսպառ
խայտառակ անես մեզ: Հիմա միտպ կըերես դու ինձ,
հիմա դու...»

Կոպիտ հայոցանքների հեղեղի հետ միասին Գա-
նիլկայի գլխին նորից թափուեց հարուածների կար-
կուալ: Ի զուր Ռւլեանան աշխատում էր բաժանել
նրանց իրարից, ի զուր Կուրտան, երկիւղից նստա-
րանի տակ թափնուած՝ ունում էր անընդհատ, ոչինչ
չէր օգնում:

Ցանկարծ դուռը բացուեց ու ներս մտաւ Պաւ-
լը: Գետից վերադանալիս նա լսեց, որ Կօզիկների
խրճիթում մի ինչ-որ վաս բան է կատարւում, և շտա-
պեց իմանալ, թէ բանն ինչնւմն է: Տեռներով եղ-
բօրը և անորոշ նախադպացմամբ գուշակելով մօտա-
րուտ փոթորիկը՝ Ռւլեանան ընկաւ հեկեկալով եղթօր
ուսները: Դանիլկան, հազիւագատուած Փիլիպպի ձեռ-
քից, դուրս թռաւ բաց արած դանից, իսկ ինքը Փի-
լիպպը, գգգուած մազերով, կատաղութիւնից այլան-
դակուած դէմքով դարձաւ Պաւլին և առանց ձայնը
ցածրացնելու, կոպիտ ու խիստ խօսքերով հաղորդեց
այն ամենը՝ ինչ որ պատահել էր վերջին ժամանակ:
Նրա պատմութիւնը տեսնց երկու-երեք բոպէ, և առաջ
քան Ռւլեանան կարողացաւ բարձրացնել յատակից
իւր արտասուալից դէմքն ու աղաղակել. «լոիր, լոիր,
ինչ ես անում, Փիլիպպ, լոիր»՝ Փիլիպպն արդէն հա-
զորդել էր բոլորն, ինչ որ գիտէր, իսկ Պաւլը դուրս
էր գնացել խրճիթից:

Պաւլը գնաց կտրուկ ճանապարհով և անցաւ

ցանկապատի վրայից, առանց ուշադրութիւն դարձնե-
լու բանջարեղինների մարգերի վրայ: Նա գունատ էր,
ինչպէս սպատան, իսկ աշքերը վառւում էին շարա-
գուշակ փայլով: Այն ամենը, ինչ որ մարդու մէջ յա-
րուցանում է կրքերի ու խանդատթեան մըրթիկ՝ մի
անգամից բռնկեց նրա ուղեղի, նեարգերի և այն գոր-
ծարանի մէջ, որ գտնուում է կրծքի ձախ կողմում և
կոչւում է սիրտ, ալեկոծեց նրա արիւնը, շփոթեց
միտքը: Արբածի նման երերալով նա անցաւ իւր տան
բակից և մի հարուածով բաց արաւ դուռը:

Խրճիթում, վառարանի առաջ, որի մէջ ճռճռան
ձայնով վառւում էր մի գիրկ տաշեղ, կանգնած էր
Փրանցիշկան: Կանգնած էր նա մի տեսակ կուչ եկած,
ձևոներն ամուր հուպ տուած կրծքին, կարմրատա-
կած այտերով, աշքերը գիտին խննարհած: Նա լսւ
գիտէր, թէ ինչ պատահեց Կօզիկների խրճիթում,
տեսաւ Պաւլին այնտեղ մտնելիս, տեսաւ նաև, թէ
ինչ կերպարանքով նա առւն է գառնում: Փրանկան
երկիւղի մէջ էր, բայց երկիւղից աւելի նա ամաշում
էր: Այն ամօթը, որ զգացել էր նա երեք արի աշ-
խարհի վրայ քաշ գալուց յետոյ այստեղ վերադաս-
նալիս՝ ոչինչ կարող էր համարուել՝ համեմատելով այս
քսովէիս նրան այրող ծանը ամօթի հետ: Հէնց արա
համար էլ նա կուչ էր եկել, իսկ այտերը վառւում
էին այնպիսի կրակով... Երբ Պաւլը կանգ առաւ շեմքի
վրայ՝ նա մեկնեց ձեռներն ամուռնուն և աղաղակեց.

— Դու նորանց մի հաւատար: Սուս է... նրանք
դիտմամբ են նուարում:

Առաջին անգամ կեանքի մէջ նա սուս էր խօ-
սում, բայց ոչ երկիւղից, այլ ամօթից, կեանքի կէսը

կտար նա, եթէ Պաւլը հաւատար նրա ստախօսութեանը: Բայց Պաւլն երկու մեծ քայլով մօտեցաւ նորան և առանց մի խօսք ասելու, մինչև անդամ առանց շունչ քաշելու, բռնեց նրան ուսերից իւր երկաթեայ մատներով: Գրանկան ճիշ արձակեց և ընկաւ գետին՝ մէջքին իջած ծանր բռունցքի հարուածից: Մի բռպէից յենայ, երբ նա ուշքի եկաւ, նրա ուսն արդէն աղատուել էր Պաւլի երկաթեայ ձեռներից: Խրճիթում ոչ որ չկար: Նոյնպիսի անհաստատ մեծ քայլերով Պաւլը գուլս գնաց, այլուող ճակատը դրեց խրճիթի արտաքին պատին ու սկսեց հեկեկալ: Բարկութեան և խանդութեան բռնկումն, որ այն տեղ, կիսալոյս խրճիթում, բարձրացրեց նրա ձեռքն իւր ուսներն ընկած կնոջ վրայ՝ այժմ հանդարտուեց և փոխարինուեց անասելի դառն հոգեմաշ ցաւով ու ափսոսանքով թէ իւր, թէ կնոջ և թէ մերձաւորի աղատութեան ու փրկութեան այն մեծ, սուբբ գործի համար, որ երկու անդամ այնպէս մօտ էր լուծմանը և որ այժմ կրկին կորաւ նրա աշքում մթութեան մէջ:

— Հկայ երեխ նրա համար ոչ աղատութիւն և ոչ փրկութիւն... Հկայ և ինձ համար երջանկութիւն այս աշխարհիս վրայ՝ ի՞նչ անեմ ես այժմ, ողորմած Աստուած, ի՞նչ անեմ:

նա իջաւ գետի ափը, նստեց մակոյկն և սկսեց աննպատակ առաջ գնալ, մեքենայարար ականջ դնելով յետեկից վազող հոռանքի միաձայն աղաղակին: Խոկ խրճիթում, Պաւլի գնալուց երկու ժամ յետոյ, բռլորովին այլ բան էր կատարւում:

— Հը, — շշնջում էր Գրանկան. — ծեծեց. տեսէր, քրիստոնէք, ծեծեց... նշանակում է շատ խանդու է,

որ ծեծում է: Դեռ ոչ որի մինչև հիմա չէ ծեծել, այնպէս հանդարտ է, այնպէս... իսկ ինձ ծեծել... թող երբէք չներէ նորան Աստուած՝ ինչպէս ես չեմ ների, — լուեցաւքից յետոյնրա սրաձայն ճշոցը: — 2Եմ ների... չեմ ների... մինչև մահ միտս կպահեմ այդ վիրաւորանքը... այդ խայտառակութիւնը... 0Շ, խայտառակալթիւն, խայտառակութիւն... Տէր իմ Աստուած, ի՞նչ օրի հասայ ես, ի՞նչ օրի միացի: Նրա համար ծնեց ինձ մայրս, որ գուհիկի բռունցքները պլար գոն մէջքիս վրայ: Լաւ ընտանիքից լինի մարդ, պապը սեփական աներ ունենայ, քեռու որդին պարսի նման ապրի... ու իրան հետ այսպէս վարուին: Թող Աստուած պատժէ նրան այս վիրաւորանքի համար, թող լաւ օր չտեսնի նա ոչ այս և ոչ միւս կեանքում... Գրանկան երբեմն անէծքներ էր կարդում, երբեմն լաց էր լինում, երբեմն կատաղած վեր էր թըռչում անկողնից, փետառում էր մազերը, բռունցքը խփում էր պատերին:

— Հերիք է, որքան ես նրա բարութիւնը վարձատրեցի... իմ ուսերովս ու խայտառակութեամբս վարձատրեցի: Այ նրա համար, որ նա այնշափ բարի էր գէպի ինձ, ես ամաշեցի... այնպէս ամաշեցի, որ ամօթից ուզում էի աւելի շուտ գետինը մանել, քան նրա երեսը նայել: Բայց հիմա ես ոչնչից չեմ ամաշում, ոչնչից, ոչնչից: Եթէ նա կարող է ինձ ծեծել եւ կարող եմ անել այն՝ ի՞նչ որ սիրաս կուզէ: Եթէ չափսոսայի Քանիլկային, այս բռպէին կփախչէի և գուցէ փախչիմ էլ, Աստուած վկայ կփախչիմ:

— Հապա Խտաւեանը, — լուեցաւ անկիւնից մէկի կոպիտ ու խոպոտ ձայնը:

— Թող նրան էլ գրողը տանի, թող բոլորին էլ տանի գրողը,—զայրացած աղաղակեց մահճակալի վրայ պատկած կինը, բայց իսկոյն ձայնը կտրեց և մի բոպէից յետոյ՝ անվճռողաբար աւելացրեց.—Հը, ինչ կինի որ... այստեղ կթողնեմ:

Երեխան որ քնում էր նրա ոտների մօտ՝ սկսեց շարժուել: Փրանկայի տատանմունքն աւելանում էր: —Հա, հա, —մըմնջաց նա.—ոչ այստեղ կարելի է թողնել, ոչ տանել: Բացի գրանից ափսոսում եմ և Դանիկային... Ա՛խ, եթէ իմանայիր, Մարցելա, թէ ինչպէս սիրում եմ ես նրան, ինչպէս դուրեկան է նա: Դու նրան չտեսար այստեղ գալիս, հը, չտեսար: —Ի՞նչպէս չտեսայ, տեսայ: Դիտմամբ մտայ նրանց տունը, որ իմանամ ինչ վիճակի մէջ է խեղճը: —Ե՛, յետոյ, յետոյ ինչ, —շնջաց Փրանկան: —Ասաց նա քեզ որիէ բան, ոչինչ չպատուիրեց քեզ ինձ հաղորդելու:

—Ոչինչ չասաց նա ինձ և քեզ էլ հաղորդելու ոչինչ չպատուիրեց: Յայտնի բան է, երեխայ է: Եղբայրը ծեծել է—նա էլ նստած լաց է լինում. ուրիշ ինչ պիտի անէ:

Փրանկան մի-երկու անգամ յոգոց քաշեց:

—Այն, —նկատեց Փրանկան, —նա էլ գոեհիկ է, բայց այնպէս չէ, ինչպէս միւսները. ջահէլ, սիրուն ու ռամկի կոպատութիւնները դեռ չէ սովորել...

—Դու առաջ միւսնոյն խօսքերը Պաւլի մասին էիր առում, թէ նա նոյնպէս գոեհիկ է, բայց այնպէս չէ, ինչպէս միւսները:

—Թող Սստուած պատժէ նրան զրա համար, որ ինձ այնպէս խաբեց: Առաջ բարի ու քաղաքավարի ձեա-

ցաւ, իսկ երբ որ տեղն եկաւ՝ դուքս եկաւ որ... եթէ եռ այն ժամանակ խելքս կորցրած չլինէի՝ հիմա Դանիկայի հետ կամուսնանայի:

Մարցելան մինչև անգամ ճիշ արձակեց զարմանքից:

—Եմ սիրունիկ, մէկ մտածիր, թէ ինչ ես առում. նա չէ որ երեխայ է, քեզ հետ համեմատելով: Դու նորան մայր կարող ես լինել: Ի՞նչ է մտածել: Ե՛, գրողը ոչ տանի քեզ. քառասուն տարեկան ժամանակ ուզում է այդպիսի ծզկեր երեխայի հետ ամուսնանալ: Փրանկան վոզք ինչ նեղացաւ և ասաց մի աեսակ դժբութեամբ.

—Ե՛, ինչ կայ որ ես նրանից մեծ եմ: Ես տեսել եմ մի տիկին, զեւ ինձանից էլ հասակաւոր, ամուսնացած ջահէլ մարդու հետ. ու ինչպէս մարդը պար էր գալիս նրա առաջ և կատարում նրա բոլոր քմահաճութիւնները: Օ՛խ, օխ, օխ. ինչ չէ պատահում աշխարհում... ինչ բախտ որ մարդու ճակատին գրուած է՝ այն պիտի կատարուի: Ա՛յ, ինձ երկի վիճակուած է մաշել ամբողջ կեանքս այդ արիւնաբրու մարդու, այդ աւազակի հետ:—Նա վեր թռաւ, նստեց անկողնի վրայ և բարակ մատները կոխեց խիտ մաղերի մէջ: Այժմ նրա ձայնն արտայայտում էր ակնյայտնի, անզուսպ ով ու չարութիւն:

—Ես առաջ էլ չէի սիրում նրան... նա մի էշ է, մի արջ, ձանձրալի՛, ծեր... բայց հիմա, երբ որ համարձակուեց ձեռք բարձրացնել ինձ վրայ՝ հարիւր անգամ աւելի ատեցի նրան: Աստուած իմ, այնպէս եմ առում, որ կարծես ինքս պատրաստ եմ կախուել սրտիս մաղձից:

Կամաց, — վախեցած շշնջաց Մարցելան. — մի գուցէ, Աստուած ազատէ, գայ ու լսէ...»

— 2ի գայ, չի գայ: Սատանէքն ամբողջ գիշեր պիտի ման ածեն նրան գիտի վրայ: Ես լաւ գիտեմ նրա սովորութիւնները: Եթէ նոյն-իսկ լսէ էլ՝ ինչ պիտի անէ: Ես ինքս էլ երեսին կասեմ: Թող նա իմանայ, թէ ինչ է նշանակում վիրաւորել լաւ ընտանիքի աղջրկան... Ո՞հ, Տէր Աստուած, ինչպէս գլուխս սկսեց ցաւել: Գնա, խնդրեմ, թրջիր ժաշկինակը սառը ջրի մէջ և տուր ինձ:

Մի քանի օր Փրանկան ման էր գալիս փաթաթած գլխով: Նա սաստիկ նիհարել էր, գեղնել, անկողնից վեր կենալիս զողողում էր ջերմութի նման և միայն բարկութեան բոնկումների ժամանակ դգում էր իւր մէջ նախկին ոյժն ու ճարպիկութիւնը: Այս հիւանդութիւնը, որի առաջին նշաններն երևացել էին դեռ նրա մանկական հասակում, որ հետզհետէ զարգանում էր նրա փոթորկալից երիտասարդական կեանքի ժամանակ՝ այժմ տիրել էր համարեա ամբողջ մարմնին: Նրա հիւանդութիւնը այն տարօրինակ խորհրդաւոր հիւանդութիւններիցն էր, որոնք ծնանում են մարդու հետ միասին, և կամ ոչնչանում են մարդու մթնոլորտի մէջ կամ զարպանում ու վերջնականապէս ճնշում են մարդու խելքն ու կամքը՝ մեղքի և չքարորութեան փտած մթնոլորտում: Փրանկայի խելքն ու կամքը գործում էին նախկին ուժով, բայց ուղղուած էին բացառապէս դէպի մի կողմ: Նա մի բանի մասին էր մտածում միայն, թէ ինչպէս իրան զարհութելի կերպով ու անարդարութեամբ վիրաւորեցին, ստորացրին, թէ ինչպէս անէ, որ կամ այս կամ

այլ կերպ վրէժինդիր լինի կրած վիրաւորանքի համար, որ ինչպէս էլ լինի՝ թշնամիների աշքը հանէ: Բայց վրէժինդպութիւնից աւելի նա ձգտում էր ազատութեան, լիակատար, անսահման, վայրենի ազատութեան: Մէկից կախումն ունենալը ճնշում էր նրան, անսահմելի էր նրա համար, և եթէ տանում էլ էր՝ վայան տանելուն — տրտունչով ու հայրուանքով. իսկ հիմա գա ուղղակի նրա ոյժից բարձր էր: Նրա սովորական անհամբերութիւնը, որ ժամանակ առ ժամանակ երևան էր գալիս՝ այժմ փոխարինուել էր անընդհատ մաշող անհանգստութեամբ, տրտունջը դարձել էր ճիշ: Այն արգելքները, որոնց նա պիտի յաղթէր Գանիլկայի հետ ակնսուելու համար, կատաղութեան էին հասցնում այդ կողջը, որ սովոր չէր ի նկատ առնել հասարակական կենցաղպարութեան մանր պահանջները. իսկ լիշողութիւնը Պաւլից կրած ծեծի մասին՝ վերին աստիճանի բորբոքում էր նրա առանց այն էլ շափազանցացրած հասկացողութիւնն երկուսի դիրքի տարրերութեան վերաբերմամբ:

Գեանի նեղ շերափի վրայ, որ բաժանում էր մօտիկ ազգականների աները միմեանցից՝ ամենայն օր վրդովեցուցիչ տեսարաններ էին տեղի ունենում: Հանդարս և սառնարիւն Ռւկեանան իւր կողմից սաստիկ կատաղել էր հարսի վրայ, որին չէր կարողանում ներել ոչ եղբօր դժբախտութիւնը, ոչ նրա մշտական հայնոյաները: Փրանկայի ամբողջ էութիւնն Ռւկեանայի աշքում երեսում էր որպէս ցեխի մի կոյա՛ թթխուած ու ամբողջացրած մի ինչ-որ մեղսալից շաղանով: Դաստիարակուած պալենական գաղափարներով բարոյականութեան վերաբերմամբ՝ Ռւկեանան բնորո-

շում էր ֆրանկայի սիրահարական տենչանքներն երկու խօսքով—անբարոյականութիւն ու Սողոմ-Գոմոր, միևնուն ժամանակ կարմը ում էր աղջկայ նման ու նոդկանքով թքում դէպի մի կողմ: Ուզիշ նկատմամբ նա սաստիկ վախենում էր իւր հարեանուհուց: Ա՞վ գիտէ, այդ կիսախելագարն ամեն բանի ընդունակ է, կարու է այրել խրճիթը, կարող է անմեղ երեխայի պարանցն ոլորել: Եւ միթէ նա ինքը չասաց այդ բացարձակաբար: Միթէ առաւօտեան, այն արժանայիշատակ երեկոյից յետոյ, դուրս վագելով գաւիթը, չէր սպառնում նա Փիլիպպին և Ուլեանային, թէ կայրէ նրանց խրճիթը, իբր այն պատճառով, որ նրանք զբարտել են իրան մարդու առաջ, թէ նրանց շնորհիւ ինքը, ֆրանկան, ազնուատոհմ ծնողների աղջիկը, ծեծ է կերել գուեհիկի ձեռքից: Այդ գեռ ոչ բնչ: Մի ուրիշ անգամ նա, տեսնելով հետու կանգնած ֆանիլկային՝ սկսեց վազել նրա յետեից, ճանապարհին վայր ձգեց Մարիսկային և երբ երեխան, ընկնելիս, բռնեց նրա շրջազգեստի փէշերից՝ ֆրանկան այնպէս շպատեց նրան, որ աղջիկն ահապին ուժով դիպու ցանկապատին: կապոյա նշանները դեռ մինչեւ հիմա չեն անցել: Այս ժամանակ Փիլիպպին և Ուլեանան ընկան նրա յետեից, ուղում էին բռնել ու ծեծել, բայց նա վախաւ, մտաւ տուն և դուրս փակեց: Երկրորդ օրը տեսնելով տալոջը՝ ֆրանկան ոչ մի խօսքով չպատասխանեց նրա հայնոյանիքներին: վեր առաւ շտապով կացինն և վազեց դէպի վայր, գետի ափը:

—Աստուած տայ, խեղդուի, —առաց Փիլիպպը:

Բայց ֆրանկան միտք չունէր խեղդուելու: Մը տնելով ջուրը մինչեւ ծնկները՝ սկսեց կացին ուժեւ-

հարուածներ հասցնել պարօմին: Նիհար, որպէս ատշեզ, գեղին, որպէս մեղրամոմ, թաց շորով գլուխը վաթաթած՝ նա այժմ աղամարդու չափ զօրեղ էր. տաշեղները բաղմութեամբ այս ու այն կողմն էին թըռչում նրա հարուածներից: Բարեբախտաբար Պաւլն այս անգամ մօտիկ աեղում էր ձուկ բռնում: Նա շտապեց, եկաւ կնոջ մօտ, բարձրացրեց նրան սարն և փակեց տան մէջ: Նա մինչեւ անգամ ծածկեց պատուանը փսիաթով և դրսից նեցուկ յարմարեցրեց, որպէսզի ֆրանկան չկարողանայ դուրս գալ: Պաւլի հետանալուց յետոյ Փիլիպպը կնոջ իննդրանիքով կամաց մօտեցաւ պատուանին, յետ գարձրեց փսիաթի ծայրը և զգուշութեամբ ներս նայեց: Ֆրանկան նստած էր անկիւնում, երկու ձեռքսվ գլուխը բռնած, և ջղաձգաբար հեկեկում էր:

—Թա՞ղ լաց լինի. Աստուած տայ, հոգին դուրս գայ լաց լինելով, —քննթինթաց քթի տակ Փիլիպպը:

Ուկեանան լսեց ամուսնու պատմութիւնը, փոքր ինչ մտածեց, հասաչեց և ուղում էր տուն վնալ, իբր յանկարծ նրա հայեացքն ընկաւ Խտաւեանի վրայ: Մի ժամ առաջ նա հայնոյել էր երեխային և դուրս արել իրանց գաւթից: Այժմ Խտաւեանը ախուր նրաւած էր Պաւլի տան գաւթի առաջ:

—Արի ինձ մօտ, —կանչեց նրան Ուլեանան և փաղաքշաբար չոյելով աղայի գլուխը՝ ուղարկեց խաղալու իւր երեխաների հետ: Չնայելով այն ատելութեանն ու զգուանքին, որ նա տածում էր դէպի ֆրանկան՝ Աստծու արեկից զրկուած ու մութ սենեակում փակուած կնոջ պատկերը տիսուր մտածմունքներ զարթեցրեց Ուլեանայի մէջ: Նա սկսեց կարեկ-

ցել այդ դժբախտ, կիսախելազար կնոջն, և կարեկ-
ցութիւնն արտապայտուեց փաղաքշանքի ձեռվ դէպի
նրա երեխան:

Նոյն օրն երեկոյեան՝ Պաւլը գետի ափին զրոյց
էր անում Աւգոտեաքի հետ; Նա մաշուած, համարեա
հիւանդի կերպարանք ունէր. մէջքը ծռուել էր, աչ-
քերը տրամութեամբ գետին էին ուղղուած:

—Ի՞նչ անեմ, ողորմած Ասաուած, ինչ անեմ,
—ցածրաձայն ասաց Պաւլը: Աւգոտեան կանգնած
էր նրա առաջ, լծակն ուսին, որի ծայլերին երկու
ջրամաններ էին տատանում: Ի՞նչ պատասխան տար
Պաւին—ինքն էլ չգիտէր: Ամբողջ գիւղը խօսում է
քիչ առաջ պատահած դէպքերի մասին և ոչ չէ
գալիս որևէ զբական որոշման: Պաւլը հասկացաւ, որ
աւելորդ է այլևս թագցնել իւր դժբախտութիւնը.
առանց զրան էլ ամենքը գիտեն:

—Ի՞նչ կարող եմ անել,—տխուր-տրտում ասաց
Պաւլը:

Նրանց շուրջը լուսութիւն էր տիրում. միայն
ջուրն անընդհատ ծփանգով խփում էր աւագոտ ա-
փին և գիւղից հասնում էր անսառնների հեռաւոր
բառանչոցի ձայնը: Աւգոտեան ձեռքը դրեց այտին,
լոեց մի ըսպէ և եռանդով բացագանչեց.

—Ծեծիր, Պաւլ, ծեծիր առանց խնայելու: Ծե-
ծիր ամեն բանի համար, և չարութեան, և' անսառա-
կութեան, և' անկարգ կեանք վարելու համար: Քաղցը
վարմունքը չօգնեց, սուրբ աղօթքը չօգնեց, աշխա-
տանքը չօգնեց. կարելի է ծեծն օգնէ: Կարելի է
վախենայ, կարելի է հարկաւոր է ահ ձգել նրա սիր-
տը: Երեխ ուրիշ ճար չկայ. ծեծիր:

—Երեխ ուրիշ ճար չկայ,—մեքենայաբար կրկնեց
Պաւլն և յանկարծ ձեռներն իրար խփեց: Ի՞նչ անեմ,
եթէ նա ինձ միայն դժբախտացնէր, էլի ոչինչ... բայց
ես նրանց վրայ եմ ցաւում... Նրանք ինչու պիտի
տանեն կնոջս հայհոյանքները: Թէ փող տալ, ամեն
ինչ տալ նորան ու տանից գուրս անել: Գուցէ ես այդ-
պէս էլ անէի. հիմա կարծես չեմ էլ սիրում նրան...
բայց այսու ամենայնիւ սիրսա չէ տանում ճանապարհ
գնել նրան դէպի աշխարհի չօրս կողմը, դէպի կո-
րուստ: Եւ միենոյն ժամանակ վախենում եմ մեղք ա-
նել հոգուս: Սուրբ սեղանի առաջ երդուել եմ՝ չթող-
նել նրան իմ ամբողջ կեանքում: Այսպէս էլ վատ է,
այնպէս էլ. որպէս ուղում ես, նայիր. ինչ անեմ:
—Ծեծիր,—կրկնեց Աւտողեան:

—Օ՛խ, այդ ծեծն հէնց ինձ համար:

—Նրա փրկութեան համար. գուցէ վախենայ և
խելքի գայ...

—Նրա փրկութեան համար... գուցէ և խելքի գայ,
—աշքերը գետնից չրարձրացնելով կրկնեց Պաւլը:

Մի ժամից յետոյ նա մատ տուն, չօշափելով
գտաւ լապտերը, կրակ վառեց և նայեց չօրս կողմը:

—Քրանկա, հաց բեր ուտելու. լոռեմ ես, շնու,
Ժաժ արի:

Նրա ձայնը խիստ ու կոպիտ էր հնչում: Քրան-
կան դուրս թռաւ իւր անկիսնից և արագ-արագ թափ
տալով թերեն, աղաղակեց.

—Խոկ դու մի համարձակուիր գռեհիկ լեզուովդ
խօսել ինձ հետ. մի համարձակուիր և հրամաններ
տալ: Ես քո ծառադ չեմ: Ես թէկ գժուեցի ու քեզ
հետ ամուսնացայ, այսու ամնայնիւ քեզ հետ համե-

մատելով ևս տիկին եմ, այն տիկին։ Դու պիտի ինձ ծառայես, աչ թէ ես քեզ։

Փրանկան խօսում էր հրկար։ Նա կորցրել էր իբան սրաի շարութիւնից՝ քանի մի ժամ խրճիթում փակուած մնալուց յետոյ։ Պաւլը լուռ լսեց նրան և կըկնեց։

— չաց քեզ։

— Ոչինչ չունիմ ևս քեզ համար, — կրկին աղաղակեց Փրանկան։

— Այս բովէիս պիտի պատրաստվինի, — բարձրացրեց ձայնը Պաւլը։

Փրանկան ինքն էր քաղցածացել, արդեօք ուղում էր տաքանալ կրակի առաջ, միայն թէ բարկացած գէմքով նա փայտ բերեց բակից և փառարանը վառեց։ Երբ Պաւլը տեսաւ, որ Փրանկան ջուր ու կորկոտ ածեց ամանի մէջ՝ մօտ քաշեց գիրքն և բաց արաւ միջին երեսներից մէկը։ Նա ուղղակի ուղում էր գէթ որկէ կերպով հեռու վանել իրանից այն մտքերը, որսնք ոչ մի բովէ դադար չէին տալիս նորան։

— «Թող ար-տասուեմ իմ մեղ-քե-րի վրայ» — կակաղելով իւրաքանչիւր խօսքի վրայ կարդում էր Պաւլը։

Բոցավառուող վառարանի առաջ լսուեցաւ բարձրածայն ծիծաղ։

— Այ քեզ ընթերցանութիւն, այ քեզ հիանալի ընթերցանութիւն։ Խօսյն երեսում է կրթուած մտքը։ Փայտ կրել կվայելէ քեզ, գիւղացնւ գլուխ, և ոչ թէ գիրք կարգալ։

— «Թող զըս-պիմ կըս-քերս, կըս-քերս» — շաբունակում էր Պաւլը, չբարձրացնելով խոնարհած զլուխը։

— Դէ, շնուր կվերջացնես, — աղաղակեց Փրանկան։

Եւելի լաւ է գորաի կոկոռոցը լսել, քան քո ընթերցանութիւնը։ Սա էլ կարգալ է ուզում, ցանկութիւնն եկել է։

Մի փոքրիկ գողգոջուն ձեռք խլեց գիրքը Պաւլի քթի տակից։

— Քո գիրքը չէ, իմս է, — հնչեց Պաւլի ականջի մօտ մի կտրուկ ձայն։ Համարձակուիս ձեսք տալ իմ սեփականութեանը։ Ուզենամ վասել գիրքը՝ կվառեմ։ Միւս կեանքում սատանաները կլարդան այն։

— Փրանկա, տնիւր, լսնեմ ես, կծեծ եմ, — հուլդ տուած տամների միջից խօսեց Պաւլը։ Ակներեկ էր, որ նա հազիւ կարգանում էր զսպել բարկութիւնը, արտաքուստ հանդարա, բայց ներքուստ կրակու մարդու բարկութիւնը։

— Ճեծ իր, իսկ ես կվառեմ գիրքը։

Փրանկան վրայ բերեց թէր՝ գիրքը կրակի մէջ ձգելու, բայց յանկարծ դպաց, որ մի երկաթեայ օղակ փաթաթուեց նրա ձեռքին։ Պաւլը խլեց գիրքը կնոջ ձեռքից և գունատ, ինչպէս կիր՝ հազիւ շնուշ քաշելով ընկաւ նորարանի վրայ։

— Դժո՞իք, դժո՞իք, կատարեալ դժոփը, — ցած բացայն ասաց նա։

Այս անգամ Պաւլը չծեծեց կնոջը. ընդհակառին, սկսեց համոզել, շփոթելով խօսքերն և որոնելով գարձուածներ։

— Փրանկա, ուշքի արի, ի սէր Աստծու, ուշքի արի. հոգուգ մեղքացիր... Յիշում ես, այն ժամանակ... գերեզմանատանիը... զու երգուեցիր ինձ... և յետոյ երկրորդ անգամ երգուեցիր... եկեղեցում... չէ որ ես քեզ ոչ մի վատութիւն չեմ արել... ինչու

համար ես ինձ տանջում։ Ինչու ինքդ քո ձեռքովք
քեզ համար գերեզման ես փորում։

Փրանկան լուռ էր. զողոջուն ձեռքով նա խառ-
նում էր կերակուրք։ Նրա դէմքի վրայ, որ լուսաւոր-
ուած էր կրակի կարմրագոյն արտափալմամբ՝ նկա-
տելի էին զանազանակերպ մտքերի տեսակ-տեսակ
արտայայտութիւններ։ Նրա հոգին տանջող ֆուրիա-
ները սկսում էին կարծես հանգստանալ՝ երբ Պաւլն
ասաց. «Հէ՞ որ ես քեզ ոչ մի վատութիւն չեմ արել,
ինչու համար ես տանջում ինձ»։ Փրանկայի այտերը
կարմրեցին և աշքերը խոնարհեցան դէպի զետին։
Թուռմ էր թէ ամօթը կրկին բարձրացրեց իւր ճայնը
նրա սրտում։ Այդ բռակէին դուռը բացուեցաւ և շեմքի
վրայ երեաց Խտաւեանն՝ Ուլեանայի հետ միասին։

—Վեր առ լակոտիդ, —արհամարհանքով ու կոպ-
տաբար բղաւեց Ուլեանան. —ինքդ էլ կարող էիր
մտիկ անել։ Եթէ ես չինէի՝ նրանից հիմա բուռն
ոսկոր էր մնացել։ Վազում է ճանապարհի վրայ...
հազիւ դուրս քաշեցի սայլի տակից... Ասել չէ ուզում,
շատ լաւ մայր ես։ Իսկ Սոլոմ-Գոմոր։

Նա շառաշմամբ դուռը վրայ քաշեց։ Վախեցած
Խտաւեանը լաց եղաւ։ Փրանկան նորից վառուած
աշքերով, նորից բանկած ատելութեամբ վագեց իւր
թշնամու յետեց, որի շնորհիւ նա ստիպուած էր
բաժանուել Փանիլկայից և բացի դրանից ծեծ ուտել
ամուսնուց։

—Կապանեմ, —աղաղակեց նա, — Աստուած վկայ,
կսպանեմ... կրոնեմ բկից ու շան պէս կսատկացնեմ։

Ակներե էր, որ Փրանկան կատակ չէր անում, և
եթէ հասնէր նա Ուլեանային... բայց յանկարծ նա

զգաց, որ ուսը կրկին բռնուեցաւ երկաթեայ աքցա-
նով, և ճշալով նստեց գեանին։ Պաւլի միւս ձեռքը
քանի մի անգամ բարձրացաւ և ծանրութեամբ իջաւ
ոտների ընկած կնոջ մէջքին։

—Զես սպանի, —խուլ ձայնով շնչաց նա՝ հուզ
տուած ատամների միջից։ Սուաջ ես քեզ... Զարչա-
ռիք, զզչա, իմերդ վլուխոց հաւաքիլ. չարչարուիթ
մեղքերիդ համար։

Վերջապէս ամեն ինչ լոեց—և կնոջ սրածայն
աղաղակիր, և վախեցած երեխայի լացը։ Պաւլն ամ-
բողջապէս գունատուած, քրտնաթաթախ երեսով,
բարձր բարձրացող կրծքով, զուրս գնաց իրձիթից,
նստեց ու ծածկեց դէմքը ձեռներով։ Երկար նստած
էր նա մի կողմից միւս կողմը տատանուելով, ցաւով
ու կսկիծով լցուած։ Վերջապէս կարծես նա մի բան
միտքը բերեց, վեր կացաւ, մտաւ խրճիթը։ Ի՞նչ եղաւ
արդեօք երեխան։ Նա չորս կողմը նայեց։ Փրանկան
ոչ մի տեղ չէր երեսում։ Նա մի անկիւնում թագ էր
կացել. բայց Խտաւեանը նստած էր վառարանի առաջ
և փորձում էր տուն շինել տաշեղներից, շարունակ
քնաթաթախ աշքերը ձգելով խաշիլի կճուճի վրայ։
Պաւլին տեսնելով՝ նա վայր ձգեց ձեռքից տաշեղներն
ու ցաւալի ճայնով աղաղակեց։

—Ճայրիկ, քաղցած եմ։

Խաշիլը դեռ պատրաստ չէր։ Պաւլը մի կտոր
հաց կարեց երեխայի համար և նստեցրեց նրան ան-
կողնին։

—Ուտես պլծնես թէ չէ պառկիր ու քնիլ, —ասաց
նա կրանալով դէպի երեխան։

Խրճիթի ամենամութ անկիւնից, ուր սովորա-

բար պահուում էին ձկնորսական գործիքնելը՝ լսուեցաւ զայրացած ձայն:

— Իմ երեխային մի ձեռք տար, լսում ես, Դա իմ երեխան է, պարոնի տղայ է... իսկ ուռ աւազակ ես, արինաբրու... Գուեհիկ, անարդ գուեհիկ. լսում ես:
Պաւին առանց որևէ խօսք ասելու հանգըրեց լավտերն ու կրկին զուրս զնաց խրճիթից:

Անց կացաւ մի քանի օր ու եկաւ այն երեկոն, երբ երկու համեան խրճիթի ընակիշներն եկան այն համոզման՝ թէ Փրանկան վերջնականապէս խելազարուել է: Կողիւկների համար աւելի զգուելի ու զարուորելի էր այդ համոզումն, որովհետև նրանք լաւ գիտէին Փրանկայի խելագարութեան բուն պատճառը, երեկ մութն ընկնելու ժամանակ Դանիլկան գժինման տուն վազից ու համարեա լաց լինելով՝ աղաղակեց.

— Ի՞նչ անեմ ես, յիտոյ էիր պատիժն իմ գլխին կլթափուի: Կաշում է... ձիւթի պէս... Այսօր էլ կան էր եկել... վաժաթեում է .. խնդրում է...

— Իսկ գռն ինչ արիք, — հարցրեց Փիլիպպը, — մի բռապէ գագարեցնելով կոտրատուած տափանի նորոգումն,

— Վակոթին տուի ու փախայ, — պատասխանեց Դանիլկան:

— Սուտ շես ասում:

— Աստուած վկայ:

— Հը՛, մտիկ արա, եթէ մի բան նկատեմ՝ կաշիդ կրերթեմ:

Ուկեանան հայհոյական խօսք ասաց ու արհամարհանքով թքեց դէպի մի կօղմ:

Դանիլկան ճշմարիտ էր ասում: Փրանկայի գըլիսում մեխի նման ցցուել էր Դանիլկայի հետ զադ-

տնի տեսնուելու միտքն և վերին աստիճանի բարբոքել նրա արիւնը: Այսահեղ սէրը չէր գլխաւոր դեր խաղացողը, այլ ցանկութիւնն իրան ասածն անելու, վրէժինդիր լինելու բոլորին, մանաւանդ նորան, ով որ համարձակուեց ծեծել Փրանկային: Որքան աւելի բորբոքուում էր նրա ատելութիւնը դէպի Պաւլը՝ այնքան աւելի ջերմ ցանկութիւն էր զգում նա՝ գէթ որևէ բանով արտայայտել իւր անկախութիւնը—տեսնուել գեղցիկ երիտասարդի հետ, մոռանալ գոնէ մի բռպէ այն, ինչ որ ճնշում, պատառ պատառ անում ու այրում էր նրա սիրաը. բացի զրանից նա բոլորովին համոզուած էր, թէ Դանիլկան սիրում է նրան, մաշտում է նրա համար և խուսափում է միայն Պաւլի երկիրդից: Դանիլկան յիրաւի խուսափում էր Փրանկայից: Կուրցացած ու շշմած առաջին սիրով՝ նա սկըզբում հետութեամբ տեղի տուեց Մարցելայի և Փրանկայի համոզեցուցիչ խօսքերին, բայց յետոյ վախեցաւ—և աւելի մեղքից, քան եղօր ծեծից—ամաշեց, հովացաւ փոքր ինչ ու թափ տալով թէր՝ վճռողաբար ասաց ինքն իրան:

— Ճանաշել անգամ նրան չեմ ուզում:

Եւ ահա, երբ Փրանկան յարմար բռպէ գանելով վազեց կալն ու սկսեց պայտ գալ Դանիլկայի շուրջը՝ նա առաջ ուզեց վրանտել նրան, բայց աեսնելով որ իւր խօսքերն ի զուր են անցնում մի թեթև հարուած հասցրեց նրա մէջքին ու փախաւ տուն:

Այդ արդէն Փրանկայի համբերութեան չափից վեր էր: Ի՞նչպէս, միթէ նա ծնուեց նրա համար, որ ամեն մի գուեհիկի ձեռք անպատիժ թմբուկ թակէ նրա մէջքին: Ուրեմն ինչ է ինքը, որ համբելէ այդ-

պիսի անաբգանքի: Ցոյց կտայ ինքը նորանց: 2Ե՞ն մոռանայ երկար ժամանակ, Այս ամենը նա բղաւում էր լալով ու ման գալով այն ցանկապատի երկարութեամբ, որ բաժանում էր երկու հարեան տները միմեանցից: Դեռ կանուխ առաւօտ էր: Պաւլը լուսաբացին գնացել էր գետը, իսկ Ֆիլիպպն և Ուլիանան կանգնած էին իրանց խրճիթի դռան մօտ և զիթէին թէ ինչ անեն կամ ինչ ասեն:

Քարպասի դռան առաջ հաւաքուել էին մի խումբ մարդիկ, արտասովոր աղաղակով հետաքըլուած: Այս տեղ էր և Աւղոտեան:

— Ես ձեզ, էշ-զիւղացիներ, ցոյց կտամ, թէ ով եմ ես,— բարձրաձայն կանչում էր Փրանկան,— ես ձեզ կսովորեցնեմ յարգել ինձ: Ես աիկին եմ: Իմ հայրս կառավարութեան դիւանն էր ծառայում, պապս երկու սեփական տուն ունէր, մայրս գաշնամուք էր ածում... Լսում էք, այ թէ ով եմ ես: Կրիչկեվիչին կզրեմ: Բայց գիտէք, թէ ով է նա: Փաստարան է, ամեն ինչ գրեմ նորան, իսկ նա ձեզ բոլորիդ ինձ հասցրած վիրաւորաների համար Միրիր կուղարկէ: Նա հարուստ է. ամենքը նորան գլուխ են խոնարհեցնում, բոլոր դատարանները նրա բոի մէջ են. ինչ որ ուղենայ այն էլ կանէ: Նա իմ բնուուս որդին է, նա ինձ կպաշտպանէ... ձեզ բոլորիդ Միրիր կըշէ, բոլորիդ... բոլորիդ... տաժանակիր աշխատանքի կը դատապարտէ... մինչև մահ... որպէսզի այստեղ ձեր հոտն անդամ չմնայ:

Փրանկայի բերանից թափում էր հայնոյանքների, անէծքների և սպառնալիքների ամբողջ հեղեղ: Երբեմն նա լուսում էր ժամանակաւորապէս, չգաղարե-

լով առաջ ու յետ շրջելուց բանջարանոցի նեղ տարածութեան վրայ: Եւ ահա այդ բազէներին նա յիրաւի զարհաւելի կերպարանք ունէր: Կեղտու շապկով, ծակոտած շալավ հազիւ ծածկուած, բորիկ ստներով, գլուխը թաց շորի կտորով փաթաթած՝ նա նմանում էր մի վայրի գաղանի, որ ազատութեան կարօտած, անզօր կատաղութեամբ փրփրում է վանդակի երկաթեայ ձողերի յետեւմ:

Անշուշտ երկար կշարունակուէր այդ տեսարանը՝ եթէ խրճիթի անկիւնի յետեից չերևար Պաւլը: Մէկն շտապել էր հաղորդելու նորան կատարուող իրողութիւնը, և Պաւլը գալիս էր հիմա տուն՝ գլխարկը ցածը, մինչև աշքերն իջեցրած, ամօթից վառուող այտերով: Առանց մի խօսք ասելու՝ նա բռնեց Փրանկայի ձեռքից և անյայտացաւ խրճիթի դռան յետեւմ: Քանի մի բոպէից յետոյ այնտեղից լուսեցան աղաղակներ, յետոյ ամեն ինչ լուսց, և փոքրիկ, խաղաղ գիւղի բնակիչները ցրուեցան իրանց տեղերը:

Անցաւ մի ժամ և Պաւլը կրկին երկեցաւ շեմքի վրայ: Առանց յետ նայելու՝ նա խստութեամբ ասաց,

— Վառարանը վասիր և ճաշ պատրաստիր. անպատճառ պատրաստ լինի՝ երբոր ես գետից տուն դաւնամ: Եթէ կերակուր չլինի՝ նորից կծեծեմ:

Փրանկան, որ նստած էր անկիւնում, յատակի վրայ, վեր թռաւ և շտապով, արագութեամբ սկսեց կըակ անել: Դողդոջուն ձեռներով վառարանի մէջ շոր տաշեղներ ձգելիս՝ նա շշնչում էր ինքն իրան գունաթափ շրթունքներով:

— Լաւ, ճաշ կպատրաստեմ քեզ համար, կտեսնես, ինչքան համով կլինի: Փոխարէնը կհատուցանեմ

քեղ... ցոյց կտամ բոլորիդ... գոհ կմնաս... Սպառիր, սպասիր, թերեւս միւս կեանքում գուեհիկ բռունցը-ներդ բարձրացնես ինձ վրայ:

Կարելի է ենթաղրել, թէ Փրանկան յոպնած ու ջարդուած կզգայ իրան այն ամենից յետոյ, ինչ որ քիչ առաջ պատահեց: Ամենեին: Արագ ու ճարպիկութեամբ ջուր ածեց նա կճուճի մէջ, ապա ձկեց կորկոսը, քանի մի հատ գետնախնձոր և բերեց բակից մի թաս կաթ: Մի ինչ-որ միտք, միշինչ-որ զգացմունք ոյժ ու ճարպիկութիւն էին ներշնչում նրա մէջ. կարծես նա ուզում էր անպատճառ, որքան կարելի է, համեղ կերակուր պատրաստել: Եւ զրգալով խառնելով կերակուրը, տեխացնելով աղ, երեւմն կորկոս՝ Փրանկան անդադար խօսում էր ինքն իրան ամուր հուպ տրուած ատամների միջից:

—Այ, հիմա գու կուտես ու կիշտանաս... այնպէս կիշտանաս, որ էլ երբէք ուտել չես ուզենայ: Ծեծել էր չես ուզենայ ինձ: Ընորհակալ կլինիս ինձանից: Երբ որ սատկելիքդ կզայ այն ժամանակ կիմանաս, թէ ինչ ասել է ինձ ծեծել:

Բայց երբեմնապէս նրա շարախնդաց, յաղթական շնչիւնը փոխարինում էր տիսոր, համարեայ յուսահատական աղրի:

—Աստուած իմ, Աստուած, պատժեցիր դու ինձ, որ ես չճանաչեցի իմ յարգս ու գիւղացու խրճիթը մտայ: Ահա նրանք հասաւ բանը հիմա: Աստծոյ պատիժն է, Աստծոյ պատիժը:

Երբ որ խաշիլն համարեա պատրաստ էր՝ Փրանկան բաց արաւ իւր արկղը, քրքրեց այն, հանից մի փոքրիկ թղթեայ ծրար և թափ տուեց կճուճի մէջ

մի սլտղուց սպիտակ փոշի: Եյս ամենը նա կատարեց արագ, բայց հանգիստ, առանց մի խօսք բերանից հանելու:

Աշնանային երեկոյի կանուխ միջնշողից երկու ժամ առաջ, Պաւլը ներս նայեց իւր խրճիթի պատուհանից: Վառարանի բերանը ծածկած էր տախտակով: Փրանկան նստած էր անկողնի վրայ, կուցած և գլուխը յենած ձեռքերին: Պաւլը յիշեց, որ երեկ երեկոյից չէ կերել ոչինչ:

—Եփել ես որևէ բան,—հարցրեց նա, և նրա ձայնը հնչեց շատ աւելի հանդարտ ու մեղմ, քան մի քանի ժամ առաջ: Այն մարդու ձայնն էր դա, որի սըստում բարկութեան բռնկումից յետոյ նորից խօսեց կարեկցութեան զգացմոնքը, որը կրկին քաշում էր նրան գէպի սիրոյ և համաձայնութեան սովոր մթնոլորտը: —Եփել ես որևէ բան, Փրանկա, —հարցրեց նա երկրորդ անգամ:

—Եփել եմ, —առանց գլուխը բարձրացնելու պատասխանից Փրանկան:

—Ածա ամանի մէջ և տուր:

—Վեցցըն ինքդ:

Պաւլը յետ քաշեց վառարանի վականը, հանեց կճուճն և մի կտոր հաց կտրեց: Ուտում էր նա շատ դանդաղ: Մի ըոպէ առաջ նա քաղց էր զգում, իսկ հիմա կերակուրը գժուարութեամբ էր ներս գնում նրա կոկորդից: Դառնահամ է գալիս կարծես այս խաչիլից: Աչ, դա այն դառնութիւնն է, որ բարձրանում է նրա հոգու խորքից, փակում է նրա ախորժակն և դառն համ է տալիս այն ամենին, ինչու որ ձեռք է տալիս նա: Պաւլը կերաւ քանի մի զրգալ, հանեց

վերնազգեստն և պառկեց նստարանի վրայ, բարոյապէս տանջուած մարդու ծանր հառաշանքով: Փրանկան մի ինչ-որ բան էր կարում. երբ Պաւլն ուտում էր՝ նա աշքերը չէր հեռացնում ամուսնուց. բայց հիմա դէն ձգեց իւր փալասներն ու կրկին ծածկեց աշքերը ձեռներով: Խորին լրութիւնը, որ ընդհատում էր միայն քնած մարդու շնչառութեամբ, երկար թափառում էր խրճիթում. արտաքուստ միայն լսելի էին ուրախ ծիծաղ և հրեխաների աղաղակներ, ի միջի այլոց և Խոտաեանի: Սկսում էր մընել, երեկոն վրայ էր հասնում: Պաւլը քնի մէջ մի-երկու անգամ շուռ եկաւ ու հասաշեց: Նրա շրթունքները ծռուեցան ասես թէ ցաւից: Փրանկան բարձրացրեց գլուխը, մի ըսպէ նայեց ամուսնուն և շտապով գուրս գնաց խրճիթից: Կամաց, թագնուելով նա անց կացաւ պատուհանի առաջից և սկսեց գնալ ճանապարհով: Նորան դէմ ու դէմ զալիս էր մի անշնորհ կերպարանք, ցնցոտիներով փաթաթուած, գաւաղանը ձեռքին:

—Մարցելա, —աղաղակեց Փրանկան այնպէս՝ ինչպէս աղաղակում են գերութիւնից աղատուած մարդիկ՝ իրանց բնական դաշնակցին տեսնելիս:

Վաղուց չէր տեսել նա մուրացիկին: Մարցելան բոլորսին անպարտ չէր համարում իրան այժմ, ինչպէս և առաջ, Կարօլ լակէյի հետ պատահած անցքի ժամանակ. նա գերազասում էր առ ժամանակ նստել տանը, քան Պաւլի և Կողլիւկէնց աշքին երեալ, որոնցից շափաղանց վախենում էր: Սակայն հետաքրքրութիւնը պահանջում էր իրանը (մի փոքր բան նա արդէն լսել էր Փրանկայի և Պաւլի մէջ տեղի ունեցած

աարաձայնութեան մասին), և նա զգուշութեամբ դուրս էր եկել հարց ու փորձի: Փրանկան ընկաւ մուրացիկ կնոջ գիրկն ու հեկեկաց, կարծես ամբողջ վիշտն ու դառնութիւնը, որոնք ծանր քարի նման ճնշել էին նրա սիրտը՝ այժմ հալուեցան և դուրս թափուեցին արտասուզի հեղեղի հետ միասին:

—Ի՞նչ է, ծեծում է մարդդ, —խոպոտ շնչոցով սկսեց հարց ու փորձ անել Մարցելան: —Այնպէս բարի էր երեսում, խոկ հիմա տեսնում ես ինչեր է անում: Խեղճ, խեղճ. այդ չպիտի լինէր քո բաժինդ աշխարհիս վրայ: Տիկին պիտի լինէիր զու և ոչ թէ այդ տեսակ անարդանք կըէիր... Ո՞հ, Աստուած իմ, Աստուած իմ. խոկ ես վախենում էի քեզ մօտ զալ... մտածում էի. շլնի թէ ինձ էլ ծեծէ:

Փրանկան յանկարծ կտրեց լացը:

—Հիմա նա ինձ երթէք չի ծեծի, —շնչաց նա:

—Ինչո՞ւ:

—Ես այնպէս սարքեցի բանը, որ չի ծեծի:

—Ի՞մ աղաւնեակ, այդ ինչ բան ես դու սարքել:

—Թունաւորեցի, —կմկմալով շնչաց Փրանկան:

—Տէ՛ր Աստուած, երկնային թագաւոր... խելագարուել ես, ինչ է, որ բերանիցդ այդպիսի խօսքեր ես բաց թողնում, —բացագանչեց Մարցելան:

—Գուցէ և խելագարուել եմ, բայց նրա համար այլիս կեանք չկայ այս աշխարհի վրայ:

Մարցելան ցնցուեց իւր հնոտիների տակ:

—Փրանկա, զու սուտ շե՞ս ասում:

—Աստուած վկայ, —երգուեց Փրանկան և բունցքը խփեց կրծքին:

—Տէ՛ր Աստուած, Յիսուս Քրիստոս, Մայր Աս-

տուածածին, սո՞ւբ Անտոնիոս Պազուացի...—վերնթ-
փնթում էր Մարցելան կարկամած լեզուով:—Այ-
դու անիծուած... Վայ իմ թշուառ գլխիս, ինչու
ասացիր գու ինձ այդ... 2լինի թէ ինձ էլ պատա-
խանի տակ ձգեն... մարդու հոգի չկայ քո մէջ:

Այդ ժամանակ Պաւլի խրճիթից ձայն լսուեցաւ:
—Ուլեանա, Ուլեանա:

Դա մի բարձր, սակայն տարօրինակ, ցաւից
այլայլուած, օգնութեան կանչող աղաղակ էր: Քրան-
կան վաղելով յետ դարձաւ, թաղ կացաւ խրճիթի պա-
տի յետևում և զգուշութեամբ նայեց գաւիթը: Պաւլը
կանգնած էր գուան մէջ և կանչում էր քրոջը: Վեր-
ջապէս Ուլեանան ձայն տուեց ամբարանոցի խողքից:
—Ինչ է, ինչ ես ուզում:

—Այստեղ ալի, —թուլացած ձայնով պատասխա-
նեց Պաւլը:—Ի սէր Աստուծոյ, շուտ... աղատիր...—Նա
երերալով տուն մտաւ և ծածկուեցաւ դռան յետեր:

Մի ամբողջ ժամ ձկնորսի խրճիթում զարհուրե-
լի իսպանցում էր տիրում: Պաւլ կիսով շափ հան-
ուեցրած՝ պառկած էր նստարանի վրայ. կուշ ու ձիգ
էր անում անտանիլի ցաւից և ամեն բովէ ջուր էր
խնդրում: Զրի վիտանակ նորան տալիս էին խմելու
մի ինչ-որ խոտի հիւթ, որ Աւդուեան եփ էր տալիս
վառարանի մօտ, երբեմն ազօթք մըմնչալով, երբեմն
հայհոյելով մէկին:

—Այ թէ ինչ է նշանակում վիշտ ունենալ: Խեղ-
ճի հոգին հանեց այդ անզգամը, գերեզման դրեց...
Աստուծով գուցէ յետ գայ կրկին, գուցէ այս խո-
տերն օգնեն:

Նա տաք մոխիր ածեց պարկի մէջ և սովորե-

ցնում էր Ուլեանային, թէ ինչպէս և որ տեղին պէտք
է դնել այն: Ուլեանան, չնայելով արտասուրին, որ
առատութեամբ հոսում էր նրա կարմրած այտերի
վրայով անխօս կատարում էր գիւղական պառաւ թժը-
կունու հրամանները, ժամանակ առ ժամանակ դուրս
վաղելով խրճիթից տեսնելու, թէ ինչ են անում երե-
խանները: Գիլիպպը բոլորովին շփոթուած ու վշա-
ցած նստել էր նստարանի վրայ և շփատէր թէ ինչ
անէր: Խրճիթի մէջ հաւաքուել էին շատ հարեանու-
հիներ: Եկաւ և Քրանկան, անց կացաւ պատի առաջով
ստուերի նման և մտաւ ամենահեռու ու մութ անկիւ-
նը: Ոչ ոք նրա վրայ ամենափոքր ուշաղը ութիւն ան-
գամ շպարձեց, միայն Ուլեանան կոպտաբար հրեց
նրան, երբ հարկաւոր էր ջուր վերցնել այն ջրամա-
նից, որ գանուում էր Փրանկայի կողքին:

Փրանկան մտաւ անկիւնի խորքն և ծածկեց
գէմքը ձեռներով: Նա չէր բարձրացնում զլուխն ոչ
այն ժամանակ, երբ Պաւլն սկսում էր աւելի բարձր
հառաչել ու երբ կանալք նրա ձեռքն էին տալիս
ծննդեան տօնի վառած մոմք, ոչ այն ժամանակ, երբ
Դանիլկան մտաւ խրճիթ և մէկի հետ քանի մի խօսք
խօսելուց յետոյ նորից դուրս գնաց: Անցաւ մի ժամ
ևս: Հիւանդն սկսում էր աւելի ուշ-ուշ հառաչել ու
հանգստանալ: Նրա կապտած, զունատուած երեսը,
որ այլանդակուած էր ցաւերից՝ սկսում էր սովորա-
կան արտայալառութիւնն ստանալ:

—Յաւդ թեթեցաւ, —կուանակով հիւանդի վրայ
հարցրեց Աւդուեան:

—Թեթեցաւ, —թոյլ ձայնով պատասխանեց Պաւլը:
Ուլեանան կրկին յիշեց երեխաններին:

— Ֆիլիպս, — շնչաց մարգու ականջին, — գնա, տես ինչ են անում երեխաները, հանգցրնւ և կրակը խրճիթում, մի փորձանք չբերեն գլխներին:

Դուքսն արդէն երեկոյ էր, իսկական աշնամնային իրեկոյ. ցուրտ, պարզ և աստղալից: Դարպասի դռանը մօտենալով՝ Փիլիպպը տեսաւ մի ինչ-որ անորոշ կերպարանք, և նրա ականջին հասաւ խռպոտ շնջիւն:

— Ողորմած Աստուած, գթա մեղ, Ողորմած Աստուած, գթա մեղ:

Մարցելան էր դա: Ահա երեք ժամ է արդէն, նա թափառում է Պաւլի խրճիթի շուրջը և շդիաէ, թէ ինչ անէ կամ ինչ վճռէ: Նա վախենում էր և գիտեցածն ասելուց, և զաղանիքը թագցնելուց: Սկըզբում նա մասծում էր, թէ շլնի՞ իրան էլ կասկածի տակ ձգեն, յետոյ միտը բերեց Աստծու ահեղ գատաստանը... Այ այնտեղ ինչպէս պիտի պատասխան տայ... բայցի դրանից նա անկեղծ ցաւակցում էր այն մարդուն, որի հառաջանքները հասնում էին գաւիթը, նրա ականջին, և զայրոյթ էր զգում դէպի այն կինը, որ վստահացաւ մինչև ամնդամ այդ տեսակ բան անել:

— Փիլիպպ, — ձայն տուեց նա վերջապէս. — այ Փիլիպպ:

Փիլիպպը յետ նայեց, այս այց ամսաւթանը՝ ի՞նչ ես ուզում:

— Գիտես ինչ... Պաւլը... քո աներարդիդ... թունաւորուած է...

— ի՞նչ... բացազանեց Փիլիպպը:

— Աստուած վկայ, — շարունակում էր խռխռալ-մուրացիկը. — միայն դու, ինդրում եմ, ոչ ոքի շասես, թէ

այդ լուրն ինձանից ես լսել, թէ չէ իմ բանս էլ վատ կլինի... Թոյն է տուել նորան...

Փիլիպպի համար ամեն ինչ պարզուեց: Վազուց արդէն նա կասկածում էր, թէ Փրանկան մի որևէ զարհուրելի բան կանէ: Այդպէս էլ դուրս հկաւ: Մարցելան ուղիղ է ասում, ճշմարիտ է Աստուած, ուղիղ է... Փիլիպպը բոնեց զլուխը: Մի կողմից նա զարհուրում էր, միւս կողմից զոհ էր: Հիմա Պաւլն ինքն էլ հիամողուի, թէ ինչպիսի վտանգի էր ենթարկում թէ իրան և թէ իւր մերձաւորներին... Փիլիպպի մտքից կայծակի արագութեամբ անցան բանտը, զատաստանն ու Սիբիրը: Կրոնեն Փրանկային, Սիբիր կաքսորեն և կազատեն բոլորին նըանից... նա զէն հրեց Մարցելային և շնչարգել ներս վազեց Պաւլի խրճիթը:

— Այ թէ ինչ կայ, Պաւլ, գիտե՞ս. դու թունաւորուած ես. կինդ քեզ թոյն է տուել:

Պաւլը լաւ էր լսում: Խայթուածինման նա զլուխը բարձրացրեց, նստեց և ձայնն երկարացնելով հարցընեց. — ի՞նչ:

— Թունաւորել է — կը կնեց Փիլիպպը. — թոյնէ տուել:

Ուկեանան ճիշ արձակեց ու սկսեց ձեռները կոտրատել: Աւդուեան շտապով մօտեցաւ հիւանդին:

— Որեէ բան կերե՞լ ես դու այսօր:

Պաւլը թուլացած ընկաւ նստարանին:

— Կերել եմ... խաշիլ, — ցածրաձայն պատասխանեց նա:

— Ո՞րենի է այդ խաշիլը, — այս ու այն կողմը պարտելով հարցընեց Աւդուեան:

Ուկեանան գունատ ու դողդողալով կուացաւ և վերցրեց յատակից կաւեայ կճուճը:

—Ե՞ս դրի այստեղ... խանգարում էր ինձ կրակ անելու:

—Ուրեմն դու խաշիլ ես կերել: Աւդոտեան մօտեցրեց խաշին ուղիղ Պաւի երեսին:

Բայց Պաւլը ոչինչ չպատասխանեց: Անմիտ վայրենի աշքերով նա չսրս կողմն էր նայում: Նա տեսու անկիւնում Փրանկայի բաց արած արկղը և այնտեղ, նրա մօտ, յատակի վրայ, շրջազգեսար՝ շուռ տուած գրպանով, տեսաւ նմանապէս խրճիթի մէջ տեղում տրորած սպիտակ թղթի կտոր, յիշեց մի ինչոր բան ու ծածկեց աշքերը: Նրա կուրծքը ծանրութեամբ բարձրանում և իջնում էր, սակայն ամուռ հուպ տուած ատամների միջից ոչ մի ձայն շլուեց:

—Պարօմ, պարօմ, պարօմ, —լսուեցաւ երկար աղաղակ գետի հանդիպակաց ափից:

Փիլիպան ամեննեին ուշագրութիւն չգարձրեց այդ աղաղակի վրայ, սակայն Դանիլկան, որ քրքրում էր սեղանի արկղը՝ գուլս թռաւ գաւիթը, ապա մի բոպէ չանցած՝ յետ դարձաւ և թեքուելով դէպի եղբայրը՝ բարձրածայն շնչաց.

Փիլիպպ, արի շուտով, ուրեադնիկն է:

Փիլիպպը վեր թռաւ տեղից և արագութեամբ վայր գաղեց սարից, փայտեայ ձողը ձեռքին:

—Այ, Աստուած ժամանակին ուղարկեց նրան, —մտածում էր Փիլիպպը. —իսկ և իսկ ժամանակին:

Զարմանալու բան չկար այստեղ. ուրեադնիկը ծառայութեան գործերով ստիպուած էր յաճախ անց ու դարձ անել նեմանի վրայից, բայց Փիլիպպն այժմ նրա գալու մէջ Աստծու մատն էր տեսնում:

Պաւի խրճիթը մի բոպէ դատարկուեց: Աւեա-

նան վագեց տուն՝ երեխաներին նայելու, Աւդոտեան գնաց փայտի պակասած պաշարը լրացնելու:

Պաւլը կամաց-կամաց բացեց աշքերը. —Փրանկա, —մոյլ ձայնով կանչեց նա:

Անկիւնում, ջրամանի և ձկնորսական գործիքների մէջ տեղում, շրչիւն լսուեցաւ, և խաւարի միջից դուրս եկաւ Փրանկայի կրացած մարմինը:

Նա երկու քայլ առաջ եկաւ ու կանգնեց, ձեռքերն ամուր հուպ տուած կրծքին և գլուխ քաշ արած:

—Փրանկա, —ցածրաձայն, կարծիս զօրով, հարցրեց Պաւլը, —ճշմարիչ է այդ:

Նա լուռ էր:

—Փրանկա, դու երբէք սուտ շետ խօսեի... Ասահիմա էլ խղճով. ճշմարիչ է:

—Ճշմարիչ է:

Պաւլը կրկին փակեց աշքերը: Նա չասաց մի խօսք, մինչև անգամ չհառաչեց, սակայն նրա ճակատի վրայ երեացին քստնիքի խոչոր կաթիլներ և շրթունքներն աւելի ամուր սեղմուեցան: Փրանկան շարունակ կանգնած էր միենոյն տեղում և աննպատակ նայում էր գաւարանի հանգչող կրակին: Ահա բակում լսուեցան ոտնաձայններ, ու Փիլիպպն աւանց վլխարկի, հադրի շոնչ առնելով, անկարգ խառնուած մազերով ներս մտաւ շեմքից:

—Մի բարկանար, Պաւլ, —հաստատուն ձայնով խօսեց նա. —այս բոպէիս այստեղ կգայ ուրեադնիկն և այս չարագործին կկալանաւորէ:

Այս խօսքերի վրայ Փրանկան կարծես արթնացաւ խոր քնից և ուզում էր գաղել դէպի դուռը, բայց այդ ժամանակ դռնից արդէն ներս էին մտնում Ուլ-

եանան, գրկանոց երեխան ձեռքին, և ուրեաղնիկը՝ փայլուն կոճակներով զարդարուած նշանազգեստով, հէնց այն ուրեաղնիկը, որ երեք տարի առաջ կառքում նստած խօսում էր Պաւլի հիտ Փրանկայի անյատանալու մասին:

—Դէ, հագուէիր,—հրամայեց ուրեաղնիկը Փրանկային, ու շուտով... զրօմնելու պիտի գնանք.—և իսկոյն գառնալով Ֆիլիպպին՝ ասաց, թէ այսօր արդէն ուշ կինի քննիչի մօտ տանել նրան, ուստի և թըռչնակը գիշերը կանցնէ իւր, ուրեաղնիկի բնակարանում: Այն գիւղը, ուր ապրում է նա՝ հեռու չէ—չոլտ վերստ կինի, այն-ինչ ինքն այնպէս յոգնած է, որ քիչ է մնում վայը ընկնի: Վազը նա Փրանկային աեդ կհասցնէ:

—Միայն թէ տարէք այստեղից, ի սէր Աստծու, տարէք,—աղաչում էր Փիլիպպը:

Պաւլն առանց տեղից շարժուելու, շարունակ դիտում էր Փրանկային, որ ամբողջ մարմնով դողդողալով փոխում էր շրերն, ուշաղըութիւն չղարձնելով տղամարդկանց վրայ: Նա հանեց գիւղական շըրջագեսար, հագաւ մաշուած, զզզզուած փէշերով քաղաքայինը, հագաւ վերնաշապիկը, ձգեց թիկնոցն և գլխի թաց շորի փխսարէն կապից գլխակապը: Այն ժամանակ ուրեաղնիկը բանեց նրա ձեռքից և տարաւ դէպի դուռը: Պաւլը նկատեց Փրանկայի աշքերում մի բան միայն— լիակատար և անսահման երկիւղի ու յուսահատութեան արտայայտութիւն:

—Թեթիցմու ցաւդ,—կարեկցաբար հարցըց Ուեանան:

—Համարեա անցաւ բոլորովին...—Պաւլը լրում էր:

Նա քիչ էր թոյն ընդունել. այդ քանակութիւնը նրան չէր կարող մեռցնել, այսու ամենայնիւ թոյնն այնքան շատ էր, որ չմնաց առանց ներգործութեան:—Ճիմառչինչ, միայն քնիլ եմ ուղում:

Աւզոտեան մի բոլէ առաջ վերադարձել էր խոտերի նոր պաշարով: Նա յայտնեց, թէ ինքը կմնայ գիշերը հիւանդին պահպանելու:

—Հարկաւո՞ր չէ, կնքամայր, —քաղցրութեամբ, բայց և այնպէս վճռողաբար պատասխանեց Պաւլը:—ոչ ոքի պէտք չունիմ ես... Հանգցրէք կրակն ու գնացէք քնիլու: առանց այն էլ գուք բաւականին չարչարուեցաք: Խոկ ինձ թողէք մենակ, ոչինչ:

Աւզոտեան սարքեց փոքրիկ լապտերը, հանգցրեց վառարանի կրակն և հանգիստ հոգով ուղեկորուեց դէպի տուն: Մի բոլէից յետոյ Պաւլը բարձրացաւ նստարանից, ուսները կախեց ցած ու երկար ժամանակ նստեց, գլուխը կրծքին խոնարհած: Ինչո՞ւ համար նա այնպիսի յամառութեամբ գուրս էր անում բոլորին սենեակից: Նրա համար, որ միայնակ ու հանգալար վճռէ այն հարցը, թէ ինչո՞ւ Փրանկայի աշքերում այնպիսի երկիւղ, այնպիսի յուսահատութիւն էր երեսում, երբ նա գնում էր ուրեաղնիկի յետսից. վերջապէս ինչո՞ւ նա գնում էր այնպէս հազանդ, առանց ամենափոքր ընդդիմութիւն ցոյց տալու: «Այն, անցաւ Պաւլի մտքից, յափտեմն կորաւ. —բանտ, Միթրիր... և չկայ այլես նորան փրկութիւն ոչ այս աշխարհում, ոչ ապագայում»: Խոկ յետոյ, որպէս արձագանգ հեռաւոր անցեալի՝ հնչեցին նրա ուկանչին այն խօսքերը, որ մի օր արտասամնել էր նա սուրբ սեղանի առաջ. «չնմ թողնի քեզ մինչև մահս»: Սե-

Նեակի խաւարի մէջ երկար ժամանակ խաղաղութիւն էր տիրում, ապա լսուեցաւ մի թոյլ ձայն.

—Եւ չեմ թողնի մինչեւ մահու:

Ահա բռնկեց փոսփորային լուցկու կապապղյն բոցը: Պաւլն երերալով մօտեցաւ սեղանին և վառեց լապտերը:

Կողիւկենց խրճիթի պատուհաններում ոչ մի լոյս չէր երեսում—ամբողջ գիւղը քնած էր մեռելային քնով: Պաւլը չոգեց մահճակալի առաջ և սկսեց գուրս քաշել նրա տակից մի ինչ-որ ժանր բան: Դժուար էր այդ նրա համար, բայց նրա մէջ կասարւում էր նոյն հոգեկան գործ սղութիւնը՝ ինչ որ զգում էր ֆրանկան կէս օր առաջ, մի անընկճելի միտք ամբապնդում էր նրա նեարդերը, խափանում էր ցաւը, կրկնապատկում ոյժերը:

Քանի մի բոպէից յետոյ Պաւլը դուրս քաշեց մահճակալի տակից սի երկաթ ապատ արկիլի ու բացեց փականը: Նրա շարժումներն հետզհետէ աւելի ու աւելի եռանդ և անհամբերութիւն էին արտայայտում: Դանդաղելու ժամանակ չկար, կամ այսօր, հէնց այս դիշեր, կամ երբէք:

Նա շտապով մի կերպ հագաւ կօշիկները, հագաւ մի կերպ նաև կապան: Ուղիղ է, դեռ երկար գիշեր կար առաջին, բայց նա պիտի չսրս վերստ ճանապարհ կարէր: Սակայն ինչնվ գնալ: Դուրս չքաշել արդեօք կամացուկ Փիլիպպի ձին ախոռից ու լծել սալը: Ախոռն երբէք չէր կողպւում, նրա պահապանը կուրտան էր միայն, իսկ կուրտան նրա վրայ չի հաջի. բայց մի ինչ-որ բան կաշկանդում էր Պաւլին. նրա համար անհաճոյ էր Կողիւկի ձին ծառայեցնել

այդ գործին: «Ինչպէս հրէաներն չամանի վրայ՝ այնպէս էլ նրանք զայրացել են ֆրանկայի վրայ», մտածում էր նա: «Ուղիղ է, առանց պատճառի չէ, բայց ամենից աւելի ուժմ վնաս հասցրեց նա: Ի՞նձ, իսկ ինձ հասցրած վիրաւորանքը միշտ ես էլ կարող եմ ներել: Եւ ինչ եղաւ ինձ, խօմ կենդանի մնացի»: Պաւլն զգում էր, որ յիբաւի կենդանի կմնայց: Է՞՞ն, լաւ... Նա կզնայ նաւակով, մեծ տարածութիւն չէ, իսկ ափից մինչեւ ուրեաղնիկի տունը ընդ ամենը բառորդ վերստ կլինի»:

Անցաւ մի քանի ժամ: Աշնանային ուշայգը հանգցրեց աստղերը մոխրագոյն երկնքի վրայ. զետի երեսին թանձքանում էր առաւտեան մառախուզն և բոլորովին ծածկում իւր վարագուրով մակոյկը, նրա մէջ նստած երկու մարդու հետ միասին, որոնք մօտենում էին ափին:

Պաւլը մենակ չէր վերաղառնում. քանի մի քայլ հեռու նրա յետեից գալիս էր մի կին, թիկնոցն ուսին, գլուխը ցած, խանարհած: Երբ Պաւլը հրեց իւր խրճիթի գուռն և ներս մտաւ բակը՝ կինը կանգ առաւ: Պաւլը յետ նայեց:

—Արի:

Կինն անցաւ շեմքից ու կանգնեց դռան մօտ, կարծես յանկարծ կուրացաւ կամ չէր իմանում, թէ ուր գնայ կամ ինչ անէ: Պաւլը գժուարութեամբ նըստեց նստաղանի վրայ և կրկին ասաց.

—Հանուիր:

Կինը դանդաղութեամբ վերցրեց գլխից շալը. նրա ձեռները կըկին ցած ընկան, ինչպէս մի ծանրութիւն: Թուում էր հիմա, թէ նա մի ոճրագործ է,

կանգնած դատարանի առաջ—այսպէս ճնշուած էր նա ամօթի և մեղքի զարհուրելի բեռան տակ: Մի ըստից յետոյ նրա արտեանունքները դողդողացին և բացուեցան: Խոկ աչքերը հանգիպելով Պաւլի աչքերին, լցուեցան արտասուրով: Անխօս, հանգարտ նա երկու քայլ առաջ գնաց և առանց Պաւլին մօտենալու, յանկարծ խոնարհեցրեց գլուխն այնքան ցած, որ արձակուած մաղերի ծայրերը քսուեցան յատակին: Սովորաբար այդպէս ցած ու խոնարհ գլուխ են իջեցնում գիւղացիք այն ժամանակ, երբ վթութիւն են հայցում: Փրանկան տեսնել էր այդ շատ անգամ և հիմա դիտմամբ այդպէս գլուխ տալով Պաւլին՝ շտապով դարձաւ դէպի գուսն ու զուրս գնաց բակը: Պաւլը ձեռները քսեց թաց աչքերին և ծռեց զլուխը: Այսպէս անցաւ քանի մի բոպէ: Փրանկան չէր վերադառնութեամբ անցաւ, բայց գուսն ու կանչեց:

—Երի:

Նա հնագանդութեամբ ներս եկաւ և կանգնեց, երեսը վառարանին դարձրած: Պաւլը տեղաւորուելով հստարանի վրայ՝ սկսեց խօսել թոյլ ձայնով.

—Եւ էլի մի անգամ ես ազատեցի քեզ, թէկ զու այժմ փորձ արիր... Բայց եթէ զու այնտեղ մնայիր՝ յաւիտեանա յաւիտենից կկորչէիր, իսկ այստեղ կարելի է դեռ իւելքի գաս, սրախի նզովեալ չարութիւնն անիծես ու զղջաս... Առաջին անգամ, երբ ես տեսայ քեզ՝ ցաւեցի քեզ վրայ, օհ, ի՞նչովէս ցաւեցի. դրա համար էլ ես երդում կերայ, որ մինչեւ մահս չժողնեմ քեզ: Երդումը հանաք բան չէ: Ես երդուել եմ, որ չժողնեմ քեզ ու չեմ թողել և մինչեւ մահս չեմ ժողնելու:

Դժուար էր նրա համար խօսել, բայց տեմնելով, որ Փրանկան կանգնած էր քարացածի նման՝ նա աւելացրեց.

—Դէ, ինչու համար ես կանգնել.., վառարանը վառիր. խրճիթում ցուրտ է, թէյ շինիր քեզ համար և ինձ էլ տուր... Արա ինչ որ ուղում ես, ինչ որ քեզ պէտք է: Դու նոյնպիսի տանտիկին ես ալստեղ՝ ինչպէս և ասած:

Յայտնի չէ, թէ ինչ լսեց Փրանկան Պաւլի խօսքերի մէջ. միայն նա ատամանուեց ամբողջ մարմնով, արտասուրին հեղեղի նման դուրս թափուեց նրա աշքերից ու նա չոգեց ծնկների վրայ: Փրանկան չէր աղաղակում, լաց չէր լինում, չէր հաւաշում, միայն նրա ուսերը վեր ու վայր էին անում խուլ, զսպուած հեկեկանքից: Բայց անցաւ քանի մի բոպէ, և նա շտապով ոտքի կանգնեց ու սկսեց վառել վառարանը: Պաւլը պառկած էր անկողնի վրայ փակած աշքերով: Նստարանի վրայ, ոչնչով շծածկուած, կոպիտ քաթանի շապիկով, մերկ կուլծքով ու թեւերով, անդորր քնած էր նստաւեանը: Փրանկան նկատեց նրան ու ծածկեց իւր շալով. այդ ժամանակ նա մի բաժակ թէյ էր տանում Պաւլին. սպայն մի միտք կանգնեցրեց նրան յանկարծ խրճիթի մէջ տեղում.—Կլմէ արգեօք նա այն, ինչ որ ինքը տալիս է նորան... երեկուայ անցրեց յետոյ: Բայց Պաւլը չվախեցաւ, վերցրեց բաժակն ու ագանութեամբ կպցըց նորան իւր գունատ շրթունքները. Փրանկան երկար նայում էր նրա վրայ և վերջապէս ամուր հուպ տուեց երկու ձեռքն ես երեսին: —Թէյդ խմիր ու պառկիր քնելու... բարձ վերցրու...—ասաց Պաւլը:

— չարկաւոր չէ, — ցածրաձայն պատասխանեց Փրանկան. — ես թիկնոցս կղնեմ գլխատակիս, ...ու այնպէս կը նիմ:

Առաջար վաղ Ռւկանան եկաւ եղբօրն այցելելու, տեսաւ Փրանկային և շտապով գնաց ամուսնու մօտ: Անշուշտ այս բանի մէջ հմայք, կախարդութիւն կայ: Բայց Ֆիլիպպն իսկոյն հասկացաւ, թէ բանն ինչումն է և վճռաբար ասաց.

— Քո եղբայրդ ուղղակի գժուել է:

Ռւկանան արագ ու բարձրաձայն համաձայնուեց: — Ի հարկէ գժուել է. մի՞թէ առողջ մարդը կը վճռէ այդ տեսակ բան անել:

Պաւլի վարմունքը ձեւակերպելու համար ուրիշ անուն չկար: Ֆիլիպպը պատրաստուեց մինչև անզամ քաղաք գնալու Փրանկային մեղադրելու համար սպանութեան գործի մէջ, իսկ ուրեազնիկին — թուլութեան և անփութութեան մէջ իւր պարտաւորութիւնների կատարման վերաբերմաք: Բայց անցաւ երկուերեք օր, և Ռւկանան յիշեց, թէ ինչպէս եղբայրը պահել մեծացրել է իրան, օժիտ է տուել իւր բանջարանոցի կէսն և միշտ էլ օգնել է՝ ինչով որ կարողացել է... Այսու ամենայնիւ, այս բոլորը պէտք է ի նկատի ունենալ:

— Լաւ չի լինի, Ֆիլիպպ, նորանց ամենեին ձեռք շտալ: Թոնդ նրանք ապրին՝ ինչպէս ուղում են: Ինչերիս հարկաւոր է հալածել այդ կնոջը: Մենք նայենք մեր խրճիթին, մեր երեխաներին. իսկ Պաւլը... թողանէ ինչ որ ուղում է:

Ֆիլիպպը հայհոյանքներ էր կարդում, կիտում էր յօնքերը, ամենայն օր պատրաստում էր քաղաք

գնալու, բայց բանը վերջացաւ միայն ոպառնալիքներով: Պաւլը միշտ այնքան բարի է եղել նրանց վերաբերմաք, իսկ Փրանկան հիմա բողոքովին չէր երեւում նրանց աշբին:

Աւգոտեան չամբերեց — գնաց տեսնելու իւր վաղմի բարեկամին: Պաւլն առողջանալու վրայ էր. գունատուել ու սասաիկ նիշաբել էր: Փրանկան թագ կացաւ բակի ամենամութ անկիւնում, այնպէս որ Աւգոտեան շտեսաւ էլ նրան, ինչպէս հարկն է: Պաւլն ասաց, թէ կհանգստանայ էլի երկուերեք օր ու այնուհետեւ գետը կդնայ, թէ չէ շուտով անձրեներ կըսկուին: Երբ որ Աւգոտեան Փրանկայի անունը տուեց՝ նա շարժեց գլուխն ու ասաց.

— Հիմա արդէն նա այնպէս չէ, ինչ որ առաջ էր: Խելքի է եկել, աւելի բարի է դարձել... Աստուած վկայ:

Պաւլն անկեղծ համոզուած էր այդ բանում. նստարանի վրայ պառկած նա ի զուր չէր այնպէս երկար դիտում Փրանկայի վախկոտ շարժումները: Փրանկան երրէք չէր մօտենում նորան. եթէ հարկաւոր էր լինում որիէ բան տալ՝ նա տալիս էր հեռուից, պարզելով ձեռքի ամրող երկայնութիւնը: Երրէք խօսակցութիւն չէր սկսում նա. իսկ երբ Պաւլը հարցեր էր տալիս՝ նա պատասխանում էր ցած, մեղմ, առանց աշքերը բարձրացնելու: Ռւբեազնիկի մօտից վերագառնալուց յետոյ՝ նա պառկեց քնելու, գլխատակը դնելով թիկնոցը. յետոյ զուր Պաւլը համոզում էր նրան բարձերից մէկը վերցնել և պառկել մահճակալի վրայ. Փրանկան պատասխանում էր կարճ, բայց վճռողաբար.

— 2եմ ուղում, հարկաւոր չէ:

Պաւլը յետ չէր կհնում: Մի անգամ Փրանկայի բերանից դուքս թռան հետեւալ խօսքելը՝ արտասանուած նախկին բարկացկոտ ձայնով.

— Քա՞տ բան ես ուզում:

Երբ որ մի անգամ Խտաւեանը ցանկութիւն էր էր յայտնում քնելու մօր հետ՝ Փրանկան ամենից առաջ բացատրեց նորան, թէ «Հայրիկի» հետ քնելն յարմար է, իսկ յետոյ դարձաւ Պաւլին և խնդրեց, որ երեխային ծոցն առնէ: Թւում էր, թէ նոյն-իսկ մտածելն անգամ մօտիկ հարսանութեան մասին անմեղ երեխայի հետ՝ լցնում էր նրա սիրան ահուզողով. ժամանակ առ ժամանակ, նոյնպէս մի անհաշիւ ահի կամ երկիւղի ազգեցութեան տակ, նրա դէմքն այլայլում էր ջղաճգութիւնից, կարծես նրա աշքին զարհուրելի ուրուականներ էին երեւում: Անում էր նա այն ամենը՝ ինչ որ հարկաւոր էր—աւելում էր խրճիթը, պատրաստում էր ճաշը, լուսաբացին կամ ուշ երեկոյեան գընում ջուրը սափորով, որպէս զի հանդիպի որեւէ մէկին, և սափորով նրա համար, որ թիթեղեայ լիք ջրամանը նա ոյժ չունէր բարձրացնելու: Եւ այս ամենը կատարում էր հանդարտ, առանց աղմուկի, ասես թէ Փրանկան ականջ էր դնում մի ձայնի, որ գալիս էր որեւէ հեռաւոր տեղից: Երբեմն երբեմն նա կանգ էր առնում սենեակի մէջ տեղում, և զարհուրած աշքերով նայում առաջին, երբեմն նոյն-իսկ նրա բերանից դուքս էր թռչում կոկծալից աղաղակ:

— Ի՞նչ է, — հարցնում էր այդ ժամանակ Պաւլը:

— Ոչինչ, սաստիկ վախեցայ...—ակամայ պատախանում էր Փրանկան:

— Ինչից վախեցար:

Նա պատասխան չէր տալիս և նորից շարունակում էր գործը:

Պաւլի սիրան հրճում էր այդպիսի հնազանդութիւն տեսնելով: Վերջապէս ուղղուեց, վերջապէս հրաժարուեց սատանայից, որ այնքան երկար ժամանակ պահում էր նրան իւր ճանկերում: Եւ միենոյն ժամանակ Պաւլը ցաւում էր նրա վրայ:

— Փրանկա, — ասաց նա մի անգամ, — ինչո՞ւ դու ծեծ կերած շան նման ականջներդ քաշ ես անում ու չես նայում ինձ: Ես քեզ վրայ բարկացած չեմ. Ես շատ գոհ եմ, որ դու այդպէս բարի դարձար: Ասա, խօսիր առաջուայ նման, ծիծաղիբ... ուրախութիւնը մեղք չէ:

Փրանկան սկզբում լսում էր նորան երկիւզով, ապա զարմանքով. վերջապէս ծածկեց աշքերը ձեռներով ու սկսեց խուլ հեկեկալ:

Պաւլը մօտեցաւ նորան:

— Ինչից ես դու վախենում: Ինչո՞ւ քո աշքերումդ երբեմնապէս այնպիսի երկիւդ է երեւում, որ կարծես թէ մեռել ես տեսել: Կարելի է, դու Աստծու պատժից ես վախենում մեղքերիդ համար: Մի վախենար: Ես քեզ ասում եմ. մի վախենար: Կղղաս, կինդրես Աստծուն, և նա կներէ:

— Ի՞նչ Աստուած. ոչ մի Աստուած չկայ, — դառնութեամբ հեղնեց նա. բայց Պաւլն այնպէս ցոյց տուեց, իբր թէ չէ լսում, ու շարունակեց.

— Դու գեռ պառաւ չես. և ինչ բան կայ, որի համար մարդ թռզութիւն չստանայ ալօթքով, շքաւէ առաքինի կեանիքով: Այս, ես չուտով կառողջանամ, Կօղլիւկներից քո վոխանակ ներողութիւն կինդրեմ... և կապրինք մենք բոլորս էլ հանգիստ, խաղաղ... Յե-

տոյ Խառաւեանը կմեծնայ... ևս նորան ձուկ բռնել կը սովորեցնեմ...

Պաւլի գունատ ու նիհար դէմքի վրայ ժպիտ փայլեց:

Փրանկան լսում էր՝ առանց մի խօսք բերանից հանելու, բայց երբ Պաւլը մեկնեց թեր զրկելուն նրան՝ նա պոկ եկաւ տեղից ու փախաւ բակը, այնտեղից գաւիթն և համարեա թուլացած նստեց կռատուկի կիսաթառամ տերեների մէջ: Երկար նստած էր նա, կորցրած գիտակցութիւնն ու հասկացողութիւնն այն ամենի մասին՝ ինչ որ շրջապատռմ էր նրան, մինչև որ մօտիկ, նրա գլխի վերևում, հնչեց մի խուպոտ ձայն:

— Փրանկա:

նա ուշքի եկաւ ու կանչեց. իրավունքար արա
— Այստեղ արի:

Մուրացիկը մօտենում էր դանդաղ քայլերով: Մի կողմից նա վախենում էր, թէ չլինի Փրանկան իմացած լինի նրա դաւաճանութիւնը, միւս կողմից նա չափազանց հետաքրքրում էր իմանալու, թէ ինչ է տեղի ունեցել վերջին ժամանակ:

— Ի՞նչպէս ես, սիրելիս, — սկսեց նա: — Փառք Աստծու, որ դու այստեղ ես... իսկ ուրիշներն, Աստուած գիտէ թէ ինչնը էին խօսում քո մասին:

— Ուրիշները չգիտեն ոչինչ, — վճռողարար ասաց Փրանկան. — միայն ես գիտեմ ամեն ինչ: Ուրիշները յիմար են, չար... ստոր... միայն նա է բարի...

— Ո՞վ, հոգիս, ո՞վ է բարի. — անհամբերութեամբ հարց ու փորձ էր անում Մարցելան:

— Նստիր, ես ամեն ինչ կպատմեմ:

Մարցելան նստեց Փրանկայի կողքին, և այն

ամենը, ինչ որ ճնշում էր Փրանկային, ինչ որ քարի նման ծանրացել էր նրա սրտի վրայ՝ կենդանի ու կցկտուր պատմութեան ձեռվ դուրս թափուեց նրա բերանից:

Փրանկան պատմում էր, թէ ինչպէս ուրեադնիկը փակեց նրան մի մութ, փոքրիկ նկուղի մէջ, թէ ինչպիսի զարհուրելի տեսարաններ էին անցնում իւր աշքի առաջից: Կփակին իրան բանափի մէջ, դատի կինթարկեն, կաքսորին Սիրիք, տաժանակիր աշխատանքի... Ամուսնուն թունաւորել է. դրա պատիժը փոքր չէ. Փրանկան այդ շատ լաւ գիտէ: Նկուղում մութն էր, ինչպէս հորի մէջ... Փրանկան չօշափելով պարան էր որոնում... կարծես ամեն ինչ պատրաստ էր տալու աշխարհիս վրայ մի պինդ միտի և մի կտոր պարանի փոխարէն, որպէսզի կախուի, ժածկուի և չարանենդ աշխարհից և չարանենդ մարդկանցից... բոլորից, բոլորից ժածկուի... Եւ ահա, երբ նա խաւարից և ցրտից տանջուած, այս ու այն կողմն էր դիպչում նեղլիկ նկուղում և գլուխը խփում պատերին՝ դռան յետեկց լսուեց Պաւլի ձայնը: Փրանկան չէր ուզում հաւատալ իւր ականջներին, սակայն այդ նրա ձայնն էր: Պաւլը ժեծում էր պատուհանն և դուրս կանչում ուրեադնիկը վեր կացաւ, մոմը վառեց ու ներս թողեց Պաւլին: Փրանկան սկսեց նայել գուան ճեղքից, և ամեն ինչ, ամեն ինչ լիովին տեսաւ ու լսեց:

— Ի՞նչ տեսար, սիրելիս, ինչ լսեցիր, — հարցնում էր չափազանց հետաքրքրուած Մարցելան:

Փրանկան լսեց, թէ ինչպէս Պաւլն ամենից առաջ ասաց ուրեադնիկին, թէ նա, Փրանկան, ոչ մի

բանում մեղաւոր չէ, թէ այդ բոլորը միայն բամբասանք և յիմար խօսքեր են, թէ ինքն առողջ է և ոչ մի գանգատ չունի Փրանկայի դէմ: «Արձակեցէք նրան, առէք ինձ»: Ուրեադնիկը, զոհ, որ իւր ոտներն են համբուրում՝ շդիմացաւ ու համաձայնուեց: Միենոյն ժամանակ նա քիչ էր մնում թուլանար ծիծաղից: —«Այ յիմար,—ասում էր,—ամբողջ աշխարհում մի ուրիշ այդ տեսակ մարդ չես ճարի»: Իսկ Պաւլն ամենեին ուշաղբութիւն շդարձնելով ուրեադնիկի ծիծաղի վրայ՝ շարունակ նրա, Փրանկայի մասին էր հարց ու փորձ անում: Ուրեադնիկը բաց արաւ նկուղն և ստիպուած էր մոմով որոնել Փրանկային, որովհետև նա լսելով Պաւլի ոտնաձայնը՝ թագ կացաւ տակառի յետել և մի բան էր միայն ցանկանում—որ գետինը պատռուէր ու ինքը տակն անցնէր: Բայց Պաւլը գտաւ նրան, բռնեց ձեռքից ու տարաւ իւր մակոյիկ մօտ... Ահա թէ բանն ինչպէս եղաւ: Ահա թէ ինչ տեսաւ ու ինչ լսեց նա:

Մարցելան, որ առժամանակ համբացիւ էր զարմանքից՝ շշնջաց.

—Ի՞նչպէս բարի է նա, ասես թէ սուրբ լինի: Բախտաւանը ես դու, Փրանկա:

—Գետինն անցնի այդ տեսակ բախտը,—բռնկեց Փրանկան:

—Դու շդիտես քո բախտաւորութիւնդ և ոչ էլ հականում ես,—սկսեց խօսել Մարցելան, բայց Փրանկան շտապով կտրեց նրա խօսքը:

—Սպանեց նա ինձ իւր բարութեամբ, վախեցրեց ինձ այնպէս, որ այլևս ես աշխարհիս երեսին չեմ կարող ապրել... կեանքը զարհումբելի է ինձ համար...

նա ցնցուեց ամբողջ մարմնով և վերջացրեց խօսքը.

—Տէ՛ իմ Աստուած, եթէ կարողանայի՛ կվերցնէի ու կսպանէի նրան կատղած շան պէս...
—Ո՞ւմ,—հարցրեց վախեցած մուըացիկը:

—Կանգնած է նա աշքերիս առաջ... ու չէ հեռանում... որ կողմը դառնում եմ՝ նրան եմ տիսնում... այնպէս զարհութելի՛ է նա:

—Ո՞վ, ով, ասա, հանգստացիր, ով է կանգնած աշքերիդ առաջ:

Ֆրանկան նայեց նրա երեսը զարմացած աշքերով:

—Ես ինքս, ես ինքս,—պատասխանեց նա:

—Ցիսու ու Քրիստոս, աջն ու խաչը մեզ պահպան...—սկսեց Մարցելան... բայց Փրանկան բռնեց նրա ձեռքից:

—Ոչինչ շպիտես դու և ոչինչ չես հասկանում,—նկատեց նա.—ես ինքս ինձանից եմ վախենում... Վախենում եմ իմ արածից... չէնց այն բովելից, երբ ես լսեցի դռան ճեղքից, թէ ինչպէս նա խնդրում էր ուրեադնիկին ինձ համար՝ այնպիսի մի բան պատահեց ինձ, որ ես ապրել չեմ կարող աշխարհիս վրայ: Մի ինչ-որ բան կրծում է սիրտս... չէ թողնում քնիլու... վախեցնում է... ինքս ինձանից եմ վախենում ու վախենում նրանից... Այժմ աւելի եմ վախենում, քան այն ժամանակ՝ երբ նա ծեծում էր ինձ... 2եմ կարողանում նրա երեսը նայել... անշափ ամաշում եմ:

—Թող, հանգստացիր,—համողում էր պառաւը:

—Յարգիր նրան, սիրէ, և կապրիս այնպէս՝ ինչպէս Աստծու թեկ տակ... Ամեն ինչ լաւ կլինի:

Փրանկան մերժողաբար շարժեց գլուխը:

—Ես նրան լաւ եմ ճանաչում... նա, արբեցողի նման, լուրջ ժամանակ լաւ է, իսկ երբ արբեց՝ նորից մի բան կանչ...
—Ո՞վ, Փրանկա, ինչե՞ր ես դուրս տալիս, ո՞վ:

—Ե՞ս, ես ինքս,—նորից ուշքի եկաւ Փրանկան և ցած ձայնով, որպի խօսում են շատ թոյլ հիւանդները՝ սկսեց գանգատուել:—Իմ բանս վատ է, Մարցելա, օ, այնպէս վատ, որ մեռնել անգամ չեմ կարող... Ել ինչ կեանք կարող է լինել ինձ աշխարհիս վրայ: Իմ ձեռներս ու ոսներս կապուած են. վախենում եմ ես կրիին մի բան անելուց, վախենում եմ նոյնպէս և այն կեանքից՝ որ ես պիտի անց կացնեմ նրա հետ. ամեն բանից վախենում եմ... ոչինչ բան այսուհետև սիրելի չէ ինձ... ոչինչ չեմ ցանկանում... կարծես թաղել են ինձ գերեզմանում:

Նա լոեց մի ընպէ:

—Այնպէս վատ եմ որ... Մարցելա... Մի ինչոք բան կրծում է սիրտս, քրքրում է...

Քամի փշեց: Փրանկան ցնցուից և դժուարութեամբ ոտքի կանգնեց:

—Յնդր է...

—Այն,—հաստաեց Մարցելան:—աշունը է արդէն... իսկ դու, սիրունիկս, մի քիչ աղ դրած միս առւր ինձ, թէ չէ ոչինչ շունիմ սպասի մէջ ձկելու:

—Սառւմ են, —նայելով հեռու, գետի միւս կողմն սկսեց Փրանկան, —թէ երբ մի որեէ մարդ է կախւում՝ միշտ այսպիսի զօրեղ քամի է բարձրանում:

—Այն, դուրս են գալիս, —ասաց Մարցելան:—Կարելի է վաղը Պաւլը գնայ գետը, այն ժամանակ ես, սիրելիս, կզամ քեզ մօտ:

—Այն, այն, վաղը...
—Իսկ դու աղ դրած միս կտան:—Վաղը, —երկարացնելով կրկնեց Փրանկան և աւանց այլեւ մի խօսք ասելու՝ գնաց տոն, անցնելով չորացած մոլախոսի թաւուտ թփերի միջով:

Պաւլը նստած էր սեղանի առաջ և լսում էր, թէ ինչպէս Խտաւեանը, որ նստած էր նրա զոգում, մէծ աշխուժով ու տաք-տաք մի ինչ-որ պատմութիւն էր անում:

—Ո՞րտեղ էիր, —հարցրեց Պաւլը:—Փրանկան պատասխանեց, թէ նստած էր տան մօտ, թէ դուրս քամի է բարձրանում:

—Աշուն է, —խօսեց Պաւլը, —բայց այդ ոչինչ: Վաղը ևս գետը կընամ, թէն, գիտեմ, ալեկոծուած կլինա: Հիմա ինչքան արքայածնւն կարելի է բռնել:

Փրանկան լուռ նստած էր ընթրիքի ժամանակ և լուռ կերտկրսւմ էր Խտաւեանին: Եթէ այդ ընպէին նրա վրայ նայէր հոգեկան հիւանդների որևէ ըլժիշկ՝ նա կտեսնէր, թէ որպիսի թագնուած անսահման յուսահատութիւն է երկում նրա աշքերում, և կը հասկանար, որ նրա հոգին, թենակըրոյս թիթեռի նման, մաշտում է կրկին այն գծի վրայ, որ բաժանում է առողջ միտքը խելագալութիւնից, հանդարատութիւնը կատաղութիւնից: Բայց Պաւլը տեսնում էր իւր առաջ միայն մի հանգիստ, հասզանդ կին և մտածում էր այն մասին, թէ ինչպէս մի կերպ հաշտեցնէ նրան վաղը Կօղլիւկների հետ:

Ընթրիքից անմիջապէս յետոյ Փրանկան կոացցաւ իւր արկդիկի վրայ ու հանեց այնտեղից մի հաստ կարմիր կապ և գոտու նման կապեց մէջը քաղա-

քային թիկնոցի վրայից: Պաւլն ամենսկին ուշադրութիւն չփարձրեց այս բանի վրայ: Անկողնի վրայ նըստած՝ նա սկսում էր հանուել և ուզում էր արդէն հանել կօշիկներից մէկը, երբ Փրանշան մօտեցաւ նորան, քնած Խտաւեանը գրկին: Նա ամուր համբուրեց քնած երեխային և զրեց անկողնի վրայ, Պաւլի կողքին: — Բարի եղիլ դէպի նա՝ ինչպէս բարի էիր դէպի ինձ... շնչաց նա: Երեխան ոչ մի ռանում միուսուր է:

Պաւլը զարմացաւ:

— ի՞նչ է պատահել քեզ, գժուել ես ինչ է: Մի-
թէ ես շեմ սիրում նրան ու շեմ զառում:

Բայց Փրանկան, առանց մի խօսք անդամ տսելու, խոնարհեց գլուխը նրա առաջ մինչև գետին, բոլորովին այնպէս՝ որպէս զլուխ էր տուել բանտից ազատուելուց յետոյ։ Պաւլը նոյնպէս ոչ մի խօսք չասց: Գլուխը բարձին դնելով՝ նա մտածում էր. «Ամշում է գեռ. չէ կարողանում մոռանալ իւր արածը։ Փանք Աստծու, երկի այժմ բայրութին նկրի իւ եկելու».

Եւ Պաւլը քննեց: Զլսեց նա հետզհետէ զօրացող քամու աղմուկը, շլսեց, թէ ինչպէս գիշերուայ մէջ ճռճռաց նրա խրճիթի դուռը:

Ղատ վագ առաւօտեան նըան զարթեցրեց մարդ-
կանց ձայների աղմուկը: Փրանկայի անունը յիշում
էր ամեն մի լոպէ: Պաւլը վեր թռաւ և առանց հագ-
նուկու, ոտաբոպիկ դուրս վագեց: Այնտեղ, ուր վեր-
ջանում էր Կողիւկների ցանկապատը, ոչ հեռու եղե-
նեայ անտառակից, տղամարդկանց ու կանանց մի
խումբ էր հաւաքուած: Ամենքը բարձրաձայն աղաղա-
կում, վիճում էին և մատնացոյց անում այն փոքրիկ
մարգագետինը, ուր երկու հինորեալ եղենու մէջ տի-

զում մի բարձր ու բարակ խաչ էր երևում։ Պաւլը թռուցիկ կերպով քանի մի խօսք լսեց, և խելագարի նման վազեց դէպի աղմկարար խումբը։ Բայց նրա տեղ համեմուց առաջ քամին փշեց ուժգնութեամբ, և եղենիների յետեկց երկեցաւ երկու արշին գետնից բարձր Փրանկայի ծածանուող կարմիր գոգնոցը։ Բացի այդ վարդագոյն չորի կտորից՝ Պաւլն ուղիւ բան շտեսաւ, բայց ամեն ինչ հասկացաւ։ Հիմա արդէն նա էլ շի փրկի Փրանկային.., նա բոնեց ձեռքով ցանկապատը, ու նրա գէմքի վրայ, երկի, մի այնպիսի անշափ գարնուրելի բան տեսնուեցաւ, որ Աւգուստան և Ուկեանան միաձայն աղաղակեցին։

—Ազատեցէք, բարի մարդիկ, բանեցէք նրան, նաև
մեռնում է:

Թայց Պաւլը շմեռաւ։ Ուղիղ չէ, որ ասում են,
թէ առողջ, ուժեղ ու պնդակազմ մարդիկ մեռնում
են բարոյական տանջանքներից։ Պաւլ Կորեցկու ա-
ռողջ, ուժեղ, ումկական մարմինը չքայլաւեցաւ և
մինչև անգամ շիտուացաւ այն բազմամեայ միջա-
դէաքից յիտոյ, որ հրեղէն շերափ նման երկու մաս
բաժանեց նրա կեանքի սովորական, միտկերպ ժա-
պաւէնը։ Այն օրերից շատ տարիներ են անցել ար-
դէն. բայց և այժմ կարելի է տեսնել դեռ ևս նեմա-
նի ձկնորսին՝ գետի վրայ վարդագոյն այգն ողջունե-
լիս կամ ուշ երեկոյեան տուն վերադառնալիս։ Երբ

Նա գետի աւազուտ ավն է դուրս կալին կամ կանդ է առնում փոքրիկ կղզու մօտ, որ ամբողջովին ծածկուած է սպիտակ մեխակով և արքայամոմերով՝ համարեա միշտ ուղեկցում է նորան մի պատճամեկայ սպիտակաղիմ, ու աչքերով ու երկայն արտեանունքներով տղայ: Հինաւուց ձկնորսի մէջը փոքր ինչ կուցել է, մագերն սպիտակել են. նա միշտ մտահոգ, միշտ լրու է: Երեխան—կարմրաթշիկ և առողջ—միշտ ուրախ է և ճտվում է ինչպէս թուշոն: Երկում է, որ նրանց մէջ լիակատար համաձայնութիւն է տիրում: Երբեմնապէս, երբ երեխան երկար ժամանակ թագ է կենում արքայամոմերի անտառի մէջ գետի երկարութեամբ մի բարձր աղաղակ է լուսում:

—Խտաւեան... այ Խտաւեան...

Եւ բարձր, լայն տերեններով ծածկուած ցողունների լետեից մի մանկական սուր ձայն արձագանք է տալիս.

—Կու-կու, հայրիկ, կու-կու:

Այն ժամանակ ձկնորսի խիստ դէմքի վրայ ժըպիտ է տեսնուում, և նա բարձրաձայն պատուիքում է է տղային՝ ջուր ածել ձկնամանի մէջ: Խտաւեանն երեսում է մի փունջ մեխակ ձեռքին և ուրախ ծիծաղում է: Ակներև է, որ նրա կեանքը ուրախ է անցնում:

Բայց ինչ բանի վրայ է մտածում այդ ժամանակ նրա ծեր ուղեկիցը: Ոչ ոք չգիտէ այդ—նա ոչ ոքի չէ յայտնում իւր մաքերը: Ասում են, թէ նա ոչ մի անգամ իւր խեղգամահ կնոջ անունը չէ տուել նրա թաղմանից յետոյ, թէ առաջուայ նման նա խուսափում է մարդկային հասարակութիւնից և ամառ

ու գարուն՝ ժամանակի մեծ մասը գետի վրայ է անցնում:

Բայց ձմեռուայ անվերջ զիշերներին նեմանի ձկնորսի պատուհանում երկար ժամանակ լոյս է երեւում, և ջահէլ տղային ու աղջկները կօղիկւկնեց խրճիթը զրոյցի գնալիս, կանգ առնելով պատուհանի առաջ՝ լսում են երգաձայն, միակերպ ընթերցանութիւն: Սեղանի վրայ տեսնուում է բաց արած աղօթագիրը, իսկ նրա առաջ կռացած նստած է մի բարձրահասոակ, ուժեղ, սպիտակ մօրուքով, կնճուտ ճակատով տղամարդ և զանդաղ աղօթքներ է կարդում: Ուրիշ գիրք Պաւլ Կորեցկին չգիտէ և երկի երբէք էլ չի գիտենայ, որովհետեւ մերձակայ քաղաքում գիրք չեն ծախում, իսկ հարևաններից ստանալ կամ շատ դժուար է կամ բոլորովին անհնար: Իւր գիրքը նա երեք անգամ կարգացել է սկզբից մինչև վերջը, հիմա ակսում է կարդալ չորրորդ անգամ: Ասենք, վերջին երկու տարուայ ընթացքում աղօթագրքի ընթերցանութեան համար քիչ ժամանակ է մնում, որովհետեւ սեղանը զարդարուած է լինում մի հին, մաշուած այրքենարանով, որի առաջ բարձր աթոռի վրայ նստում է Խտաւեանն և մատները կանեփանման մագերի մէջ կոխած՝ փնթիւնիթում է.

—Թ—ա—բա, բ—ե—բե...

Անցեալ ձմեռ նա հասաւ մինչև կ տառը, բայց ամառուայ ընթացքում համարեա բոլորը մոռացաւ: Հիմա Պաւլ նորից սկսեց սովորեցնել նրան բից: Խտաւեանի փնթիւնիթուցը բաւական երկար է տեսում. յետոյ երեխան քնում է, իսկ Պաւլն սկսում է կիսաձայն կարդալ իւր աղօթագիրքը: Ասկա կրակը հանգ-

չում է ձկնորսի պատուհանում, և վոքրիկ գիւղն ամ-
բողջովին ընկնում է խոր քնի մէջ: Բացի շների եր-
բեմնալիան հաջոցից, ոչ մի կենդանի ձայն չէ խան-
գարում խուլ գիշերուայ խաղաղութիւնը, բայց դրա
փոխանակ աւելի պարզ լուռում են ուրիշ ձայներ:
Երբեմնապէս ձմեռնային սառնամանիքի միաքն
է ընկնում գիտողութեան գնալ իւր կալուածներն և
սառցային ձեռքով խփել երբեմն այս, երբեմն այն
պատուհանին. երբեմն էլ կատաղի մըրիկ է բարձրա-
նում և գուռալով ու սուկելով, ձեան հիւսեր բար-
ձրացնելով, առաջ ու յետ է թռչում վոքրիկ գիւղի
փողոցում:

Այդ ձայներին սովոր քնակիչները քնում են
խաղաղ, անվրդով քնով. մի մարդ միայն երկար ժա-
մանակ չէ կարողանում վակել իւր յոդնած աչքերը:

Նրա մօտ, նոյն անկողնում, լուսում է քնած երե-
խայի հանդարտ շնչառութիւնը. իսկ նա, աչքերը սե-
ւուած դէպի շրջապատող խաւարը՝ ականջ է դնում
կատաղած փոթորկի վայրենի ձայներին: Եւ ահա այդ
ձայներին երբեմնապէս խառնում է և նրա ջերմ,
պաղատական շշնջիւնը.

— Աստուած, ողորմիր այն մեղաւորին, Աստուած,
ողորմիր այն մեղաւորին. Աստուած, ներիր նորան
քո անշափ ողորմութեամբ:

16302-16305

ՀՀ Ազգային գրադարան



NL1643684

ՀՀ Ազգային գրադարան



NL1643683

ՀՀ Ազգային գրադարան



NL1643682

ՀՀ Ազգային գրադարան



NL1641417

